միացման դեպքում պետությունների միջև հարաբերությունները կարգավորվում էին համաձայնագրին համապատասխան, որը, սակայն, չէր հանգեցնում դաշնության ստեղծման. միացումն իրականացվում էր պրոտեկտորատի տեսքով: Այն ժամանակի ընթացքում վերածվում էր լիակատար հպատակության: Լավագույն օրինակը 1805 թ. Ղարաբաղի խանության անցումն էր Ռուսաստանին, որն իրականացվեց Ղարաբաղի խանի և Վրաստանում գտնվող Ռուսաստանի ռազմական ներկայացուցչի միջև կնքված տրակտատով³: Այլ պարագաներում հարցը վճռվում էր նվաճմամբ: Այդ դեպքում նվաճված տարածքների վարչատարածքային և հասարակական կառուցվածքը կախված էր Ռուսաստանի կամքից, որը սովորաբար նվաճված տարածքներին տրամադրում էր լայն ինքնավարություն, որը, սակայն, չպետք է հանգեցներ առանձին պետության առաջացման⁴:

Կովկասում ցարիզմի հաստատվելուց հետո՝ XIX դարի 1-ին կեսին, ցարիզմի կայսերական գաղութային քաղաքականությունը ձեռք բերեց նոր, առավել խիստ դրսևորումներ, քան նախընթաց հարյուրամյակում: Ավատատիրական դասի հայտնի շատ ներկայացուցիչներ (արքայազն Ալեքսանդրը՝ Վրաստանում, Կազիկումուխի Սուրխայ խանը և այլն) հանդես եկան որպես Ռուսական կայսրության դեմ ուղղված շարժումների նախաձեռնողներ և կազմակերպիչներ⁵: Այս շարժումները չէին քողարկվում կրոնական շղարշով թեկուզ այն պարզ պատճառով, որ հանդես էին գալիս նույն դավանանքն ունեցող տերության դեմ:

Հարավային Կովկասում հաստատվելուց հետո, չնայած սկզբնական շրջանում Հայկական մարզի (ընդգրկում էր նախկին Երևանի և Նախիջևանի խանությունները⁶) ստեղծման փաստին, հայերը բախվեցին ռուսական կայսերական իրական քաղաքականությանը: Ռուսաստանը սկսեց սիրաշահման քաղաքականություն վարել կովկասյան թաթարների կամ թյուրքախոս շիաների նկատմամբ: Առաջին հայացքից Ռուսական կայսրության՝ թյուրքախոս շիաներին սիրաշահելու քաղաքականությունը կարող է կասկածի տեղիք տալ. վերջիններս պարսիկների նման իսլամի շիա ուղղության ներկայացուցիչներ էին: Այստեղ հարկ է չմոռանալ ևս մեկ՝ ոչ պակաս ազդեցիկ գործոնի՝ ազգայնականության մասին: Կայսրության կառավարիչները գիտակցում էին, որ եթե բորբոքեն ազգայնական տրամադրությունները, դրանք կարող են գերիշխել մնացյալ բոլոր արժեքներին, ներառյալ կրոնական⁷: Դա լավ հաշվարկված քաղաքականություն էր, քանզի կայսրությունը փորձում էր իր քաղաքատնտեսական ու մշակութային ներկայությունը հարավկովկասյան տարածաշրջանում լիարժեքորեն ապահովելու նպատակով պիտանի էթնիկ

³ Акты, собранные Кавказской археографической комиссией 1868, 704-705.

⁴ Миронов 2003, 30.

⁵ Смирнов 1958, 181.

⁶ Зубов 1834, 101.

⁷ Манасян 2005, 157.

հանրություն գտնել՝ ի դեմս կովկասյան թաթարների: Այսպիսով, տարածաշրջանում Ռուսական կայսրության քաղաքականության մեջ կարևորվեց ոչ թե էթնիկ, այլ կրոնական գործոնը: Կովկասյան թաթարները սկսեցին ներկայացվել «մահմեդականներ» հասկացության ներքո⁸: «Մահմեդական» անվանման մեջ ներառվում էին միայն Անդրկովկասի թյուրքախոս շիա մահմեդականները, և, ըստ այդմ, տարանջատվում կամ հակադրվում էին Հարավային Կովկասի սուննի մահմեդական տեղաբնիկ կովկասալեզու, սուննի մահմեդական իրանալեզու և շիա մահմեդական իրանալեզու ժողովուրդներին⁹: Սա բխում էր նաև այն հանգամանքից, որ պաշտոնական պետական հայեցակարգը խարսխված չէր որևէ կոնկրետ ազգային սկզբունքի վրա, և բնակչությունը դասակարգվում էր ամենից առաջ ըստ դավանանքի (օրինակ՝ ռուսների մեջ ներառում էին բելառուսներին, երբեմն՝ ցանկացած ուղղափառ քրիստոնյայի)¹⁰: Մեր կարծիքով, Ռուսական կայսրությանը ձեռնտու էր բնակչությունը տիպաբանել ըստ դավանանքի, քանզի ազգային սկզբունքի վրա շեշտադրելը հղի էր այն վտանգով, որ հետագա ազգայնական տրամադրությունների արթնացումը կարող էր հանգեցնել անկախ պետությունների ստեղծմանը: Այսպիսով, իր քաղաքականությամբ Ռուսաստանը նպաստում էր Արևելյան Անդրկովկասի թյուրքացմանը: Արցախում նմանատիպ քաղաքականության արտահայտություն էր 1805 թ. մայիսին Քյուրակչայի պայմանագիրը, որով Ղարաբաղի Իբրահիմ խանն ընդունեց Ռուսաստանի գերիշխանությունը¹¹: Բացի սրանից, XIX դարի առաջին կեսին Ռուսաստանի կառավարող շրջաններում մեծ կարևորություն էր ստացել Հարավային Կովկասում ցարիզմի սոցիալական ամուր հիմքի ստեղծման հարցը: Սրա լուծումը կապվում էր ռուսական հողատիրական տարրի ուժեղացման և միևնույն ժամանակ տեղական, այսպես կոչված բարձր դասի նկատմամբ քաղաքական կայուն կուրսի մշակման և գործադրման հետ¹²: Թեպետ Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրության կազմ մտնելուց հետո ստեղծվում է Հայկական մարզ, այդուհանդերձ, իրողություն է, որ այդտեղ հողատերեր էին մահմեդական տարբեր տրամաչափի իշխողները: Հենց 1830-ականներին էլ շարունակվում էր պահպանվել մելիքների, բեկերի, աղալարների, մինբաշիների ինստիտուտը¹³: Նրանցից ոմանք Ռուսաստանի տիրապետության հաստատումից հետո էլ կողմնորոշվեցին դեպի նրան հակառակորդ պետությունները: Այս իրողությունները ստիպում էին ռուսական կառավարող օղակներին փորձել մշակել համապատասխան քաղաքականություն: Ազգային քաղաքա-

⁸ Манасян 2005, 158.

⁹ Խառնատեան 2018, 486:

¹⁰ Алпатов 2000, 29.

¹¹ Тер-Саркисянц 2015, 170-171.

¹² Ալեքսանյան 1991, 133:

¹³ Акты, собранные Кавказской археографической комиссией 1881, 469.

կանության հաջորդ անկյունաքարը կենտրոնական կառավարության լայն համագործակցությունն էր ոչ ռուսական վերնախավերի հետ, որոնք ստացան ռուսական արքունականության իրավունքները, որն էլ դյուրացրեց կենտրոնական կառավարության համար նոր տարածքների կառավարումը:

Մեկ առանձնահատկություն ևս կար կայսրության ազգային քաղաքականության մեջ: Ոչ ռուս ազգությունները, որոնց մեջ մինչև Ռուսական կայսրության կազմ ներգրավելը առկա չէին ճորտատիրական հարաբերություններ, այդպես էլ չիմացան, թե ինչ է դա:

Ազգային քաղաքականության մյուս սկզբունքի համաձայն՝ էթնոազգային չափորոշիչները թեև կարևորվում էին, սակայն, ըստ էության, չէին խոչընդոտում սոցիալական շարժունակությունը: Մինչև 1917 թ., ազնվական ծագումը, արհեստավարժությունը և նվիրվածությունը ցարի գահին առավել բարձր էին դասվում, քան էթնիկ կամ դավանական պատկանելությունը¹⁴:

Եզրակացություններ

Ռուսական կայսրությունում ինտեգրացիոն քաղաքականությունը գնահատելիս որպես արդյունք կարող ենք նկատել մի ուշագրավ փաստ. այդ քաղաքականությունը նպաստեց կայսրության համեմատաբար զարգացած էթնոսների՝ հայերի, լեհերի, վրացիների շրջանում ընդդեմ Ռուսաստանի մոբիլիզացիային, առաջ բերեց հակառուսական տրամադրություններ կայսրության տարբեր հատվածներում և տարբեր հասարակական շերտերի մեջ: Ընդհանուր առմամբ, արդիականացումը ստեղծեց լուրջ նախադրյալներ ազգային շարժումների նոր վերելքի համար:

Գրականություն

- Ալեքսանյան Ս. 1991, Արևելյան Հայաստանի նոր շրջանի ագրարային հարաբերությունների պատմագրությունը, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 332 էջ:
- Խառատեան Հ. 2018, Հայաստանցիները որպես թուրքական ինքնութեան կառուցման գործոն: Գաառահայերը Թուրքիայի Հանրապետութիւնում 20-րդ դարի միջնադարում, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտ, էջ 486:
- Акты, собранные Кавказской археографической комиссией 1868, под ред. А.П. Берже, Тф., Тип. Глав. Управ. Наместника кавказского, т. 2, 1238 с.
- Акты, собранные Кавказской археографической комиссией 1881, под ред. А.П. Берже, Тф., Тип. Глав. Управ. Наместника кавказского, т. 8, 1009 с.
- Алпатов В. 2000, 150 языков и политика 1917-2002. Социолингвистические проблемы СССР и постсоветского пространства, Москва, «Крафт+ИВ РАН», 224 с.
- Зубов П. 1834, Картина Кавказского края, принадлежащего России, и сопредельных оному земель в историческом, статистическом, этнографическом, финансовом и торговом отношениях, ч. 1, СПб., 234 с.
- Манасян Ал. 2005, Карабахский конфликт: ключевые понятия и хроника, Ереван, НОФ «Нораванк», 216 с.

¹⁴ Суни 1994, 278-291.

- Миронов Б. 2003, Социальная история России периода империи (XVIII-начало XX в.): в 2 т., т. 1, СПб., «Дмитрий Буланин», 548 с.
- Смирнов Н. 1958, Политика России на Кавказе в XVI-XIX веках, Москва, Издательство социально-экономической литературы, 244 с.
- Суни Р. 1994, Национализм и демократизация в русской революции 1917 г., Анатомия революции, Черняев В.Ю. (ред.), СПб., «Глагол», с. 278-291.
- Тер-Саркисянц А. 2015, Армяне Нагорного Карабаха: история. культура. традиции, Москва, «Русская панорама», 918 с.
- Хоскинг Дж. 2001, Россия: народ и империя (1552-1917), Смоленск, «Русич», 512 с.

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՈՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Արտակ խաչատրյան

Ամփոփում

XVIII դարի վերջին և XIX դարում Ռուսական կայսրության ընդարձակումը դեպի Կովկաս ենթադրում էր ազգային քաղաքականության մշակում և կիրառում նորանվաճ տարածաշրջաններում: Ազգային քաղաքականությունը միակերպ չէր: Նորանվաճ տարածաշրջաններում պետականություն ունեցող ժողովուրդների հետ կնքվում էր պաշտոնական համաձայնագիր: Սա անցումային ակտ էր, քանի որ հետագայում վերացվում էին պետական ինստիտուտները, և տվյալ պետությունը վերածվում էր կայսրության սովորական վարչաքաղաքական միավորի: Պետականություն չունեցող ժողովուրդները պարտավոր էին հավատարմության երդում տալ ռուսական գահին: Կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանը շեշտը դնում էր կրոնական գործոնի վրա, քանի որ էթնիկականի վրա շեշտադրումը հետագայում կարող էր ազգայնական տրամադրությունների արթնացման պատճառ դառնալ: Էթնաազգային չափորոշիչները թեև ուշադրության առնվում էին, սակայն, ըստ էության, չէին խանգարում սոցիալական սանդուղքով շարժունակությանը: Այդուհանդերձ, Ռուսական կայսրության ազգային քաղաքականությունը նպաստեց համեմատաբար զարգացած ժողովուրդների՝ հայերի, լեհերի, վրացիների մեջ ազգային տրամադրությունների վերելքին:

Բանալի բառեր՝ Ռուսական կայսրություն, ազգային քաղաքականություն, Ղարաբաղի խանություն, Կովկաս, Հայկական մարզ, կովկասյան թաթարներ, Գևորգիական դաշնագիր:

ОСНОВНЫЕ ЧЕРТЫ НАЦИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ РОССИЙСКОЙ ИМПЕРИИ НА КAVKAZE

Артаг Хачатрян

Резюме

Экспансия Российской империи на Кавказ в конце XVIII века и в течение XIX века подразумевала разработку и применение национальной политики во вновь

завоеванных регионах. Национальная политика была неоднородной. Был заключен официальный договор с народами, имевшими государственность в завоеванных областях. Это был переходный этап, так как позднее государственные учреждения были упразднены, а данное государство – преобразовано в обычную административно-политическую единицу империи. Народы, не имевшие государственности, должны были присягать на верность российскому престолу. В кавказском регионе Россия делала упор на религиозный фактор, поскольку этнический фактор впоследствии мог привести к пробуждению националистических настроений. Этнонациональные критерии хотя и учитывались, но фактически не препятствовали социальной мобильности. Тем не менее национальная политика Российской империи способствовала формированию национальных настроений среди относительно развитых народов: армян, поляков, грузин.

Ключевые слова – Российская империя, национальная политика, Карабахское ханство, Кавказ, Армянская область, кавказские татары, Георгиевский трактат.

THE MAIN FEATURES OF THE NATIONAL POLICY OF THE RUSSIAN EMPIRE IN THE CAUCASUS

Artak Khachatryan

Abstract

The expansion of the Russian Empire to the Caucasus in the late 18th and 19th centuries implied the development and application of national policies in the newly conquered regions. National policy was heterogeneous. An official treaty was signed with the nations who had statehood in the conquered regions. This was a transitional phase, since later state institutions have been eliminated, and this state was transformed into an ordinary administrative-political unit of the empire. Stateless nations were obliged to swear allegiance to the Russian throne. In the Caucasian region, Russia emphasized the religious factor, because the emphasis on the ethnic factor could subsequently lead to the rise of nationalist sentiments. Ethno-national criteria were taken into account, but actually did not prevent social mobility. Nevertheless, the national policy of the Russian Empire contributed to the rise of national sentiments among relatively developed nations such as the Armenians, Poles, Georgians.

Key words – Russian Empire, national policy, Karabakh Khanate, Caucasus, Armenian region, Caucasian Tatars, Treaty of Georgievsk.

ԴՐՎԱԳՆԵՐ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ (1914 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ – 1915 Թ. ՀՈՒՆԻՍ)

Նիսնետա Ադամյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան 24/4

Էլ. հասցե՝ ninettadamyant@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 02.02.2023, գրախոսվել է 06.02.2023, ընդունվել է տպագրության 07.08.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.2-31

Ներածություն

Առաջին աշխարհամարտի նախօրեին Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը¹ (այսուհետև՝ ԿՀԲԸ) ուներ 65 մասնաճյուղ՝ դպրոցներով, գրադարան-ընթերցարաններով, բարեգործական ճաշարաններով և հասարակական բնույթի այլ կառույցներով²: ԿՀԲԸ-ի նախագահը Սամսոն Հարությունյանն էր, փոխնախագահները՝ իշխանուհի Մարիամ Թումանյանը և բժիշկ Բուդդան Աղասարյանը: Աշխարհամարտի սկսվելուց հետո Ընկերությունն ընդլայնեց իր գործունեությունը՝ վիրավոր զինվորների համար հիվանդանոցներ հիմնելով, պատերազմում հաշմվածների ընտանիքներին նյութական օգնություն տրամադրելով, փախստական-գաղթականներին օգնություն ցուցաբերելով և այլն: Այս և այլ խնդիրների լուծման նպատակով ԿՀԲԸ-ի նախաձեռնությամբ և Կովկասի փոխարքա Ի.Ի. Վորոնցով-Դաշկովի թույլտվությամբ 1914 թ. սեպտեմբերի 14-ին Թիֆլիսում կայացավ Ընկերության համագումարը, որին մասնակցեցին Ընկերության մասնաճյուղերի 126 անդամ, ինչպես նաև ռուսահայ ազգային, մշակութային և բարեգործական 18 հաստատությունների ներկայացուցիչներ ու պատվավոր հյուրեր³:

Չորակոչվածների ընտանիքներին և կայսրության հայաշատ շրջաններում հաստատված փախստական-գաղթականներին բարոյական ու նյութական օգնություն ցուցաբերելու նպատակով Համագումարը որոշեց ԿՀԲԸ-ի խորհրդին կից ստեղծել Հայկական կենտրոնական կոմիտե (այսուհետև՝

¹ ԿՀԲԸ-ի գործունեության մասին մինչև Առաջին համաշխարհային պատերազմը ավելի մանրամասն տե՛ս Լեօ 1891, 706-717, Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերության Կովկասում 1911, 360, Մնայուն Յուշարձան Կով. Հայոց Բարեգ. Ընկ. XXX-ամեակի 1911, Благотворительная учреждения России 1912, 167-168, Ադամյան 2020, 97-112:

² Տե՛ս Տեղեկագիր 1915, 1-10:

³ Տե՛ս Տեղեկագիր 1915, 12-13, Համբաւաբեր 1916, N 4, յունուարի 17, 101-103: Տեղեկագիր 1919, 21-22, Դանիելյան 2017, 76-77, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտին և Հայաստանի առաջին հանրապետության տարիներին 2018, 33-42:

ՀԿԿ)⁴, ինչպես նաև երկաթուղային ճանապարհների հարևանությամբ բացել Հայկական հիվանդանոցներ (լազարեթ)՝ վիրավորների համար (բացառությամբ Օսմանյան կայսրությանն ու Իրանին սահմանակից շրջանների), վիրավոր զինվորներին առանց ազգային խտրականության բժշկական օգնություն ցուցաբերելու համար⁵:

Սեպտեմբերի 16-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն հատուկ կոնդակով ՀԿԿ-ին վերցրեց իր բարձր հովանու ներքո⁶:

ԿՀԲԸ-ի բժշկասանիտարական գործունեությունը

Աշխարհամարտի սկզբում ԿՀԲԸ-ն իր մասնաշենքի վերին հարկում բացեց 50 մահճակալով հիվանդանոց: Հետագայում մահճակալների թիվը հասավ 100-ի⁷: Մինչև 1914 թ. դեկտեմբերի 31-ը հիվանդանոցի օգտին նվիրատվություն էր արվել 22.698 ռ. 40 կ., որից կահավորանքի և անհրաժեշտ պարագաների վրա ծախսվեց 17.881 ռ. 29 կ.: Միայն 1914 թ. նոյեմբեր-



Ընկերության տունը, Աբաս-Աբադսկայա հրապարակ, Թիֆլիս


⁴ ՀԿԿ-ն բաղկացած էր լինելու 24 անդամներից, որոնցից 12-ը ընտրվելու էին Թիֆլիսում, իսկ 12-ը՝ Բաքվում: Նախագահն էր Ս. Հարությունյանը, պատվավոր նախագահը՝ Մեսրոպ Եպիսկոպոսը: Կոմիտեն իր գործունեությունը սկսեց 1914 թ. հոկտեմբերի 5-ից: ՀԿԿ-ն հատուկ կազմակերպությունների շարքում ճանաչվեց 1915 թ. օգոստոսի 30-ի օրենքով և իր ներկայացուցիչն ուներ Ներքին գործերի նախարարության առանձին խորհրդակցությունում՝ ի դեմս Պետական դոմայի անդամ Մ. Աճեմյանի: ՀԿԿ-ն գործելու էր ԿՀԲԸ-ին կից, քանի որ փախստականների կարիքները հոգալու համար անհրաժեշտ էին զգալի ֆինանսական միջոցներ, իսկ ԿՀԲԸ-ի բազմաթիվ մասնաճյուղերը շատ կարևոր դեր ունեին օգնությունը արդյունավետ կազմակերպելու համար: Բաքվում փախստականներին օգնելու համար ընտրվեց առանձին մասնաժողով, որը գործում էր ըստ իր հայացողության (տե՛ս Տեղեկագիր գործունեության Կովկասի Հայոց բարեգործական ընկերության կից Պատերազմից վնասուածներին օգնող Հայկական կենտրոնական կոմիտեի եւ պետական միջոցներով կովկասեան ճակատի փախստականների պարենաւորման բաժանման 1917, 13, 22, Տեղեկագիր 1919, 22): Տե՛ս նաև Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 28, ց. 1, գ. 108, թ. 57-58 և շրջ., 62 և շրջ., գ. 132, թ. 42-43, Տեղեկագիր 1915, 12-13, Հորիզոն» 1914, N 204, 17 սեպտեմբեր, Տեղեկագիր Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ V-ի բարձր հովանաւորութեան տակ գտնուող Հայկական կենտրոնական կոմիտեի 1915, 3-4, Отчет о деятельности Армянского Центрального Комитета и Отдела по снабжению продовольствием беженцев Кавказского фронта на Казенные средства при Армянском Благотворительном Обществе на Кавказе 1917, 12-14:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 108, 62-շրջ.:

⁶ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 108, թ. 4, Համբաւաբեր 1916, N 4, յունւարի 17, 101, Отчет о деятельности... 1917, 12-13.

⁷ Պայմանավորված այն հանգամանքով, որ ընկերության շենքում 100 մահճակալ տեղավորել հնարավոր չէր, վարձակալվել էր նաև հարևանությամբ գտնվող Է(Հ)ղջությանի տունը, տե՛ս Տեղեկագիր 1916, 17, Թումանյան 2003, 277-308, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտին և Հայաստանի առաջին հանրապետության տարիներին 2018, 36 (փաստաթուղթ N 15):

դեկտեմբեր ամիսներին այստեղ բժշկական օգնություն ստացան 267 հիվանդներ և վիրավոր զինվորներ⁸: 1914 թ. նոյեմբերին հիվանդանոց այցելեց Նիկոլայ II կայսրը, ապա նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն և Վրաստանի էկզարխ Պիտիրիմ եպիսկոպոսը⁹: Բացման օրվանից մինչև 1915 թ. վերջը հիվանդանոցում բժշկական օգնություն ստացավ 707 մարդ (321 վիրավոր զինվոր և 386 հիվանդ)¹⁰: Ընկերությունը հիվանդանոցներ բացեց նաև Երևանի, Պյատիգորսկի, Ալեքսանդրապոլի մասնաճյուղերում:



Կովկասի Հայոց բարեգործական
ընկերության խորհուրդը

Համաշխարհային պատերազմը, գաղթականների օրըստօրե աճող թիվը¹¹, սովն ու ծանր կենսապայմանները պատճառ դարձան փախստականների տեղակայման վայրերում համաճարակային հիվանդությունների՝ դիզենտերիայի, բժավոր տիֆի և խոլերայի տարածման: Մեծ թիվ էին կազմում նաև ցրտահարության դեպքերը: ՀԿԿ-ի բոլոր լիազորները, որոնց գործուղել էին Արդահան,

Արդանուջ, Օլթի, Սարիղամիշ, Զուլֆա, Մակու և այլ շրջաններ փախստականներին տրամադրվելիք անհրաժեշտ օգնության (գումարի, պարենի) չափը ճշտելու և դրա հատկացումը կազմակերպելու համար, իրենց հաշվետվություններում հատկապես շեշտում էին այն հանգամանքը, որ կանխարգելիչ միջոցներն անբավարար են, ինչը նպաստում է մահացության թվի աճին:

Հաշվի առնելով այս իրողությունը՝ ՀԿԿ-ն անմիջապես ձեռնարկեց բժշկասանիտարական օգնություն կազմակերպելու: Սննդատու կայաններ և հիվանդանոցներ բացեցին Ալեքսանդրապոլում, Կարսում, Կաղզվանում, Ախալքալաքում, Նախիջևանում, Ղարաքիլիսայում, Վանում, Մանազկերտում և այլուր: Այդ վայրեր գործուղվեցին տասնյակ բժիշկներ, բուժակներ և գթության քույրեր¹²:

Ի դեպ, Կովկասյան բանակի բժշկական սպասարկումն ապահովելու գործին, ԿՀԲԸ-ից, զատ ակտիվ մասնակցություն ունեցան նաև «Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան» մասնաճյուղը, «Եղբայրա-

⁸ Տեղեկագիր 1915, 12:

⁹ Տեղեկագիր 1915, 13:

¹⁰ Տեղեկագիր 1916, 17:

¹¹ Ոստիկանության տվյալների համաձայն, միայն 1914 թ. դեկտեմբերին Պարսկաստանից Զուլֆա էր անցել 20 հազար, իսկ 1915 թ. հունվարի կեսերին 30 հազարից ավելի փախստական, տե՛ս Кавказский фронт Первой мировой войны. 1914-1917 гг. 2020, 830.

¹² Օգնություն ցուցաբերող բժիշկների մասին ավելի մանրամասն տե՛ս Տեղեկագիր Նորին Վեհափառության Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ V-ի բարձր հովանատրոթեան տակ գտնուող Հայկական կենտրոնական կոմիտեի 1915, 6-8, Отчет о деятельности... 1917, 15-16, Բեհրուդյան 1967, 230:

կան օգնության կոմիտեն» և այլ բարեգործական կազմակերպություններ: Նրանց նպատակն էր Կովկասյան բանակի ռազմասանիտարական ծառայությանն աջակցելը և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելը: Մոսկվայից ժամանեց «Քաղաքների միության» լիազոր Ն.Մ. Կիշկինը, որը կարգադրեց անհապաղ բժշկասննդատու կետեր բացել Էջմիածնից մինչև Ադստաֆա¹³:

Մինչև 1915 թ. հոկտեմբերը բժշկասանիտարական գործն ամբողջությամբ անցավ «Քաղաքների միության» ենթակայության տակ¹⁴: Ուստի Թիֆլիսում գործող ԿՀԲԸ-ի հիվանդանոցը տարեվերջին նվազեցրեց մահճակալների թիվը՝ հասցնելով 50-ի¹⁵:

«Մի բաժակ թեյ» բարեգործական թեյարաններ

Իշխանուհի Մարիամ Թումանյանի նախաձեռնությամբ 1914 թ. նոյեմբերին Թիֆլիսում՝ Գանոսկի և Գալովինսկի փողոցներում բացվեցին «Մի բաժակ թեյ» («Чашка чая») անվանումով բարեգործական թեյարաններ, որոնք կարճ ժամանակում ձեռք բերեցին մեծ ժողովրդականություն¹⁶: Սկզբնական շրջանում Գանոսկու թեյարանի եկամուտը կազմում էր ամսական 10.000 ռուբլի, որի մի մասը տրամադրվում էր ԿՀԲԸ-ի «Հայկական հիվանդանոցի» ծախսերը հոգալու համար: Հետագայում ամբողջ գումարն ուղղվեց զաղթականության կարիքները հոգալուն: Առաջին բացված թեյարանի ամսական եկամուտը 1917 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում էր 29.468 ռ. 97 կ.¹⁷: Բարեգործական թեյարաններ բացվեցին նաև Պյատիգորսկում, Կիսլովոդսկում, Վլադիկավկազում, Բաթումում և այլուր¹⁸:



«Մի բաժակ թեյ» («Чашка чая»), Թիֆլիս

Իշխանուհի Մ. Թումանյանը կազմակերպեց նաև հանգանակության օրեր: Օրինակ՝ 1915 թ. հունվարի 28-ին ՀԿԿ-ի աջակցությամբ կազմակերպվում է «գթության և ողորմածության» օր: Տարբեր տարիքի և սեռի

¹³ Кавказский фронт Первой мировой войны. 1914-1917 гг. 2020, 869.

¹⁴ Քաղաքների միության ջանքերով 1915–1917 թթ. ընթացքում ստեղծվեցին 32.000 մահճակալով նոր հոսպիտալներ (լազարեթներ), ինչպես նաև 5 սանիտարական քարավաններ, որոնք ուղարկվում էին Թուրքիայի խորքերը: Նշենք, որ այդ տարիների ընթացքում զինվորներին ու փախստականներին սննդով ապահովելու համար ծախսվել է 120.000.000 ռ. (Ալեքսանդր Խատիսյան 2023, 262):

¹⁵ Տեղեկագիր 1916, 17:

¹⁶ Տեղեկագիր Նորին Վեհափառության Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ V-ի բարձր հովանաւորութեան տակ գտնուող Հայկական կենտրոնական կոմիտէի 1915, 9, տե՛ս Отчет о деятельности... 1917, 40-41, Թումանյան 2003, 283, Հարությունյան 2005, 100:

¹⁷ Отчет о деятельности... 1917, 41:

¹⁸ Տեղեկագիր 1916, 31, 41:

բազմաթիվ մարդիկ թիթեղյա տուփերով շրջում էին Թիֆլիսի փողոցներով և, «Փախստական կինը՝ երեխային գրկած» նկարը բաժանելով, հանգանակություն հավաքում¹⁹:

ԿՀԲԸ-ի կրթամշակութային գործունեությունը

ԿՀԲԸ-ն և ՀԿԿ-ն մեծ աշխատանք տարան փախստական-գաղթականների և հատկապես որբերի շրջանում կրթական գործի կազմակերպման ոլորտում: 1914 թ. սկզբին ԿՀԲԸ-ն հիմնել էր 111 դպրոց: Դրանց անխափան աշխատանքը կազմակերպելու համար Ընկերությունը ծախսեց 20.589 ռ. 26 կ.²⁰: 1915/1916 ուստարում դպրոցների թիվը հասավ 125-ի, իսկ ֆինանսավորման չափը՝ 30.050 ռ.²¹: 1915 թ. ընթացքում ԿՀԲԸ-ի և ՀԿԿ-ի ջանքերով Արևմտյան Հայաստանից գաղթած երեխաների համար բացվեց ևս 32 դպրոց, որտեղ դասավանդում էին հիմնականում արևմտահայ ուսուցիչներ (թվով՝ 62)²²:

1916/1917 ուստարվանից արդեն գործում էր 147 դպրոց (11.130 աշակերտ և 255 ուսուցիչ): Ֆինանսավորման հոգսն իր վրա էր վերցրել թագավորի դստեր հովանավորությամբ գործող «Մեծ Իշխանուհի Տատյանա Նիկոլանայի կոմիտեն»²³: Կոմիտեն, որը լուծեց գաղթականական դպրոցների ուսուցիչների վարձատրության հարցը, զբաղվում էր կորած երեխաներին որոնելու, ինչպես նաև ապաստարաններում գտնվող որբերին լուսանկարելու աշխատանքներով:

Բարեգործական ճաշարանը

Պատերազմի սկսվելուց հետո ԿՀԲԸ-ի մասնաշենքում շարունակում էր իր աշխատանքը բարեգործական ճաշարանը, որից օգտվում էին Թիֆլիսի դպրոցներում սովորող չքավոր աշակերտները: Ճաշարանը, անցած տարիների պես, գործեց ողջ տարին, բացառությամբ ամառային արձակուրդների: Ճաշող աշակերտները բաժանվել էին երկու կարգի՝ ա) անվճար և բ) վճարով ճաշողներ:



Բարեգործական ճաշարանը

¹⁹ Տեղեկագիր 1919, 24-25:

²⁰ Տեղեկագիր 1915, 5:

²¹ ԿՀԲԸ-ի նպաստով պահվող դպրոցների ցուցակը 1915/16 թթ. ուսումնական տարում, տե՛ս Տեղեկագիր 1916, 4-14:

²² Տեղեկագիր 1915, 7:

²³ 1916/17 ուսումնական տարում գործող դպրոցների ցանկը տե՛ս Տեղեկագիր գործունեության Կովկասի Հայոց բարեգործական ընկերության կից Պատերազմից վնասուածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտեի եւ պետական միջոցներով կովկասեան ճակատի փախստականների պարենաւորման բաժանման 1917, 20, 22-29, Տեղեկագիր 1919, 35:

1915 թ. ընթացքում ճաշարանից օգտվել է 326 մարդ (204-ը՝ անվճար, 122-ը՝ վճարովի): Տարվա ընթացքում տրվել է 60.953 ճաշ և ծախսվել է 9.789 ռ. 30 կ.²⁴:

Գրադարան-ընթերցարանը

Չնայած պատերազմի հարուցած դժվարություններին՝ ԿՀԲԸ-ի՝ Թիֆլիսում գտնվող կենտրոնական գրադարան-ընթերցարանը շարունակեց իր գործունեությունը: 1915 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ գրադարանն ուներ



Ընթերցարանի դահլիճը




Գրադարանի գլխավոր սենյակը

17.716 կտոր գիրք (14.251 ռ. 74 կ. ընդհանուր արժեքով), որոնցից 10.016-ը՝ ռուսերեն, 6.000-ը՝ հայերեն, իսկ 1.700-ը՝ ֆրանսերեն²⁵: 1915 թ. ընթացքում գրադարանից օգտվում էր 40.000 մարդ²⁶:

Արհեստանոցներ

Գաղթականության տարրական կենսապայմաններն ապահովելու լավագույն միջոցը նրանց աշխատանքով ապահովելն էր: Սակայն նորեկների մեջ աշխատունակ անձանց թիվը խիստ փոքր էր (տղամարդկանց մեծ մասը ծեր էին ու երեխա, կային նաև վիրավորներ: Ուստի ԿՀԲԸ-ն որբանոցներին կից ստեղծեց արհեստանոցներ: Այդ կերպ Ընկերությունը որբերի համար ապագայում ապրուստի միջոց վաստակելու հնարավորություն էր ընձեռում:



Գաղթականների ջուլիականոց (Թիֆլիս)

1915 թ. Թիֆլիսում իշխանուհի Մ. Թումանյանի նախաձեռնությամբ, արհեստագործական ուսումնարանի տնօրեն Հ.Ա. Ակունյանի հետ համատեղ, գաղթա-

²⁴ Տե՛ս Տեղեկագիր 1916, 16-17:

²⁵ Համբաւաբեր 1915, N 1, 1 դեկտեմբերի, 32:

²⁶ Տե՛ս Տեղեկագիր 1916, 15:

կանների համար բացվեց կազմարարական-գծային-ծրարային արհեստանոց: Աշխատանքը բարդ չէր, և արհեստանոցում կարող էին աշխատել ինչպես կանայք, այնպես էլ՝ երեխաները: Բացումից մեկ ամիս անց այստեղ աշխատում էր 7-30 տարեկան 21 մարդ²⁷: Այնուհետև բացվեցին կարուձևի, ջուլիակագործության և կոշկակարության արհեստանոցներ (կոշկակարանոցը բացվեց Ա. Մելիք-Ազարյանցի* տանը)²⁸:

Միայն Թիֆլիսում Մ. Թումանյանի նախաձեռնությամբ և անձնական վերահսկողությամբ գործում էր 6 արհեստանոց²⁹: Արհեստանոցներին պատվերներով աջակցում էր «Քաղաքների միությունը»: Վերջինս գաղթականներին մեծ քանակությամբ հագուստ էր ուղարկում³⁰: 1916 թ. ԿՀԲԸ-ի նախաձեռնությամբ կարուձևի արհեստանոցներ բացվեցին նաև Քարվանսարայում, Դիլիջանում, Ղարաքիլիսայում, Երևանում, Կարսում, Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում և Իգդիրում³¹:

Թիֆլիսում, Դիլիջանում, Ալեքսանդրապոլում, Ախալքալաքում և Ելիզավետպոլի գավառներում գործող արհեստանոցներում աշխատում էին ավելի քան 800 գաղթականներ և որբեր³²: Ջուգահեռաբար՝ գյուղատնտեսությամբ և մեղվապահությամբ զբաղվելու համար նրանց տրամադրվել էր 24 դեսյատին հող, որից 11-ը՝ Դիլիջանում, 10-ը՝ Ալաշկերտում և 3-ը՝ Ախալքալաքում:

ԿՀԲԸ-ն իր մասնաճյուղերում ստեղծել էր նաև աշխատանքի ընդունման գործակալություններ: 1915 թ. հունվարի 15-ի դրությամբ աշխատանք էր ստացել 500 գաղթական (1 ռ. 40 կ. օրավարձով)³³: Դա զգալիորեն թեթևացնում էր Բարեգործականի հոգսը, քանի որ նշված գումարը բավական էր 5-6-հոգանոց ընտանիքը կերակրելու համար: Փորձը ցույց էր տալիս, որ օգնության այս մեթոդն ամենաարդյունավետն էր: Փախստականների մասին 1915 թ. օգոստոսի 30-ի օրենքով հայ փախստականները կարգավիճակ ստացան, որը նրանց հնարավորություն տվեց օգտվելու կառավարության հատկացրած դրամական միջոցներից³⁴:

²⁷ Տեղեկագիր 1915, 12, Համբաւաբեր 1915, N 1, 1 դեկտեմբերի, 31, Թումանյան 2003, 311-316:

* **Ալեքսանդր Մելիք-Ազարյանց** (1847-1923) – հայ բարերար և գործարար: Եղել է ԿՀԲԸ-ի պատվավոր անդամ, Ներսիսյան ճեմարանի պատվավոր հոգաբարձուներից մեկը: Բաքվում ունեցել է նավթահանքեր, ինչպես նաև պղնձի հանքավայրեր ու քարե ջրաղացներ: Թիֆլիսի առաջին եկամտաբեր տունը կառուցվել է 1912-1915 թթ., որը պատկանում էր Ա. Մելիք-Ազարյանցին:

²⁸ Համբաւաբեր 1915, N 1, 1 դեկտեմբերի, 30:

²⁹ Տե՛ս Отчет о деятельности... 1917, 35:

³⁰ Թումանյան 2003, 317:

³¹ Համբաւաբեր 1916, N 2, 3 յունուարի, 49:



³² Արհեստանոցների ցանկը տե՛ս Отчет о деятельности... 1917, 35:

³³ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 378, թ. 58-շրջ:

³⁴ Յարութիւնեանց 1915, 12-14:

Խուդադյան ապաստարանի և ՀԿԿ-ի որբախնամ գործունեությունը

ԿՀԲԸ-ն իրականացնում էր նաև որբախնամ գործունեություն: Խուդադյան ապաստարանում 1914 թ. սեպտեմբերի 1-ին սանուիկների թիվը 22 էր, նույն թվականին ընդունվեցին ևս 6 նոր սանուիկներ, այնպես որ 1915 թ. հունվարին այնտեղ ապաստարանել էր 28 հոգի: Սանուիկներից մի քանիսը հետագայում աշխատանքի անցան որպես ուսուցչուհիներ, իսկ ոմանք էլ սկսեցին աշխատել գուլպայագործական և գլխարկներ պատրաստելու արհեստանոցներում: Բարեգործական ընկերության խորհուրդը զգեստների և այլ կարիքների համար ավարտողներին հատկացրել էր 300-350 ռ.³⁵:



Խուդադյան ապաստարանի սանուիկները

ՀԿԿ-ն նույնպես ծավալել էր որբախնամ գործունեություն՝ փախստական ու անպաշտպան երեխաների համար հիմնելով հատուկ ապաստարաններ և որբանոցներ, որոնք պահվում էին պետական միջոցներով, ինչպես նաև ԿՀԲԸ-ի հանգանակությունների և բարերարների ֆինանսական աջակցությամբ: Որբերին հավաքելու և որբանոցներ բացելու հսկայական աշխատանքներ են տարել ԿՀԲԸ-ի հետևյալ մասնաճյուղերը՝ Դիլիջանի, Քարվանսարայի, Կարսի, Գանձակի, Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի և Իգդիրի:

ՏԱՆԻՈՒԹՅՈՒՆ № 3
„ՀԱՄԱՐԱԽՈՐԴՆԵՐ“-Ի
ԱՆՈՒՄԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԴՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱՍԿԱՆ ՈՐԲ ԵՐԵՄԱՆԵՐԻ
ԴՆԱՆՈՒՄԱՅԻՆ Ե ԿՐԻՍՏՈՒՄԱՅԻՆ

№	ԵՐԵՄԱՆԻ ԵՐԵՄԱՆ	Միջին	Տարի	Միջին	Տարի	Միջին	Տարի	Միջին	Տարի
1	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
2	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
3	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
4	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
5	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
6	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
7	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
8	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
9	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
10	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
11	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
12	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
13	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
14	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
15	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
16	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
17	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
18	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
19	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
20	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
21	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
22	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
23	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
24	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
25	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
26	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
27	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
28	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
29	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
30	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
31	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
32	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
33	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
34	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
35	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
36	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
37	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
38	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
39	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
40	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
41	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
42	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
43	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
44	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
45	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
46	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
47	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
48	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
49	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
50	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
51	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914
52	Արմենակ Երեմյան	12	1914	12	1914	12	1914	12	1914

³⁵ Տեղեկագիր 1916, 16:

³⁶ Գործող որբանոցների ցուցակները տե՛ս Отчет о деятельности... 1917, 31-34:

ԿՀԲԸ-ն «Համբաւաբերի» էջերում հրապարակեց նաև ապաստարանների երեխաների անվանական ցուցակները: ՀԿԿ-ն, 1917 թ. սկզբից զբաղվելով մասնավորապես որբախնամ գործունեությամբ, մեծ ուշադրություն էր դարձնում որբանոցների շենքային պայմաններին, սննդի, մաքրության և դպրոցական դաստիարակչական խնդիրներին: Որբանոցների համար հիմնել էր մթերանոց-պահեստներ՝ նրանց հագուստով, կոշիկներով և սննդով ապահովելու համար:

Եզրակացություններ

1914 թ. նոյեմբեր – 1915 թ. առաջին ամիսներին ԿՀԲԸ-ն և նրան կից գործող ՀԿԿ-ն վերակառուցվեցին ռազմաքաղաքական խնդիրներին համապատասխան: Հաշված ամիսների ընթացքում այդ կառույցները կատարեցին պատերազմից տուժած մոտ 100.000 փախստականի ընդունման, տեղավորման, պարենավորման և բուժապասարկման աշխատանքներ, ինչպես նաև կազմակերպեցին հայ որբերի փրկության, նրանց խնամքի և կրթության գործը: ԿՀԲԸ-ի ենթակայության բոլոր կառույցները, չնայած պատերազմական իրադրությանը, շարունակեցին իրենց բնականոն գործունեությունը:

Հետագայում, երբ Արևմտյան Հայաստանի մեծ մասն ազատագրվեց, ԿՀԲԸ-ն քայլեր ձեռնարկեց փախստականներին իրենց բնակավայրերը վերադարձնելու և ավերված տներն ու տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ:

Գրականություն

- Ադամյան Ն.Ս. 2020, Կովկասի հայոց բարեգործական ընկերության պատմությունից (1881 թ. – 1914 թ. սեպտեմբեր), Պատմաբանասիրական հանդես, Երևան, N 2, էջ 97-112:
- Ալեքսանդր Խատիսյան 2023, Անտիպ գործեր, նամակներ, նյութեր և փաստաթղթեր, աշխատասիրությամբ՝ Վլադիմիր Հարությունյանի, Երևան, հեղ. հրատ., 752 էջ:
- Բեիբուլյան Ս. 1967, Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը (համառոտ տեղեկանք), «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, N 1, էջ 228-232:
- Դանիելյան Է.Գ. 2017, Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը), Երևան, «Մեկնարկ», 240 էջ:
- Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերության Կովկասում 1881-1911, 1911, կազմող՝ Լեօ, Թիֆլիս, տպարան Մն. Մարտիրոսեանցի, 360 էջ:
- Թումանյան Մ. 2003, Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, կազմ., առաջ. և ծանոթ. Ա. Բախչինյանը, Երևան, ԳԱԹ հրատ., 416 էջ:
- Լեօ 1891, Կովկասի Հայոց բարեգործական ընկերության տասնամեակը, Տարագ, Թիֆլիս, N 48, էջ 706-717:
- Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 28, ց. 1, գ. 108, թթ. 57-58 և շրջ., 62 և շրջ., գ. 132, թ. 42-43, գ. 378, թ. 58 շրջ:
- Հարությունյան Ա. 2005, Երևելի տիկնանց դարը: Հայ կանանց հասարակական գործունեությունը XIX դարում և XX դարասկզբին, Երևան, «Հոգևոր Հայաստան», 160 էջ:
- Յարութիւնեանց Ս. 1915, Օրէնք փախստականների մասին (30 օգոստոսի 1915 թ.), Համբաւաբեր, Թիֆլիս, N 1, 1 դեկտեմբերի, էջ 12-14:
- Համբաւաբեր 1915, Թիֆլիս, N 1, 1 դեկտեմբերի:

Համբաւաբեր 1916, Թիֆլիս, N 2, 3 յունուարի:

Համբաւաբեր 1916, Թիֆլիս, N 4, 17 յունուարի:

Հորիզոն 1914, Թիֆլիս, N 204, 17 սեպտեմբերի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտին և Հայաստանի առաջին հանրապետության տարիներին (1914–1920) 2018, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Ամատունի Վիրաբյան, կազմ.՝ Գ. Ավագյան, Ս. Էջմիածնի հրատ., հ. Ա (1914–1917), 672 էջ + 8 ներդիր:

Մնայուն Յուշարձան Կով. Հայոց Բարեգ. Ընկ. XXX-ամեակի 1911, Տարագ, Թիֆլիս, N 12, 28 էջ:

Տեղեկագիր գործունէութեան Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան կից Պատերազմից վնասուածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտէի եւ պետական միջոցներով կովկասեան ճակատի փախստականների պարենատրման բաժանման: 1914 թուի օգոստոսից մինչեւ 1917 թ. յունուար ամիսը, Թիֆլիս, տպ. «Մամուլ», 1917, 119 էջ:

Տեղեկագիր Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան 1914 թ. 1915, XXXIV, Թիֆլիս, տպարան «Մամուլ», 80 էջ:

Տեղեկագիր Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան եւ նրան կից հիմնարկութիւնների 1917 եւ 1918 թ. 1919, XXXVII եւ XXXVIII տարիների, Թիֆլիս, տպարան «Աշխատատուր», 140 էջ:

Տեղեկագիր Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան 1915 թ. 1916, XXXV տարի, Թիֆլիս, տպարարան «Էպոխա», 116 էջ:

Տեղեկագիր Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V-ի բարձր հովանաւորութեան տակ գտնուող Հայկական կենտրոնական կոմիտէի: Սկսած 1914 թի Հոկտեմբերի 5-ից մինչեւ 1915 թի Յուլիսի 1-ը, Թիֆլիս, տպարան «Էպոխա», 1915, 21 էջ:

Альбом армян-беженцев 1917, Թիֆլիս, Հ.Կ. Կոմիտէի հրատ., տպ. Պրօգրէս, 62 с. (հողվածում տեղադրված նկարները վերցված են այս ալբոմից):

Благотворительные учреждения России 1912, С.–Петербург, типография императорского училища глухонемых, 257 с., 124 с.: ил.

Кавказский фронт Первой мировой войны. 1914–1917 гг. Сборник документов 2020, Отв. ред. А.Н. Артизов, сост. к.и.н. Б.Б. Давыдов, Н.Г. Захарова, к.и.н. И.В. Карпеев, С.А. Харитонов, к.и.н. О.В. Чистяков, Е.Е. Колоскова, к.и.н. М.Е. Малевинская, к.и.н. Д.Г. Мартиросян, Ю.В. Басенко, к.и.н. Г.Г. Авагян, к.и.н. С.С. Мирзоян. Москва, Фонд «Связь Эпох», 1168 с., 16 с. илл.

Отчет о деятельности Армянского Центрального Комитета и Отдела по снабжению продовольствием беженцев Кавказского фронта на Казенные средства при Армянском Благотворительном Обществе на Кавказе. С августа 1914 г. по январь 1917 г., Тифлис, типография «Мамуль», 1917, 119 с.

ԴՐՎԱԳՆԵՐ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆԻՅ (1914 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ – 1915 Թ. ՀՈՒՆԻՍ)

Նիւնետա Ադամյան

Ամփոփում

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուն պես Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը (ԿԲԸ) և նրան կից գործող Հայկական կենտրոնա-

կան կոմիտեն (<ԿԿ) վերակառուցվում են ռազմաքաղաքական խնդիրներին համապատասխան: Ընկերությունն ընդլայնեց իր գործունեությունը՝ վիրավոր զինվորների համար հիմնելով հիվանդանոցներ, օգնելով պատերազմում հաշմվածներին ընտանիքներին, օժանդակելով փախստական-գաղթականներին:

1914-1915 թթ. ԿՀԲԸ-ի մասնաճյուղերը շարունակեցին իրենց գործունեությունը՝ անկախ պատերազմական իրավիճակից: ԿՀԲԸ-ն և ՀԿԿ-ն բացեցին որբանոցներ, դպրոցներ, աշխատանքի գործակալություններ և այլն: Ընկերության փոխնախագահ, իշխանուհի Մ. Թումանյանի նախաձեռնությամբ, ՀԿԿ-ի ֆինանսական աջակցությամբ բացվեցին գաղթականական արհեստանոցներ, բարեգործական թեյարան՝ «Մի բաժակ թեյ», որն առաջինն էր տարածաշրջանում, որի ստացած հասույթը օգտագործվում էր Հայկական հիվանդանոցի կարիքները հոգալու և փախստական-գաղթականներին աջակցելու համար: ՀԿԿ-ի աջակցությամբ կազմակերպեց «գթության և ողորմածության» օր:

1914 թ. նոյեմբեր – 1915 թ. առաջին ամիսների ընթացքում ԿՀԲԸ-ն և ՀԿԿ-ն ընդունեցին պատերազմից տուժած մոտ 100.000 փախստականի՝ իրականացնելով նրանց տեղավորման, պարենավորման և բուժապասարկման աշխատանքները: Նրանք կազմակերպեցին նաև հայ որբերի փրկության, խնամքի և կրթության, իսկ հետագայում հայրենի բնակավայրեր վերադարձնելու, ավերված տներն ու տնտեսությունը վերականգնելու գործը:

Բանալի բռներ՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերություն, Հայկական կենտրոնական կոմիտե, գաղթականներ, որբեր, արհեստանոցներ, Մարիամ Թումանյան, դպրոցներ:

ЭПИЗОДЫ ИЗ ДЕЯТЕЛЬНОСТИ КАВКАЗСКОГО АРМЯНСКОГО БЛАГОТВОРИТЕЛЬНОГО ОБЩЕСТВА (СЕНТЯБРЬ 1914 – ИЮНЬ 1915 ГГ.)

Нинета Адамян

Резюме

После начала Первой мировой войны Кавказское армянское благотворительное общество (КАБО) и связанный с ним Армянский центральный комитет (АЦК), исходя из военно-политических соображений, были реорганизованы. КАБО расширило спектр своей деятельности, включив в него создание госпиталей для раненых солдат, помощь родственникам погибших, оказание поддержки беженцам-переселенцам.

В 1914-1915 гг. отделения КАБО продолжали свою деятельность независимо от военной ситуации. Силами КАБО и АЦК были созданы такие учреждения, как детские дома, школы, агентства по трудоустройству. При финансовой помощи АЦК и по инициативе вице-президента благотворительного общества княгини М. Туманян КАБО создало мастерские для беженцев и первую в регионе благотворительную чайную «Чашка чая». Вырученные средства были направлены на

поддержку армянской больницы и беженцев-иммигрантов. При поддержке АЦК был организован день «Благотворительности и милосердия».

В ноябре 1914 г. и в первые месяцы 1915 г. КАБО и АЦК оказали помощь примерно 100 тыс. военных беженцев, предоставив им кров, питание и медицинскую помощь. Помимо этого они занимались спасением, воспитанием и образованием армянских детей-сирот, оставшихся без опекунов. Обе организации оказывали материальное содействие в восстановлении разрушенных домов и хозяйств беженцев, занимались вопросом их репатриации в родные города.

Ключевые слова – Кавказское армянское благотворительное общество, Армянский центральный комитет, беженцы, сироты, мастерские, Мариам Туманян, школы.

EPISODES FROM THE ACTIVITIES OF THE CAUCASIAN ARMENIAN CHARITABLE SOCIETY (SEPTEMBER 1914 - JUNE 1915)

Nineta Adamyan

Abstract

Following the outbreak of World War I, the Caucasian Armenian Benevolent Society (CABO) and its associated Armenian Central Committee (ACC) were reorganized to align with military and political considerations. The organization broadened its range of activities, including the establishment of hospitals for wounded soldiers, assistance for the loved ones of war victims, and support for refugee settlers.

In 1914-1915, CABO branches carried on with their activities regardless of the war situation. Institutions like orphanages, schools, and employment agencies were established by CABO and ACC. With the financial aid of the ACC and the initiative of Princess M. Tumanyan, Vice-President of the Charitable Society, CABO created workshops for refugees and the first charitable tea house "Cup of Tea" in the region. The funds generated were employed to support the Armenian Hospital and immigrant refugees.

A "Charity and Charity" day was also organized with the support of the ACC. In November 1914 and the initial months of 1915, CABO and the ACC offered aid to around 100,000 war refugees by providing shelter, sustenance, and medical treatment. They additionally managed the rescue, upkeep, and education of Armenian orphaned children who were left without guardians. Furthermore, they helped to reconstruct the destroyed homes and households of the refugees, repatriating them to their hometowns.

Key words – Caucasian Armenian Benevolent Society, Armenian Central Committee, refugees, orphans, workshops, Mariam Tumanyan, schools.

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Արևիկ Մելիքյան

Սարգսարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Ազատագրական պայքարի պատմության բաժին

ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Արաքս, Դանիել-Բեկ Փիրումյան փող. 1

Էլ. հասցե՝ arevikmeliqyan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 15.11.2021, գրախոսվել է 16.03.2023, ընդունվել է տպագրության 07.08.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.2-43

Ներածություն

Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան, 1879-1919) առանձնահատուկ տեղ է գրավում հայ ազատագրական պայքարի պատմության մեջ: Նրա մեծությունը դրսևորվեց իր ապրած ժամանակաշրջանի հարուստ իրադարձությունների բովում (ցեղասպանություն, Վանի հերոսական պաշտպանություն, Մայիսյան հերոսամարտեր): Իրադարձություններ, որոնց շնորհիվ վերականգնվեց Հայոց անկախ պետականությունը: Անգնահատելի է Արամ Մանուկյանի դերակատարումը այդ պատմական ժամանակաշրջանում:

Արամ Մանուկյանի մասին լույս են տեսել գրքեր, հոդվածներ, արխիվային փաստաթղթեր: Պահպանվել են նաև հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ նրա ընկերների ու ժամանակակիցների հուշերում, որոնք բացահայտում են Արամ հեղափոխական գործչին ու մարդուն: Նրա մասին հուշեր են գրել Ռուբեն Տեր-Մինասյանը, Արշավիր Շահխաթունին, Արշալույս Աստվածատրյանը և ուրիշներ: Արամի մահվան առիթով 1919 թ. «Աշխատանք» թերթը թողարկել է հատուկ համար, իսկ մահվան 50-ամյակի կապակցությամբ լույս է տեսել «Արամը Մահուան յիսնամեակին առթիւ» գիրքը, որի էջերում զետեղված են ժամանակակիցների հուշ-հոդվածները: Արամ Մանուկյանի մասին տեղեկությունները շատ են ու տարաբնույթ: Մենք ընտրել ենք դրանցից մի քանիսը, որոնցում անդրադարձ է կատարված մեծ հայորդու մանկությանը, ուսումնառության տարիներին, մանկավարժական ու հեղափոխական գործունեությանը՝ փորձելով ներգրավել սովորում մնացած փաստերը:

Հուշագիրները հիացմունքով են խոսում Արամի անձի, ազգային-հեղափոխական գործունեության, ժողովրդի վրա նրա թողած ազդեցության և հայոց կյանքում կատարած դերի մասին: Բազմաբնույթ տեղեկություններով հարուստ այդ նյութերը հնարավորություն են տալիս տեղափոխվելու այդ ժամանակաշրջան՝ ամբողջական կարծիք կազմելու Արամ Մանուկյանի մասին, ծանոթանալու նրա կյանքի հանգամանքներին:

Ուսումնառության շրջանը

Արամ Մանուկյանը Հովհաննիսյան ընտանիքի կրտսեր զավակն էր՝ սիրված բոլորի կողմից: Ուսման հարգը իմացող հայրը որդուն տանում է Շուշիի Ագուլյաց ծխական երկսեռ դպրոց և տեսչին խնդրում. «Վարժապետ, տղղաս պերալըմ վեր լուս հըվաքի, չորա դօլը մըթէն ա, թող մըզ նըման քէօն չըմնայ»¹:

Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցում² ուսանելու տարիներին նա ընդգրկվում է դաշնակցական խմբի մեջ: Արամի հեղափոխական գործունեությունն աննկատ չի մնում թեմական դպրոցի տեսուչների աչքից, և նրան հեռացնում են այնտեղից (1900-1901 ուստարվա վերջին), արտաքսում են նաև քաղաքից: Երևանի թեմական դպրոցում ուսանելիս ևս նա մասնակցում է ազգային-հասարակական շարժումներին: Արամը պատրաստում էր «դասախոսություններ, ռեֆերատներ... կապ պահում ուրիշ քաղաքների աշակերտական միությունների հետ և մասնակցում կուսակցական ընդհանուր գործունեությանը»³:

Թեպետ ուսման ծարավ էր և շատ կուզենար շարունակել կրթությունը, սակայն հայրենիքի փրկության գործը առաջնային էր նրա համար: 1912 թ. Ժնևում կայացած ՀՅԴ ուսանողական համագումարի ժամանակ արտասանած ճառում նա ասում է. «Ընկերներ, դուք երջանիկ էք, որ միջնակարգ դպրոցն յետոյ հնարատրութիւն ունեցաք համալսարան մտնելու: Ես, սակայն, իմ ընկերների հետ միասին զուրկ էի այդ հնարատրութիւնից: Մենք թեմականը աւարտելուց յետոյ մեր հայեացքը ուղղեցինք դէպի Հայաստան, ուր, ճիշտ է, «յաւելեալ արժէք» չկար, բայց կար «յաւելեալ արին»: Անմիջապէս անցանք Երկիր, ուր և մէկը միւսի յետևից ընկան մեր լաւագոյն ընկերները»⁴:

Արամ Մանուկյանը Ռուբեն Տեր-Մինասյանի հուշերում

1902 թ. սկսած՝ նա զբաղվել է հեղափոխական գործունեությամբ: «Հայ յեղափոխականի մը յիշատակները» վերնագիրը կրող հուշագրության մեջ Ռուբեն Տեր-Մինասյանն⁵ անդրադարձել է նրա հայրենանվեր գործունեությանը՝ ներկայացնելով բազմաթիվ հետաքրքիր ու կարևոր պատմություններ Արամի մասին: Ռուբեն Տեր-Մինասյանի որդին՝ Վահե Տեր-Մինասյանը, գրել է. «Այսպէս են պատմած ինծի, որ Արամի անկենդան մարմնի առջեւ, հայրս խնդրած է, որ փոքր տեղ մը պահեն անոր գերեզմանին մէջ, որպէսզի, երբ իր գործը աւարտէ, գայ հանգչելու իր ընկերոջ կողքին, ինչպէս որ ապրած ու

¹ Թաղե 1929, 28:

² Ասրյան 2009, 13-14:

³ Վրացյան 1919, 2:

⁴ Թաղե 1929, 29:

⁵ Ռուբեն Տեր-Մինասյանը եղել է ֆիդայի, ռազմական, պետական, կուսակցական-քաղաքական գործիչ, զինվորական նախարար (1920 թ. ապրիլի 3 – նոյեմբերի 23):

գործած էին կողք կողքի... Չկայ մեկը որ ասելի ուժեղ դրոշմ դրած լինի հորս վրայ քան Արամը: Չկայ մեկը որուն հայրս ասելի սիրած լինի քան Արամին»⁶:

Ռ. Տեր-Մինասյանը Արամին առաջին անգամ հանդիպել է Կարսում, որտեղ Արամը զբաղված էր ոչ միայն գործիչներ պատրաստելով, այլև կազմակերպչական-քարոզչական աշխատանքներով⁷: Ռուբենը հենց Արամի մոտ էլ ստացել է իր հեղափոխական մկրտությունը⁸:

Առաջին իսկ պահից Ռուբենը նկատել է Արամի տպավորիչ արտաքինը. «Ցաւոտ աչքերով մարդը խիստ կ'երեւար, եւ կարծես ան էր մեծաւորը... ան այդտեղ հաւաքուածներուն մէջ ամենէն սիրելին, ամենէն յարգուածն էր»⁹: Ռուբենը Արամին բնութագրել է որպէս խստապահանջ, գործին նվիրված, կատակասեր մարդ. «...այժմ ան ցերեկուան խոժոռ մարդը չէր. ընդհակառակն, ամէնուն հետ կը խօսէր, կը կատակէր եւ որուն որ խօսք մը ըսէր՝ ան կը հալուէր, կ'երջանականար...»¹⁰: Տպավորված Արամի ելույթով՝ նա նշում է. «Կարսի Սերգէյն էր, որ հետագային եղաւ Վանի Արամ: Ան յետոյ դարձաւ Երեւանի դիկտատոր Արամը»¹¹:

Նմանատիպ ելույթներից մեկի ժամանակ Արամը ցավով էր հիշել իր նահատակված ընկերներին, որոնք անմահության էին արժանացել. «Սիրելիք, լացը, սուգը նրանց համար չէ... Լացը, սուգը մեզի համար է, որ խօսում ենք նահատակութիւնից, բայց վախենում ենք վաստակել զայն...»¹²:

Արամը մտադիր է եղել Կարսից անցնել Սասուն, բայց Սասունի անկման լուրն առնելուց հետո մեկնել է Վան, որտեղ էլ սկսվել է նրա եռանդուն գործունեությունը: 1906 թ. Արամը մեկնել է Վիեննա՝ ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովին մասնակցելու նպատակով: Նա ընդհանուր ժողովից հետո կրկին վերադարձել է Վան, որտեղ էլ մնացել է մինչև 1915 թ.:

Երկու ընկերները դարձյալ հանդիպել են այս անգամ արդեն Վանում: Ռուբենն այսպես է բնութագրել նրան. «Արամը Վանի կուռքն էր, անոր ուժի, կամքի մարմնացումը»¹³: Շնորհիվ իր խոհեմ և զուսպ վարվելաձևի՝ նա այստեղ կարողացել է շահել տեղացիների սերն ու համակրանքն ու քայլ առ քայլ իրականացնել իր առջև դրված խնդիրները: Արամն իր համախոհների հետ ստեղծել է մարտական խմբեր, երկիր ներկրել զգալի քանակությամբ զենք, ժողովրդին վարժեցրել զենքի գործածության և կռվի փորձառության մեջ, հիմնել կրթօջախներ և կազմակերպել իրավական օգնություն: Նա իր զինակիցների հետ եղել է ինքնապաշտպանության հիմնական կազմակեր-

⁶ Ռուբեն 1982, 2, 5:

⁷ Ստեփանյան 2010, 111:

⁸ Ստեփանյան 2008, 9:

⁹ Ռուբեն 1982, 1, 41-42:

¹⁰ Ռուբեն 1982, 1, 42:

¹¹ Ռուբեն 1982, 1, 42:

¹² Ռուբեն 1982, 1, 45:

¹³ Ռուբեն 1982, 2, 89:

պիչն ու ոգեշնչողը: Աշխատանքներն անարդյունք չեն անցել, և տեղի հայությունը 1915 թ. դիմել է հերոսական ինքնապաշտպանության: Պաշտպանությունն իրականացվել է գրեթե անթերի, որի շնորհիվ փրկվել է Վանի հայության ճնշող մեծամասնությունը:

Արամ Մանուկյանի գործունեությունը Երևանում

Հետագայում նա հեռացել է Վանից և մինչև 1917 թ. դեկտեմբերը հաստատվել Թիֆլիսում՝ ակտիվորեն մասնակցելով Կովկասում ընթացող ազգային-քաղաքական կյանքին: Հայոց ազգային խորհրդի որոշմամբ 1917 թ. դեկտեմբերի վերջին Արամը գնում է Երևան: Ռուբենն իր հուշերում անդրադարձել է նաև Արամի՝ ներքին գործերի նախարար եղած ժամանակահատվածին. «Կառավարության գալով՝ Երեւանի Ազգային Խորհուրդը լուծեցաւ, բայց Արամը նորաստեղծ իշխանութեան մէջ ալ մնաց ծանրութեան կեդրոնը»¹⁴:

Հայաստանի Առաջին հանրապետության կառավարության մեջ Ա. Մանուկյանը ներքին գործերի նախարար էր (նախարար նշանակվել է 1918 թ. հուլիսի 26-ին)¹⁵: Այս մասին Ռուբենը գրել է. «1918ին, երբ Հայաստանի օրինական կառավարութեան Քաջազնունու դահլիճն էր կազմած, փաստօրէն կառավարութիւնը մնում էր Արամը, թէեւ նա ներքին գործոց նախարար էր միայն»¹⁶:

Ներկայումս, երբ վտանգված են Հայաստանի սահմանամերձ տարածքները, ինչպես նաև Սյունիքի ճակատագիրը, անդրադառնանք 1918 թ. ամռանը Արամ Մանուկյանի և Կովկասյան ճակատի թուրքական զորքերի գերագույն հրամանատար Խալիլ փաշայի հանդիպմանը: Նշենք, որ թուրքական գաղափարախոսության մեջ ոչինչ չի փոխվել այս 100 և ավելի տարիների ընթացքում, և պատմական, քաղաքական իրավիճակները բավական նման են իրար: Հանդիպման ժամանակ քննարկվել է Հայաստանի սահմանների ընդլայնման հարցը, որի շրջանակում արծարծվել է նաև Մեղրիի խնդիրը: Նա, ինչպես միշտ, այստեղ էլ ցուցաբերել է բացառիկ հետևողականություն ու խոհեմություն: Ռուբենն այս մասին գրում է. «Արամը Խալիլ փաշայից (որ եկած էր Երևան այցի) կը պահանջէր սահմանների ընդարձակում եւ ապրելու հնարաւորութիւն: Խալիլ փաշան... կանխիկ կ'առաջարկէր, որ հայերը դատարկեն Զանգեզուրի Մեղրի գաւառակը, որպէսզի իրենք անմիջապէս կապուին Բագուի հետ. ի փոխարէն դրան պատրաստ էր ի հաշիւ Ադրբեջանի ընդարձակել Հայաստանի սահմանները դէպի Զիւանշիր եւ Վարանդա: Դա փաստօրէն կը նշանակէր ուժ տալ փան-թուրանիզմին: Նա կ'առաջարկէր

¹⁴ Սուքիասյան 2010, 98:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 10, թ. 1:

¹⁶ Ռուբեն 1990, 7, 312:

զինուորական դաշինք կնքել դաշնակիցների դեմ... Այս խօսակցությունները ոչնչով վերջացան, մնաց եղած վիճակը: Միակ օգուտը եղավ այն, որ Արամի անձնական կապի շնորհիւ, Խալիլ փաշան Հայաստանին շնորհեց 25 000 փութ ցորեն գաղթականաց համար... Եկած ցորենը բաժանուեց սովահարներին...»¹⁷: Նրա փորձն այսօր մեզ կարող է օգնել հայ ժողովրդի համար շահեկան դիրքերից բանակցել հարցի լուծումը գտնելու համար:

Համատեղ գործունեության ընթացքում Արամն ու Ռուբենը շատ հարցերում եղել են համամիտ: 1918 թ. Հայաստանի Հանրապետության նորաստեղծ կառավարությունը բազմաթիվ խնդիրների շարքում ստիպված էր լուծել նաև շատ կարևոր մի խնդիր. հարկավոր էր շատ արագ իրականացնել որբ երեխաների փրկության գործը: ՆԳ նախարար Ա. Մանուկյանը հանդես է գալիս որբերին օգնելու անհրաժեշտության մասին կոչով. «...50 000-ի հասնող որբերի մի ամբողջ սերունդ խնամելն ու դաստիարակելն այսօր մեզ համար ինքնօգնության լավագույն ակտերից մեկն է, որ պետք է կատարենք մեր բովանդակ ուժերը լարելով և մեր հոգու ամբողջ կորովը կյանքի կոչելով... Մեծ է կարիքը, միջոցները՝ սուղ, ժամանակը՝ կարճ... Փրկեցե՛ք նրանց»¹⁸: Որբերի հետ կապված խնդիրներում Արամն անգամ պատրաստ էր գնալ ծայրահեղ քայլերի և խախտել գործող օրենքները: Այդ օրերին դպրոցական համակարգը կանոնավորելու համար ազատվել են տարբեր հաստատությունների կողմից զբաղեցված դպրոցական շենքերը, իսկ Ռ. Տեր-Մինասյանի նախաձեռնությամբ Երևանի դպրոցներից մեկի շենքը, առանց օրինական թույլտվության, վերածվել է որբանոցի: Լսելով այդ կապակցությամբ Երևանի փոխքաղաքագլուխ Ա. Աստվածատրյանի բողոքներն ու Ռուբենի այն արդարացումը, թե՛ «Ողջ եւ ապահով երեխաների ուսման հարցն աւելի կարևոր չէ, քան փողոցներում թափուածների ու քաղցի ճիրաններում գալարուողների կեանքը», Արամը հավանություն է տալիս Ռուբենի վարմունքին՝ ասելով. «Կան դէպքեր, երբ օրէնքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցաւորներ ու չարագործներ կը դառնանք, մանաւանդ, երբ դէպքերը տեղի են ունենում գահավէժ արագութեամբ եւ ստեղծում դրոպիւններ, որոնք օրէնքը չէր կարող նախատեսել»¹⁹:

Արշավիր Շահխաթունու հուշերը

Մեկ այլ հուշագրության հեղինակը Երևանի զինվորական պարետ Արշավիր Շահխաթունին է: Այն կրում է «Սարդարաբադի հերոսամարտը եւ մահափորձ Արամ փաշայի դէմ» խորագիրը: Հուշերը գրվել են թարմ տպավորությունների ներքո: Այդ օրերին Երևանի Հայոց ազգային և Զինվորական

¹⁷ Ռուբեն 1990, 7, 145:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 599, թ. 1-2:

¹⁹ Արամը Մահուան յիսնամեակին առթիւ 1991, 139-140:

խորհուրդների Հատուկ կոմիտեի հրամանով Երևան քաղաքի պահպանությունը հանձնվել է պարետ Ա. Շահխաթունուն²⁰:

Հուշերում արձանագրվել են Արամի հետ համատեղ գործունեության ընթացքում տեղի ունեցած դեպքերն ու փաստերը: 1918 թ. մայիսին Ալեքսանդրապոլ-Սարդարապատ-Երևան ուղղությամբ հարձակվող թուրքական ուժերը ներխուժել են Արարատյան դաշտ: Վտանգ էր սպառնում Էջմիածնին և Երևանին:

Հուշերը սկսվում են թուրքական ներխուժման նկարագրությամբ: Ա. Շահխաթունին ներկայացնում է իր և զորավար Մ. Սիլիկյանի հեռախոսագրույցը. «Չունեն որևէ պահեստի զինվոր՝ թշնամուն դիմադրելու համար... Հայտնեցեք Արամ փաշային՝ գաղտնապես, թե պիտի աշխատեն նահանջել դեպի Ղարխունի ճահիճները և ամրանալ Թոզ-Թեփեղերի վրա: Դուք ամրացրեք Երևանը: Տեղի մի՛ տվեք շփոթության և իրարանցումի»²¹:

Այդ բախտորոշ օրերին դրսևորվել է Ա. Մանուկյանի՝ թշնամուն հակահարված հասցնելու աներեր վճռականությունը: Նրա վճիռները համարձակ էին և խելացի: Ա. Շահխաթունու հուշերում Արամը գտնվում է գործողությունների կիզակետում, կարողացել է բոլորին համախմբել մեկ նպատակի շուրջ. «Այստեղ պետք է ավելացնեմ, որ Արամը այդ օրերին աներևակայելի եռանդ էր ցույց տալիս բանակի կազմակերպման և ինքնապաշտպանության համար՝ ամեն կողմ երիտասարդ ուժեր ուղարկելով՝ քարոզելու, թե հայ ժողովրդի համար ստեղծված է «լինել, թե չլինելու» հարց: Գիշերները նա չէր քնում, մինչև առավոտյան ժամը 3-ը ոտքի վրա էր: Ամեն հարցի մեջ մտնում էր, որպեսզի ամեն ինչ իր կարգադրությամբ լիներ: Հույս էր տալիս բոլորին, և նրա այդ ընթացքը ապահովություն էր ներշնչում ժողովրդին: Ա. Մանուկյանն ամենաօրհասական պահին անգամ չէր կորցնում մարտական ոգին: Նրան չիուսահատեցրեց նույնիսկ Ալեքսանդրապոլի անկման լուրը: «Արամի դեմքը չայլալվեց, բայց երևի իմ դեմքը փոխվել էր, որ նա ինձ ասաց. «Ի՞նչ է պատահել: Զղերդ մի կողմ: Դեպի գործ և աշխատանք: Հաղթողը մենք ենք լինելու»²²:

Այնուհետև Արամին տեսնում ենք Երևանի մերձակայքում՝ Ուշ-թեփեղերիում (Երեք բլուրներ), որոնք ամրացվել էին Երևանի պաշտպանության համար: Արամը, դիտելով այդ բլուրները, ասել է. «Սրանք մեր վերջին ամրոցներն են: Բայց քաջահույս եմ, որ մինչև այդտեղ թշնամին չպիտի հասնի...»²³:

Նշենք, որ Արամի և Խալիլ փաշայի հանդիպմանը անդրադարձել է նաև Ա. Շահխաթունին: 1918 թ. ամռան վերջին Արամը Երևանում ընդունում է

²⁰ ՀԱԱ ֆ. 289, ց. 1, գ. 4, թ. 6:

²¹ Շահխաթունի 1959, 21:

²² Շահխաթունի 1959, 21-22:

²³ Շահխաթունի 1959, 21-22:

Խալիլ փաշային: Խալիլի ցանկությամբ Արամը նրան ուղեկցում է Թ. Նազարբեկյանի մոտ, այնուհետև՝ Սբ Էջմիածին՝ կաթողիկոսի հետ հանդիպելու: Նա խոստանում է կատարել Խալիլի ևս մեկ ցանկություն՝ հայերի օգնությամբ ապահով հասնել Էրզրում՝ դրա փոխարեն պահանջելով թուրքերի ձեռքում գտնվող Կարսի զինապահեստներից փամփուշտ ստանալ Հայոց բանակի կարիքների համար: Նրա համար հայրենիքի սահմանների պաշտպանությունը կարևորագույն խնդիրներից էր: Զուգահեռներ անցկացնելով Հայաստանում ստեղծված այսօրվա օրհասական դեպքերի հետ՝ կարող ենք հետևություն անել. եթե Արամի նման հայրենասպետ շատ գործիչներ ունենայինք և մեր բանակը համալրեինք ժամանակակից տեխնիկայով, Արցախյան երկրորդ պատերազմն այլ ելք կունենար:

Արշալույս Աստվածատրյանի հուշերը

«Սարգսրապատի պատմաշինությունը և այլ երկեր» գրքում Արշալույս Աստվածատրյանը²⁴ հանգամանորեն ներկայացրել է Արամ Մանուկյանի անձնական կյանքի շատ դրվագներ²⁵: Դրանք ոչ միայն հուշեր են, «այլ նաև անոր կյանքին ու գործին ամբողջ պատմությունը, անոր լուսաշող դիմագծի վերլուծությունն ու արդար արժեքավորումը»²⁶:

Ա. Աստվածատրյանը Արամին առաջին անգամ հանդիպել է 1901 թ. Երևանի թեմական դպրոցում: Նա աշակերտական մի հավաքությամբ ծանոթացել է Արամի հետ: Վերջինս «պնդակազմ էր ու խոշոր, անունը՝ Սարգիս»: Հետագա շարադրանքում հուշագիրը խոստովանում է, որ մինչև 1918 թ. ինքը չի իմացել, որ Ղարաբաղի թեմականից Երևան տեղափոխված Սարգիսն ու Արամը նույն մարդու անուններն են: Շարունակելով պատմությունը՝ նա նշում է, որ 1917 թ. մի օր Արամի հետ կառքով տեղ են գնացել: Ճանապարհին նկատել է, որ Արամի դիմագծերը իրեն հիշեցրել են 17 տարի առաջ Երևանում տեսած Սարգսին: Ա. Աստվածատրյանը չի զլանում նկարագրել նրա արտաքինը՝ «բաց մոխրագույն մահուդից բլուզ, սև կաշվից լայն գոտի, սև մահուդից տաբատ, խիտ, ըմբոստ մազեր, վատառողջ աչքեր, իր տարիքին չսազող լուրջ դեմք»²⁷: Հետագայում, Արամի հետ շփվելով, հուշագիրն ամեն անգամ ստացել է այն տպավորությունը, որ Արամը լուրջ ու լռակյաց, ինքնամփոփ մարդ է և աչքի չի ընկնում իր կարողություններով. «Հռետոր չէր, արտասանությունն ուներ ինչ-որ փոքրիկ թերություն, որ վնասում էր խոսքի արտաքին տպավորությունը, մանավանդ անսովոր ականջի համար: Չունեի նաև հստակ սահուն ոճ, որի ազատ կարկաչունն այնքան անհրաժեշտ է միտինգային

²⁴ Արշալույս Աստվածատրյան (1883-1973) հեղափոխական գործիչ, Երևանի Հատուկ կոմիտեի անդամ:

²⁵ Աստվածատրյան 2007:

²⁶ Արամը մահուան յինամեակին առթիւ 1991, 7-8:

²⁷ Աստվածատրյան 1927, 300:

հռետորի համար»²⁸։ Նրա արձանագրած փաստերը, թվում է, թե նսեմացնում են մեծ գործչի մարդկային նկարագիրը, բայց երբ ավարտում է միտքը, պարզ է դառնում, որ ցանկացել է նրա կերպարը համակողմանիորեն ներկայացնել։ «Զուրկ հռետորական շնորհքից՝ Արամը, սակայն, ուներ զարմանալի բովանդակալից ու հարուստ միտք, և երբ ականջդ սովորում էր նրա լեզվին ու խոսքին, միշտ հաճույքով էիր լսում նրան։ Ճկուն ու հնարագետ էր նրա միտքը։ Չեմ հիշում մի դեպք, երբ կարկտի նման տեղացող ժողովներում, նիստերում ու խորհրդակցություններում ստեղծված լինե՞ր ծանր ու անելանելի կացություն՝ փակուղի, և Արամը փրկած չլինե՞ր դրությունը»²⁹։ «Նա շնորհալի զեկուցող էր։ Նրա զեկուցումների մեջ չկար ոչինչ ավելորդ, ոչ մի միտք հոգնեցնող մանրամասնություն։ Խնդիրները դնում էր իրենց մերկությամբ, լուսաբանում էր պարզ ու կարճ, երբեմն, կարիք եղած դեպքում զեկուցումն ամփոփում էր երկու խոսքով և ապա տալիս եզրակացություններ։ Ախտաճանաչության զարմանալի ընդունակություն ուներ, դեպքերն արժևորում էր ճշտությամբ և այնուհետև գալիքը նախատեսում էր հատուկ կերպով»³⁰։

Ա. Աստվածատրյանին հիացմունք են պատճառել Ա. Մանուկյանի բնավորության գծերը՝ հաստատականություն, սկզբունքայնություն։ Խորությամբ ճանաչել է հեղափոխական գործչի, պարզապես հայ մարդու անհատական հատկանիշները։ Ա. Մանուկյանին դիկտատոր³¹ ընտրելու հաջորդ օրը, երբ նա տուն է վերադառնում, տան մուտքի երկու կողմում տեսնում է պահակ-զինվորների, իսկ բնակարանի մուտքին՝ «Արամ փաշա» ցուցանակը, նա գրպանից հանում է գրչահատն ու մաքրում այդ բառը, երկու օր անց էլ՝ նաև հսկողներին։ 1917 թ. վերջերին Արամը Թիֆլիսից ժամանում է Երևան և տեղի Հայոց ազգային խորհրդի նիստում (դեկտեմբերի 24) հանդես գալիս զեկուցումով՝ ներկայացնելով քաղաքական իրավիճակը։ Երևանի ազգային խորհրդի կողմից Արամի՝ հայկական կազմակերպությունների առջև ծառացած խնդիրների վերաբերյալ արած առաջարկություններն արժանանում են հավանության։ Ընտրվում է արտակարգ լիազորություններով օժտված մի մարմին՝ Հատուկ կոմիտե, որը դարձել է Երևանի նահանգի փաստական իշխանությունը, իսկ ուղղություն տվողն ու ոգեշնչողն Արամ Մանուկյանն էր։

Ա. Աստվածատրյանը ուշագրավ մանրամասներ է պատմում նաև Արամի կենցաղավարության մասին։ Արամը երբեք հոգ չի տարել իր մասին։ Որտե՞ղ ապրել, ի՞նչ ուտել, ի՞նչ հագնել. այս հարցերը քիչ են հուզել նրան։ «Մի կերպ կապրենք, չենք մեռնի» – այս է եղել Արամի տեսակետը։ Ըստ հուշագրի՝ Արամը որևէ տեղից աշխատավարձ չի ստացել և ապրել է զրկանքներով ու

²⁸ Աստվածատրյան 1927, 300:

²⁹ Աստվածատրյան 1927, 300:

³⁰ Աստվածատրյան 1927, 301:

³¹ 1918 թ. մարտի 24-ին Երևանի բնակչությունը, զորքը և Հայոց ազգային խորհուրդը Արամին ընտրեցին Երևանի նահանգի դիկտատոր։ Հմմտ. Ասրյան 2009, 58:

գրեթե կիսաքաղց: Մինչև ընտանիքի՝ Երևան տեղափոխվելը նա ապրում էր Աբովյան և Դոկտորոսկայա փողոցների անկյունում գտնվող հասարակ տան մեջ: Սենյակը չունեի տարրական հարմարություններ և կահավորանք. «մի անշուք մահճակալ, երկու հասարակ սեղան և մի երեք-չորս հասարակ աթոռ»: Սենյակի մի անկյունում դրված էր թիթեղյա վառարանը, որի խողովակները հաճախ դուրս էին ընկնում իրար միջից՝ սենյակը լցնելով ծխով: Ա. Աստվածատրյանի և Արամ Մանուկյանի տներն իրար մոտ էին, և նրանք հաճախ էին ճաշում միասին: Արամի ճաշի մասին հոգ էր տանում նույն տանն ապրող վանեցի մի ընտանիք, որն ապրում էր գրկանքներով: Երբեմն ընկերները ճաշում էին առանց հացի: Վանեցի քույրիկը, ճնշվելով ու ամաչելով, ասում էր, որ տանը հաց չկա, Արամը, բարի ժպիտը դեմքին, հանգստացնում էր. «Արշալույսը օտար մարդ չէ, վնաս չունի»³² Հուշագիրը նշում է, որ Արամը շրջապատում իրեն պահում էր սովորական մարդու նման, և բոլորն էլ կարող էին նրան մոտենալ որևէ հարցով: Բնակչության կողմից նա հաճախ էր դիմումներ ստանում, դրանց լուծում տալիս, միայն երբեմն կատակել է՝ ասելով. «Կարծում եմ՝ ամուսնալուծության համար էլ շուտով ինձ են դիմելու»: Հատուկ կոմիտեն Արամի համար կառք էր գնել, որպեսզի ժամանակը խնայի, բայց երկու շաբաթից այն վաճառվում է, որովհետև նա գրեթե չէր օգտվում դրանից, իսկ Թիֆլիսից ուղարկած ինքնաշարժն էլ ուղարկել էր Ազգային խորհրդի ավտոկայանատեղի՝ ընդհանուր կարիքներին ծառայելու համար:

Արամ Մանուկյանը՝ Հայաստանի փրկիչ

Ա. Աստվածատրյանը տպավորիչ մանրամասնություններով է նկարագրել 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի ժամանակ Արամի անձնվեր գործունեությունը: Բազում օրինակներ բերելով՝ ցույց է տվել մեծ գործչի նվիրվածությունը հայրենիքին և իր ժողովրդին: Այդ օրերին Արամին հետաքրքրում էր միայն մեկ միտք, այն է՝ փրկել Հայաստանը, թույլ չտալ որ թուրքերը մտնեն Երևան և հայկական որևէ բնակավայր: Աստվածատրյանը գրում է. «Համատարած հուսալքումի այդ շրջանում նա մնաց միշտ հուսադրող, ոգևորող, հավատ ու եռանդ ներշնչող... Ռազմաճակատը նրա մտահոգության միակ առարկան էր... Արամի միտքը կլանված էր առաջին գիծը ամուր ու անսասան պահելու հոգսով: Անընդհատ կապի մեջ էր Վաղարշապատում գտնվող գլխավոր շտաբի հետ: Արամն իր շնչով վարակում էր ամենքին: Ոչ ոք չէր խնայում հնարավորը»³³: 1918 թ. մայիսի 22-ին, զորավար Մ. Սիլիկյանի և փոխգնդապետ Ա. Վեքիլյանի մշակած պլանի համաձայն, հայկական զորքը Սարդարապատի ճակատում հակահարձակման անցավ թուրքական գերակշիռ ուժերի դեմ և ծանր մարտերից հետո թշնամուն դուրս շարտեց Արարատյան

³² Աստվածատրյան 1927, 303:

³³ Աստվածատրյան 1927, 303:

դաշտավայրից³⁴: Սարդարապատի հերոսամարտի փայլուն հաղթանակի շնորհիվ վերստեղծվեց հայոց պետականությունը: Հայաստանի Հանրապետության կայացման գործում անգնահատելի է Ա. Մանուկյանի վաստակը: Մինչև Հովհաննես Քաջազնունու կառավարության՝ Երևան ժամանելը ողջ իշխանությունը փաստացիորեն գտնվում էր Արամի գլխավորած նախակառավարության դեր կատարող «Վարիչների մարմնի ձեռքում»: Ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանը³⁵ այդ օրերին կարողացավ կարգ ու կանոն պահպանել նորաստեղծ հանրապետությունում:

Արամ Մանուկյանի մահը

1918 թ. դեկտեմբերին Արամը վարակվեց բժավոր տիֆով: Հիվանդությունը տաժանելի էր և ունեցավ ողբերգական վախճան: Ա. Աստվածատրյանն իր հուշերում անդրադարձել է նաև Արամի կյանքի այդ շրջանին: Նա գրում է, որ 1918 թ. դեկտեմբերին Երևանի ազգային խորհրդի Հատուկ կոմիտեի քարտուղար Սարգիս Օհանջանյանի (1869-1918) թաղմանը Արամը մինչև գերեզմանատուն չի կարողացել հասնել, վերադարձել է տուն և պառկել: Նա վարակվել էր բժավոր տիֆով: Արամին բուժող բժիշկների թվում էր Ս. Կամսարականը: Նա ամեն օր այցելում էր հիվանդին: Այդ նույն օրերին տիֆով հիվանդացել է նաև պետական վերահսկիչ Մինաս Բերբերյանը (մահացել է 1919 թ. հունվարի 11-ին), որին միաժամանակ բուժում էր այդ նույն բժիշկը: Հուշագիրը պատմում է, որ Ս. Կամսարականը գոհունակությամբ էր խոսում Արամի մասին. «Զարմանալի մարդ է Արամը. Ի՞նչ հիվանդ, ես նրա մոտ հանգստանում եմ. հատկապես Բերբերյանից հետո: Նա մշտապես դժգոհում է և սարսափում իր վիճակից: Սիրտս ճնշվում է նրա մոտ: Իսկ Արամի մոտ՝ տրամադրությունս լավ է, ո՛չ մի գանգատ, ո՛չ մի սրտնեղություն: Հիվանդ տեղովը մեզ՝ բժիշկներին ձեռք է առնում, ծաղրում է, որ բժերը³⁶ լավ չպահեցիք և նրանք էլ խռովեցին ու փախան, լավ «հեքիմ» չեք»: Խոսում է այլ և այլ նյութերի մասին, իր հիվանդությունով կարծես չի հետաքրքրվում: Այո՛, զարմանալի մարդ է Արամը»³⁷:

Օր օրի Արամի դրությունը վատթարանում է: Նա 18-րդ օրը կորցնում է գիտակցությունն ու գրեթե մինչև վերջ մնում այդ վիճակում: Բժիշկները, որոնք վստահ էին, որ նա հաղթահարելու է հիվանդությունը, բարձրաձայն խոսում են այդ մասին՝ մտահոգվում են նրա երկարատև ուշազնացությամբ՝ կարծելով, որ հիվանդն իրենց չի լսում: Որքան մեծ է լինում նրանց զարմանքը, երբ լսում են Արամի խոսքերը. «Ի՞նչ եք ասում. ոտքս գետնովը տամ,

³⁴ ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5:

³⁵ Մանուկյան Արամը ներքին գործերի նախարար եղել է մինչև 1919 թ. հունվարի 29-ը:

³⁶ Տիֆով հիվանդների մարմնը սովորաբար ծածկվում է մանր բծերով, որոնք հետո անցնում են: Արամի վրա երևացել են մի քանի հատ և շուտ վերացել: Հմմտ. Արշալույս 1929, 61:

³⁷ Աստվածատրյան 1929, 61:

սարերը կողողան»³⁸։ Բժիշկներից մեկը պատմում է, որ Արամի մահվանից մի քանի օր առաջ նրան քննելիս նկատել է ուշքի գալու նշաններ և փորձել է խոսել նրա հետ՝ հարցնելով նրա որպիսությունը։ Նա հազիվ լսելի ձայնով պատասխանել է «Լավ եմ, լավ»։ Դրանք Արամի վերջին բառերն էին։ Արամի մահվան լուրը ցնցել էր բոլորին։ «Արամի ննջարանը տանող դուռը բաց էր..., - գրում է Ա. Աստվածատրյանը, - հարևան սենյակից լսվում էին հեծկլտանքներ... Ինքնամոռացությունից ինձ հանեցին սրտամորմոք հառաչանքներ... գլուխս բարձրացրեցի. վանեցի քույրիկն էր»³⁹։ Արամի հուղարկավորության ժամանակ Նիկոլ Աղբալյանի արտասանած դամբանականը նրան բնորոշող լավագույն խոսքերն են. «Երբ գիշերը գայ, մտեք ձեր հոգիի սենեակը և խօսեցեք ձեր խղճի հետ և ըսեք, արդեօք աշխատե՞ր էք հայ ժողովրդի համար, ինչպես Արամը, եղե՞ր էք այնքան անձնագրի, որքան Արամը, տե՞ր էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպես Արամը...»⁴⁰։ Արամի ժամանակակիցները հաճախ են մեծարել ու փառաբանել նրան։ Այդ առումով արժե հիշատակել Օնիկ Մխիթարյանի գնահատականը. «Արամը, օժտված ի վերուստ, ամբողջ ժողովրդի մը համար ստեղծեց նոր պատմութիւն եւ կեանքի կոչեց ու իրականացուց մեր հայրենիքի աւերակներուն վրայ 500 տարիներէ ի վեր թափառական ու անհանգիստ երազը։ Արամը կրցավ առարկայացնել ահա այդ Մեծ Երազը, եւ այդ մեծ առարկայացումին մէջ է, որ կը մեծնայ Արամը եւ կը գերազանցէ իր եւ իրմէ ետք եկող ժամանակներու բոլոր մեծութիւնները, քանի որ, ամէն բանէ առաջ, Արամը կերտեց Ազատ Եւ Անկախ Հայաստանը»⁴¹։

Այս հուշերը փաստում են, որ Արամի կյանքն ու գործունեությունը բավականաչափ ուսումնասիրված են, բայց կան որոշ հարցեր, որոնք մեկնաբանության կարիք ունեն նրա կերպարն ամբողջությամբ բացահայտելու համար։ Վստահ ենք, որ կհայտնաբերվեն նոր փաստեր և իրողություններ, որոնք աննկատ են մնացել նախորդների կողմից։ Կարևորելով Ա. Մանուկյանի հայրենանվեր գործունեությունը հայ ժողովրդի փրկության և Հայաստանի Հանրապետության ստեղծման գործում՝ 2019 թ. Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կենտրոնական ցուցասրահում բացվեց Հայաստանի Առաջին հանրապետության պետական-քաղաքական գործիչ Ա. Մանուկյանի ծննդյան 140-ամյակին նվիրված ցուցադրություն, իսկ Հայաստանի Առաջին հանրապետության հռչակման օրը՝ մայիսի 28-ին, Սարդա-

³⁸ Աստվածատրյան 1929, 61։

³⁹ Աստվածատրյան 1929, 61։

⁴⁰ Աղբալյան 1919, 5, հմմտ. Վրացեան 1967, 54-55։

⁴¹ Մխիթարեան 1923, 39-40։

րապատի հերոսամարտի հուշահամալիրում կանգնեցվեց նրա 140-ամյակին նվիրված հուշակոթողը⁴²:

Եզրակացություններ

Հայաստանի Առաջին հանրապետության պետական-քաղաքական գործիչ Արամ Մանուկյանի մասին շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդել նրա ընկերները և ժամանակակիցները՝ Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Շահխաթունին, Ա. Աստվածատրյանը և այլք: Հուշագիրները մեզ հնարավորություն են տալիս ծանոթանալու Արամ Մանուկյանի անձի, ազգային-հեղափոխական գործունեության, ժողովրդի վրա նրա թողած ազդեցության և հայոց կյանքում կատարած դերի մասին: Նրանք հանգամանորեն ներկայացնում են Արամ Մանուկյանի հեղափոխական գործունեությունը, նրա դերակատարումը իշխանության մարմինների ձևավորման, հայության անվտանգության ապահովման, տնտեսության վերականգնման, սովը կանխելու, օրինականություն հաստատելու, թշնամուն դիմակայելու վճռականության և, ի վերջո, Հայաստանի Առաջին հանրապետության ստեղծման և ամրապնդման գործում:

Գրականություն

- Ասրյան Ա. 2009, Արամ Մանուկյան. կյանքը և գործունեությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. հրատ., 114 էջ:
- Արամը Մահուան յիսնամեակին առթիվ 1991, Երևան, «Միքայել Վարանդեան» հրատ., 549 էջ:
- Աստվածատրյան Ա. 1927, Արամի մասին (հանդիպումներ, տպավորություններ), Դրոշակ, N 10, Փարիզ, էջ 299-306:
- Աստվածատրյան Ա. 1929, Արամի մահը, Դրոշակ, N 3, Փարիզ, էջ 60-62:
- Աստվածատրյան Ա. 2007, «Սարդարապատի պատմաշինությունը» և այլ երկեր, Երևան, «Հայպետհրատ», 832 էջ:
- Թադե 1929, Արամի մասին (Սարգիս Յովհաննիսեան 1879-1919), Դրոշակ, N 1-2, Փարիզ, էջ 28-29:
- Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 47, 201, 121, 289:
- Մելիքյան Ա. 2022, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի հիշողությունը Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի հավաքածուներում, «Վէմ» համահայկական հանդես, հունվար-մարտ, N 1 (77), «Լուսակն», էջ 215-236:
- Մխիթարեան Օ. 1923, Արամ, Հայրենիք, Բոստոն, N 8, էջ 38-42:

⁴² Արամ Մանուկյանի 140-ամյակին նվիրված վեց մետր բարձրությամբ, կարմիր տուֆից կերտված հուշակոթողը կառուցվել է Տորոնտոյում՝ Հայաստանի պատվո հյուպատոս Վան Լապոյանի հովանավորությամբ: Հեղինակներն են ճարտարապետ Հայկ Ասատրյանը և քանդակագործ Արտակ Համբարձումյանը: Հմմտ. Մելիքյան 2022, 218:

- Նիկոլ Աղբալյանի դամբանականը 1919, Աշխատանք («Աշխատանք»ի խմբագրությունից իբրեւ առաջին սգապսակ եւ ամենադոյզն յարգանք կը ծօնէ Արամի յավերժական յիշատակին), N 4, Երևան, էջ 5-6:
- Շահխաթունի Ա. 1959, Սարգստաբաղի հերոսամարտը եւ մահափորձ Արամ փաշայի դէմ (իմ յուշերից), Հայրենիք, Բոստոն, N 8, էջ 21-30:
- Ռուբեն 1982, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Թեհրան, «Գ» հրատ., 401 էջ:
- Ռուբեն 1982, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 2, Թեհրան, «Գ» հրատ., 326 էջ:
- Ռուբեն 1990, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Թեհրան, «Գ» հրատ., 363 էջ:
- Ստեփանյան Խ. 2008, Ռուբեն Տեր-Մինասյան (կյանքը և գործը), Երևան, «ՎՄՎ-պրինտ», 184 էջ:
- Ստեփանյան Խ. 2010, Արամ Մանուկյանը Ռուբենի հուշերում, Արամ Մանուկյան Ազգային և պետական գործիչը (հոգվածների ժողովածու), խմբ.՝ Խաչատրյան Կ.Հ., Մաղալյան Ա.Վ., Սուքիասյան Հ.Կ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստիտուտի հրատ., էջ 111-118:
- Սուքիասյան Հ. 2010, Հայաստանի Առաջին հանրապետության անդրանիկ կառավարության ձևավորումը, Արամ Մանուկյան Ազգային և պետական գործիչը (հոգվածների ժողովածու), խմբ.՝ Խաչատրյան Կ.Հ., Մաղալյան Ա.Վ., Սուքիասյան Հ.Կ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., էջ 83-98:
- Վրացեան Ս. 1967, Կեսանքի ուղիներով, հ. Ե, Պէյրոյթ, Համազգային հրատ., 363 էջ:
- Վրացյան Ս. 1919, Արամ (Սարգիս Յովհաննիսեան), Զանգ, N 16, Երևան, էջ 2-3:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Արևիկա Մեդիան

Ամփոփում

Արամ Մանուկյանի կյանքի, մարդկային հատկանիշների, մանկավարժական և հեղափոխական գործունեության մասին արժանի գնահատական են տվել նրա ժամանակակիցները: Արամ Մանուկյանի դերակատարումը անգնահատելի է հատկապես Հայոց անկախ պետականության վերականգնման ժամանակաշրջանում: Հայրենանվեր գործիչն իր գաղափարների հետևից տարավ ազատագրական ձգտումներով տոգորված հայ ժողովրդին, նրա մեջ արթնացրեց ազգային ինքնագիտակցությունը, ամրապնդեց ազգի հավաքական միասնությունը՝ վստահություն ներշնչելով սեփական ուժերի հանդեպ:

Այսօր, երբ հայ ժողովուրդը կրկին հայտնվել է ռազմաքաղաքական ծանր իրավիճակում, խիստ անհրաժեշտ է անդրադարձը Արամ Մանուկյանի նման խիզախ ու անձնվեր գործիչների կերպարին:

Բանալի բառեր՝ հուշեր, արխիվային փաստաթղթեր, ընդհանուր ժողով, գինակիցներ, անկախ պետականություն, ազգային ինքնագիտակցություն, քաղաքական իրավիճակ:

АРАМ МАНУКЯН В ВОСПОМИНАНИЯХ СОВРЕМЕННИКОВ

Аревик Меликян

Резюме

Современники Арама Манукяна дали достойную оценку его жизни, человеческим качествам, а также педагогической и революционной деятельности. Неопределима роль Арама Манукяна особенно в период восстановления независимой армянской государственности. Преданный Родине деятель повел за собой проникнутый освободительными устремлениями армянский народ, пробудив в нем национальное самосознание, укрепив единство нации, внушив уверенность в собственных силах.

Сегодня, когда армянский народ вновь оказался в сложной военно-политической ситуации и ощущается необходимость в патриотических деятелях, весьма актуально обращение к образу Арама Манукяна как человека и политической фигуры.

Ключевые слова – воспоминания, архивные документы, общее собрание, соратники, независимая государственность, национальное самосознание, политическая ситуация.

ARAM MANUKYAN IN THE MEMOIRS OF CONTEMPORARIES

Arevik Melikyan

Abstract

Aram Manukyan's contemporaries gave a decent assessment of his life, human qualities, as well as pedagogical and revolutionary activities. The role of Aram is invaluable, especially during the restoration of the independent Armenian statehood. The figure devoted to the Motherland led the Armenian people imbued with liberation aspirations, awakening national self-consciousness, strengthening the collective unity of the nation, inspiring confidence in people's own abilities.

Today, when the Armenian people are once again in a difficult war and political situation with a need for patriotic figures, it is necessary to turn again to the image of Aram Manukyan.

Key words – memoirs, archival documents, general assembly, comrades-in-arms, independent statehood, national self-consciousness, political situation.

ԱՍՈՐԵՍԱՆԻ ԱՐՔԱ ԹՈՒԿՈՒԼՏԻ-ՆԻՆՈՒՐՏԱ Ի-Ի
(Մ.Թ.Ա. 1242-1206 ԹԹ.) ՆԱԻՐՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Ռուսլան Ֆականյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան 24/4
Էլ. հասցե՝ roslantsakanyan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 26.07.2022, գրախոսվել է 29.07.2022, ընդունվել է տպագրության 07.08.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.2-57

Ներածություն

«Նաիրի երկիր(ներ)»-ը (KUR.KUR *Na-i-ri*) առաջին անգամ հիշատակվում է (են) միջինասորեստանյան արքա Թուկուլտի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. մոտ 1242-1206 թթ.¹) արձանագրություններում: Ներկայումս մեզ հայտնի 54 արձանագրություններից «Նաիրի երկիր(ներ)»-ը հիշատակված է(են) 17-ում²: Պատմագիտության մեջ դեպի Հայկական լեռնաշխարհի և մասնավորապես «Նաիրի երկիր(ներ)» Թուկուլտի-Նինուրտա I-ի ռազմարշավի ժամանակագրությանն ու դրդապատճառներին անդրադարձել են բազմիցս: Սակայն մինչ օրս արտահայտված կարծիքները որոշ դեպքերում իրարամերժ են, իսկ երբեմն էլ կարոտ են հիմնավորման: Թուկուլտի-Նինուրտա I-ի արձանագրությունների նոր ընթերցումը հնարավորություն է ընձեռում հիշյալ արշավանքի թվագրության, պատճառների և արդյունքների հարցերը դիտարկել ոչ թե մեկուսի, այլ Ասորեստանի այդ արքայի առաջին երեք տարիների արշավանքների համապատկերում:

Թուկուլտի-Նինուրտա I-ի արձանագրությունների ժամանակագրական խնդիրները

Աղբյուրագիտական նյութի սղության պատճառով միջինասորեստանյան պետության ռազմաքաղաքական պատմության լուսաբանությունը որոշակի դժվարություններ է հարուցում: Իսկ մասնավորապես Թուկուլտի-Նինուրտա I-ի գահակալության շրջանի մանրամասների պարզաբանման գործում հիմնա-

¹ Միջինասորեստանյան ժամանակաշրջանի ժամանակագրության, ինչպես նաև Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման թվականների վերաբերյալ մանրամասն տե՛ս Bloch 2008, 143-178, Bloch 2010, 1-35, Röhlig 2008, 189-196, Freydank 1991, 188-189, Freydank 2005, 45-56, Wilhelm, Boese 1987, 74-117.

² RIMA 1. 1987, A.O.78.1, IV, ll. 10, 32, A.O.78.2, l. 31, A.O.78.3, l. 13, A.O.78.4, l. 5, A.O.78.5, ll. 9, 39, A.O.78.6, l. 17, A.O.78.7, l. 4, A.O.78.8, l. 9; A.O.78.13, l. 14, A.O.78.16, l. 18, A.O.78.18, l. 23, A.O.78.20, l. 6, A.O.78.23, ll. 46, 49, A.O.78.24, ll. 18, 31, A.O.78.26, ll. 7, 12; A.O.78.1001, rev. l. 7, A.O.78.1010, l. 5.

կան դժվարությունը պայմանավորված է նրանով, որ արքայի արձանագրություններում իրադարձությունները ներկայացված են ժամանակագրական անկանոն շարվածքով: Թուկուլտի-Նինուրտա I-ի հայտնի արձանագրություններից հստակորեն թվագրված են միայն երեքը՝

1. թվագրված է արքայի կառավարման 15-րդ տարով՝ «ITI *Al-la-na-tu [li-mu]* ^{md}A-šur-EN-DINGIR.MEŠ» - «Ալլանուրու ամիս, Աշշուր-Ել-Իլանիի էպոնիմատի տարի»³,

2. թվագրված է կառավարման 18-րդ տարով՝ «*li-mu mI-na-dAš-šur-MU-aš-bat*» «Ինա-Աշշուր-շումա-աժբաթի էպոնիմատի տարի»⁴, և

3. թեև թվագրված է, բայց վնասված են ամսանունն ու տարվա անվանադրի անունը՝ «ITI xxxx *li-mu* xxxx»⁵:

Այդուհանդերձ, հայտնաբերված տնտեսական և այլ բնույթի փաստաթղթերը հնարավորություն են ընձեռում ոչ միայն վերականգնել այս արքայի կառավարման ժամանակահատվածի էպոնիմների ցանկը, այլև նրա գահակալության շրջանի հիմնական իրադարձությունների ժամանակագրական կարգը:

Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման առաջին երեք տարիների ռազմարշավների համար խիստ կարևոր են արքայական տարեգրությունները և հատկապես, այսպես կոչված, «*Մեծ արձանագրությունը*»⁶: Արձանագրության մեջ մանրամասն նկարագրված են արքայի գահակալման առաջին տարիներին կատարած ռազմական գործողություններն⁷ ու Աշշուր քաղաքում նոր պալատի կառուցման մանրամասները⁸: «*Մեծ արձանագրությունը*» գրվել է Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման երրորդ՝ Մուշալլիմ-Ադադի էպոնիմատի տարում⁹ մ.թ.ա. մոտ 1240/1239 թ.-ին¹⁰, երբ Աշշուրում ավարտվել են Նոր պալատի կամ, որ ավելի հավանական է, դրա մի հատվածի շինարարական աշխատանքները:

Երկու արձանագրություններն էլ մանրամասներ են պարունակում Թուկուլտի-Նինուրտա I-ի առաջին երեք ռազմարշավների մասին: Դրանցից առաջինը, ըստ Յ. Բլոխի, տեղի է ունեցել Թուկուլտի-Նինուրտա I-ի գահակալման տարում: Տրամաբանական կլինի կարծել, որ երկրորդ և երրորդ

³ RIMA 1.1987, A.O.78.18, l. 44, ինչպես նաև տես՝ Bloch 2010, 31, Röhlig 2008, 4, Freydank 2005, 49-50.

⁴ RIMA 1.1987, A.O.78.6, l. 43, Llop 2013, 551, Bloch 2010, 31, հմմտ. նաև՝ ըստ Վ. Ռյոլիգի, Ինա-Աշշուր-շումա-աժբաթի էպոնիմատի տարին համապատասխանում է Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման 21-րդ տարուն՝ Röhlig 2008, 4, իսկ ըստ Հ. Ֆրեյդանկի՝ Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման 19-րդ տարուն՝ Freydank 2005, 49-50:

⁵ RIMA 1. 1987, A.O.78.2.

⁶ Bloch, Peri 2016-2017, 2-56, այն բովանդակային առումով նույնական և համարժեք է Ա.Կ. Գրեյտոնի հայտնի «Դիվանի» A.O.78.1 արձանագրությանը:

⁷ Bloch, Peri 2016-2017, 21-31 (Col. I-V), RIMA 1.1987, A.O.78.1. Col. I- Col. IV. l. 36.

⁸ Bloch, Peri 2016-2017, 31-35 (Col. V-VIII), RIMA 1.1987, A.O.78.1. Col. IV. l. 36-Col. VI.

⁹ Bloch 2010, 31.

¹⁰ Bloch, Peri 2016-2017, 42, RIMA 1.1987, 231:

ռազմարշավները տեղի են ունեցել նրա կառավարման առաջին և երկրորդ ամբողջական տարիներին¹¹:

Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման առաջին երեք տարիների ռազմարշավները (մ.թ.ա. մոտ 1242/41-1240/39 թթ.)

Թուկուլտի-Նինուրտա I-ի տարեգրությունները, բացի այն, որ գրեթե թվագրված չեն՝ հարուցում են ևս մեկ կարևոր խնդիր: Նրա տարեգրությունների մեջ հաճախ չի պահպանվում արշավանքների ու երկրների նվաճման հերթականությունը, և թվարկումներն էլ սովորաբար տրված են բավական խրթին: Շատ հաճախ իրարից տարբեր մի քանի արշավանքներ ընդգրկված են մեկ ընդհանուր նկարագրության տակ: Դրա մի օրինակ է *RIMA. 1. A.O.78.23* արձանագրությունը, որտեղ թվարկված են արքայի գրեթե բոլոր նվաճումները: Սակայն անմիջականորեն աչքի է զարնում այն հանգամանքը, որ արքայի տիտղոսների, աստվածների ու տոհմի պատկանելության նկարագրությունից անմիջապես հետո ընթերցում ենք՝

«27. *i-na šur-ru GIŠ.GU.ZA MAN-ti-ia i-na maḥ-ri-i*

28. *EALA-ia 8 ŠÁR ÉRIN.MEŠ KUR Ḫa-at-ti-i*

29. *iš-tu e-ber-ti ÍD Pu-rat-te*

30. *as-su-ḫa-ma a-na ŠÀ KUR-ia ú-ra-a*»

«27. Իմ գահակալության սկզբում՝ իմ կառավարման

28. առաջին տարում, արմատախիլ արեցի խեթերի երկրի 28800 բնակիչներին՝

29. Եփրատ գետի այն կողմից¹²

30. տեղահանեցի և տարա (նրանց) իմ երկիր»¹³:

Մասնագիտական գրականության մեջ սովորաբար վերոնշյալ իրադարձությունը թվագրվում է արձանագրության տառին համապատասխան՝ առանց ուշադրություն դարձնելու այն կարևոր փաստին, որ խեթական գերիների վերաբերյալ այդչափ կարևոր իրադարձությունը տեղ չի գտել արքայի առաջին երեք տարիների արշավանքներն ու շինարարական գործունեությունը փառաբանող տարեգրությունների մեջ¹⁴:

Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման շրջանի ուսումնասիրություններում առկա հակասությունների մի զգալի մասը պայմանավորված է արձանագրությունների տարընթերցումներով: Սակայն որոշ դեպքերում դրանք ոչ թե օբյեկտիվ, այլ աղբյուրի կամայական մեկնաբանության բնույթ են կրում՝ ծնունդ տալով համատեքստից կտրված զանազան վարկածերի: Նմանօրի-

¹¹ Bloch, Peri 2016-2017, 42, Tsakanyan 2021, 20-27.

¹² Արձանագրության մեջ նկատի ունի Եփրատ գետի մյուս՝ արևմտյան կողմից:

¹³ RIMA 1. 1987, A.O.78.23, 27-30, հմմտ. նաև՝ A.O.78.24, 23-25, ինչպես նաև տե՛ս և հմմտ.՝ Weidner 1959, NN 16, 17.

¹⁴ Քննարկումների համար մանրամասն տե՛ս Galter 1988, 217-235:

նակ կամայական մոտեցում է ցուցաբերված նաև վերջերս հրապարակված մի աշխատանքում¹⁵:

RIMA 1. A.O.78.23 արձանագրության 30-րդ տողում կարդում ենք՝

«*as-su-ḫa-ma a-na ŠA(libbi) KUR(māti)-ia ú-ra-a*» -

«**տեղահանեցի¹⁶ և տարա (նրանց) իմ երկիր**»:

Մինչդեռ հեղինակը, հղելով հիշյալ արձանագրության Ի.Մ. Դյակոնովի՝ կես դարից ավելի հնության ունեցող թարգմանությանը¹⁷, նրա 30-րդ տողի վերջին բառը ընթերցում է «*Յաուրի*» և երևան է հանում «*Յաուրի լեռների*» գոյության և անգամ այդ լեռներում «*կուրիական դաշնակցային զորքերի դեմ*» Թուկուլտի-Նինուրտա I-ի տված առաջին ճակատամարտի մասին վարկածը¹⁸:

Հեղինակը զարմանալիորեն անուշադրության է մատնել Ա.Կ. Գրեյսոնի «*Դիվանի*» աքքադերեն տեքստի տառադարձումը՝ նշելով. «*Ա. Գրեյսոնի մոտ Կուրանսկրիպցիայի մեջ ակնհայտորեն երևում է Յաուրիի հիշատակությունը, սակայն անգլերեն թարգմանության մեջ այն բացակայում է: Ի. Դյակոնովի մոտ այս հատվածի թարգմանությունը հստակ է*»¹⁹: Մեզ իրավունք չենք վերապահի նշել, թե հեղինակն իր ձեռքի տակ չի ունեցել Ա.Կ. Գրեյսոնի «*Դիվանի*»: Փաստը մնում է այն, որ նա բացառապես օգտագործել է Ի.Մ. Դյակոնովի վերոնշյալ աշխատանքը: Բնականաբար, հարց է առաջանում, թե հեղինակի մոտ ինչպե՞ս է առաջացել «*Յաուրին*», ու ինչու է այն շփոթվել *I(J)ū/aru* էթնիկ ծագման տեղանվան հետ²⁰: Մեր կարծիքով, հեղինակը, պարզապես չընկալելով *KUR-ia (mātiya)*՝ «*իմ երկիր, երկիրս*» արտահայտությունը և արհեստականորեն «*երկիր*» բառի շումերական որոշից (դետերմինատիվ) անջատելով աքքադերենի *-i(y)a* անձնական կցական դերանվան դիմորոշ վերջածանցը (եզակի թիվ, 1-ին դեմք)²¹, այն կցել է «*նրս/ա*» բառին, որից էլ ստացել է «*Յ/հաուրի*» անվանումը:

Ցավոք, բնագրերի նման թերըմբռնումներն ու աղճատումները եզակի չեն և լրացուցիչ դժվարություններ են ստեղծում պատմական իրադարձությունների վերականգնման առանց այդ էլ դժվարին գործում:

Թուկուլտի-Նինուրտա I-ի առաջին ռազմարշավը դեպի Ուկ/քումենու/Կումանի և Գ/Կուտու՝ (մ.թ.ա. մոտ 1242/41 թ.)

Թուկուլտի-Նինուրտա I-ը նշում է, որ «*ina šarrū> šarrūtiya*»՝ իր գահ բարձրանալու տարում, մ.թ.ա. մոտ 1242/1241 թվականին արշավանք է իրա-

¹⁵ Սարգսյան 2019, 232-251:

¹⁶ Յականյան 2018, 21-27, Oded 1979, 5-9:

¹⁷ Дьяконов 1951, N 6, 268-269.

¹⁸ Սարգսյան 2019, 233, 239, 246:

¹⁹ Սարգսյան 2019, 233 ծնթ. 6:

²⁰ RIMA 1. 1987, A.O.76.1, l. 23, A.O.89.7, Col. III, l. 21, Nashef 1982, 144-145.

²¹ Huehnergard 2011, 79-80, Riemschneider 1978, 152-155, 293, von Soden 1969, 42-44.

գործել Ուկումենու և Կուտու երկրների դեմ²²։ Ինչպես երևում է արձանագրության համատեքստից, Թուկուլտի-Նինուրտային դեպի հյուսիս՝ Ուկումենու (Կումանի)²³ և Կուտու²⁴ երկրների դեմ արշավանքի է դրդել վերոնշյալ տարածքների անհնազանդ լինելու հանգամանքը²⁵։ Դեռ ավելին՝ «Այդ ժամանակ նրանք միավորվեցին (”) իմ զորքի դեմ մի դժվարամարտի վայրում՝ լեռնային կիրճում»²⁶։ Արձանագրության վերոհիշյալ տողերը վկայում են, որ Ուկումենուն և Կուտուն Ուկումենուի արքա Աբուլեի գլխավորությամբ միասնաբար են հանդես եկել Ասորեստանի դեմ։ Արդյունքում, դաշնակիցները պարտություն են կրում, և Աբուլեն ու մեծ թվով իշխաններ գերի են վերցվում և շղթայակապ տարվում Աշշուր։ Ըստ արձանագրության՝ հետագայում Թուկուլտի-Նինուրտա I-ը Աշշուրի գերագահությունն ընդունելուց, հավատարմության երդում տալուց և իրեն ամենամյա հարկ ու տուրք վճարելու պարտավորություն ընդունելուց հետո Ուկումենուի և Կուտուի իշխանավորներին թույլատրել է վերադառնալ իրենց երկրները²⁷։ Այլ հարց է, թե Ուկումենուի ու Կուտուի հնազանդեցումը տեղի է ունեցել մեկ արշավանքի ընթացքում, թե նույն տարում կատարված կրկնակի արշավանքի շնորհիվ²⁸։ Սակայն արձանագրության համապատասխան տողերի համեմատությունը Թուկուլտի-Նինուրտա I-ի՝ նույն իրադարձությունների մասին պատմող այլ արձանագրությունների տվյալների հետ, թույլ է տալիս ենթադրել, որ այստեղ խոսքը կոնկրետ մեկ արշավանքի մասին է։

Երկրորդ արշավանքը դեպի Շարնիդա, Մեխրու, Կատմուխու և հարակից շրջանները (մ.թ.ա. մոտ 1241/40 թ.)

Ուքումենուն ու Կուտուն հնազանդեցնելուց հետո Ասորեստանի արքան արշավում է դեպի հյուսիս-արևմուտք՝ Շարնիդա (*Šarnida*)²⁹, Մեխրու (*Mehru*)³⁰ և Կատմուխու (*Katmuḫu*)³¹ երկրներ³²։ Շարնիդա և Մեխրու արշավանքի ժա-

²² Tsakanyan 2021, 21-24, Bloch, Peri 2016-2017, 23-27, Col. I, 37 – Col. III, 27, Görg 1989, 202-207, Col. I, 37 – Col. III, 27, ինչպես նաև տե՛ս և հմմտ. RIMA 1. 1987, A.O.78.1. Col. II, 14 – Col. III, 11, and – A.O.78.2, A.O.78.3, A.O.78.10, A.O.78.18, A.O.78.20, A.O.78.23, A.O.78.24, Weidner 1959, NN 1; 2; 3; 14; 16; 17; 21.

²³ Հարկ է նշել նաև, որ արձանագրության մեջ տեղ գտած տեղանուններին, որոնք դուրս են մեր քննարկման նյութի շրջանակից, չենք անդրադառնա, այդուհանդերձ, կնշենք մասնագիտական գրականության մեջ դրանց անդրադարձներին՝ The Helsinki Atlas 2001, 4, B4, Nashef 1982, 222-223, Parpola 1970, 284, Diakonoff, Kashkai 1981, 70, Арутюнян 1985, 119-120:

²⁴ Nashef 1982, 191-193, Bagg 2020, 474-475, Parpola 1970, 138, 220, Арутюнян 1985, 124.

²⁵ Reculeau 2022, 757-758, և հմմտ.՝ Munn-Rankin 1975, 284.

²⁶ Tsakanyan 2021, 24, Bloch, Peri 2016-2017, Col. II, 20-24; RIMA 1. 1987, A.O.78.1. Col. II, 21-26.

²⁷ Tsakanyan 2021, 24, Bloch, Peri 2016-2017, Col. III, 1-27.

²⁸ Քննարկումների համար մանրամասն տե՛ս Salvini 1998-2001, 87-88, Harrah 1987, 207-212, Munn-Rankin 1975, 284-285, Арутюнян 2006, 21-27, Salvini 1967, 18-23, Haas 1986, 26-27.

²⁹ Nashef 1982, 244, Арутюнян 1985, 239.

³⁰ Nashef 1982, 194, Parpola 1970, 244, Bagg 2020, 409-410, Арутюнян 1985, 143-144.

³¹ The Helsinki Atlas 2001, 3, E3, Nashef 1982, 165-166, Parpola 1970, 215-216, Арутюнян 1985, 98-99.

մանակ, ըստ արձանագրության՝ ասորեստանյան բանակի շարքերում էին Կուտու երկրի զորքերը՝ «*ina Á-at ÉRIN.MEŠ-at Qu-ti-i*»³³: Այնուհետև ասորեստանյան ուժերը շարժվում են դեպի Կատմուխու: Ըստ արձանագրության, կատմուխցիները, խախտելով Ասորեստանի հետ մինչ այդ գոյություն ունեցած խաղաղության պայմանավորվածությունը, այսպես կոչված՝ «*խաբուսիկ խաղաղության ժամանակ (šá ina su-lu-me-e ú sa-ra-ar-te)*»³⁴, անընդմեջ հարձակվել են Ասորեստանի բնակավայրերի վրա, կողոպտել ու գերիներով հետ վերադարձել:

Ասորեստանի հարվածների տակ ընկնում են Կատմուխի կենտրոնն ու 4 կամ 5³⁵ ամրացված քաղաքները կամ հենակետերը, իսկ բնակչության մի մասը տեղահանվում ու տարվում է Ասորեստան: Հույժ հետաքրքիր է նաև արքայի մեկ այլ արձանագրությունը, որտեղ վերոնշյալ տեղանունների հետ զուգահեռաբար ներկայացված են նաև Էլխունիան (*Eluhnia*)³⁶, Բուշշուն (*Buššu*)³⁷ և Մումմուն (*Mummu*)³⁸:

Երրորդ ռազմարշավը, դեպի Ալզի, Ամադանու և հարակից շրջաններ (մ.թ.ա. մոտ 1240/39 թ.)

Կատմուխին հնազանդեցնելուց հետո Ասորեստանի արքան իր հաջորդ հարվածն ուղղում է դեպի արևմուտք: Անցնելով Կաշիյարի լեռները³⁹՝ նա հարձակվում է Ալզի⁴⁰ երկրի վրա⁴¹:

Համաձայն արձանագրության՝ «*ամբողջ Շուբարու երկիրը*» դեռևս Շուլմանու-աշարեդ (Սալմանասար) I-ի (մ.թ.ա. մոտ 1272-1243 թթ.) ժամանակներից ապստամբել էր և հրաժարվում էր հարկ վճարել Ասորեստանի արքային⁴²: Ալզիի արքա Էխլի-Թեշուբը, պարտություն կրելով, իր որդիների ու պալատականների հետ միասին լքում է երկիրը՝ ապաստանելով մինչ այդ *անհայտ երկիր Նաիրիում*՝ «*Na-i-ri ana KUR la i-du-ú*»: Թուկուլտի-Նինուրտա I-ը գրավում և ավերում է Ալզիի հոգևոր կենտրոն Պուրուլումզուն (*Purulu/*

³² Tsakanyan 2021, 24-25, Bloch, Peri 2016-2017, Col. III, 28-Col. IV, 10, RIMA 1. 1987, Col. III, 12-29, ինչպես նաև տե՛ս A.O.78.2: 17-36.

³³ Tsakanyan 2021, 24, Bloch, Peri 2016-2017, Col. III, 30, RIMA 1. 1987, A.O.78.1. Col. III, 14-15.

³⁴ Bloch, Peri 2016-2017, Col. IV, 4, RIMA 1. 1987, A.O.78.1. Col. III, 24.

³⁵ Ըստ Ա.Կ. Գրեյսոնի 5 քաղաք. տե՛ս RIMA 1. 1987, A.O.78.1. Col. III, 21.

³⁶ RIMA 1. 1987, A.O.78.2: 23, Nashef 1982, 102, Арутюнян 1985, 255.

³⁷ RIMA 1. 1987, A.O.78.2: 25, Nashef 1982, 76, Арутюнян 1985, 162.

³⁸ RIMA 1. 1987, A.O.78.2: 25, Nashef 1982, 197, Арутюнян 1985, 144.

³⁹ The Helsinki Atlas 2001, 3, D3, Nashef 1982, 162, Parpola 1970, 203, Арутюнян 1985, 106-107.

⁴⁰ The Helsinki Atlas 2001, 3, B2, Nashef 1982, 27, Parpola 1970, 13, Քոսյան 2004, 33-34, Арутюнян 1985, 18-19.

⁴¹ Tsakanyan 2021, 25-27, Bloch, Peri 2016-2017, Col. IV, 11-Col. V, 17, RIMA 1. 1987, Col. III, 30-Col. IV, 23.

⁴² RIMA 1. 1987, A.O.78.1. Col. III, 30-36.

imzu)⁴³, գերում է արքային, իսկ բնակչությանը կենդանի այրել է տալիս: Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման 14-րդ և Ուգուր-Նամկուր-շարրիի էպոնիմատի տարով թվագրվող մի արձանագրության 11-րդ տողում հաղորդվում է, որ Կար-Թուկուլտի-Նինուրտա քաղաքում, Պուրուլումզուի արքան՝ «LUGAL KUR.Pu-ru-lum-za-ie-e» յուղ է ստացել»⁴⁴: Սրանից հետևում է, որ Պուրուլումզուի արքան, ի տարբերություն այլ տիրակալների ու իշխանների, իր երկիր վերադառնալու թույլտվություն չի ստացել և գերության մեջ է եղել շուրջ 11 տարի:

Վերոնշյալ արշավանքի ընթացքում Թուկուլտի-Նինուրտա I-ն ավերում է Ալգիի չորս քաղաք, ապա և, ըստ երևույթին, Ալգիի դաշնակից Ամադանու (*Amadanu*)⁴⁵ երկրի 6 քաղաք: Նա Ասորեստանին է կցում Ալգին, Ամադանուն, Նիխանուն (*Nihanu*)⁴⁶, Ալայան (*Alaya*)⁴⁷, Տեպուրզուն (*Tepurzu*)⁴⁸ ու Պուրուլումզուն:

Այսպիսով, Թուկուլտի-Նինուրտա I-ը հանրագումարի է բերում իր առաջին երեք տարվա արշավանքները՝ դրանք սահմանագծելով և մանրամասն նկարագրելով:

«Այն ժամանակ, Տուսինայից սկսած ...լեռներ, (տարածաշրջան) Շասիլա (և) Մաշխաթ-շարրի քաղաքների միջև՝ Ներքին Չաբի հակառակ ափին, Ջուքուշկու լեռից (և) Լալլար լեռից մինչև Կուրուի հսկայական շրջանը՝ Լուլլումու ամբողջ երկիրը, Պապխու երկրից մինչև Կալմուխի երկիրը (և) ամբողջ Շուբրու երկիրը, Կաշիյարի լեռներից մինչև Նաիրիի երկրի սահմանը (և) Մ[ական] երկրի սահմանը, մինչև Եփրատ գետի այն շրջանները, որոնք մեծ աստվածները ինձ հանձնարարեցին: (Իմ) բոլոր թշնամիներին մեկ հրամանի ներքո լքեցեցի»⁴⁹:

Փաստացի, Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման առաջին երեք տարիների ընթացքում՝ Ասորեստանի տիրապետության սահմանները հասել են Հայկական լեռնաշխարհի հարավային մատույցներին՝ Տավրոսյան լեռների ջրբաժանին:

Թուկուլտի-Նինուրտա I-ի ռազմարշավը դեպի Նաիրի

Ալգիի արքա Էլի-Թեշուբի հետագա ճակատագրի, ինչպես նաև դեպի Նաիրի Թուկուլտի-Նինուրտա I-ի կատարած որևէ արշավանքի մասին

⁴³ Քաղաքի տեղորոշման վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ հստակություն չկա, մանրամասն տե՛ս Nashef 1982, 219, Арутюнян 1985, 161-162:

⁴⁴ Freydank, Fischer 2001, N 146.

⁴⁵ Nashef 1982, 28, Parola 1970, 14, Арутюнян 1985, 24-25.

⁴⁶ Nashef 1982, 205, Арутюнян 1985, 154-155.

⁴⁷ Nashef 1982, 10-11, Арутюнян 1985, 17-18.

⁴⁸ Nashef 1982, 260, Арутюнян 1985, 182.

⁴⁹ RIMA 1. 1987, A.O.78.1. Col. IV, ll. 24-36, Weidner 1959, N 1, Kol. IV, Z. 25-36, Bloch, Peri 2016-2017, Col. V, ll. 18-34, Tsakanyan 2021, 27.

արքայի վերոնշյալ արձանագրությունը լրում է: Բնավ էլ դժվար չէ կռահել, որ լրության պատճառն այն է, որ դա գրելու ժամանակ դեպի Նաիրի երկիր(ներ) արշավանք չէր կատարվել: Նաիրիի դեմ Թուկուլտի-Նինուրտա I-ի պատերազմը սոսկ ժամանակի հարց էր, քանի որ վերոնշյալ նվաճումներից հետո ասորեստանյան ծավալապաշտությունը հյուսիսային ուղղությամբ հասել էր այդ երկրի սահմաններին: Տվյալ պարագայում Ալգիի փախստական արքա Էլսի-Թեշուբի և նրա պալատականների՝ Նաիրիում ապաստան գտնելու փաստը Նաիրին դարձնում էր Ասորեստանի արքայի կարևոր թիրախներից մեկը: Հնարավոր է, որ Նաիրին եղել է հակաասորեստանյան ճակատի գործոններից մեկը և որոշակի դերակատարում է ունեցել Շուլմանու-աշարեդ I-ի դեմ Ալգիի վերոնշյալ ապստամբության հարցում: Հավանական է, որ Նաիրիի հակաասորեստանյան կեցվածքը պայմանավորված է եղել Տավրոսի լեռնանցքները վերահսկելու և Ալգին ասորեստանցիների հարձակման դեմ անվտանգության գոտի դարձնելու մտայնությամբ: Ամեն դեպքում Թուկուլտի-Նինուրտա I-ից մ.թ.ա. մոտ 1240/1239 թ. պարտություն կրած Ալգիի արքա Էլսի-Թեշուբի և նրա «որդիների ու պալատականների» փախուստը Նաիրի և ապաստան ստանալն այդտեղ, հուշում է, որ դեռևս նախքան այդ իրադարձությունները, Նաիրին արդեն, ըստ երևույթին, հարել է հակաասորեստանյան ճամբարին, և Ալգիի փախստական արքա Էլսի-Թեշուբը վստահ է եղել, որ չի արտահանձնվի Թուկուլտի-Նինուրտա I-ին: Ինքնին՝ Նաիրիի կողմից Ալգիի արքա Էլսի-Թեշուբին ապաստան տրամադրելը Թուկուլտի-Նինուրտա I-ի կողմից կարող էր դիտարկվել իբրև բացահայտ հակադրության նշան Ասորեստանի ծավալապաշտական քաղաքականությանը և, որպես այդպիսին, դառնալ «անհայտ երկիր» Նաիրիի դեմ արշավանք ձեռնարկելու դրդապատճառ: Այդուհանդերձ, փաստերի համադրությունը թույլ է տալիս կարծելու, որ ասսուրա-նաիրյան հակասությունները սկսել են ձևավորվել ավելի վաղ՝ դեռևս Շուլմանու-աշարեդ I-ի կառավարման վերջին շրջանում և ունեցել են ավելի խորը ռազմավարական պատճառներ: Այլ խոսքով՝ Էլսի-Թեշուբի փախուստը Նաիրի ոչ թե ասսուրա-նաիրյան ռազմական բախման պատճառ է դարձել, այլ ընդամենը այն արագացնող գործոն⁵⁰:

Ամեն դեպքում հստակորեն նշագծվում է, որ Նաիրիի դեմ Թուկուլտի-Նինուրտա I-ի արշավանքը տեղի է ունեցել նրա կառավարման 4-13 տարիների միջև ընկած ժամանակահատվածում⁵¹:

Նաիրյան երկրների հետ Ասորեստանի վերաբերյալ *RIMA 1. A.O.78.23* արձանագրության մեջ կարդում ենք՝

«40. KUR.MEŠ-i dan-nu-ti ki-šir šap-šá-qi

41. šá MAN ia-um-ma ar-ḫa-te-šu-nu la i-du-ú

⁵⁰ Tsakanyan 2023, 6, հմմտ.՝ Քոսյան 1999, 73-77:

⁵¹ Tsakanyan 2021, 27.

42. *i-na li-it kiš-šu-ti-ia šu-tur-ti*
43. *i-te-ti-iq-ma ħur-šá-ni-šu-nu*
44. *i-na ak-kúl-la-at e-ri-i lu-pe-ši-id*
45. *ar-ĥa-te-šu-nu la pe-ta-te uš-pél-ki-ma*
46. *it-ti 40-a MAN.MEŠ KUR.KUR Na-i-ri*
47. *i-na qé-reb ta-ĥa-zi lu am-da-ĥa-aš*
48. *a-bi-ik-tu um-ma-na-te-šu-nu áš-ku-un*
49. *kúl-la-at KUR.KUR-šu-nu a-bél MAN.MEŠ KUR.KUR Na-i-ri*
50. *šá-tu-nu i-na be-re-et ZABAR GÚ.MEŠ-šu-nu*
51. *ar-pi-iq a-na É-KUR KUR-i GAL-i*
52. *É tu-kúl-ti-ia a-na ma-ĥar ^dAš-šur*
53. *EN-ia lu-bi-la-šu-nu-ti ni-iš DINGIR.MEŠ*
54. *GAL.MEŠ šá AN-e KI-ti ú-tam-mi-šu-nu-ti*
55. *GUN ú ta-mar-ta a-na u₄-um ša-a-ti»*

«40. Հզոր (և) չափազանց դժվարանցանելի լեռներով,

41. որոնց ուղիները ոչ մի այլ թագավոր չգիտեր,

42. իմ հաղթական հզոր ուժով ես անցա

43. նրանց բարձրաբերձ լեռները,

44. ես ընդարձակեցի բրոնզե բրիչներով,

45. (և) լայնացրի նրանց անանցանելի ուղիները:

46. (և) Նաիրի երկրների 40 արքաների հետ

47. կռիվ տվեցի ճակատամարտում:

48. Ես պարտության մատնեցի նրանց բանակին,

49. (Այսպիսով) ես դարձա նրանց բոլոր երկրների տերը: Նաիրի երկրների այդ արքաների

50. պարանոցներին ես բրոնզե ճարմանդներ կապեցի,

51. (և) նրանց բերեցի Էկուր մեծ լեռը,

52. իմ աջակցության տաճարը, Աշշուր աստծո ներկայությամբ՝

53. իմ տիրոջ: Ստիպեցի նրանց մեծ աստվածներով՝

54. երկնքի (և) անդրաշխարհի երդվել,

55. (և) հավերժ հարկ ու տուրք

56. ես նրանց պարտադրեցի»⁵²:

Աշշուրում, Աշշուր աստծո տաճարից հայտնաբերված և ձոնի բնույթ կրող մեկ այլ արձանագրության մեջ⁵³, Թուկուլտի-Նինուրտա I-ը նշում է՝

«7. [enā-m]a ^dA-šur[r] ʾa-na KUR. ʾKUR[Naʾiri]

8. [u] KUR.KUR a-aḫ A.AB.BA ʾe¹-[lēniti]

⁵² RIMA 1. 1987, A.0.78.23, հմմտ.՝ A.0.78.20, II. 6-7, A.0.78.24, II. 31-33, Weidner 1959, N 16, II., հմմտ.՝ N 17, II. 18-20, N 21, II. 6-7.

⁵³ RIMA 1. 1987, 278.

9. 𐎶𐎵-*ma-ī-r[a(?)]-an-ni*]
10. *i-na šu-ṛmur ta-ḫa-z[i-ia]*
11. *a-ba-'a kúl-la-a[t māṭāṭ]*
12. *Na-i-ri ú KUR.KUR a-a[h]*
13. A.AB.BA *e-le-ni-t[ī]*
14. *qa-ti ik-šu-[ud]*
15. 40-a 𐎶LUGAL. MEŠ-*šu-nu a-bél ana GİR-ī[a ušekniš*.
16. *ú tup-ši-ka 𐎶e-[mid]*»

«7-16. [Երբ Աշշուր] Ասորվածը ուղա[րկեց ինձ] դեպի [Նաիրի երկր]ներ [և] Վ[երին] ծովի ափին գտնվող երկրները, ես իմ կապաղի պատերազմով ավերեցի (և) նվաճեցի բոլոր [երկրները] Նաիրի և երկրները Վերին ծովի ափին: (Այսպիսով) ես դարձա նրանց քառասուն թագավորների տիրակալը, [նրանց հնազանդեցրի] իմ ուրքերի տակ և հարկ պարտադրեցի (նրանց)»⁵⁴:

Գոյություն ունի ևս մի կարևոր արձանագրություն, որն իր վնասվածությամբ հանդերձ միևնույն ժամանակ խիստ կարևոր տեղեկություն է պարունակում: Վերջինիս բովանդակության մեջ նկարագրված նվաճումներն ու տեղանունները բավական նման են և Թուկուլտի-Նինուրտա I-ի և Թուկուլտի-ապալ-էշշարայի (Թիզլաթապլասար) I-ի (մ.թ.ա. 1115-1077 թթ.) նվաճումներին: Սակայն, ըստ Ա.Կ. Գրեյսոնի, տեքստի արխաիկ ձևը հուշում է, որ ավելի հավանական է Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման ժամանակահատվածը⁵⁵: Արձանագրությունը մեզ համար կարևոր է նրանով, որ Թուկուլտի-Նինուրտա I-ի՝ դեպի Նաիրի երկրներ կատարած արշավանքի ժամանակ Ասորեստանի արքան լուրջ խոչընդոտների է հանդիպել: Դեռ ավելին, արձանագրության համատեքստից հետևում է, որ նրա արշավանքն անակնկալ չի եղել Նաիրյան համադաշնության մեջ մտնող երկրների տիրակալների համար⁵⁶. արձանագրության մեջ նշված է, որ համադաշնության արքաները, «ռազմական բախման համար կապաղի դիրք են բռնել»՝

«7. [... šarrāni]. MEŠ KUR.KUR *Na-i-ri i-na qa-ab-l[i...]*

8. [... ittišu]-nu am-da-ṛḫa-aš a-bi-ik-t[a-šunu aškun ...]»⁵⁷:

Նաիրյան համադաշնության արքաների թիվը, ինչպես տեսանք վերևում, 40 էր: Մ. Սալվինիի կարծիքով, այդ թիվն ըստ երևույթին չափազանցված է, և, ամենայն հավանականությամբ, այն կարելի է ընթերցել որպես «շարքերը», «անհամար բազմություն» և այլն⁵⁸: Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ համադաշնության երկրների տիրակալները պատրաստ էին Ասորեստանի տիրակալի հետ բախմանը, հակառակ պարագայում՝ գրեթե անհնար է

⁵⁴ RIMA 1. 1987, A.O.78.26, Weidner 1959, N 19.

⁵⁵ RIMA 1. 1987, 291.

⁵⁶ Tsakanyan 2023, 7.

⁵⁷ RIMA 1. 1987, A.O.78.1001.

⁵⁸ Salvini 1998-2001, 88.

Թուկուլտի-Նինուրտա I-ի արշավանքին զուգընթաց հավաքագրել բավականաչափ ուժ և դեռ ավելին՝ դիրքավորվել ճակատամարտի համար: Դժվար է ասել, թե ով է գլխավորել համադաշնությունը: Արձանագրությունը լուռ է ոչ միայն համադաշնության ղեկավարի, այլև Էխլի-Թեշուբի հետագա ճակատագրի մասին: Չենք կասկածում, որ եթե համադաշնությունը գլխավորեր Էխլի-Թեշուբը, ապա Ասորեստանի արքան անպայմանորեն կհիշատակեր նրա մասին՝ կրկին շեշտելով իր առավելությունը և ավելի զորեղ տեսք տալով իր արշավանքին: Սակայն, Էխլի-Թեշուբի փախուստը դեպի Նաիրի երկիր ինքնին հաստատում է այն հանգամանքը, որ այն լայն հնարավորություններ էր ընձեռում հակաստորեստանյան ելույթների համար, թե՛ ռազմաքաղաքական (բնակչության թվաքանակի) և թե՛ տնտեսական (բնական պաշարների)⁵⁹ առումով: Ամեն դեպքում Էխլի-Թեշուբի փախուստը դեպի Նաիրի կարող էր Թուկուլտի-Նինուրտա I-ի համար պատրվակ դառնալ դեպի Նաիրի արշավանքի համար⁶⁰:

Ինչպես դժվար չէ կոահել, Ալզին և Նաիրյան համադաշնության մեջ ընդգրկված երկրները կամ սահմանակից են եղել իրար, կամ բավականաչափ մոտ են գտնվել, ինչն էլ կարող է վկայել, որ Նաիրյան երկրները տարածվել են պատմական Մեծ Հայքի առնվազն Ծոփք, Աղծնիք և Տուրուբերան նահանգների ու նրանց հարող շրջաններում: Թուկուլտի-Նինուրտա I-ի արշավանքը դեպի Նաիրյան երկրներ, ըստ երևույթին, իրականացվել է այն ուղով, որով հետագայում դեպի Նաիրի են արշավել նրա հաջորդները՝ Թուկուլտի-ապալ-էշշարա I-ը⁶¹, Թուկուլտի-Նինուրտա II-ը (մ.թ.ա. 891-884 թթ.)⁶² և Աշշուր-նաժիր-ապալ II-ը (մ.թ.ա. 883-859 թթ.)⁶³:

Վերոշարադրյալը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ առավել իրատեսական է Նաիրի երկրների գտնվելը Տավրոսի լեռնաշղթայից հյուսիս

⁵⁹ Այս առումով խոսում է նաև այն հանգամանքը, որ Թուկուլտի-Նինուրտա I-ի կառավարման 6-րդ և Լիբուր-զանի-Աշշուրի էպոնիմատի տարում, ըստ երևույթին, արքայական պալատի միջնորդությամբ, ոմն Մարդուկ-կետտի-է-տամշին Նաիրի երկրից ձեռք է բերել 128 ձի: Այս հիշատակությունը հետաքրքիր է նաև նրանով, որ սալիկի վրա արձանագրված է «**Նաիրի երկիր**» «31. KUR. Na-i-ri», այսինքն՝ *եզակի թվով*, ինչն էլ իր հերթին կարող է վկայել այն մասին, որ Նաիրի երկիրը «*Նաիրի երկրներ*»-ի շարքում առանձին կազմավորում էր, և հավանաբար հենց Նաիրիի տիրակալն էլ հետագայում գլխավորել է համադաշնությունը՝ Frahm 2002, 68-69:

⁶⁰ Tsakanyan 2023, 7.

⁶¹ RIMA 2. 1991, A.O.87.1, Col. IV, l. 49, 83, Col. V, l. 9, 29, Col. VIII, l. 13, A.O.87.2, l. 25, A.O.87.3, ll. 9, 10, 12, A.O.87.4, l. 15, A.O.87.10, ll. 7, 17, A.O.87.13, l. 3, A.O.87.15, ll. 9, 10, A.O.87.16, l. 4, A.O.87.17, l. 4.

⁶² RIMA 2. 1991, A.O.100.5, ll. 1, 1, 2, 11, 13, 27, 129, A.O.100.6, l. 3.

⁶³ RIMA 2. 1991, A.O.101.1, Col. II, l. 6, 13, 15, 97, 117, 131, Col. III, l. 120, A.O.101.2, l. 10, A.O.101.3, l. 33, A.O.101.17, Col. II, ll. 18, 43, 47, 49, Col. IV, ll. 39, 105, A.O.101.19, ll. 27, 84, 93, 94, 96, 99, 100, 102, A.O.101.22, ll. 3, 6, A.O.101.23, l. 7, A.O.101.24, l. 2, A.O.101.26, l. 19, A.O.101.28, Col. III, l. 15, A.O.101.31, l. 11, A.O.101.32, l. 7, A.O.101.34, l. 21, A.O.101.35, l. 7, A.O.101.38, l. 17, A.O.101.40, l. 22, A.O.101.41, l. 10, A.O.101.42, l. 5, A.O.101.43, l. 18, A.O.101.50, l. 20, A.O.101.51, l. 15, A.O.101.53, l. 1, A.O.101.56, l. 9, A.O.101.66, l. 7, A.O.101.68, l. 2.

ընկած տարածքներում, մինչև Արածանիի և Վանա լճի ավազանը⁶⁴: Չի բացառվում նաև այն հանգամանքը, որ՝ երբ Ասորեստանի արքա Աշշուր-բե-կալան (մ.թ.ա. 1074-1057 թթ.) իր արձանագրության մեջ նշում էր «Նաիրյան երկրների լեռներ»՝ «KUR.MEŠ-ni šá KUR.KUR Na-i-ri»⁶⁵ արտահայտությամբ նկատի ուներ Տավրոսի լեռնաշղթան:

Նաիրի երկրների դեմ դուրս գալով՝ Թուկուլտի-Նինուրտա I-ը հաղթանակ է տոնում, գերի վերցնում Նաիրի երկրների որոշ տիրակալների, որոնց, սակայն, Աշշուր աստծո առջև հավատարմության երդում տալուց և ամենամյա հարկ տալու խոստումից հետո թույլ է տրվում վերադառնալ իրենց երկրները: Նաիրի երկրների դեմ արշավանքից հետո Թուկուլտի-Նինուրտա I-ը իր տիտղոսաշարին ավելացնում է «MAN kúl-la-at KUR.KUR Né-'i-ri» «Նաիրի բոլոր երկրների արքա» տիտղոսը⁶⁶: Արձանագրենք նաև, որ այս տիտղոսին պետք է զգուշությամբ վերաբերվել, քանի որ Նաիրյան երկրների տարածքի վրա ասորեստանյան ամբողջական տիրապետության մասին խոսք լինել չի կարող: Այն ավելի շուտ ենթակայություն էր ամենամյա հարկի գոյությամբ⁶⁷:

Նաիրյան երկրների դեմ արշավանքի թվագրումը

Հոդվածը ներկայացվել է 10.04.2022, գրախոսվել է 22.05.2023, ընդունվել է տպագրության 07.08.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.2-87

Ներածություն

Հարկերն արտացոլում են բնակչության, տնտեսավարող սուբյեկտների և պետության միջև հարաբերությունների կարգավորվածության աստիճանը, երկրի կայունության ապահովման և պետական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների կենտրոնացման հիմնական գործիքն են: Հարկումը, որն ուղղակիորեն ազդում է սպառման, արտադրության և բաշխման վրա, հետապնդում է տնտեսական առաջընթացի ապահովման և հասարակության բարեկեցության բարձրացման նպատակ: Եթե նախկինում հարկերը դիտարկվել են միայն որպես պետության եկամտի ձևավորման աղբյուր, ապա ներկայումս համարվում են նաև հասարակական հարաբերությունների վրա ազդեցության գործիք և պետության կողմից կիրառվում են գիտատեխնիկական առաջընթացի, ձեռնարկատիրության, արտադրության զարգացման վրա տնտեսական ներգործություն իրականացնելու նպատակով: Ժամանակակից աշխարհում հարկերի նկատմամբ աճող հետաքրքրությունը մեծապես պայմանավորված է այն բանով, որ դրանք շոշափում են հասարակության գրեթե բոլոր շերտերի շահերը: Բացի այդ, հարկերը կանխորոշում են երկրի տնտեսության զարգացումը, քանի որ միայն արդյունավետ հարկային համակարգի ներդրման և գործարկման դեպքում է հնարավոր ապահովել տնտեսական աճ, ստեղծել կայուն ֆինանսական համակարգ, խթանել ձեռնարկատիրությունը և գործա-

րար ակտիվությունը, լուծել տարաբնույթ սոցիալական խնդիրներ: Բազմաթիվ տնտեսագետներ բազմիցս ուսումնասիրել են հարկերը, անդրադարձել հարկման խնդիրներին և փորձել նախանշել որոշակի լուծումներ: Ըստ Ա. Սմիթի՝ հարկը պետական ծառայությունների դիմաց կատարվող վճարի արդարացի գինն է¹:

Հարկային մուտքերի դինամիկայի, դրանց կառուցվածքի վերլուծությունը վեր է հանում առկա խնդիրները, ինչն էլ հնարավորություն է տալիս կատարելագործելու հարկային համակարգը, ավելացնելու հարկային եկամուտների ծավալը, ինչպես նաև նպաստելու հարկային բեռի արդարացի բաշխմանը: ՀՀ խոշոր հարկ վճարողները, ապահովելով հարկային մուտքերի ավելի քան 70%-ը, հարկային համակարգում կատարվող բարեփոխումների տեսանկյունից ունեն մեծ դերակատարություն: Սա է պատճառը, որ կարևորվում է հարկային վարչարարության արդյունավետության բարելավման միջոցով պետական բյուջեի եկամուտների կայուն ավելացումը:

Հոդվածի նպատակն է ՀՀ-ում խոշոր հարկատուների հարկման խնդիրներն ու հարկային վարչարարության կատարելագործման ուղիները բացահայտելը:

Վերջին տարիներին ՀՀ-ում հարկային եկամուտների աճը հիմնականում եղել է տնտեսական աճի, հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացման, ստվերային շրջանառությունների հարկման հաշվին: Չնայած իրականացված որոշակի քայլերին, այդուհանդերձ, էական առաջընթաց չի նկատվում հարկային եկամուտների կառուցվածքի բարելավման ուղղությամբ:

Գրականության ակնարկ

Սոցիալ-տնտեսական զարգացման գործում չափազանց կարևոր է հարկային քաղաքականության և հարկային համակարգի դերը, քանի որ դրանց արդյունավետության շարունակական բարձրացումը հանգեցնում է պետական եկամուտների ավելացման, ներդրումային քաղաքականության աշխուժացման, պետական կարևորագույն ծրագրերի իրագործման և տնտեսական ու կայուն տեմպերի ապահովման:

Հարկերը տնտեսական քաղաքականության առանցքային գործիքներից են, որոնք ուղղակիորեն ազդում են վերաբաշխման վրա: Հատկապես վերջին կես դարի ընթացքում եղած բավականաչափ հետազոտությունները դիտարկում են ընկերության չափերի և արդյունավետ հարկային դրույքաչափի փոխկապակցվածությունը²: Ընդ որում, արդյունավետ հարկային դրույքաչափի քննարկումները բավական արդիական են գլոբալացման գործընթաց-

¹ Smith 1937, 825.

² Belz, Hagen, Steffens 2019, 2.

ների համատեքստում, քանի որ խոշոր վերազգային կորպորացիաները որևէ երկրում մեծ ներդրում կատարելու համար երբեմն հարկային արտոնություններ են ստանում³: Օրինակ, ԱՄՆ-ում 2018 թ. ոչ ռեզիդենտների իրականացրած մասնավոր ներդրումների էական աճ է գրանցվել, ինչը որոշակիորեն կապված է եղել հարկերի կրճատման ծրագրի հետ⁴: Ավելին՝ զարգացած երկրները տասնամյակներ շարունակ մեծացնում են իրենց ներդրումները զարգացող տնտեսություններում, որն անխուսափելիորեն հանգեցնում է հարկային նորմերի փոփոխությունների⁵:

ՀՀ պետական բյուջեի եկամուտների շուրջ 95%-ը կազմում են հարկային եկամուտները և պետական տուրքերը⁶, իսկ հարկային եկամուտների ավելի քան 70%-ը ապահովում են խոշոր հարկատուները: Ուստի հարկային բարեփոխումների իրականացման տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է տրվում խոշոր հարկատուների հարկման մեխանիզմների կատարելագործմանը: Բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ խոշոր հարկատուների գործունեության վերահսկման հատուկ մեխանիզմների մշակումը հանգեցրել է հարկային մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և հարկային օրենսդրության դրույթների խստորեն պահպանելուն: Նման մեխանիզմները հարկային մարմիններին թույլ են տալիս առավելապես կենտրոնանալ հարկային մուտքերի վրա էական ազդեցություն ունեցող հարկատուների համեմատաբար փոքր խմբի վրա՝ դրանով իսկ մեծացնելով հարկային եկամուտների ծավալը⁷:

Խոշոր կազմակերպությունների նկատմամբ հարկային մոնիթորինգի նոր ձևերի ներդրումը էապես բարձրացնում է պետության ազդեցության արդյունավետությունը և հնարավորություն է տալիս հավաքագրել կանխատեսվող հարկային մուտքերը: Արժույթի միջազգային հիմնադրամը իր 2019 թ. զեկույցում նշում է, որ խոշոր ընկերությունների նկատմամբ պրոգրեսիվ հարկի կիրառումը կարող է վերջիններիս շուկայական ազդեցությունը նվազեցնելու արդյունավետ միջոց լինել⁸: Բոլոր հետազոտություններն ու սիմուլյացիոն մոդելները ցույց են տալիս, որ կորպորատիվ հարկման ռեգրեսիվ մոտեցումները հանգեցնում են եկամուտների և առհասարակ հարստության կենտրոնացման հասարակության առավել բարեկեցիկ շերտերի մոտ⁹:

³ Farnsworth, Fooks 2015, 25.

⁴ Kopp, Leigh, Mursula, Tambunlertchai 2019, 6.

⁵ IMF, Corporate..., 48.

⁶ «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, հոդված 6:

⁷ Киреенко, Орлова, Баженова 2019, 112.


⁸ IMF, World... 2019, 69.

⁹ Piketty, Saez, Zucman 2018, 598-601.

Խոշոր հարկ վճարողների դերը ՀՀ հարկային համակարգում

Յուրաքանչյուր տարի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հրապարակում է 1000 խոշոր հարկատուների ցանկը, որից պարզ է դառնում, որ խոշոր հարկ վճարողների վճարած հարկերը կազմում են հարկային եկամուտների շուրջ 70-80%-ը: Եթե փոքր և միջին բիզնեսին հաճախ որոշակի արտոնություններ են տրվում, որպեսզի խթանվի վերջիններիս զարգացումը, ապա խոշոր հարկատուների նկատմամբ կիրառվող գործիքակազմի ընտրության հարցում պետք է առավելագույնս զգույշ լինել, քանի որ հարկային մարմնի կողմից կատարված՝ հարկային դրույքաչափերի, հարկային արտոնությունների կամ վարչարարության ցանկացած փոփոխություն կարող է հանգեցնել հարկային մուտքերի էական նվազման կամ աճի: Այսպիսով, խոշոր հարկատուների հարկային մուտքերի վերլուծությունը հնարավորություն է տալիս վեր հանել հարկային համակարգում առկա մի շարք խնդիրներ, որոնց լուծմամբ հնարավոր է ավելացնել հարկային մուտքերը:

Խոշոր հարկատուների հարկային մուտքերի վերլուծության համար որպես դիտարկվող ժամանակահատված է ընտրվել 2014-2021 թթ. շրջանը: 1000 խոշոր հարկ վճարողների ցանկի հրապարակման հարցում 2020 թ. ընթացքում մեթոդաբանության փոփոխություն է տեղի ունեցել, որի շնորհիվ 2020 թ. հրապարակվել է 1000 խոշոր հարկ վճարողների ևս մեկ ցանկ, որտեղ ներառվել են ոչ միայն տնտեսավարող սուբյեկտները, այլ նաև պետական կառավարչական հիմնարկները, այդ թվում՝ նախարարություններ, պետական գերատեսչություններ, ուստի վերլուծություններն իրականացնելիս հիմք են ընդունվել ինչպես նախկին, այնպես էլ նոր ցանկերը (գծ. 1):




Գծ. 1. 1000 խոշոր հարկ վճարողների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր ծավալը 2016-2021 թթ., մլրդ դրամ¹⁰

¹⁰ Բոլոր գծապատկերները կազմել են հեղինակները՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հրապարակած՝ 2016-2021 թթ. 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի հաշվետվությունների հիման վրա:

2016 թ.-ից սկսած՝ նկատվում է հարկային մուտքերի աճ: Պատկերը փոխվում է 2020 թ.: Եթե դիտարկենք հարկ վճարողների ցանկը, որտեղ ներառված են միայն տնտեսավարող սուբյեկտները, ապա 2020 թ. 1000 խոշոր հարկ վճարողների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 988 մլրդ դրամ, ինչը 6,9%-ով պակաս է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Մինչդեռ 1000 խոշոր հարկատուների ցանկը կազմելու մեթոդաբանության փոփոխության հետևանքով նկատվում է շուրջ 16 մլրդ դրամի աճ, ինչը 1,5%-ային կեսով ավել է, քան նախորդ տարվա ցուցանիշը: Հարկային մուտքերի աճ նկատվում է նաև 2021 թ.: Նշենք, որ հարկային մուտքերի աճը զուգակցվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճի հետ, որը պայմանավորված է ստվերային տնտեսության կրճատմամբ:


Եթե դիտարկում ենք 1000 խոշոր հարկ վճարողների ցանկը, որտեղ ներկայացված են միայն տնտեսավարող սուբյեկտները, ապա հարկային մուտքերի կազմում նրանց վճարած հարկերի տեսակարար կշռի նվազումն ակնառու է դարձնում COVID-19-ի և Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները թե՛ տնտեսական զարգացման, թե՛ հարկային մուտքերի մեծության վրա (գծ. 2):



Գծ. 2. 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության, 2016-2021 թթ.

Գծապատկեր 2-ում ներկայացված է խոշոր հարկ վճարողների քանակը՝ ըստ վճարած հարկերի մեծության: Մասնավորապես տեսնում ենք, որ 1 մլրդ դրամից ավել և 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ հարկ վճարող ընկերությունների թվաքանակի աճի միտում կա, իսկ մինչև 200 մլն դրամ հարկ վճարող ընկերությունների թիվը 1000 խոշոր հարկատուների ցանկում 2016 թ.

445-ից 2021 թ. դարձել է 0: Հատկանշական է, որ եթե մինչև 2021 թ. 200 մլն դրամից քիչ հարկ վճարող ընկերությունների քանակը մի քանի հարյուր էր, ապա 2021 թ. 1000 խոշոր հարկատուների ցանկի վերջին հորիզոնականում գտնվող ընկերությունը վճարել է շուրջ 205,8 մլն դրամի հարկ: 2019 թ. 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառվելու համար պետք է վճարեին ավելի քան 168 մլն դրամի հարկ, 2018-ին՝ 138 մլն դրամից մի փոքր ավել: 2016 թ. ՀՀ-ում գործող 128 ընկերություն վճարել է 1 մլրդ. դրամից ավել հարկ, իսկ 2021 թ. այդպիսի ընկերությունների թիվն աճել է 70%-ով:



ՊՖ. 3. 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ներառված հարկատուների վճարած հարկերի միջին մեծությունը 2014-2021 թթ., մլն դրամ

1 մլրդ դրամից ավել հարկերի հանրագումարը հարաբերելով 1 մլրդ դրամից ավել հարկեր վճարած ընկերությունների թվաքանակին՝ կատանանք, թե ընկերությունը, որի վճարած հարկերի շեմը բարձր է 1 մլրդ դրամից, միջին հաշվով որքան հարկ է վճարել: Համանման մոտեցմամբ 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ հարկ վճարած ընկերությունների համար ևս կարելի է հաշվարկել նրանց վճարած հարկի միջին մեծությունը: Գծապատկեր 3-ից պարզ է դառնում, որ 500 մլն դրամից ավել հարկ վճարող ընկերությունների կողմից վճարվող հարկի միջին մեծությունը համեմատաբար կայուն է, այն էսպես չի տատանվում:

Դա նշանակում է, որ թեև կազմակերպությունների քանակը փոփոխվել է էականորեն, սակայն վճարվող հարկի միջին մեծությունը՝ ոչ:

Խոշոր հարկ վճարողների կողմից վճարված ուղղակի հարկերի դինամիկան

Հարկային մուտքերում ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը շատ բան է ասում հարկային համակարգի, հարկային բեռի բաշխման


արդարացիության մասին: Ընդունված է այն տեսակետը, որ որքան մեծ է ուղղակի հարկի մասնաբաժինը, այնքան հարկային համակարգն արդյունավետ է, իսկ հարկային բեռի բաշխումը՝ առավել արդար: Օրինակ, Եվրոպայում XIX դ. վերջերին անուղղակի հարկերի տեսակարար կշիռը կազմել է շուրջ 2/3, իսկ XX դ. վերջին արդեն 1/3¹¹: 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշիռը 2016-2021 թթ. ժամանակահատվածում նվազման միտում է ունեցել (գծ. 4):



Գծ. 4. 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի մեջ 2016-2021թթ., %

2016 թ. խոշոր հարկ վճարողների վճարած հարկերի մեջ ուղղակի հարկերը կազմել են 36,2%, իսկ 2021 թ. այդ ցուցանիշը նվազել է 2,1 տոկոսային կետով և դարձել 34,1%: Ընդ որում, խոշոր հարկ վճարողների վերջին հարյուրակի դեպքում ուղղակի հարկերի տեսակարար կշռի նվազումն ավելի կտրուկ է, քան առաջին հարյուրակինը: Մասնավորապես՝ եթե 2016 թ. առաջին հարյուրակի կողմից վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը ընդհանուր հարկերում 34,9% է կազմել, իսկ վերջին հարյուրակի պարագայում՝ 39,9%, ապա 2021 թ. այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 32,6% և 34,5%: Այսինքն՝ ցուցակի առաջին հարյուրակի ընկերությունների պարագայում ցուցանիշն անկում է ապրել 2,3, իսկ վերջին հարյուրակի պարագայում՝ 5,4 տոկոսային կետով (գծ. 5):


¹¹ Соловьева 2017, 219.



Գծ. 5. 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվը՝ ըստ ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության, 2016-2021 թթ.

2016-2018 թթ. 1 մլրդ դրամը գերազանցող ուղղակի հարկեր վճարած ընկերությունների թիվը տատանվում էր 46-52-ի միջակայքում, 2018 թ. սկսած՝ նկատվել է աճ՝ 2021 թ. դառնալով 74 ընկերություն: Գրեթե նույն միտումը տեսնում ենք նաև 500 մլն դրամից 1 մլրդ դրամ ուղղակի հարկեր վճարած ընկերությունների թվաքանակի պարագայում: 2016-2021 թթ. ընթացքում 500 մլն դրամից 1 մլրդ դրամ ուղղակի հարկեր վճարած ընկերությունների թիվն աճել է շուրջ 2,5 անգամ՝ 2016 թ. 41 ընկերությունից 2021 թ. դառնալով 100: Թեև կազմակերպությունների քանակն աճել է, այնուամենայնիվ, ցուցանիշը համադրելով խոշոր հարկատուների կողմից վճարված ուղղակի հարկերի ընդհանուր՝ խոշոր հարկատուներից հավաքագրված հարկային եկամուտների կազմում տեսակարար կշռի ցուցանիշի հետ՝ նկատում ենք, որ ուղղակի հարկերի տեսակարար կշիռը տարեցտարի նվազել է՝ ի հակադրություն կազմակերպությունների քանակի աճին:

1 մլրդ դրամից ավել ուղղակի հարկերի հանրագումարը հարաբերելով 1 մլրդ դրամից ավել ուղղակի հարկեր վճարած ընկերությունների քանակին՝ կստանանք, թե ընկերությունը, որի վճարած ուղղակի հարկերի շեմը բարձր է 1 մլրդ դրամից, միջին հաշվով որքան ուղղակի հարկ է վճարել: Նույն կերպ հաշվարկվել է նաև 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ ուղղակի հարկեր վճարած ընկերությունների վճարած ուղղակի հարկերի միջին մեծությունը (գծ. 6): Գծ. 6-ից երևում է, որ 2016-2021 թթ. 1 մլրդ դրամից ավել ուղղակի հարկեր վճարած ընկերությունների վճարած ուղղակի հարկերի միջին մեծությունը, թեև որոշակի տատանողականություն է ունեցել, բայց այդուհանդերձ, դիտարկվող ժամանակահատվածում աճել է աննշան՝ ընդամենը 3%-ով: Իսկ 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ ուղղակի հարկեր վճարած ընկերությունների վճարած ուղղակի հարկերի միջին մեծությունը նվազել է մոտ 5,5%-ով:



ՊՖ. 6. 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ներառված հարկատուների վճարած ուղղակի հարկերի միջին մեծությունը 2016-2021 թթ., մլն դրամ

Եզրակացություններ

Չնայած COVID-19-ի և Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական անբարենպաստ պայմաններին՝ խոշոր հարկ վճարողների հարկային մուտքերը 2020-2021 թթ. ընթացքում ավելացել են՝ պայմանավորված 2020 թ. 1000 խոշոր հարկատուների ցանկում մեթոդաբանության փոփոխությամբ, որի շնորհիվ տնտեսավարող սուբյեկտներից զատ, ցանկում ներառվել են նաև պետական կառավարչական հիմնարկները, գերատեսչություններն ու նախարարությունները: Կարծում ենք՝ նման մոտեցումը հնարավորություն չի տալիս օբյեկտիվ կարծիք կազմելու տնտեսությունում առկա իրավիճակի մասին, քանի որ դա արհեստականորեն մեծացնում է հարկային մուտքերի ծավալը: Թեև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ևս հարկ վճարողներ են, այնուամենայնիվ, տնտեսության իրական պատկերն ընկալելու համար անհրաժեշտ է դիտարկել առևտրային կազմակերպությունների վճարած հարկային մուտքերի մեծության չափը:

Ճիշտ է, 1 մլրդ դրամից ավել և 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ հարկ վճարող կազմակերպությունների քանակը տարեցտարի աճում է, այդուհանդերձ, էական տեղաշարժ չի նկատվում մեկ կազմակերպության վճարած հարկային մուտքերի միջին մեծությունում, որը մտահոգիչ է և կարող է վկայել ստվերային տնտեսության շոշափելի չափերի մասին:

Հաջորդ կարևոր խնդիրը հարկային մուտքերի կազմում ուղղակի հարկերի փոքր տեսակարար կշիռն է, որը վերջին տարիներին սկսել է նվազել: Սա վկայում է պետության կողմից իրականացվող հարկային վարչարարության անարդյունավետության մասին: Հայտնի է, որ անուղղակի հարկերի հավաքագրումը շատ ավելի «հեշտ» է. ըստ էության, դրանք ընկնում են վերջ-

նական սպառողի վրա, իսկ ուղղակի հարկերի դեպքում հարկատուն իր իրականացրած գործունեության ֆինանսական արդյունքից է վճարում հարկերը: Հատկանշական է այն փաստը, որ 1000 խոշոր հարկատուների ցանկում առաջին 100 կազմակերպությունների դեպքում ուղղակի հարկերի տեսակարար կշռի փոփոխությունը ընդհանուր հարկերի մեջ այնքան մեծ չէ, որքան վերջին 100-ինը: Դա ևս վկայում է հարկային վարչարարության անարդյունավետ իրականացման մասին:

Ուշագրավ է, որ խոշոր հարկատուների վճարած հարկերի ծավալի աճն ավելի մեծ է, քան պետբյուջեի հարկային եկամուտների աճը: Խոշոր հարկ վճարողների վճարած հարկերի աճի առաջանցիկ տեմպը ցույց է տալիս, որ նրանք ստվերից որոշակիորեն բերվել են հարկային դաշտ՝ առավելապես անուղղակի հարկերի մասով: Թեև խոշոր հարկատուների վճարած հարկերի ծավալն աճում է, այդուհանդերձ, նրանք «ծանրաբեռնված» չեն ուղղակի հարկերով: Այսինքն՝ 1000 խոշոր հարկատուների վճարած հարկերի ծավալների աճն առավելապես եղել է անուղղակի հարկերի հաշվին:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ խոշոր հարկատուների կողմից հարկային մուտքերի ավելացման համար անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման համար, բացահայտել ՀՀ-ում սահմանված հարկատեսակների հարկման բազաների ընդլայնման, դրանց գործադրման մեխանիզմների կատարելագործման արդյունավետ ուղիները և մշակել այնպիսի մեթոդներ ու մոտեցումներ, որոնք մեծապես կնպաստեն ստվերային տնտեսության ծավալների կրճատմանը, պետական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների կենտրոնացմանը և հանրապետությունում գործարար միջավայրի բարելավմանը:

Գրականություն

- «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք:
ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հրապարակված 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի հաշվետվություններ, 2016-2021 թթ.:
- Киреенко А., Орлова Е., Баженова В. 2019, Налоговое администрирование крупных налогоплательщиков: мировые тенденции и особенности российского опыта, Вестник УрФУ. Серия экономика и управление, т. 18, N 1, с. 104-126.
- Соловьева Н. 2017, Соотношение прямых и косвенных налогов в налоговой системе государства и тенденции его изменения, Экономика: вчера, сегодня, завтра, т. 7, N 1, с. 216-226.
- Belz T., Hagen D., Steffens Ch. 2019, Taxes and Firm Size: Political Cost or Political Power?, Journal of Accounting Literature, vol. 42, p. 1-28.
- Farnsworth K., Fooks G. 2015, Corporate Taxation, Corporate Power, and Corporate Harm, Howard Journal of Criminal Justice, vol. 54, N 1, p. 25-41.
- IMF 2019, Corporate Taxation in the Global Economy, Policy Paper No. 2019/007, March 102019, 91 p.

- IMF 2019, World Economic Outlook: Growth Slowdown, Precarious Recovery, Washington, DC, April 2019, 216 p.
- Kopp E., Leigh D., Mursula S., Tambunlertchai S. 2019, U.S. Investment since the Tax Cuts and Jobs Act of 2017, IMF Working Paper no. WP/19/119, Washington DC, May 2019, 37 p.
- Piketty T., Saez E., Zucman G. 2018, Distributional National Accounts: Methods and Estimates for the United States, Quarterly Journal of Economics, vol. 133, Issue 2, p. 553-609.
- Smith A. 1937, An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, New York, 1006 p.

ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կառլեն Խաչատրյան, Վարդան Ալեքսանյան

Ամփոփում

Սոցիալ-տնտեսական զարգացման գործում չափազանց կարևոր է հարկային քաղաքականության և հարկային համակարգի դերը: ՀՀ պետական բյուջեի եկամուտների շուրջ 95%-ը կազմում են հարկային եկամուտները և պետական տուրքերը, իսկ հարկային եկամուտների ավելի քան 70%-ը ապահովում են խոշոր հարկատուները: Ուստի հարկային բարեփոխումների իրականացման տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է տրվում խոշոր հարկատուների հարկման մեխանիզմների կատարելագործմանը: 2016-2021 թթ. ՀՀ 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի ցուցանիշների վերլուծության հիման վրա բացահայտվել են ոլորտում առկա խնդիրները: Մասնավորապես՝ 1 մլրդ դրամից ավել և 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ հարկ վճարող կազմակերպությունների քանակը տարեց-տարի աճում է, այնուամենայնիվ, էական տեղաշարժ չի նկատվում մեկ կազմակերպության վճարած հարկային մուտքերի միջին մեծությունում: 1000 խոշոր հարկատուների վճարած հարկային մուտքերի կազմում ուղղակի հարկերի փոքր տեսակարար կշիռը վերջին տարիներին սկսել է նվազել, որը նշանակում է, որ հարկերի ծավալների աճն ապահովվել է անուղղակի հարկերի հաշվին:

Բանալի բառեր՝ հարկ, հարկային քաղաքականություն, հարկային կարգավորում, հարկային վարչարարություն, ՀՀ հարկային համակարգ, հարկատուներ, խոշոր հարկ վճարողներ:

ПРОБЛЕМЫ НАЛОГООБЛОЖЕНИЯ КРУПНЫХ НАЛОГОПЛАТЕЛЬЩИКОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Карлен Хачатрян, Вардан Алексанян

Резюме

Роль налоговой политики и налоговой системы чрезвычайно важна в социально-экономическом развитии страны. Около 95% доходов государственного

бюджета РА обеспечивают налоговые поступления и госпошлины, а более 70% налоговых поступлений – крупные налогоплательщики. Поэтому в плане реализации налоговых реформ особое значение придается совершенствованию механизмов налогообложения крупных налогоплательщиков. Анализ показателей налога, уплаченных 1000 крупными налогоплательщиками РА за 2016-2021 гг., выявил наличие проблем в секторе. В частности, число организаций, уплачивающих налогов на сумму более 1 млрд драмов и от 500 млн драмов до 1 млрд драмов, растет из года в год, однако существенного изменения суммы налоговых поступлений, уплачиваемых одной организацией в среднем, не наблюдается. Небольшая доля прямых налогов в налоговых доходах, уплачиваемая 1000 крупными налогоплательщиками, в последние годы стала снижаться, а это означает, что увеличение налоговых объемов обеспечивается за счет косвенных налогов.

Ключевые слова – налог, налоговая политика, налоговое регулирование, налоговое администрирование, налоговая система РА, налогоплательщики, крупные налогоплательщики.

PROBLEMS OF TAXATION OF LARGE TAXPAYERS IN THE REPUBLIC OF ARMENIA

Karlen Khachatryan, Vardan Aleksanyan

Abstract

The role of tax policy and the tax system is significant in the country's socio-economic development. About 95% of the revenues of the state budget of the Republic of Armenia are provided by tax revenues and state duties, and large taxpayers provide more than 70% of tax revenues. Therefore, from the point of view of the implementation of tax reforms, particular importance is attached to improving the mechanisms for taxing large taxpayers. Based on the analysis of taxes paid by 1000 large taxpayers of the Republic of Armenia for 2016-2021, problems in the sector were identified. In particular, the number of organizations paying taxes of more than 1 billion drams and from 500 million drams to 1 billion drams is increasing from year to year; however, there is no significant change in the amount of tax revenues paid by one organization on average. The small share of direct taxes in tax revenue paid by the top 1,000 taxpayers has been declining in recent years, which means that indirect taxes increase tax volumes.

Key words – tax, tax policy, tax regulation, tax administration, RA tax system, taxpayers, large taxpayers.

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անուշ Մովսիսյան

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ՀՀ, Երևան, Արամի 44

Էլ. հասցե՝ anush27movsisyan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 27.12.2022, գրախոսվել է 28.12.2022, ընդունվել է տպագրության 07.08.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.2-99

Ներածություն

Ինչպես հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակ, այնպես էլ համայնքային ծառայությունն ունի ոլորտը կանոնակարգող օրենսդրությանը բնորոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է հանրային ծառայության մյուս տեսակներից և հանդիսանում է որպես հանրային ծառայության առանձին, ինքնուրույն տեսակ: Ներկայացնենք համայնքային ծառայության հիմնական առանձնահատկությունները:

Համայնքային ծառայության պաշտոնների դասակարգումը

Համայնքային ծառայությանը բնորոշ առանձնահատկություններից է համայնքային ծառայության պաշտոնների դասակարգումը: Հանրային ծառայության մասին օրենքի¹ 3-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայության (համայնքային ծառայության) պաշտոնն արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն, քաղաքական զսպվածություն և մասնագիտական գործունեություն պահանջող հաստիքային միավոր է, որը նախատեսված է (...) համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով: Համայնքային ծառայության մասին» օրենքի² 7-րդ հոդվածով սահմանված է, որ, ելնելով համայնքային ծառայության պաշտոնն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների ու հմտությունների անհրաժեշտ մակարդակից, համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են երեք խմբի՝ ա) գլխավոր, բ) առաջատար, գ) կրտսեր: Հարկ է նշել նաև, որ այս խմբերից յուրաքանչյուրը բաժանվում է երեք ենթախմբի՝

¹ Հանրային ծառայության մասին օրենք, ընդունված 23.03.2018 թ., հոդված 3:

² Համայնքային ծառայության մասին օրենք, ընդունված 14.12.2004 թ., հոդված 7:

1-ին, 2-րդ և 3-րդ, և այդ խմբերում առաջինը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:

Այսինքն՝ կարող ենք փաստել, որ, ի տարբերություն հանրային ծառայության համակարգի մյուս ծառայությունների պաշտոնների, օրենսդիրը պաշտոնների ամենաքիչ խմբաքանակը սահմանել է համայնքային ծառայության պաշտոնների համար: Այսպես՝ Հարկային ծառայության մասին³, Մաքսային ծառայության մասին⁴ օրենքների համաձայն՝ այս ծառայություններում պաշտոնները դասակարգվում են չորս խմբի՝ բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր, իսկ Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին օրենքով⁵ ազգային անվտանգության մարմինների ծառայողների պաշտոնները դասակարգվում են հինգ խմբի՝ բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր:

Արտասահմանյան երկրների հանրային (համայնքային) ծառայության մասին օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ երկրներում նույնպես համայնքային ծառայությունը բաժանվում է նվազագույնը 4 խմբի: Մասնավորապես՝ Ռուսաստանի Համայնքային ծառայության մասին օրենքի⁶ 8-րդ հոդվածի համաձայն՝ այդ ոլորտում պաշտոնները դասակարգվում են հինգ խմբի՝ բարձրագույն, գլխավոր, առաջատար, ավագ, կրտսեր: Եվրոպական համայնքային ծառայությունը բաժանվում է 4 խմբի՝ A, B, C և D: Բարձրագույնը A-ն է, որն ունի 8 ենթախումբ, առավել բարձրից՝ A1-ից մինչև A8-ը, B-ն և C-ն՝ 5, իսկ D-ն՝ 4 ենթախումբ, ընդհանուրը՝ 22 ենթախումբ, Ֆրանսիայում հանրային ծառայողները դասակարգվում են 4 խմբի՝ A, B, C և D⁷:

Ընդհանրացնելով ներպետական և արտասահմանյան երկրների համայնքային ծառայության մասին օրենսդրության ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ միայն ՀՀ-ում են համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում 3 խմբի՝ գլխավոր, առաջատար և կրտսեր. դա համայնքային ծառայության յուրահատկությունն է մեր երկրում:

Համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը

Համայնքային ծառայության առանձնահատկություններից է նաև այն, որ համայնքային ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն ոչ միայն ՀՀ քաղաքացիները, այլև փախստականի կարգավիճակ ունեցողները: Այսպես՝ Համայնքային ծառայության մասին օրենքի 11-րդ հոդվածի համա-

³ Հարկային ծառայության մասին օրենք, ընդունված 03.07.2002 թ.:

⁴ Մաքսային ծառայության մասին օրենք, ընդունված 03.07.2002 թ.:

⁵ Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին օրենք, ընդունված 11.04.2003 թ.:

⁶ Федеральный закон о муниципальной службе в Российской Федерации, 02.03.2007 г., N 25-ФЗ.

⁷ Հարությունյան 2011, 450:

ծայն՝ «Համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, (...) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից»։ Այսինքն՝ Սահմանադրությամբ նախատեսված՝ խտրականության արգելքի սկզբունքի հիման վրա Համայնքային ծառայության մասին օրենքի 11-րդ հոդվածը նախատեսում է, որ 18 տարին լրացած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցողները նույնպես համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն՝ դրանով իրացնելով նաև քաղաքացիների համար հանրային ծառայության հավասար մատչելիության սկզբունքը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և կոմպետենցիաներին համապատասխան։ Համայնքային ծառայության մասին օրենքը միակն է, որն ամրագրում է հանրային ծառայության հավասար մատչելիության սկզբունքներ և չափանիշներ ոչ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այլև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց համար, քանի որ հանրային ծառայության մյուս տեսակները կանոնակարգող օրենքներով նման բացառություն սահմանված չէ, այլ որպես հանրային ծառայության ընդունվելու պարտադիր պայման՝ նախատեսված է ՀՀ քաղաքացիություն ունենալու հանգամանքը։

Պետք է նշել նաև, որ նման բացառություն նախատեսված չէր նաև Գերմանիայում և Ֆրանսիայում, սակայն Եվրոպական միությունը եվրոպական համայնքների ծառայողների կարգավիճակը և այլ գործակալների նկատմամբ կիրառվող ռեժիմը սահմանող միասնական ստատուսով սահմանեց, որ ԵՄ համայնքային ծառայության անձնակազմը համարելիս պետք է պահպանվի աշխարհագրական չափանիշը։ Սա նշանակում է, որ համապատասխան ինստիտուտները պետք է ձգտեն ապահովել Եվրոպական միության անդամ պետությունների հավասար ներկայացուցչությունը համայնքային ծառայության տարբեր օղակներում⁸։ Դրանից հետո համապատասխան փոփոխություններ կատարվեցին Ֆրանսիայի և Գերմանիայի օրենքներում, որոնցով արդեն միայն այդ երկրների քաղաքացիությունը չէր դիտարկվում տեղական հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու պարտադիր պայման, քանի որ Ֆրանսիան և Գերմանիան ԵՄ անդամ-երկրներ են։

Փաստորեն, ՀՀ-ում համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնելու իրավունքով օժտված են բոլոր սոցիալական խմբերին պատկանող մարդիկ, քանի որ պաշտոնների նշանակման և առաջխաղացման համար առանցքային դերակատարություն ունեն ոչ թե անձանց ծագումը կամ գույ-

⁸ Հարությունյան 2004, 13։

քային դրությունը, այլ՝ մտավոր կարողությունները⁹: Հաշվի առնելով համայնքային ծառայության այս առանձնահատկության իրավական նշանակությունն ու բովանդակությունը՝ կարծում ենք, որ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չպետք է տրվի միայն փախստականի կարգավիճակ ունեցողներին, քանի որ «փախստական» հասկացությունը ոչ միայն սահմանադրաիրավական, այլև ընտրական ինստիտուտ չէ: Այս առումով նշենք, որ թեև Գերմանիայում, Ֆրանսիայում հանված է միայն տվյալ երկրի քաղաքացիների՝ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու բացառիկ իրավունքը, այդուհանդերձ, համայնքային ծառայության ընդունվելու իրավունք տրված է Եվրոպական միության անդամ մյուս երկրների քաղաքացիներին, բայց ոչ փախստականի կարգավիճակ ունեցող անձանց:

Տվյալ դեպքում հարկ է նկատի ունենալ, որ Փախստականների և ապաստանի մասին օրենքի¹⁰ 6-րդ հոդվածի համաձայն՝ «...փախստական է համարվում 1) այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության հետևանքով (...) չի կարող կամ չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն (...) չի կարող կամ չի ցանկանում վերադառնալ այնտեղ, կամ 2) այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որին պաշտոնապես փախստական են ճանաչել Կոնվենցիան ստորագրած այլ պետություններ»: Բացի այդ, հիշյալ օրենքի 15-րդ հոդվածով սահմանված է, որ ապաստան հայցողները և փախստականներն ունեն ՀՀ-ում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ հավասար իրավունքներ և պարտականություններ:

Վերոնշյալ իրավական կարգավորումների բովանդակությունից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց շրջանակն անհամեմատ ավելի լայն է, քան փախստականներինը, քանի որ այն ընդգրկում է ոչ միայն փախստականներին, այլև ապաստան հայցողներին և օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիներին: Բացի այդ, Սահմանադրության 48-րդ հոդվածով¹¹ և Ընտրական օրենսգրքի¹² 2-րդ հոդվածով սահմանված է, որ *տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացնող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք*: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ համայնքային

⁹ Մանուկյան 2012, 57:

¹⁰ Փախստականների և ապաստանի մասին օրենք, ընդունված 27.11.2008 թ.:

¹¹ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015 թ., հոդված 48:

¹² Ընտրական օրենսգրքը, ընդունված 26.05.2016 թ., հոդված 2:

ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքը չպետք է տրվի միայն փախստականի կարգավիճակ ունեցողներին, այլ նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց, այսինքն՝ ներառի նաև փախստականի կարգավիճակ ունեցողներին:

Այս նպատակով առաջարկում ենք Համայնքային ծառայության մասին օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Սույն օրենքով սահմանված կարգով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթունից»:

Համայնքային ծառայության թափուր պաշտոնը արտամրցութային կամ մրցութային կարգով զբաղեցնելը

Համայնքային ծառայության առանձնահատկություններից է նաև համայնքային ծառայության թափուր պաշտոնն արտամրցութային կարգով զբաղեցնելը: Այսպես՝ Համայնքային ծառայության մասին օրենքի 14.1 հոդվածի համաձայն՝ համայնքային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում մեկշաբաթյա ժամկետում, մինչև տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարելը, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավասու է տվյալ թափուր պաշտոնում նշանակելու այդ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող համայնքային ծառայողին կամ կադրերի ռեզերվից տվյալ պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող անձին:

Պետք է արձանագրենք, որ թափուր պաշտոնը արտամրցութային կարգով՝ առանց մրցույթի, զբաղեցնելու իրավական հնարավորությունը նախատեսված է միայն Համայնքային ծառայության մասին օրենքով, քանի որ հանրային ծառայության ոլորտում իրականացված բարեփոխումների շնորհիվ 2018 թ. ընդունված Հանրային ծառայության մասին¹³ և Քաղաքացիական ծառայության մասին¹⁴ օրենքներին պետական ծառայության մյուս տեսակները համապատասխանեցնելու նպատակով 2020 թվականի հունվարի 21-ին Ազգային ժողովն ընդունեց մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 65 օրենք¹⁵, որոնց համաձայն, ի թիվս այլ փոփոխությունների, պետական ծառայության բոլոր տեսակներում սահմանվեցին միասնական կարգավորումներ, և պետական ծառայության առանձին օրենք-

¹³ Հանրային ծառայության մասին օրենք, ընդունված 23.03.2018 թ.:

¹⁴ Քաղաքացիական ծառայության մասին օրենք, ընդունված 23.03.2018 թ.:

¹⁵ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=6914&lang=arm>

ներով հստակ ամրագրվեց, որ պետական ծառայությունների բոլոր պաշտոնները, միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համապատասխան, պետք է զբաղեցվեն բացառապես մրցութային կարգով:

Հաշվի առնելով «Հանրային ծառայության մասին» օրենքով արժանիքահեն կարիերային առաջընթացի վրա հիմնված հանրային ծառայության կայունության սկզբունքի իրավական բովանդակությունն ու կարևորությունը՝ կարծում ենք, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնը արտամրցութային կարգով համալրելով՝ առաջին հերթին խախտվում է հենց այդ սկզբունքը, քանի որ համայնքային ծառայության օրենսդրությամբ նախատեսված չէ, թե մեկից ավելի թեկնածուների դեպքում ինչպես պետք է ընտրել և առանց մրցույթի նշանակել առավել արժանավորին: Բացի այդ, արտամրցութային կարգով համայնքային ծառայության թափուր պաշտոնի համալրումը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին օժտում է հայեցողական մեծ լիազորությամբ, արտամրցութային կարգով նշանակումը դառնում է համայնքային ծառայողի խրախուսման միջոց՝ առանց որևէ պատճառաբանված որոշման կամ հիմնավորման: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ միայն մրցույթի միջոցով է հնարավոր ապահովել արժանիքային համակարգի վրա հիմնված համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնելը, նշված խնդիրը լուծելու նպատակով առաջարկում ենք համայնքային ծառայության օրենսդրությունից հանել թափուր պաշտոնը զբաղեցնելու արտամրցութային կարգը և կազմակերպել *ներքին մրցույթ*¹⁶ միաժամանակ սահմանելով թեկնածուների ընտրության հստակ չափանիշներ: Դրանց միջոցով պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կկարողանա գնահատել անձի մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, անձնային հատկանիշներն ու ունակությունները: Միայն մրցույթի միջոցով է հնարավոր ընտրել ամենապատրաստ անձին, որն ունի անհրաժեշտ կրթություն, մասնագիտական գիտելիքներ և իր անձնական ու գործնական կարողություններով ի վիճակի է զբաղեցնել համայնքային ծառայության պաշտոն¹⁶:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ համայնքային ծառայության համակարգում ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում առաջնահերթության նախապատվությունը տրվում է փոխարինման ինստիտուտին: Այսպես՝ Համայնքային ծառայության մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի, (...) գործուղման, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում այդ պաշտոնն զբաղեցվում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված

¹⁶ Դանիելյան 2015, 299:

փոխարինող համայնքային ծառայողի կողմից մինչև վեց ամիս ժամկետով»։ Տվյալ դեպքում միայն համայնքային ծառայության համակարգում է նախատեսված *մինչև վեց ամիս ժամկետով* փոխարինման իրավական հնարավորությունը՝ ի տարբերություն հանրային ծառայության առանձին տեսակները կանոնակարգող օրենքների, որտեղ նախատեսված է անժամկետ՝ մինչև ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու համապատասխան հիմքի վերացման ավարտը, փոխարինելու իրավական կարգավորումներ։ Այս առումով գտնում ենք, որ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում, առաջին հերթին, փոխարինողի կողմից այն զբաղեցնելն արդյունավետ է և նպատակահարմար, քանի որ նախ տնտեսվում են միջոցները, բացի այդ, ծառայողական պարտականություններն առավել որակով և արդյունավետ են իրականացվում, քանզի փոխարինողն արդեն իսկ ծանոթ է տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներին։ Այդուհանդերձ, պետք է փաստել, որ, ցավոք, հանրային ծառայության համակարգում նախատեսված չեն փոխարինման ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար փոխարինողին վարձատրություն տրամադրելու իրավական կարգավորումներ՝ ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության։ ՌԴ աշխատանքային օրենսգրքով¹⁷ (72.2-րդ և 182-րդ հոդվածներ) սահմանված է, որ աշխատողի՝ ավելի բարձր պաշտոնի փոխարինման ժամանակահատվածում վճարվում է ավելի բարձր պաշտոնի վարձատրությունը, իսկ ավելի ցածր պաշտոնի փոխարինելու դեպքում վարձատրությունը չի կարող պակաս լինել իր զբաղեցրած հիմնական պաշտոնի վարձատրության չափից։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային ծառայողը մինչև ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը միաժամանակ իրականացնում է թե՛ իր, թե՛ ժամանակավոր թափուր պաշտոնի գործառույթներ, իսկ ավելի բարձր պաշտոնով փոխարինելու դեպքում ավելանում են նաև ղեկավարման պատասխանատվությունը, որոշումներ կայացնելու լիազորությունները, շփումների և ներկայացուցչության շրջանակը, առաջարկում ենք հանրային (համայնքային) ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ նախատեսել, որ հանրային (համայնքային) ծառայողի կողմից ավելի բարձր պաշտոնի փոխարինման ժամանակահատվածում հանրային (համայնքային) ծառայողին վճարվում է ավելի բարձր պաշտոնի վարձատրությունը։

Որոշակի առանձնահատկություններ կան նաև համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթում։ Այսպես՝ Համայնքային ծառայության մասին օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար

¹⁷ Трудовой кодекс Российской Федерации, 30.12.2001 г., N 197-ФЗ.

մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք ունեն թեստավորման առաջադրանքների առնվազն 85 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները: Հարցազրույցը վարող մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հարցազրույցի միջոցով ամեն մի մասնակցի գործնական կարողությունները գնահատում է 5-բալային համակարգով, և մրցութի հաղթող է ճանաչվում մրցութային հանձնաժողովի՝ գնահատմանը մասնակցած անդամների կեսից ավելիի կողմից դրական բալերով գնահատված այն մասնակիցը, որի ստացած դրական բալերի հանրագումարն առավելագույնն է: Այս դեպքում, չնայած չի բացառվում մրցութում երկու և ավելի հաղթողներ ունենալու հավանականությունը, այդուհանդերձ, հնարավորություն է ստեղծվում մրցութի ավարտին հաղթող ճանաչելու *առավելագույն միավորներ* հավաքած անձին՝ ի տարբերություն պետական ծառայության (քաղաքացիական ծառայության) մրցութների, որտեղ մրցութային հանձնաժողովը հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին ընտրում է գնահատման ամենաբարձր միավորների հանրագումարի կեսից ավելի միավորներ հավաքած մասնակիցներից: Այսինքն՝ պետական ծառայության (քաղաքացիական ծառայության) մրցութային կարգավորումները մրցութային հանձնաժողովին չեն պարտավորեցնում ամենաբարձր միավորներ հավաքած թեկնածուին հաղթող ճանաչելու, հետևաբար փաստացի ստացվում է, որ գնահատման հետևանքով նույնիսկ ցածր միավորներ ստացած թեկնածուն կարող է հաղթող համարվել, ուստի առաջարկում ենք պետական ծառայության օրենսդրությամբ նույնպես նախատեսել մրցութի միջոցով *առավելագույն միավորներ* հավաքած անձին հաղթող ճանաչելու վերաբերյալ իրավական կարգավորումներ:

Եզրակացություններ

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ որպես հանրային ծառայության առանձին և ինքնուրույն տեսակ՝ համայնքային ծառայությունն ունի իրեն բնորոշ որոշակի առանձնահատկություններ, որոնք առաջին հերթին բխում են տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական ինստիտուտի ինքնուրույն և անկախ կարգավիճակից: Համայնքային ծառայությանը բնորոշ առանձնահատկությունները հիմնականում ի հայտ են գալիս՝ 1) համայնքային ծառայության պաշտոնների դասակարգման նորմերում, 2) համայնքային ծառայության պաշտոնները ոչ միայն ՀՀ քաղաքացիների, այլև փախստականի կարգավիճակ ունեցողների կողմից զբաղեցնելու նորմերում, 3) համայնքային ծառայության թափուր պաշտոնը նաև արտամրցութային կարգով զբաղեցնելու իրավակարգավորումներում, 4) ժամանակավոր թափուր պաշտոնը մինչև վեց ամիս ժամկետով փոխարինելու իրավական նորմերում, 5) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու մրցութի միջոցով հաղթող ճանաչելու նորմերում:

Գրականություն

Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին 11.04.2003 թ. ՀՕ-532-Ն օրենք:
Ընտրական օրենսգիրք, ընդունված 26.05.2016 թ.:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 06.12.2015 թ.:

Հանրային ծառայության մասին 23.03.2018 թ. ՀՕ-206-Ն օրենք:

Համայնքային ծառայության մասին 14.12.2004 թ. ՀՕ-43-Ն օրենք:

Հարկային ծառայության մասին 03.07.2002 թ. ՀՕ-407-Ն օրենք:

Հարությունյան Ա. 2011, Եվրոպական միության իրավունքի հիմունքները (սահմանադրական իրավունք), Երևան, «Տիգրան Մեծ», 568 էջ:

Հարությունյան Ա. 2004, Եվրոպական միության հանրային ծառայությունը, Հանրային կառավարում գիտական հանդես, N 3-4, 13 էջ:

Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք 2015, ուսումնական ձեռնարկ, (ընդհ. խմբ.՝ Գ. Դանիելյանի), Երևան, «Հայրապետ», 384 էջ:

Մանուկյան Ս. 2012, Համայնքային ծառայության համակարգում պաշտոններ զբաղեցնելու հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Իրատ. նշված չէ, 175 էջ:

Մաքսային ծառայության մասին 03.07.2002 թ. ՀՕ-402-Ն օրենք:

Փախստականների և ապաստանի մասին 27.11.2008 թ. ՀՕ-211-Ն օրենք:

Քաղաքացիական ծառայության մասին 23.03.2018 թ. ՀՕ-205-Ն օրենք:

Федеральный закон о муниципальной службе в Российской Федерации, 02.03.2007 г., N 25-ФЗ:

Трудовой кодекс Российской Федерации, 30.12.2001 г., N 197-ФЗ:

<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=6914&lang=arm> (ներբեռնման օրը՝ 20.12.2022 թ.):

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անուշ Մովսիսյան

Ամփոփում

Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության առանձին և ինքնուրույն տեսակ համարվող համայնքային ծառայության բովանդակային առանձնահատկությունների ուսումնասիրության և վերլուծության շնորհիվ կարող ենք արձանագրել, որ համայնքային ծառայությանը բնորոշ առանձնահատկությունները հիմնականում ի հայտ են գալիս համայնքային ծառայության պաշտոնների դասակարգման նորմերում, համայնքային ծառայության պաշտոնները ոչ միայն ՀՀ քաղաքացիների, այլև փախստականի կարգավիճակ ունեցողների կողմից զբաղեցնելու նորմերում, համայնքային ծառայության թափուր պաշտոնը նաև արտամրցության կարգով զբաղեցնելու իրավակարգավորումներում, ժամանակավոր թափուր պաշտոնը մինչև վեց ամիս ժամկետով փոխարինելու իրավական նորմերում, ինչպես նաև համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու մրցույթի միջոցով հաղթող ճանաչելու նորմերում:

Բանալի բառեր՝ հանրային ծառայություն, համայնքային ծառայություն, հանրային ծառայող, համայնքային ծառայության պաշտոն, պաշտոնի անձնագիր, համայնքային ծառայող, փախստական:

ОСОБЕННОСТИ МУНИЦИПАЛЬНЫХ СЛУЖБ

Ануш Мовсисян

Резюме

На основе изучения и анализа содержательных особенностей муниципальной службы, являющейся отдельным и самостоятельным видом общественной службы в Республике Армения, можно констатировать, что характерные для муниципальной службы особенности в основном находят отражение: в нормах классификации должностей муниципальной службы, в нормах назначения на должность в муниципальных службах не только граждан РА, но и беженцев, в правовом регулировании замещения вакантной должности муниципальной службы, в правовых нормах замещения временной вакантной должности сроком до шести месяцев, а также в нормах признания победителем конкурса на замещение вакантной должности муниципальной службы.

Ключевые слова – государственная служба, муниципальная служба, государственный служащий, муниципальная должность, паспорт должности, муниципальный служащий, беженец.

FEATURES OF MUNICIPAL SERVICES

Anush Movsisyan

Abstract

As a result of studying and analyzing the substantive features of community service, which is considered a separate and independent type of public service in the Republic of Armenia, we can state that the features characteristic of community service are mainly manifested in the norms of classification of community service positions, in the norms of filling community service positions not only by citizens of the Republic of Armenia, but also by those with refugee status, in legal regulation filling a vacant community service position, in the legal norms for the replacement of a temporary vacant position for a period of up to six months, as well as in the norms for the recognition of the winner of the competition for the replacement of a vacant position of the municipal service.

Key words – Public service, community service, public servant, community service position, position passport, community employee, refugee.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌԷԻ ՆԵՐՈՒԺԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ
ԵՐԿՈՒ ՄՈՏԵՑՈՒՄ

Ռուբեն Կարապետյան

Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ karapetyan.ruben.s@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 01.12.2022, գրախոսվել է 08.12.2022, ընդունվել է տպագրության 07.08.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.2-109

Ներածություն

Ժամանակակից համաշխարհային գործընթացներում առանձնակի դեր ունեն մեծ թափ ստացած՝ բնակչության ծավալուն տեղաշարժերը: Դրանց հետևանքով խորացվում է ընդունող երկրների էթնիկ, դավանանքային, մշակութային բազմազանությունը՝ նոր լիցք հաղորդելով բնակչության տարբեր շերտերի միջև ինտեգրման հակասական գործընթացներին և փոխակերպելով երկրների դիմագիծը: Դա տեղի է ունենում համաշխարհային երկու հակադիր պայքարների խորապատկերին՝ համաշխարհայնացման գործընթացով և պետությունների սեփական ինքնիշխանության պահպանման ձգտումով: Այս առումով հայտնի ֆրանսիացի գիտնական, սոցիոլոգիայի և իրավունքի բնագավառներում հետազոտությունների կոմիտեի փոխնախագահ Ա.Ժ. Առնոն նշում է. «Ամեն ինչ կարող էր լինել չափազանց հեշտ, եթե գլոբալի զարգացումը ազգայինի հետ պայքարում չհանգեցներ տեղականի հակադրման զարգացմանը»¹:

Ներգրավված լինելով ընդունող երկրի կենսական ոլորտներում՝ տարբեր (էթնիկ, դավանանքային, ռասայական և այլ) հենքի վրա ձևավորված սփյուռքները մասնակից են դառնում այդ երկրի տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային գործընթացին, ազդում նրա ներքին և արտաքին քաղաքականության վրա: Ըստ Ռ. Քոենի՝ սա բացատրվում է նրանով, որ միջազգային համակարգի պայմանականորեն «ուղղահայաց» հարթությունում մնում են պետությունները, բայց «հորիզոնական» (անդրազգային) հարթությունում գերիշխում են ավելի շարժունակ և միաձույլ սուբյեկտներ, որոնց պետությունները չեն կարող դիմակայել, քանի որ հուզական կապերը լրա-

¹ Arnaud 1998, 36.

ցուցիչ արդյունավետություն և գրավչություն են ապահովում անդրազգային փոխգործակցության համար²:

Այս պարագայում կարևորվում են յուրաքանչյուր նման հանրության վերարտադրման հնարավորությունները, սեփական և էթնիկ հայրենիքի շահերի պաշտպանման և այլ՝ իրենց վերաբերող խնդիրների լուծման համար ռեսուրսների համախմբման ունակությունը: Այսօր մի շարք սփյուռքներ, լինելով կոտ կազմավորված, ներկայացնում են լուրջ ներուժ իրենց ազդեցության շրջանակների թե՛ լայնությամբ, թե՛ խորությամբ: Որոշ ուսումնասիրողներ թվարկում են այն իրավիճակները, երբ սփյուռքը կարող է ազդել միջազգային քաղաքականության վրա³:

Գոյություն ունեն նաև սփյուռքներ, որոնց ազդեցության ներուժը սաղմնային վիճակում է կամ ուղղված է ինտեգրման խնդիրների լուծմանը: Սակայն ակնհայտ է, որ յուրաքանչյուր սփյուռքյան հանրություն ունի տարբեր աստիճանի ներուժ, որը, ըստ ժամանակի պահանջների, կարող է ներառվել տվյալ հանրության տարբեր հեռահար և մոտակա խնդիրների առաջադրման և լուծման համար: Ազգային պետություն ունեցող և չունեցող սփյուռքները, հասկանալի է, ունեն տարբեր խնդիրներ և դրանցից բխող նպատակների առաջնահերթություններ:

Այս տեսակետից օտարազգի միջավայրում կենսագործող ամեն մի էթնիկ խմբի ներուժի գնահատում կարևորում են միջազգային ատյանները, պետական, քաղաքական գործիչներն ու փորձագետները: Նշված շրջանակներն անհրաժեշտ են համարում սփյուռքների ձևավորման, նրանցում առկա գործընթացների, տվյալ երկրի կենսագործունեության վրա ազդելու լծակների մասին ճշգրիտ գիտելիքներ ստանալը: Պատկերացում կա նաև, որ նշված խնդրի լուծման համար անհրաժեշտ է դիմել սփյուռքի հանրության բազմաբովանդակ հատկանիշների և առանձնակի ու համակցված ձևով ներկայացուցչական, այսինքն՝ իրականին մոտ, համակողմանի էմպիրիկ ուսումնասիրությունների: Դրանք պետք է վերաբերեն ամբողջ սփյուռքի և նրա առանձին հատվածների ձևավորման աղբյուրներին, միջավայրին, նրանց ինտեգրման գործընթացների և առանձնակի հանրության դիմագծով պահպանման և վերարտադրման ձևերի մասին գիտելիքների հավաքմանը:

Վերոնշյալի համատեքստում կուտակվել է բազմակի հետազոտական փորձ ինչպես առանձին խմբերում կատարվող գործընթացների շուրջ, այնպես էլ դրանք բացատրելու տարբեր տեսությունների ու էմպիրիկ հետազոտությունների մեթոդաբանական հնարքների կիրառման և գործիքակազմի ընդգրկման միջոցով: Հատկապես ուշագրավ է ռուս հետազոտող Ա.Ա. Ավ-

² Cohen 1996, 517-518.

³ Esman 2009, 121-131.

դաշկինի մոտեցումը այդ խնդրին, որտեղ ներկայացված է պատմական կտրվածքը⁴:

Հետևաբար, հատուկ նշանակություն է ստանում մեկ էթնիկ հանրության, մեր դեպքում՝ հայ էթնոսի հենքի վրա ձևավորված սփյուռքի ներուժի ուսումնասիրության և կիրառման փորձի իմաստավորման խնդիրը: Վերջինիս լուծման ճանապարհին անհրաժեշտ է ապահովել փոխլրացնող երկու մոտեցում. առաջինը կոչված է հստակեցնելու սփյուռքի հետազոտական շրջանակները, երկրորդը՝ ապահովելու դրանց իրականացման մեթոդաբանական հենքը:

Հայկական սփյուռքի ուսումնասիրման նպատակների հստակեցման ուղին

Աշխարհասփյուռ հայ ազգի զգալի մասի ստեղծագործական ներուժը զարգանում է արդի համաշխարհային միտումներին համընթաց: Ներգրավված լինելով միջազգային տնտեսական և աշխատանքային շուկայում, դրա շնորհիվ հարստացնելով իրենց մասնագիտական ունակություններն ու առաջատար տեխնոլոգիաների իմացությունը, բնականության երկրներում ձեռք բերելով զգալի տնտեսական, սոցիալական և քաղաքական կշիռ՝ սփյուռքահայերն ունեն բոլոր հնարավորությունները ազգային հենքի վրա ձևավորելու միջազգային այնպիսի կառույցներ, որոնք ունակ են դառնալու քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային համագործակցության հիմնարար հարթակներ: Նման հարթակների եղելությունը մատնանշում են մեր ուսումնասիրած քաղաքների (Թեյրանի, Բեյրութի, Լոս-Անջելեսի, Թբիլիսիի, Պրահայի, Լիոնի, Փարիզի, Մարսելի, Կիևի) տեղի հայ փորձագետները (N 1-50, ՀԱԻ 2013-2022 թթ.): Դրան կարող է նպաստել հայկական երեք հանրապետությունների օրոք ձևավորված պետական ինքնակառավարման քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կենսագործունեության և միջպետական հարաբերությունների, ինչպես նաև ավանդական գաղթաշախմատների ինքնակազմակերպման մեծ փորձը: Անժխտելի է այն փաստը, որ հայկական սփյուռքի տարբեր հատվածներ անցել են ինքնակազմակերպման և էթնիկ նկարագրի պահպանման պատմական ուղի: Արդի սփյուռքում գործում են համայնքային և համազգային բազմաթիվ կառույցներ՝ ազգային ինքնության պահպանման գործառույթներով. ընդգրկված են Հայ դատի պաշտպանության, լրբինգի և հայրենիքի հետ համագործակցության գործընթացներում (Հայկական սփյուռք):

Մինչդեռ մեր օրերում հայկական երկու հանրապետությունների և ավանդական սփյուռքի տնտեսական, քաղաքական և սոցիալական հնարավորությունների առկայության պայմաններում տեղի է ունենում ազգի հավա-

⁴ Авдашкин 2015, 131.

քական ներուժի շարունակական նվազում⁵: Դա առաջին հերթին պայմանավորված է տեղային և համազգային խնդիրների լուծման համար անհրաժեշտ ռեսուրսներ հավաքագրելու ունակ, խոշոր ու կազմակերպված համայնքների նվազմամբ: Հայաստանն ու Արցախն այսօր կրում են լուրջ քանակական և որակական կորուստներ: Դա պայմանավորված է էթնոսում ընթացող զանգվածային տեղաշարժերով, որոնք հանգեցնում են հայերի տարաբնակեցման քարտեզի կտրուկ փոխակերպմանը և դրա հետևանքով՝ ուժացման գործընթացների արագացմանը: Այսպես, Սպիտակի երկրաշարժը, Արցախյան պատերազմները և շրջափակումը, էներգետիկ և տնտեսական ճգնաժամը, ԽՍՀՄ-ի փլուզումը հանգեցրին Հայաստանի, Արցախի, Ադրբեջանի, Վրաստանի, ՌԴ, միջինասիական հանրապետությունների հայերի ավանդական բնակեցման տարածքներից զանգվածային արտագաղթի Ռուսաստանի, Ուկրաինայի, Եվրոպական տարբեր երկրների, ԱՄՆ-ի և Կանադայի քաղաքներ: Նմանատիպ գործընթացներ արձանագրվեցին նաև հայ ավանդական գաղթավայրերում: Վերջին 40-50 տարիների իրադրությունը Լիբանանում (քաղաքացիական պատերազմը Լիբանանում), Կիպրոսի զգալի տարածքի զավթումը թուրքական բանակի կողմից⁶, քաղաքացիական պատերազմը Սիրիայում (Քաղաքացիական պատերազմը Սիրիայում), ամերիկյան ներխուժումը Իրաք (Իրաքյան պատերազմը) և տնտեսական ճգնաժամը Իրանում (Իրանի իսլամական հեղափոխությունը) խթանեցին այդ կազմակերպված ավանդական գաղթաօջախներից հայերի արտագաղթը ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և այլ եվրոպական երկրներ⁷: Այս ամենի հետևանքով հայ էթնոսի գերակշռող մասը կորցրեց իր էթնոտարածական հոծ արեալները և դիսպերս խմբերի տեսքով սփռվեց աշխարհի զարգացած երկրների քաղաքներում: Դրանց տարածքում առաջացան նոր որակի գաղթաօջախներ, որոնք էությանմբ բազմաշերտ են՝ կազմված տեղացիներից և տարբեր երկրներից եկած միգրացիոն խմբերից: Այսպես, որոշ քաղաքներում, ինչպես Փարիզում, Մարսելում, Լիոնում, Լոս Անջելեսում և այլուր, ձևավորվել են հայերի տարածական փոքր դիսկրետ խմբեր⁸: Նշված բազմաշերտությունը դիսպերս և դիսկրետ բնակեցման պայմաններում չի նպաստում այդ խմբերի մերձեցմանը, քանի որ ամեն մի շերտ ենթամշակութային և սոցիալական առումով առանձնահատուկ է: 2012-2022 թթ. հետազոտությունները, որոնք կատարել են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի աշխատակիցները Թեհրանի, Բեյրութի, Լոս Անջելեսի, Փարիզի, Լիոնի, Կիպրոսի, Թբիլիսիի,

⁵ Հայ էթնիկությունը սփյուռքում 2021, 69-178, Карапетян 2014, 35-43:

⁶ Проблемы Кипра; история и современность 2019 г. А. Сулейманов 2019, 75-84.

⁷ Карапетян 2014, 35-43.

⁸ Կարապետյան 2018, 23-52:

Կիևի հայերի շրջանում, որոշակի պարզաբանում են տալիս ներկա գաղթօջախների կազմի և դրանց հետևանքով առաջացած գործընթացների մասին: Այսպես, Լոս Անջելեսի հայերի ծագումնաբանական կազմը, բացի նախորդ շրջաններում գաղթածներից և նրանց շառավիղներից, ներկայացված է Հայաստանից, Ռուսաստանից, Վրաստանից, Ադրբեջանից, Մերձավոր Արևելքից և Իրանից, եվրոպական երկրներից և Հարավային Ամերիկայից տարբեր ժամանակներում ներգաղթած խմբերով: Յուրաքանչյուր խումբ առանձնակի է սոցիալական կազմով, մշակութային որոշակի տարրերով, վարքագծով և ինքնակազմակերպման փորձով: Այն իրավիճակը, որ ամեն մի խումբ տարբեր կացության մեջ է՝ պայմանավորված կազմով, ելքի երկրում ձեռք բերած սոցիալ-մշակութային ռեսուրսով և, վերջապես, ներգաղթի շրջանում ունեցած իր հատկանիշներով, առաջացնում է մերձեցման և համախմբման համար լուրջ խոչընդոտներ⁹: Մինչդեռ ելքի վայրերում խախտվում է ձևավորված սոցիալ-ժողովրդական կազմը, հոծ տիպի տարաբնակեցումը ձևափոխվում դիսկրետի, թուլանում են միջհամայնքային կապերը, գործող կառույցներում սեղմվում են գործառույթների շրջանակները:

Այսպիսով, նշված քանակական և դրանից բխող որակական կորուստները հետևանք են ազգի մեջ ընթացող ու ժամանակի մեջ արագացող գործընթացների, որոնք առաջացնում են էթնիկ վերարտադրման և պահպանման բազմաթիվ հիմնախնդիրներ և՛ Հայաստանի, և՛ հատկապես հայկական սփյուռքի բոլոր հատվածների համար: Արագ փոփոխվող այս իրավիճակներում հայկական սփյուռքի գերակշռող մասը ներկայացված է բազմաթիվ դիսպերս և մասամբ դիսկրետ խմբերով, որոնց տարածական ցրվածությունն աննախադեպ է: Հետևաբար այս իրավիճակներում ընթացող սփյուռքահայերի ինտեգրման, էթնոմշակութային արժեքների պահպանման, մերձեցման և, վերջապես, ինքնավերարտադրման գործընթացների ուսումնասիրությունը արժեքավորվում է որպես ժամանակակից սփյուռքում հայերի գոյատևման առանձնահատուկ փորձ:

Այն կարիք ունի լուրջ գիտական ընդհանրացումների, որոնց հիմքում ուրբանիզացված օտարազգի միջավայրում հայերի ուսումնասիրություններն են՝ հետևյալ ուղղվածությամբ. իրավիճակի համակողմանի գնահատում, համախմբման ներուժի բացահայտում, հեռանկարների կանխորոշում: Նշված հարցադրումները գործնական նշանակությամբ առաջնահերթ է համարում թե՛ սփյուռքի և թե՛ Հայաստանի քաղաքական, տնտեսական սոցիալական ընտրանին: Նրանք գիտակցում են, որ անհրաժեշտ է ձեռք բերել գիտելիքների այնպիսի համակարգ, որի կիրառումը թույլ կտա ազգի ցրվվ լիճակի ավանդաբար դիտարկվող թերությունները դարձնել առավելություն:

⁹ Կարապետյան 2014, 147:

Այսպիսով, սփյուռքի յուրաքանչյուր հատվածի իրավիճակի մասին տեղեկատվության հավաքումը և վերլուծությունը ոչ միայն հնարավորություն կընձեռեն փաստագրելու առկա ներուժը, այլև հիմք կծառայեն նրա համայնքային և համազգային ծրագրերի մշակման և իրականացման հնարավորությունների բացահայտման ու գնահատման համար:

Սփյուռքի ներուժի բացահայտման, ուսումնասիրման մեթոդաբանական մոտեցումները

Վերոշարադրյալ գերխնդրի լուծման համար անհրաժեշտ է ճշգրիտ ու գիտականորեն համակարգված գիտելիք, որը կձևավորվի մշտապես համալրվող և համակարգված տեղեկատվության շնորհիվ: Այն կանխորոշելու է ազգի ներուժի որոնման, բացահայտման, ամրագրման ուղղվածությունը, առաջարկելու է ընդհանուր և առանձին հատվածների հնարավորությունների գնահատականը, նպատակադրման, համախմբման և ներդրման հնարքները: Սրա գլխավոր տեսլականը հիմնվում է այն փաստի վրա, որ ներկա իրավիճակում հայ էթնոսը կարող է ապահովել իր քաղաքական, տնտեսական, հոգևոր զարգացման հեռանկարները՝ սփյուռքի տարբեր տարածական, սոցիալական, քաղաքական, տեխնոլոգիական, տնտեսավարող խմբերի բազմաբնույթ համագործակցության շնորհիվ, ըստ երևույթին՝ սոցիոցանցային մեթոդաբանությամբ:

Սփյուռքի գիտական, տեխնոլոգիական, տնտեսական, սոցիալ-մշակութային և ժողովրդագրական ռեսուրսային վերլուծության մեթոդաբանության կիրառումը հնարավորություն կտա մշակելու և իրականացնելու համայնքային և համազգային հիմնարար քաղաքականություն: Սրա բաղկացուցիչ մասերը կկազմեն գնահատման և ներառման շրջանակների ձևակերպումը, համայնքային և համազգային գործընթացների կանխատեսման և լուծման ուղիների որոնումը: Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ էթնիկ ընդհանրության ռեսուրսային վերլուծության էությանը, դրանում առկա խնդիրների քննարկմանը և իրականացման հաջորդականությանը:

Էթնիկ ընդհանրության ռեսուրսային վերլուծությունը և դրա արդյունքների ներառման խնդիրը ենթադրում է ազգի սփյուռքյան հատվածի շահերի պաշտպանման հնարավորությունների և դրա համար անհրաժեշտ համագործակցության հաջորդական գնահատականներ: Հասկանալի է, որ այս տրամաբանության մեջ առանձնակի տեղ ունեն եզրույթների ճշգրտման, գործառնական խնդիրների և փոփոխականների պարզաբանումը, ցուցակագրման և դասակարգման հարցադրումը, կարևորվող հատկանիշների և վերլուծության մեթոդաբանության առաջարկումը:

Նշվածը առաջին հերթին վերաբերում է «էթնոսոցիալ ռեսուրս» եզրույթին: Դրանք էթնիկ խմբի (ողջ և առանձին հատվածների) հնարավորություն-

ներն են՝ ուղղված գործունեության ընթացքում նրա ինքնավերարտադրմանը և զարգացմանն ու այդ նպատակին հասնելու պայմանների ստեղծմանը: Այս իմաստով, «էթնոսոցիալ ռեսուրս» եզրույթը ձեռք է բերում գործոնի բնույթ, որի ներմուծումը էթնիկ խմբի ռեսուրսային վերլուծության համատեքստ թույլ է տալիս մշակելու նրա չափագրվող որակական և քանակական բնույթի հատկանիշների ճանաչումը, առանձնացումը, դասակարգումը և անցումը դեպի նախագծային մակարդակ¹⁰: Որպես գործոն կարող են լինել մի կողմից՝ էթնիկ հանրության կոնկրետ բնութագրերը (օրինակ՝ սեռատարիքային կազմը, խմբի անդամների կարծիքները, պատկերացումները և այլն), մյուս կողմից՝ գնահատման չափելի համակարգը: Այսպիսով, էթնիկ հանրության, ինչպես նաև նրա առանձին մասերի ներուժի գործոնային վերլուծականում կարող է համակցվել մեթոդաբանական երկու մոտեցում՝ փաստագրական (նկարագրական) և գնահատողական:

Առաջին՝ փաստագրական մոտեցումը ենթադրում է էթնիկ հանրության ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային և այլ բնույթի հատկանիշների առանձնացումը, նկարագրումը և չափագրումը: Ենթադրվում է, որ այս հատկանիշների համակցության ներառումը կապահովի ուսումնասիրության համալիր վերլուծական հենքի կառուցումը, թույլ կտա օգտագործելու տնտեսագիտական, ժողովրդագրական, սոցիոլոգիական և այլ բնագավառների կիզակետերում մշակած մեթոդաբանությունը և գործիքակազմը:

Գործոնային վերլուծության ընթացքում կարելի է ներգրավել փոփոխականների համեմատաբար լայն շրջանակ: Այսպես, ռեսուրսային վերլուծության մեջ ընդգրկվող ժողովրդագրական ցուցիչները, որոնք ներառում են էթնիկ խմբի տարաբնակեցման, վերարտադրման, շարժունության և այլ տվյալներ, անբաժանելի են սոցիալական ցուցիչներից: Վերջինները բովանդակում են խմբի ներսում փոխկապերի և փոխհարաբերությունների կառուցվածքը, գիտելիքներին հաղորդակցմանը օժանդակող ինստիտուտները, ինքնակառավարման մարմինները, որոնք հնարավորություն են տալիս օգտագործելու իշխանության քաղաքական ուժը՝ պաշտպանելու խմբի և նրա անդամների ազգային, տնտեսական, իրավական և այլ շահեր: Հարկ է նշել, որ էթնիկ հանրության ժողովրդագրական և սոցիալական հատկանիշները անբաժանելի/համակցված և սերտորեն կապված են տնտեսական և մշակութային հատկանիշներին: Եթե առաջինը արտացոլում է տնտեսավարման գործունեության կառուցվածքն ու կազմակերպման ձևերը և բազմաթիվ այլ տեսակի որակավորումներ, ապա երկրորդը պարունակում է այնպիսի բնութագրեր, որոնք ապահովում են տվյալ հանրությանը/խմբին կա՛մ առանձնանալ, կա՛մ ինտեգրվել շրջապատին իր առանձնահատուկ մշակութային և սոցիո-

¹⁰ Նկատի են առնվում համայնքային և համագգային խնդիրների լուծմանն ուղղված նախագծեր:

նորմատիվ հենքով: Համաձայն վերոշարադրյալի՝ էթնիկ հանրության գործոնային վերլուծության ժողովրդագրական, սոցիալական և մշակութային ցուցանիշները անհրաժեշտ է գնահատել որպես ժամանակակից սփյուռքների համակարգված ուսումնասիրման կարևորագույն հիմքերից մեկը:

Երկրորդ երևույթի կամ գործընթացի գնահատման մոտեցումն է: Այն ենթադրում է չափագրման ենթարկվող գնահատականների համակարգի մշակումներ, որոնք տիպաբանորեն նմանակվում կամ տարբերակվում են ուսումնասիրվող խմբի կազմով և կենսագործունեության պայմաններով: Դրա օգնությամբ դիտարկվում է կոնկրետ էթնիկ հանրության այն գործունեությունը, որն ուղղված է նրա վերարտադրմանն ու զարգացմանը՝ համագլխին, տարածաշրջանային և լոկալ փոխկապերի համատեքստում: Վերը նշված քաղաքների համայնքային փորձագետների հարցազրույցներից հավաքվեց զգալի ստվար նյութ՝ գնահատականների բազմակի սյուժեներով: Դրանց բովանդակային տիպաբանումը տեղի տվեց սփյուռքի, ամեն մի ուսումնասիրված գաղթօջախում բնակվող հայերի շրջանում ձևավորված զգալի բովանդակալից կարծիք-քննարկումների՝ հայրենիքի, Ղարաբաղյան պատերազմի, Հայաստանի խնդիրների, քաղաքական անցուդարձի և այլ բազմաթիվ հարցերի շուրջ արտահայտված վերաբերմունքի, բացասական կամ դրական գնահատականների, բարելավման առաջարկների և այլնի մասին: Երկրորդ մոտեցումը թույլ է տալիս, ռեսուրսային վերլուծության ընդհանուր հայեցակետին համընթաց, հաշվի առնել նաև առանձնահատկության հայեցակետը՝ պայմանավորված խմբի էթնոսոցիալ կազմով և կենսագործունեության պայմաններով: Ըստ այդմ՝ այս երկու հայեցակետերը կարելի է համատեղել հատկանիշների դիֆուստով կտրվածքում, երկթև հակադրության համատեքստում, որտեղ ներմուծվում են երկու բևեռային և նրանց հարակից արժեքները: Այդ հակադրությունների կազմում կարող են ներառվել «արդյունավետ-անարդյունավետ», «ներգրավված-պոտենցիալ», «համալրող-չհամալրող», «ակտիվ-պասիվ», «խոստումնալից-անհեռանկարային», «հիմնական-աժանցյալ» և այլ նման բազմաթիվ ձևակերպումներ: Դրանք կարելի է օգտագործել ռեսուրսային վերլուծության հետագա խնդիրների լուծման, ձևայնացման և, վերջապես, մոդելավորման համար: Վերջինի կառուցումը ներառում է հասկացությունների ձևակերպում և այնպիսի եզրույթների ներմուծում, որոնք են՝ «պոտենցիալ», «հարաբերակցության ինդեքս», «ժամանակային շարք»։ մի խոսքով, այն ամենը, ինչը թույլ է տալիս բացահայտելու ստացված տվյալների վերլուծական ռեսուրսը:

«Էթնոսոցիալ ռեսուրսներ» հասկացության ըմբռնման վերը նշված սկզբունքները և դրանց ճանաչման, ամրագրման և գնահատման մեթոդները ռեսուրսների վերլուծության մեկնարկային կետն են: Սա պահանջում է էթնիկ համայնքի ներուժի ուսումնասիրման կարևոր դիտակետերի հիմնավորում,

հետազոտական հնարքների բացահայտում, ցուցանիշների ամրագրում, ի վերջո, վերլուծում և ձևավորում, ռեսուրսների դինամիկ մոդել, որոնք հասանելի են էթնիկ համայնքի կամ ռեսուրսների խմբի ինքնավերարտադրման և զարգացման համար, ինչպես նաև դրանց նպատակային օգտագործման հեռանկարները:

Եզրակացություններ

Այսպիսով, հայկական սփյուռքի ներկա կարողությունների բացահայտման և ներառման համար անհրաժեշտ է ապահովել երկու փոխլրացնող մոտեցում: Առաջինը՝ ազգի ամեն մի հատվածի վերաբերյալ ունենալ այնպիսի ճշգրիտ տեղեկատվություն, որը կբավարարի համակարգված հետազոտության ծրագրային պահանջները: Իրավիճակային նախնական վերլուծությունը թույլ կտա ապահովելու ծրագրային խնդիրների խորությունը, որը կբավարարի միջին մակարդակի տեսության պահանջները և կարծազանքի հասարակական շահերին համահունչ կիրառական ելքերին: Ելակետային այս դրույթը թույլ է տալիս մշակել նպատակների և հարցադրումների շարք, որը կոչված է գտնել ընդհանրացնող տիպաբանական երևույթներ և տրամաբանական ընթացք, ինչպես նաև բացահայտել յուրաքանչյուր գաղթօջախի առանձնահատկությունները:

Առաջարկելով ծրագրային դրույթների նորովի մեկնաբանություն՝ հարց է դրվում ելնել արդի հայ սփյուռքի նկարագրի շարժընթացից, որը արագ փոփոխվող իրավիճակներում փոխակերպվում է հոծ զանգվածներից դիսպերս քաղաքաբնակ զանգվածի: Տարաբնակեցման իրավիճակում ազգապահպան գործընթացի նման դիսպերս կարելի է իրականացնել եղած ներուժի համախմբման միջոցով: Տրամաբանական է հետազոտական նպատակները ձևակերպել՝ հիմնվելով ազգի ընդհանուր և նրա տարբեր հատվածների ներուժի բացահայտման և ներառման գաղափարի վրա, որի համատեքստում առանձին երանգ է ստանում «էթնոսոցիալ ռեսուրս» եզրույթը: Այն հիմք է դառնում նոր հետազոտական խնդիրների մշակման և հիմնավորման համար, տրամաբանական կապ է ստեղծում երևույթի դինամիկ նկարագրման և գնահատման համակարգի միջև: Ներկայացված մոտեցումները սփյուռքի ուսումնասիրման ասպարեզում որոշակի հեռանկարներ են բացում մոդելավորման և տարբեր մակարդակի նախագծերի մշակման համար:

Գրականություն

Հայ էթնիկությունը սփյուռքում 2021, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., 460 էջ:

Կարապետյան Ռ. 2018, Հայկական սփյուռքն այսօր, Երևան, «Գիտություն», 254 էջ:

Կարապետյան Ռ. 2014, Միգրացիան և նոր հայկական սփյուռքը, Երևան, «Գիտություն», 212 էջ:

- Arnaud A.-J. 1998, Entre modernité et mondialisation : cinq leçons d'histoire de la philosophie du droit et de l'État, coll., Droit et Société, 36 p.
- Cohen R. 1996, Diasporas and the Nation-State: From Victims to Challengers, International Affairs, vol. 72, N 3 (Jul., 1996), p. 517-518.
- Esman M.J. 2009, Diasporas in the Contemporary World, Polity Press, p. 121-131.
- Авдашкин А.А. 2015, Феномен диаспоры: методологические основы научного исследования, Вестник Челябинского государственного университета, 2 (357), История, вып. 62, с. 131-137.
- Карапетян Р.С. 2014, О динамике расселения армян в XX столетии, Հայ էթնիկությունը սեփական և այլազգի միջավայրում. Հետազոտական փորձ, խնդիրներ և հեռանկարներ, Երևան, «Գիտություն», էջ 35-43:
- Проблемы Кипра: история и современность 2019, https://www.imemo.ru/index.php?page_id=1248&file=https://www.imemo.ru/files/File/magazines/meimo/02_2019/10_ (дата верификации 20.11.2022).
- Сулейманов А. 2019, Проблема Кипра: история и современность, Мировая экономика и международные отношения, т. 63, N 2, с. 75-84.
- Փորձագիտական հարցազրույցներ, N 1-50, ՀԱԻ սփյուռքի ուսումնասիրությունների բաժին, ԴԱՆ, Լոս Անջելես, Թեհրան, Բեյրութ, Թբիլիսի, Փարիզ, Կիև, Կիպրոս, Լիոն -2013-2021 թթ.:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՐԷԻ ՆԵՐՈՒԺԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՐԿՈՒ ՄՈՏԵՑՈՒՄ

Ռուբեն Կարապետյան

Ամփոփում

Հայկական սփյուռքի ուսումնասիրման նոր հայեցակարգը և դրանից բխող ռեսուրսային վերլուծության մեթոդաբանական սկզբունքները ենթադրում են սփյուռքի ներուժի բացահայտման և ներառման երկու մոտեցում՝ փաստագրական-նկարագրական և գնահատողական: Առաջինը նկատի ունի ուսումնասիրման նպատակադրումների հստակեցման խնդիրը, որի ներքո մշակվում են սփյուռքի ընդհանուր և հատվածային իրավիճակների և զարգացման միտումների մասին գիտելիքների հավաքման եղանակները: Այն նախնական փուլն է, որից հետո և որի հիման վրա ստեղծվում են գնահատումների համակարգեր, որոնք կազմում են երկրորդ մոտեցման հիմքը: Ընդ որում, ստացված արդյունքները կրում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական բնույթ:

Բանալի բառեր՝ ներուժ, սփյուռք, մոտեցում, էթնիկ գործոն, համակարգ, փաստագրական-նկարագրական գիտելիք:

ДВА ПОДХОДА К ИЗУЧЕНИЮ ПОТЕНЦИАЛА АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

Рубен Карапетян

Резюме

Новый подход к изучению армянской диаспоры и вытекающих из этого методологических принципов ресурсного анализа предполагает два подхода – фактологический-описательный и оценочный – в выявлении и использовании потенциала диаспоры. Первый подразумевает проблему уточнения целей исследования, в рамках которых разрабатываются методы сбора знаний, позволяющих описать сложившиеся в разных частях и в целом во всей армянской диаспоре ситуации и определить тенденции развития. Он является предварительным этапом исследования, после которого и на базе которого формируются оценочные системы, составляющие основу второго подхода, при этом полученные результаты носят как теоретический, так и практический характер.

Ключевые слова – потенциал, диаспора, подход, этнический фактор, система, фактологический-описательное знание.

TWO APPROACHES TO STUDYING THE POTENTIAL OF THE ARMENIAN DIASPORA

Ruben Karapetyan

Abstract

The new approach to the study of the Armenian diaspora and the methodological principles of resource analysis arising from it are considered in this article. Two approaches are presented for discussion - factual-descriptive and evaluative in identifying and using the potential of the diaspora. The first involves the problem of clarifying the goals of the study, within the framework of which methods of gathering knowledge are developed to describe the situations that have developed in different parts and in the whole of the Armenian diaspora and to determine development trends. It is the preliminary stage of the research, after which and on the basis of which the evaluation systems are created. The results of this are both theoretical and practical.

Key words – potential, diaspora, approach, ethnicity, system, factual-descriptive knowledge.

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՌԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՎ ՔԱՌԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Վարդան Պետրոսյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Երևանի պետական համալսարան

ՀՀ, Երևան, Արմյան 52ա

Էլ. հասցե՝ vz.petrosyan@ysu.am

Հոդվածը ներկայացվել է 05.08.2022, գրախոսվել է 11.08.2022, ընդունվել է տպագրության 07.08.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.2-120

Ներածություն

Ընդհանուրինդեվրոպական լեզվում եռաբարբառներ և քառաբարբառներ չեն վերականգնվում, հետևաբար հին հայերենի եռաբարբառային և քառաբարբառային կազմությունները չեն կարող հ.-ե. ժառանգություն լինել: Բացառություն են թվում երկու բառ՝ *նուաղ* (?) «թույլ, տկար, աղուտ» (<*ne-*yal-* «ոչ ուժեղ»)¹ և *աղուէս* (<*(*a*)lōpeku-)², որոնցից առաջինում առկա է հ.-ե. **eia* > հյ. *ուա*, իսկ երկրորդում՝ հ.-ե. **ope* > հյ. *ուէ* համապատասխանությունը: Այդ համապատասխանությունների առնչությամբ պիտի նկատի ունենալ հետևյալը:

1) Հ.-ե. **eia* հնչյունական հաջորդականությունը չի կարող համարվել եռաբարբառ, որից ենթադրաբար զարգանար հայերենի *ուա* եռաբարբառակերպը, ասենք, **e/o* հերթագայությամբ (ձայնդարձի լրիվ աստիճան), որովհետև. Ա) Եթե ընդհանուրինդեվրոպական լեզվում եռաբարբառ լիներ, ապա դրա անդրադարձը (ռեֆլեքսը), հայերենից բացի, կպահպանվեր հ.-ե. գոնե մեկ-երկու հին լեզվում ևս, ինչպես որ հ.-ե. երկբարբառներն են պահպանվել հին լեզուների գերակշիռ մասում³: Բ) *ne-*yal-* բառահիմքը երկ-

¹ Զահուկյան 2010, 573: Հ. Աճառյանը *նուաղ* դասում է չտուգաբանվածների շարքին, մեր կարծիքով, սակայն, հենց իր կողմից վկայակոչված ցեղակից լեզուների օրինակները (հմմտ. լիտվ. *nōvyti* «չարչարել, տորրել, վնասել», չեխ. *unaviti* «հոգնեցնել», ռուս. *уныть* «տխրել, քաջությունը կորցնել, թուլանալ», գոթ. *naufs* «կարիք»), որոնց հիման վրա Ռ. Տրոտմանն առաջարկել է **nūjō-* «անցնել, գունաթափ լինել» նախաձևը (Աճառյան 1977, 468) բավարար հիմք են *նուաղ* բառին հ.-ե. ծագում վերագրելու համար: Հաշվի առնելով հայերեն *նուաղի* հնչյության լազմը՝ ըստ իս՝ ընդունելի պիտի համարել Գ. Զահուկյանի առաջարկած նախաձևային տարբերակը՝ *ne-*yal-* «ոչ ուժեղ», թերևս՝ իբրև բարբառային զուգաձևություն **nūjō-* նախաձևի կողքին:

² Ըստ Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի՝ հ.-ե. **alōpeku-* նախաձևից (Հյուբշման 2003, 415, Աճառյան 1971, 135):

³ Հ.-ե. հին լեզուներից, ըստ համեմատական հնդեվրոպաբանության տվյալների, երկբարբառ չեն ունեցել խեթերենը և թոխարական լեզուները (Фридрих 1952, 43-54, Крайзе 1959, 50-54, Иванов 1963, 41-99):

վանկ է, որի կազմում *u* ծայնորդն անցնում է հաջորդ վանկին: Ըստ այդմ, վանկաբաժանը համընկնում է ձևային կարի հետ (հմմտ. *uol*): Դա նշանակում է, որ նշված բառահիմքում չի կարող տարբերակվել եռաբարբառ կամ եռաբարբառակերպ, որովհետև չի պահպանվում դրա համար անհրաժեշտ հիմնական պահանջներից մեկը՝ որպես մեկ բարդ հնչույթ՝ մեկ վանկի կազմում արտաբերվելու պայմանը: Գ) Հ.-ե. հիմք-լեզվում վերականգնվող երկբարբառների առաջին բաղադրիչը, որպես կանոն, հիմնական ծայնավորն է՝ կարճ կամ երկար տարբերակով՝ **a/ā*, **e/ē*, **o/ō*, իսկ երկրորդ բաղադրիչը ծայնավորական **u-*ն է կամ **i-*ն, այլ ոչ թե ծայնորդական **u/(w)*-ն կամ **i/(y)*-ն: Այսինքն՝ ընդհանուրինդեվրոպականում եղել են, օրինակ, **au*, **oi*, **eu*, **ōu* և այլ երկբարբառներ, բայց չեն եղել **ua*, **ue* կամ **io* երկբարբառներ⁴:

2) Ինչ վերաբերում է **-ōpe* հնչյունակապակցությանը, թեպետև առանձին դեպքերում, մասնավորապես՝ բառամիջում, հ.-ե. **p-*ն հայերենում անցել է *ι* (*u*)-ի (հմմտ. **epi* > հյ. *tu* «և, նաև», **opi* > հյ. *ni* «ու (շաղկապը)», **optō* > հյ. *niə*, **ōpne* > հյ. *ունել* (*ունիմ*) «ունենալ, բռնել», **sūop-no-s* > հյ. *քուն* և այլն), բայցևայնպես ընդհանուրինդեվրոպականում **-ōpe* եռաբարբառ (եռաբարբառակերպ) չէր կարող տարբերակվել թեկուզև իր կազմում շրթնային խուլ հպական (**p*) ունենալու պատճառով:

Եռաբարբառակերպերի կազմավորումը և իրանական փոխառությունները

Սկզբունքորեն հնարավոր է հին հայերենի եռաբարբառակերպերի և քառաբարբառակերպերի առաջացման երեք տարբերակ: Այն է՝ այդ կազմությունները. 1) հայերենի բառակազմական (/բառաձևակազմական) գործընթացների արդյունք են, 2) հայերենին անցնել են փոխառյալ բառերի միջոցով, 3) նշված երկու գործընթացների համադրության արդյունք են:

Թե նշված գործընթացներից հատկապես որը և ինչ չափով է դեր խաղացել հին հայերենի վերոհիշյալ բաղադրիչների առաջացման գործում, այդ մասին կարելի է որոշակի դատողություններ անել միայն հիմնախնդրի համակողմանի քննությունից հետո: Հետևաբար եռաբարբառակերպերի և քառաբարբառակերպերի տարածամանակյա քննությունն անհրաժեշտ է դարձնում մեկ անգամ ևս անդրադառնալ դրանց կառուցվածքային կաղապարներին (համաժամանակյա հայեցակետ), որքանով որ դրանք ներառում են բառա-

⁴ Мейе 1938, 134-138, Прокош 1954, 92-93, Семереньи 1980, 52-54, Савченко 1974, 87-89, Красухин 2004, 64-66, Общее языкознание: методы лингвистических исследований 1973, 77. Իհարկե, կան նաև առավել տարածված այդ պատկերացումից շեղումներ. ոմանք տարբերակում են նաև **ai*, **au*, **ēl*, **ēr*, **en*, **on* տիպի երկբարբառներ (Мейе 1938, 137-139, Прокош 1954, 92, Красухин 2004, 64-66), բայց դրանք ունեն մասնավոր բնույթ:

կազմական տարբեր բաղադրիչներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ծագումնաբանական տարբեր գործընթացների արդյունք լինել: Ըստ այդմ.

1) Հին հայերենի *ուա*, *ուե*, *ուէ*, *ուի*, *ուո* եռաբարբառակերպերը ներկայացնում են հետևյալ բառակազմական տիպերը:

Ա) Կազմավորվել են «բնի ձայնավոր + (ւ կիսաձայն) + վերջածանցի ձայնավորական բաղադրիչ» կաղապարով (հմմտ. *արդուած* «հորինվածք, ձև», *դիպուած* «դեպք, անցք», *հասարուած* «հորինվածք, կերտվածք», *յօղուած* «կապակցություն, հորինվածք», *շրջուած* «շրջադարձ, փոփոխություն» և այլն): Ինչպես երևում է, նշված կաղապարով բառերում *ուա* եռաբարբառակերպը հանդիպում է *-ուած* վերջածանցի կազմում, որը, ըստ Գ. Զահուկյանի, «բայական ու հիմքակազմ տարրի» և *-ած* վերջածանցի բաղադրություն է⁵: Իսկ *ած*-ը, նրա կարծիքով, «ծագում է *ած-ել* բայի արմատից»⁶, հետևաբար, օրինակ, *դիպուած* բառն ունի «(դէպ >) դիպ + ու + ած» կառուցվածքը: Մեր կարծիքով, սակայն, *-ուած* վերջածանցի *ու*-ն, առաջացել է *դէպ* «եղելություն, պատահմունք» գոյականի եզ. սեռ.-տր. ձևի՝ *դիպի*, և *-ած* վերջածանցի միավորման արդյունքում՝ «դիպի + ած», ուր *ի* և *ա* ձայնավորների միջև հայտնվել է *ւ* կիսաձայնը, որքանով հայերենին բնորոշ չէր երկու ձայնավորի անմիջական հաջորդականությունը մեկ վանկում: Ի-ին նախորդող դիրքում տեղի է ունեցել *ի* (*i*) > *ո* (*o*) հնչյունափոխություն, և բառը, նախ, արտաբերվել է [**դիպիւած* / **dipizac*], ապա՝ [*դիպուած* / *dipouac*]: Այդպիսի հնչյունափոխության բուն պատճառը կարող էր լինել բառային շեշտի տեղաշարժը դեպի աջ՝ միաձուլման հետևանքով առաջացած *-ուած* վերջածանցի վանկարարի վրա՝ *դէպ > դիպի՝ > դիպուա՛ծ* (հմմտ. նաև՝ *թի՛ւ*, *բայց՝ թուո՛յ*, *անի՛ւ*, *բայց՝ անուո՛յ*): Իսկ *ւ* (*u*)-ը երկու ձայնավորի միջև կատարել է յուրօրինակ ձայնակապի դեր, ինչպես որ արդի հայերենում այդպիսի դեր կատարում է *յ* (*y*) կիսաձայնն *ա* և *ո* ձայնավորների և նրանց հաջորդող մեկ այլ ձայնավորի միջև դիրքում (հմմտ. *արքայական*, *կաթսայատուն*, *շղթայել*, *բարոյական*, *ցոյական* և այլն)⁷:

Բ) Կազմավորվել են «բնի ձայնավոր + (ւ կիսաձայն) + ձայնավորական վերջավորություն (/վերջավորության ձայնավորական բաղադրիչ)» կաղապարով (հմմտ. *կիզուի* «այրում էի» («կիզում» բայի անց. անկ. ժ. եզ. թ. 1-ին դ.), *կիզուաք* «այրում էինք» («կիզում» բայի անց. անկ. հզն. թ. 1-ին դ.), *հեղուաք*

⁵ Զահուկյան 1998, 32:

⁶ Զահուկյան 1998, 32: Յ. Գրեպինը հնարավոր է համարել նաև *ած*-ի հնդեվրոպական ծագումը՝ հ.-ե. *gʷ > hj*. ծանցումով (Զահուկյան 1998, 32):

⁷ Ըստ իս՝ դրա վկայությունը պիտի համարել ոչ միայն վերոհիշյալ դեպքերը, երբ *ա*-ից և *ո*-ից հետո լսվող *յ*-ն արտահայտվում է գրությամբ, որովհետև սկսում է գործել հին հայերենին բնորոշ՝ «բառը չէր կարող ավարտվել *ա* և *ո* ձայնավորներով» սկզբունքը (որոշ բացառություններով, ինչպես՝ *գիտենա՛* «գիտցիր», *խոկա՛* «խորհիր», *հասո՛* «հասցրու», *մալո՛* «մոտեցրու» և այլն), այլև երբ ձայնակապը գրությամբ չի արտահայտվում, բայց արտասանվում է թույլ կերպով, ինչպես՝ [*գրեի*], [*ժողովածունում*] և այլն:

«թափում էինք» («հեղում» բայի անց. անկ. ժ. հզն. թ. 1-ին դ.), *ջեռնուիր* «տաքանում էր» («ջեռնում» բայի անց. անկ. ժ. եզ. թ. 2-րդ դ.) և այլն):

Գ) Կազմավորվել են «հիմքի հնչյունափոխված երկբարբառակերպ / (ծայնավոր) + բնի ձայնավոր» կաղապարով (հմմտ. *աննոց* (= անիւ+n+ց) «անիվների» («անիւ» գոյ. հզն. թ. սեռ.-տր. հլ.), *թոնց* (= թիւ+n+ց) «թվերի» («թիւ» գոյ. հզն. թ., սեռ.-տր. հլ.), *տոնոլ* (= տու⁸+n+լ) «տվող» («տալ» բայի ենթակայ. դերբ.) և այլն):

2) Իրանական փոխառություններում վերոհիշյալ եռաբարբառակերպերի դրսևորումները հայկական ձևափոխությունների արդյունք են (հմմտ. *դժուար* (< իրան. *dužvār*. պրթ. *djw'r* (*dižvār*), *dušxvār*, (պազ.), պ. *dušvār*),- *դրուար* (< հ.պ. **druvata*-. ավ. *drvatāt*-, մ.պ. *drūt* «առողջություն», պ. *durōd* «օրհնություն. բարեմաղթություն. աղոթք»),- հյ. *նուազ* «զավաթ, բաժակ» (< իրան. **nivāg*. պ. *nifāy*, *nufāy*),- *սրուակ* (< ավ. *sr(u)vā*-, մ.պ. *srūv*, *surū*, *surūn* «եղջյուր» և այլն),- *արուեստ* (< իրան. **aruvast*. հ.պ. *aruvasta* «ամրություն, առույգություն, պնդակազմություն», պրթ. **wst* «առաքինություն»), - *նուէր* (< իրան. *nivēd*. ավ. *nivaēd* «ձոնել, նվիրել», մ.պ. *nivēdēm* «ձոնում եմ, նվիրում եմ»), - *պապուէր* (< իրան. *patvēd*. ավ. *pati-vaeđ* «ծանուցել, իմացնել», մ.պ. (մնք.) *ptvyd* «ծանուցում», սողդ. *ptwđ* «հանձնել»),- *նուիրակ* (< իրան. I. **nivēdak* «բուժակ». II. *nivēdak* «ազդարար, պաշտոնյա». պ. *nuvīd* «լուր») և այլն): Ընդ որում, իրանական փոխառությունների եռաբարբառային կազմությունները հնարավոր չէ կառուցվածքային վերլուծության ենթարկել հայերենի բառակազմության սկզբունքներով: Օրինակ՝ իրանական լեզուներից, ըստ ամենայնի՝ պահլավերենից փոխառյալ *նուէր* (< պհլ. *nivēd*) բառը բառակազմորեն վերլուծելի չէ հայերենում, բայց պահլավերենում այն տրոհվում է *ni*- նախադրության և *vēd* արմատի: Այդ բառի ավելի հին ձևն է ավ. *nivaēd*-ը՝ *vaeđ* «գիտենալ, ճանաչել» արմատով⁹: Նույնը վերաբերում է *պապուէր* բառին, որի պահլավական համարժեքի՝ **patvēd* «ծանուցում, հայտարարություն», կազմում տարբերակվում են **pat*- նախադրությունը և **vēd* «գիտենալ» արմատը: Ավելի հին ձևն է ավ. *paitivaēd(a)*-ն «ծանուցել, իմացնել»¹⁰: Ըստ էության, երկու բառերի բուն արմատն է պհլ. **vēd* (/ավ. *vaeđ(a)*) (<հ.-ե. **uoid*-/ **ueid* «գիտենալ» ձևից), հետևաբար բառային իմաստների տարբերությունները պայմանավորում են նախադրությունները (իմա՝ նախածանցները):

Առաջին հայացքից կարող է թվալ, որ նշված բառերից բաղադրված, օրինակ, *պապուիրան* և *նուիրակ* բառերի կառուցվածքում տարբերակվող *-ակ* և *-ան* մասնիկները (իմա՝ վերջածանցները) բացատրելի են հայերենի բառակազմական օրինաչափություններով (հմմտ. «*նուիր* (<*նուէր*) + *ակ*», «*պա-*

⁸ Տալ բայի կատարյալի հիմքը, որից կազմվել են անցյալ կատարյալի և բուն հրամայականի ձևերը ներգործական և կրավորական խոնարհումներում, անցյալ և ենթակայական դերբայների ձևերը:

⁹ Աճառյան 1977, 470:

¹⁰ Աճառյան 1979, 49:

տուիր (<պատուէր) + *ան*»), որովհետև հին հայերենն ուներ *-ակ* և *-ան* կենսունակ վերջածանցները (հմմտ. *աղանեսակ* («աղանի + ակ»), *աղիասակ*, *գաւառակ*, *դրօշակ*, *սոնակ* «սոնի, առանցք» և այլն, - *արգելան* «փակ տեղ. բանտ», *իշխան*, *խարան*, *խթան*, *վզան* «բարձրավիզ» և այլն): Իրականում, սակայն. 1) այդ բառային կառույցներն ամբողջական փոխառություններ են պահլավերենից, և նշված վերջածանցներն առկա են փոխատու լեզվի բառային կառուցվածքում (հմմտ. *նուիրակ* (<*nivēd-ak), *պատուիրան* (<*patvēd-ān)), 2) հայերենի *-ակ* և *-ան* վերջածանցները, ըստ ամենայնի, ունեն իրանական ծագում¹¹, չնայած որ Գ. Զահուկյանը դրանց որոշ կիրառություններում հնարավոր է համարում նաև բաղարկությունը հ.-ե. մասնիկների հետ (հմմտ. *-kon (> -կ(ն)) ածանցից՝ *-ակ*-ի դեպքում, *-no-/-ā- ածանցից (-ā/ə հիմքակազմ տարրով)՝ *-ան* մասնիկի դեպքում)¹²:

Վերոշարադրյալը հիմք է տալիս ասելու, որ իրանական փոխառությունների *ուա*, *ուե*, *ուէ*, *ուի* եռաբարբառակերպերի ծագումնաբանական քննությունը հանգեցնում է իրանական բառի կառուցվածքային կաղապարը հիմք ընդունելու անհրաժեշտության, որովհետև առանց դրա հնարավոր չէ բացատրել, ասենք, *ուե*, *ուա* եռաբարբառակերպերի առաջացումը, օրինակ, *արուեստ*, *դժուար*, *դրուար*, *նուազ*, *նուազ* բառերի կազմում:

Հայերենի իրանական փոխառությունների *ուա*, *ուե*, *ուէ*, *ուի* եռաբարբառակերպերի զուգադրումը բուն իրանական ձևերում դրանց համարժեքների հետ ցույց է տալիս, որ կառուցվածքային առումով ընդհանրությունները մեծ են հատկապես ընդհանուր իրանականի, հին պարսկերենի և ավեստայի ձևերի հետ, որոնցում, իբրև կանոն, հայերենի եռաբարբառակերպի դիմաց առկա է եռահնչյուն կամ առնվազն երկհնչյուն կապակցություն (հմմտ. հյ. *դժուար* - իրան. *dušvār*, - *դրուար* - հ.պ. **druvata*-, ավ. *drvatāt*-, - հյ. *նուազ* - իրան. **nivāg*-, հյ. *սրուակ* - ավ. *sr(u)vā*-, - հյ. *արուեստ* - իրան. **aruvast*, հ.պ. *aruvasta*-, - հյ. *նուէր* - իրան. *nivēd*. ավ. *nivāēd*-, մ.պ. *nivēdēm*-, - հյ. *պատուէր* - իրան. *patvēd*, ավ. *paitivāēd(a)*-, - հյ. *նուիրակ* - իրան. I. **nivēdak*, II. *nivēdak* և այլն), ի տարբերություն պահլավերենի, առհասարակ՝ միջին պարսկերենի ձևերի, որոնք ունեն մեկ կամ երկու բաղադրիչով համարժեք (հմմտ. հյ. *դժուար* - պրթ. *djw'r* (*dišvār*), մ.պ. *dušxvār*-, - հյ. *դրուար* - մ.պ. *drūt*-, - հյ. *սրուակ* - մ.պ. *srūv*, *surū*, *surūn*-, - հյ. *արուեստ* - պրթ. *'wst*-, - հյ. *պատուէր* - մ.պ. (մնք.) *ptvyd*-, սողդ. *ptwē*- և այլն): Իրանագիտության մեջ առկա տեսակետի համաձայն, ավեստայում (հնարավոր է՝ նաև հին պարսկերենում), միջին պարսկերենում, մասնավորապես՝ պարթևերենում, *v*-ով նշանակվել է շրթնային ձայնորդը կամ ձայնեղը, որի հնչյունական համարժեքն իրանական որոշ լեզուներում *w* ձայնորդն է (հմմտ. իրան. **vafra* -> ավ. *vafra*-, պրթ. *vafr*

¹¹ Молчанова 1978, 62, Расторгуева, Молчанова 1981, 68-69, 73, 194-195.

¹² Զահուկյան 1998, 8, 11-12:

(/wfr) ման. *wpr* «ծյուն», իրան. **vāta-* > ավ. *vāta-*, ման. *w'd*, վաղ պարթև. *vat* (*w't*) «քամի», իրան. **harva-* > ավ. *haurva-*, հն պարսկ. *haruva-* «ամբողջ, բոլոր», պրթև. *harv* (*hrw*) «ցանկացած, յուրաքանչյուր» և այլն¹³: Եթե դա այդպես է, ուրեմն *uva* (հմմտ. հ.պ. **druvata-*), *ivā* (հմմտ. իրան. **nivāg*) և *ivē* (հմմտ. իրան. **nivēḍak*) հնչյունակապակցությունները եռաբարբառակերպեր էին, իսկ *uv-*ը (հմմտ. մ.պ. *srūv*) և *vā-*ն (հմմտ. մ.պ. *dušxvār*)՝ երկբարբառակերպեր, չնայած որ իրանագիտության մեջ այդպիսի բարդ հնչյոյթներ չեն տարբերակվում, այլ՝ միայն *aē*, *ao*, *oi*, *əu*, *āi*, *āu* երկբարբառները՝ ավեստայում և *ai*, *au*, *āi*, *āu* երկբարբառները՝ հին պարսկերենում¹⁴: Նշված տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում *ivāē*-ն (հմմտ. ավ. *nivāēḍ*-, *paitivāēḍ(a)-*) պիտի համարել քառաբարբառակերպ, սակայն առավել հավանական է, որ հնչյունական այդ հաջորդականությունը տրոհվել է երկու վանկերի միջև՝ *nivāēḍ*-, *paiti-vāēḍ(a)-*: Այսինքն՝ նշված բառերի կազմում առավել հավանական է *vāē* եռաբարբառակերպի տարբերակումը:

Վերոհիշյալ զուգահեռներն ընդհանուր առմամբ հիմք են տալիս անելու հետևյալ հաստատումները: 1) իրանական հիշատակված փոխառությունները, ըստ ամենայնի, կատարվել են հին պարսկերենի և ավեստայի լեզվի շրջանում, երբ իրանական համապատասխանները ևս ունեին եռաբաղադրիչ կամ առնվազն երկբաղադրիչ հնչյոթային (հնչյունակապակցակա՞ն) համարժեքներ (եռաբարբառակե՞րպ, երկբարբառակե՞րպ): Ժամանակագրորեն հավանական է, որ այդ փոխառությունները կատարված լինեն մ.թ.ա. VI-III դդ., որովհետև, ըստ պատմագիտության տվյալների, հայերի և իրանական ժողովուրդների շփումներն անմիջական բնույթ են կրել մ.թ.ա. VI դ. սկսած, երբ Հայաստանը ներառվեց Աքեմենյան տերության կազմում¹⁵: 2) իրանական հին լեզուների (ընդհանուրիրանական, հին պարսկերեն, ավեստա), երբեմն նաև միջին պարսկերենի եռահնչյուն կապակցություններում հին հայերենի եռաբարբառակերպերի *ու-*ին, իբրև կանոն, համապատասխանում է երկբաղադրիչ հնչյունական կազմություն, այն է՝ «ծայնավոր + ձայնորդ (/շրթնային ձայնեղ)» կաղապարով. հմմտ. *uva* - *ուա* (հ.պ. **druvata-* - հյ. *դրուապ*), *ivā* - *ուա* (իրան. **nivāg* - հյ. *նուազ*), *uva* - *ուե* (իրան. **aruvast*, հ.պ. *aruvasta* - հյ. *արուեստ*), *ivē* - *ուէ* (իրան. *nivēḍ*. մ.պ. *nivēḍem* - հյ. *նուէր*), *ivē* - *ուի* (իրան. *nivēḍak* - հյ. *նուիրակ*): Կարծում ենք՝ այդ իրողությունը ևս, ի թիվս այլ

¹³ Расторгуева 1978, 21-23, Расторгуева, Молчанова 1981, 21, 35, 172.

¹⁴ Расторгуева 1978, 20-22.

¹⁵ Հին պարսկերենի և ավեստայի լեզվական փոքր թվագրվում է մ.թ.ա. II հազարամյակի կեսերից մինչև մ.թ.ա. IV-III դդ. (Расторгуева, Ефимов, Керимова 1978, 7, Sokolow 1967, 12, Лингвистический энциклопедический словарь 1990, 12, 142): Վերը նշված պատճառով հավանական չէ, որ հայերենի և իրանական լեզուների անմիջական շփումներն սկսված լինեին նույնիսկ մ.թ.ա. I-ին հազարամյակի սկզբներին (Մանանդյան 1944, 46-60, Աճառյան 1940, 218-219, Հայ ժողովրդի պատմություն 1971, 444-452, Ջահուկյան 1987, 492, Оранский 1988, 68-69, Մուրաֆյան, Վան Լոկ 2017, 20-24):

տվյալների¹⁶, վկայում է, որ առնվազն նշված փոխառությունների շրջանում հայերենի *ու*-ն պարզ հնչույթ չէր, այլ՝ երկբարբառակերպ: Պիտի կարծել, որ *ու*-ն երկբարբառային բնույթը պահպանել էր առնվազն մինչև V դարի կեսերը:

Քառաբարբառակերպերի առաջացման ժամանակի հարցը

Քառաբարբառակերպերը հանդիպում են անունների քերականական, այն է՝ գոյականների հոլովական և բայերի խոնարհման ձևերում: Ձևակազմական տեսանկյունից ներկայացնում են երկու տիպի կառուցվածքային կաղապար:

1) «Հիմքի երկբարբառակերպ բաղադրիչ + բնի ծայնավոր + (յ կիսաձայն) /վերջավորություն»:- Այս տիպին վերաբերում է երեք քառաբարբառակերպ. *ուայ* (հմմտ. *թուայ* «թոնիր. մի տեսակ վառարան» - եզ. թ., անվն. հլ.¹⁷, *լուայ* «լսեցի» - *լսել* բայի կրավ. խոնարհ. եզ. թ., անց. կատ., 1-ին դ.), *լուայց* «լսելու եմ /լսեմ/ կլսեմ / պիտի լսեմ» - *լսել* բայի ստոր. 2-րդ ապո. (*կոնյունկտիվ*), եզ. թ., 1-ին դ., *դուայ* «(ես) տվեցի» - *դալ* բայի անց. կատ. եզ. թ., 1-ին դ., *դուայց* «տալու եմ/տամ/կտամ/ պիտի տամ» - *դալ* բայի ստոր. 2-րդ ապոն., եզ. թ., 1-ին դ.),- *ուալ* (հմմտ. *լեզուալ* «լեզվով» - *լեզու* գոյ. եզ.թ., գրծ. հլ., *հովուալ* «հովիվով» - *հովի* գոյ. եզ.թ., գրծ. հլ., *դուալ* «(նա) տվեց» - *դալ* բայի կրավ. խոնարհ. եզ. թ., անց. կատ., 3-րդ դ., *լուալ* «(նա) լսեց» - *լսել* բայի կրավ. խոնարհ. եզ. թ., անց. կատ., 3-րդ դ.),- *ուոյ* (հմմտ. *անուոյ* «անիվի» - *անի* գոյ. եզ. թ., սեռ.-տր. հլ., *թուոյ* «թվի» - *թի* գոյ. եզ. թ., սեռ. հլ., *լուոյ* «լվի» - *լու* գոյ. եզ.թ., սեռ.-տր. հլ., *ծուոյ* «ծվի» - *ծու* գոյ. եզ. թ., սեռ.-տր. հլ.):

2) «Հիմքի երկբարբառակերպ բաղադրիչ + բնի երկբարբառ բաղադրիչ»:- Այս տիպին է վերաբերում *ուեա* քառաբարբառակերպը (հմմտ. *արծուեաց* «արծիվների» - *արծուի* գոյ. հզն. թ., սեռ.-տր. հլ.¹⁸, *դուեալ* «տվել/ տրվել, տված/տրված» - *դալ* անկանոն բայի անց. դերբ., *լուեալ* «լսել/լսվել, լսած/լսված» - *լսել* անկանոն բայի անց. դերբ., *դուեալ* (*լեր/լերուք*) «տրված

¹⁶ Պետրոսյան 2015, 121-124, Պետրոսյան 2017, 48-50:

¹⁷ Գրական հուշարձաններում հանդիպում է նաև *թայ*, այսինքն՝ *այ* եռաբարբառակերպային տարբերակով, որը, անշուշտ, անհամեմատ ուշ շրջանի արտասանության դրսևորում է, երբ բաղաձայնահաջորդ և ձայնավորանախորդ դիրքի սկզբնական *ու* (*ու*)-ն արտասանվում էր իբրև շրթնատամնային *վ* [v]: *Թուայ*-ի վերջավորությունն է ձևույթային *զրոն* (-ծ), իսկ *-յ*-ն պիտի վերագրել հիմքին, որքանով էլ հայերենում, բացառությամբ որոշ դեպքերի (բայի հրամ. եղ. ձև՝ *աղա՛, մնա՛, մապո՛ր, ողորմեա՛* և այլն), բառը չէր կարող ավարտվել *ա* և *ո* ձայնավորներով, դրանցից հետո գրվում էր *-յ* կիսաձայնը (հմմտ. *արքայ, ընծայ, կաթսայ, շոթայ, գոյ* և այլն): Դա նշանակում է, որ *-յ*-ն նաև արտասանվել է: Հատկանշական է, որ, ինչպես *-(ա)յ* և *-(ո)յ* վերջն ունեցող գոյականների մեծ մասը, *թուայ* ևս ենթարկվել է պարզ *ի* արտաքին հոլովման (հմմտ. *եզ.թ.- թուայ, թուայի, ի թուայէ, թուայիս, -հզն.թ.- թուայք, զ) թուայս, թուայից, ի թուայից, թուայիք*): Այլ է բայի սահմ. ներկ. ձևերի *-յ*-ի հարցը: Վերջինը հ.-ե. **t(i) > hj*. *յ* անցման արդյունք է և, բնականաբար, բայական բուն վերջավորությունն է (հմմտ. **bhéreti > (*բերեյ >) բերէ* «բերում է» (եզ. թ., III դ.), **bhéret(h)e > (*բերեյք >) բերեք* «բերում էք» (հզն. թ., II դ.):

¹⁸ *Արծուեացի ե-ն ա-ից առաջ ի > ե* հնչյունափոխության արդյունք է, այն է՝ «արծուի + աջ = արծուեաց»:

եղիր/եղեք» - *տալ* անկանոն բայի բուն հրամ. կրավորաձև խոնրի. եզ. և հզն. թվերի 2-րդ դեմքը):

Նախ՝ գոյականական ձևերի մասին:

1) *Թուայ*-ն իրանական փոխառություն է, ըստ Հ. Աճառյանի՝ պրս. *tān* «տաքություն» ձևից, որի ավելի հին տարբերակն է *tāb*-ը՝ նույն նշանակությամբ¹⁹: Վերջինի հայկական համարժեքն է *տապ* «տաքություն, ջերմություն» բառը²⁰, փոխառված պահլավական *tap* «տաք, ջերմ» ձևից²¹: Կարծում ենք՝ առավել հավանական է, որ հյ. *թուայ*-ը ներկայացնում է պրս. *tān*-ից բաղադրված, այլ կերպ՝ վերջինին նույնարմատ *tāva* «տապակ» ձևը²², որին էլ ընդհանուր սկզբունքի համաձայն, հայերենում կարող էր ավելանալ *j* կիսաձայնը: Բառավերջի *-a*-ն հիմքակազմիչ ձայնավոր է, որն ավելի ուշ դադարել է ընկալվել որպես այդպիսին և վերածվել է բառակազմական մասնիկի՝ վերջածանցի (հմմտ. հն. պրսկ. *bagā-* «աստված», *gaušā-* «ականջ», *dastā-* «ծեղք», *pārša-* «պարսիկ», *xšāša-* «թագավորություն» և այլն)²³: Հավանական է՝ տեղի է ունեցել պրս. *tāva* > հյ. **թալա*(+ *j*) անցում²⁴, այնուհետև՝ երկշրթնային *լ* (*yl*)-ի ազդեցությամբ նախորդող *ա* (*a*)-ն ենթարկվել է շրթնայնացման՝ վերածվելով *ո* (*o*)-ի: Ըստ այդմ՝ բառն արտաբերվել է *թուայ* [toɣai]։ Իրանական լեզուներում ձայնորդական *v*-ին նախորդող դիրքում երբեմն նկատվում է *a* > *o* հերթագայություն (հմմտ. մ.պ. *bavandak* // *bovandak* > հյ. *բաւանդակ* (*/բովանդակ/*)): Իրանական *tāva*-ն արդի հայերենում պահպանվել է *թավա* «մետաղյա կոթավոր ոչ խորունկ կլոր աման՝ ուտելիք տապակելու համար» նշանակությամբ²⁵: Դեռևս նախագրային փուլում հայերենը կորցրել էր երկար ձայնավորների համակարգը²⁶, ուստի իրանական թե՛ երկար և թե՛ կարճ *ā/a*-երը հայերենում արտացոլվում էին կարճ տարբերակով: Վերոշարադրյալը հիմք է

¹⁹ Աճառյան 1940, 259, Աճառյան 1973, 200: Գ. Զահուկյանի «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» (այսուհետև՝ ՀԼՊՆԺ) գրքի իրանական փոխառությունների բաժնում *թուայ*-ը բացակայում է: Անշուշտ, վրիպում պիտի համարել, որովհետև այդ բառն առկա է նույն հեղինակի ավելի ուշ հրատարակված ստուգաբանական բառարանում (Զահուկյան 2010, 273):

²⁰ Հյուբշման 2003, 252, Աճառյան 1973, 200, Աճառյան 1979, 371, Զահուկյան 2010, 720-721:

²¹ Աճառյան 1979, 371: Իրանական *tap*-ի և ցեղակից լեզուների (հին հնդկերեն, հին սլավոներեն, լատիներեն, հին իռլանդերեն և այլն) համարժեք ձևերի համար վերկանգնվում է հ.-ե. **tep-* «տաք» նախածնը (Աճառյան 1979, 371, Семереньи 1980, 68):

²² Զահուկյան 2010, 273:

²³ Расторгуева 1978, 29-30, Расторгуева, Молчанова 1981, 52,

²⁴ Մենք արդեն տեսանք, որ իրանական հին և միջին շրջանի լեզուների *v*-ն հաճախ համարժեք էր *yl* ձայնորդի, ուստի պատահական չէ, որ հայերենի իրանական փոխառություններում՝ երկու ձայնավորի միջև դիրքում և բառավերջում, *ա* (*a*)-ից հետո *v*-ն պահպանել էր ձայնորդական բնույթը (հմմտ. իրան. *xāvar* > հյ. *խաւար*, մ.պ. *armān* > հյ. *արմա*, մ.պ. *āvar* > հյ. *աւար*, մ.պ. *hāv(a)šar* «նման, հավասար» > հյ. *հաւասար*, *իրան*. **nān-āz*, *ավեստա nānāza-* > հյ. *նաւազ* (ի-ա) «նավակար» և այլն):

²⁵ Աղայան 2014, 370-371:

²⁶ Որպես այդպիսին՝ գրերի գյուտի շրջանում՝ V դ. սկիզբ, 4րդեց մինչև VI դար, իբրև միևնույն ձայնավորի երկար և կարճ հնչույթային տարբերակներ՝ քանական հակադրությունը պահպանել էին միայն երկբարբառային ծագում ունեցող *է* (*ē*)-ն և *ե* (*e*)-ն (Պետրոսյան 2015, 121-124):

տալիս ասելու, որ փոխառյալ *թուայ*-ի *ուայ* քառաբարբառակերպը, մի կողմից, իրանական ազդեցության արդյունք է, իսկ մյուս կողմից՝ բառավերջի *ա* (*ա*)-ից հետո *յ* (*յ*) հավելելու՝ հայերենի ընդհանրական սկզբունքի դրսևորում, այն է՝ «*āva + i (j) = aṣaj/ուայ*»:

2) Մյուս գոյականների քառաբարբառակերպերը կազմվել են «հիմքի երկբարբառակերպ բաղադրիչ + բնի ձայնավոր + հոլովիչ» կաղապարով (հմմտ. *լեզուալ* (= *լեզ-ու+ա+լ*), *ծոնոյ* (= *ծ-ու+ո+յ*), *լոնոյ* (= *լ-ու+ո+յ*), *հովուալ* (= *հով-ի+ու+ա+լ*), *անոնոյ* (ան-ի+ո+յ), *թոնոյ* (= *թ-ի+ո+յ*), *արծոնեաց* (= *արծուի+ա+ց*)), մի տարբերությամբ. ի տարբերություն առաջին երեք բառածների, որոնց հիմքի երկբարբառակերպն անհնչունափոխ է, մյուսների հիմքի երկբարբառակերպերը հնչյունափոխության արդյունք են (*հովուալ*, *անոնոյ*, *թոնոյ* բառածների դեպքում՝ *ի>ո*, *արծուի* բառի դեպքում՝ *ի>ե*):

Այս տեսակի քառաբարբառակերպերի կազմավորումը, ըստ իս, ներհայերենյան իրողություն է, անկախ այն բանից, թե՞ այդ տեսակին վերաբերող բոլոր բառերն են բնիկ հայկական (իմա՝ ժառանգություն հ.-ե. հիմք-լեզվից), թե՞ դրանց թվում կան նաև փոխառյալ բառեր (հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական), որովհետև քերականական ձևերի կազմության սկզբունքները և՛ գոյականների, և՛ բայերի դեպքում հայկական են, իսկ քերականական միջոցներն ունեն հնդեվրոպական ծագում:

Կասկած չի հարուցում ոչ միայն բուն *անիւ*, *արծուի*, *լեզու*, *հովիւ* գոյականների հ.-ե. ծագումը (հմմտ. **snēuo-*՝ **snēu-* «պտտել»²⁷, **dn̥gʰh̥iā-*/**dn̥gʰh̥iū-* (+ **leigʰh* «լիզել») > (*լիզու* >) *լեզու*, **(H)ou̯i-pā-* «ոչխարի հովիվ», **rgʰipio-* «արծիվ»), որոնց եզակի և հոգնակի թվերի սեռ. -տր. (*անոնոյ*, *հովուեաց*, *արծոնեաց*) և գործիական (*լեզուալ*) հոլովածներում առկա են *ուոյ*, *ուալ*, *ուեա* քառաբարբառակերպերը, այլև այդ հոլովածների վերջավորությունների հ.-ե. ծագումը²⁸: Բնավոր *-ո-* հոլովման պատականող *անիւ* գոյականի եզ. սեռ. *-ոյ* (*-ոյ*) վերջավորությունը սերում է հ.-ե. *-*os-jo-*ից, որի բնի ձայնավորին, հայերենի կանոնի համաձայն, բառավերջում ավելացել է *-յ* (*յ*) վերջը: Գործիականի բուն *-ւ(լ)* վերջավորությունը, որն առկա է, օր., *ա* պարզ (հմմտ. *տիտան-ալ* / *տիտան-ալ(ք)* («տիտան» գոյ. եզ./հզն. թ. գործ. հլ. ձևերը)) և *ի-ա* խառն (հմմտ. (*լեզու-ի* (եզ. սեռ.)) *լեզու-ալ* / *լեզու-ալ(ք)* («լեզու» գոյ. եզ./հզն. թ. գործ. հլ.)²⁹ հոլովման ենթարկվող գոյականների գործ.-ի եզ. և հզն. թվերի ձևերում՝ *-ալ* (*-aṣi*)/*-ալ(ք)* (*-aṣi-kʰ*), սերում է հ.-ե. *-*bhi-*ից, որը բարբառային,

²⁷ Այս բառի ստուգաբանությունն առաջարկել է Գ. Զահուկյանը (Զահուկյան 1987, 149, Զահուկյան 2010, 58): Հ. Աճառյանի «Արմատական»-ում այդ բառը ստուգաբանված չէ (Աճառյան 1971, 196):

²⁸ Հյուբշման 2003, 424-425, 452, 468, Աճառյան 1971, 319-320, Աճառյան 1973, 271-272, Աճառյան 1977, 117-118, Զահուկյան 2010, 91, 293-294, 466, Զահուկյան 1987, 111-157, Զահուկյան 1959, 212-224, Джаукян 1982, 137-139, Ղարազոյան 1961, 156-158:

²⁹ Հին հայերենի *ի-ա* խառն հոլովումը համապատասխանում է հ.-ե. *-*ā-* հիմքով հոլովմանը: Հմմտ. սնսկ. *jihv-ā*՝ «լեզու», լատ. *lingu-a*՝ «լեզու» (Աճառյան 1957, 402):

այսինքն՝ ոչ ընդհանուր հնդեվրոպական, երևույթ է, դրսևորվում է նաև հին հնդկերենում և լատիներենում³⁰:

Գրաբարի քերականություններում կատարյալի ձևեր համարվողները համեմատական հնդեվրոպաբանության տեսանկյունից աորիստի ժամանակային ձևեր են³¹, ուստի *դալ* և *լսել* անկանոն բայերի վերը նշված քերականական ձևերը, որոնց կազմում տարբերակվում են քառաբարբառակերպերը, պիտի դիտարկել հ.-ե. աորիստի համատեքստում: Հայտնի է, որ հ.-ե. աորիստը՝ որպես անցյալի ժամանակային իմաստ արտահայտող հիմնական ձև, վերականգնվում է հնդիրանական լեզուների³², հին հունարենի, փոյուգերենի, հին սլավոներենի և հին հայերենի (հատկապես՝ առաջին երկուսի) համապատասխան ձևերի զուգադրումով, որովհետև մյուս հին լեզուներն այդ ժամանակաձևը չեն պահպանել³³: Հայերենի աորիստը (/կատարյալը) ունի երկու տիպի խոնարհում՝ *ներգործաձև* (*действительный залог/active voice*) և *կրավորաձև* (*страдательный залог/passive voice*), այն էլ՝ ոչ բոլոր բայերի համար³⁴: Անկանոն *դալ* բայը աորիստում խոնարհվում է և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև, իսկ, օրինակ, *լսել* անկանոն բայն ունի աորիստի միայն մեկ տիպի խոնարհում, որը, ըստ էության, համապատասխանում է մյուսների ներգործաձև խոնարհմանը (հմմտ. **dō-/*dē-/*dā-* «տալ» – **եզ. թ.**, I դ. – հյ. *ե-դուլ* «(ես) տվեցի», սնսկ. *á-dām*, հն հուն. *ἔ-δωκα*, հն սլավ. *дѣхъ*, – II դ. – հյ. *ե-դուլ* «(դու) տվեցիր», հն հնդկ. *á-dāh/(s)*, հն հուն. *ἔ-δωκας*, հն սլավ. *дѣ, дѣтъ*, – III դ. – հյ. *ե-դ* «(նա) տվեց», սնսկ. *á-dāt*, հն հուն. *ἔ-δωκε(ν)*, հն սլավ. *дѣ, дѣтъ*, – **հզն. թ.**, I դ. – հյ. *դուաք* «(մենք) տվեցինք», սնսկ. *á-dāma*, հն հուն. *ἔ-δομε(ν)*, հն սլավ. *дѣхомъ*, – II դ. *ե-դուք* «(դուք) տվեցիք», սնսկ. *á-dāta*, հն հուն. *ἔ-δοτε*, հն սլավ. *дѣтъ*, – III դ. հյ. *ե-դուն* «(նրանք) տվեցին», սնսկ. *á-duh/(s)*, հն հուն.

³⁰ Meillet 1936, 67-75, Мейе 1938, 303-304, 307-308, Савченко 1974, 195, 205, Семереньи 1980, 170, Джаукян 1982, 138-139, Красухин 2004, 117, 125: Ըստ Ա. Մեյեի՝ հ.-ե. բնի ծայնավորի և վերջավորության միջև սահմանները հայերենում չեն գիտակցվում, դրանք միաձուլվել են, ուստի երկուսը միասին պիտի դիտել իբրև վերջավորություն (Meillet 1936, 67, Աճառյան 1957, 395): Անշուշտ, ընդհանուր առմամբ Ա. Մեյեն իրավացի է: Հօգուտ այդ տեսակետի է վկայում, օրինակ, խառն հոլովումների առաջացումը հայերենում, որոնց այլ լեզուներում հաճախ համապատասխանում է հ.-ե. բնավոր կամ անբուն հոլովումներից մեկը: Այդ երևույթը, սակայն, բացարձակ չէ: Ոչ հազվադեպ հայերենը թեք ձևերում պահպանել է հ.-ե. «բնի ծայնավոր + վերջավորություն» կաղապարը, ինչպես՝ *գայլ-գայլ-ո-յ ... գայլ-ո-վ ...- գայլ-(ք), գայլ-ո-ց ... գայլ-ո-վ-(ք)*, որը հ.-ե. բնավոր -օ- հոլովման արտահայտություն է: Անվանականում այդ կաղապարը չի պահպանվել (հմմտ. **ul(k-o-s > հյ. գայլ- (ø), *ul(k-ō-s > գայլ-ք)*):

³¹ Դրանք որպես աորիստի ձևեր են ներկայացվում նաև հայերենի համեմատական քերականություններում (Աճառյան 1957, Աճառյան 1959, 359-372, Джаукян 1982, 160-192):

³² Հնդիրանական լեզուներից աուգմենտը աորիստի պարտադիր բաղադրիչ է եղել հին հնդկերենում, սանսկրիտում և հին պարսկերենում, իսկ ավեստայի լեզվում ունեցել է կամընտրական բնույթ (Расторгуева 1978, 50-51, Sokolow 1967, 90-91):

³³ Мейе 1938, 216, Савченко 1974, 276, Барроу 1976, 283, Красухин 2004, 180-181.

³⁴ Հին հնդկերենի բային բնորոշ են, օրինակ, *ներգործական* (ակտիվ / active) և *միջին* (մեդիում / middle voice) սեռերը (Елизаренкова 1982, 271-350):

Легенду о татарском хане и дочери царя Армении, произведшей на свет чудовище, которое в результате крещения превратилось в прекрасного младенца, что побудило хана вместе с народом принять христианство, включили в свое повествование многие европейские хронисты. Сюжет легенды складывается в основном из одних и тех же элементов. Однако в отдельных хрониках и летописях, а также в рыцарском романе «Король Тарса» меняется их соотношение и комбинация. Зачастую происходит приращение к сюжету, как например: взятие Иерусалима татарским ханом, изгнание сарацин из Иерусалима, взятие Алеппо, Дамаска и других городов объединенными войсками татар, царей Армении и Грузии. Основным источником этих привнесений в сюжет служила широко известная история Хетума «LaFlordesestoireshelaTerred'Orient», на которую ссылается и Джованни Виллани, который рекомендует для ознакомления с деяниями монголов прочесть книгу монаха Айтона, написанную им по поручению папы Климента V. Что касается армянского следа этой легенды в европейской историко-литературной традиции, то между сюжетами первой ветви «Давида Сасунского» и циркулируемыми на Западе легендами относительно истории дочери армянского царя, которую выдают замуж за иноверца, обнаруживаются явные параллели. Приведенный же Юрием Веселовским отрывок из армянской народной поэмы под названием «Плач Сусанны», почерпнутый им из изданного Г. Алишаном сборника «Armenian popular songs», полностью согласовывается с первой частью распространенной на Западе легенды.

Ключевые слова – легенда, рыцарский роман, хроника, христианин-нехрист, мотив женитьбы иноверца на христианке, мотив превращения в результате крещения чудовища в прекрасного младенца, Давид Сасунский.

THE ENTRY OF THE ARMENIAN LEGEND IN THE EUROPEAN HISTORICAL-LITERARY TRADITION

Gohar Karagyozyan

Abstract

Many European chroniclers included in their narrations the legend of the Tatar Khan and the Armenian king's daughter, who gave birth to a monster, which, as a result of baptism, turned into a beautiful baby, prompting the Khan and the people to accept Christianity. Mainly the same elements constitute the plot of the legend. However, their correlations and combinations change in individual chronicles and annals, as well as in the chivalric novel "The King of Tars". The narrative is often augmented with supplementary events, such as the capture of Jerusalem by the Tatar Khan, the expulsion of the Saracens from Jerusalem, the capture of Aleppo, Damascus, and other cities by the combined armies of the Tatars, Armenian and Georgian kings. The main source of such additions, brought into the plot, was the well-known history by Hethum "La Flor des estoires de la Terre d'Orient", to which Giovanni Villani refers as well, recommending the book by monk Hayton, written upon the commission of Pope Clement V, to get acquainted with the deeds of the Mongols. As for the Armenian trace of this legend in the European historical-literary tradition, there are obvious parallels between the plots of the first branch of "David of Sassoun" and the legends, concerning the story of the Armenian king's daughter, given in marriage to a non-Christian, which circulated in the West. Veselovsky's excerpt, cited from an Armenian folk poem called "The Lament of Susanna", which he had taken from the collection of "Armenian Popular Songs" published by G. Alishan, is fully consistent with the first part of the legend spread in the West.

Key words – legend, chivalric romance, chronology, non-Christian - Christian, motif of a non-Christian marrying a Christian woman, motif of transforming a monster into a beautiful baby as a result of baptism, David of Sassoun.

ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊՈՐԱՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՈՒՆԵՐ» ՀԵՐՈՍԱՎԵՊԻ ՄՈԿԱՑ ՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ

Աննա Պողոսյան

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ

ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ anna_poghosyan@yahoo.com

Հոդվածը ներկայացվել է 04.01.2022, գրախոսվել է 25.01.2023, ընդունվել է տպագրության 07.08.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.2-151

Ներածություն

«Սասնա ծռեր» հերոսավեպում, կանանց համեմատ, տղամարդկանց կերպարները, հերոսավեպի ժանրային առանձնահատկություններով պայմանավորված, ծանրակշիռ դեր ունեն, քանզի վիպական գործողությունների ընթացքի ու զարգացման ողջ ծանրությունը հիմնականում ընկած է հերոսավեպի արական չորս սերնդի ներկայացուցիչների վրա (Սանասար-Բաղդասար, Մեծ Մհեր, Դավիթ, Փոքր Մհեր): Նրանք իրենց հակոտնյա և հակառակորդ թշնամիների հետ միասին (Բաղդադի Խալիֆա, Մըսրա Մելիք և այլք) վիպական իրադարձությունների գլխավոր կրողներն են:

Այսուհանդերձ, վիպական հիշյալ կերպարների կողքին հերոսավեպում գործողությունների ծավալման ու բախումների մեջ որոշակի, երբեմն վճռական դեր են կատարում նրանց կին զուգորդները, որոնք խտացնում կամ տիպականացնում են հերոսների արարքները, կանխում, մեղմացնում կամ էլ ավելի են սրում կոնֆլիկտային բախումները և, ի վերջո, կարևոր դեր ստանձնում հերոսավեպի վիպական անցուդարձի զարգացման ընթացքում¹:

Նշենք, որ հոդվածում մեր քննության առարկան հիմնականում հերոսավեպի Մոկաց տիպաբանական խմբի պատումներն են, թեև նկատի ենք ունեցել նաև մյուս (Սասուն և Մուշ) ազգագավառներից գրանցվածները:

Կերպարների դասակարգման սկզբունքները

«Սասնա ծռեր»-ում կանանց կերպարները, ըստ հարազատության աստիճանի, բաժանվում են երկու հիմնախմբի՝ *յուրային* և *օտար*: Ընդ որում, յուրային կերպարների մեծ մասը նախկինում եղել է օտար և մի շարք փոր-

¹ Հայ էպոսագիտության մեջ «Սասնա ծռեր» հերոսավեպի գլխավոր հերոսների և նրանց կին զուգորդների առապելաբանական և պատմական նախատիպերի ուսումնասիրություններին անդրադարձել են բազմաթիվ բանասեր-բանագետներ (այս մասին նշում է նաև Ն. Հակոբյանը, տե՛ս Հակոբյան 1983, 6), ինչպես Մ. Աբեղյանը, Հ. Օրբելին, Ս. Հարությունյանը, Ա. Պետրոսյանը, Տ. Դավթյանը և այլք:

ծոյություններից հետո, հարսնանալով Սասնա հերոսներին ու մայրանալով, դառնում են յուրային և իրենց ողջ էությանը վերածվում յուրային հերոսին համարժեք կերպարի (Դեղձուն Ծամ, Արմաղան, Խանդույթ, Գոհար): Հերոսավեպում ամենահարազատը նախամայր Ծովինարի կերպարն է, որը բնիկ է:

Հարազատության առումով ուսումնասիրված կին կերպարների ներկայացուցիչները՝ Սասնա հերոսների կանայք՝ Սանասարի կին Դեղձուն Ծամը, Մեծ Միերի կին Արմաղանը, Դավթի կին Խանդույթը և Փոքր Միերի կին Գոհար խաթունը, օժտված լինելով բնավորության յուրահատուկ գծերով, ունեն նաև բոլորի համար ընդհանուր հատկանիշներ՝ անհուն սեր ու նվիրվածություն ամուսիններին, անկեղծ նվիրում Սասնա հերոսական տանը և տոհմին, ունեն բարոյական բարձր հատկանիշներ. հայրենասեր են, անվերապահորեն նախանձախնդիր են ընտանեկան սրբությունների նկատմամբ: Հոժարակամ ամուսնանալով Սասնա տան հերոսների հետ՝ դառնում են հարազատ ու յուրային:

Կին-տղամարդ հարաբերություններում առաջանում են մի շարք կոնֆլիկտային իրավիճակներ, որոնց մեծ մասը լուծվում կամ չեզոքանում է փոխզիջման կամ փոխհամաձայնության շնորհիվ: Սակայն հակամարտությունների մի մասը բնավ չի լուծվում համաձայնությամբ և վիպական հերոսի համար դառնում է ճակատագրական: Նման իրադրություններ են առաջանում Ձենով Հովհանի կին Սառյեի և Դավթի (կամ Միերի) միջև ծագած կոնֆլիկտային հարաբերությունների պատճառով, երբ հորեղբոր կինը, սեռական հակումներ դրսևորելով ամուսնու հարազատի նկատմամբ, մերժվում է, ուստի զրպարտում է նրան և պատճառ դառնում հերոսի (Դավթի, որոշ տարբերակներում էլ՝ Միերի)՝ Սասնա տնից ընդմիշտ վտարվելու: Նմանատիպ կոնֆլիկտային հարաբերություններ են դրսևորվում նաև Դավթի ու Չմշկիկ սուլթանի, ապա՝ Դավթի և իր աղջկա միջև:

Ուշադրության են արժանի նաև «Սասնա ծռեր»-ի միայն այն կանանց կերպարները², որոնք վճռական դեր ունեն հերոսավեպում և հանդես են գալիս գրեթե բոլոր տիպաբանական խմբերում³:

² «Սասնա ծռեր» հերոսավեպում վիպական հերոսների կանանց բնավորության, ամուսնության և մի շարք փորձություններ հաղթահարելու, հարսնանալու և մայրանալու հատկանիշների նմանություններն ու ընդհանրությունները հաշվի առնելով՝ հոդվածում զույգերով են քննության ենթարկվում Դեղձուն Ծամի և Արմաղանի, Խանդույթի և Գոհարի կերպարները: Նույնը կարող ենք ասել նաև վիպական հերոսների կյանքում վճռորոշ, բայց և բացասական դերակատարություն ունեցող օտար կանանց կերպարների՝ Սառյեի, Չմշկիկ Սուլթանի և Դավթի աղջկա մասին: Հետաքրքրական են երկվական կին կերպարները՝ Արտատեր Պառավն ու Իսմիլ Խաթունը, որոնց կերպարների քննությունը կատարվում է առանձին ենթաբաժնով:

³ «Սասնա ծռեր»-ում հիշատակվում են, օրինակ՝ «ազապ» աղջիկներ, որոնք Դավթի հետ կերուխում են անում, յոթ ազապ աղջիկներ, որոնք ճանճ են քշում, որպեսզի Մելիքի քունը չխանգարվի, իսկ յոթն էլ ոտքերն են «մածում», Կոզբաղնին ծաղրող կանայք, Իսմիլ Խաթունին ծառայող վարձկան կանայք կամ աղջիկներ, որ շեղեն Մելիքի հետ մենամարտող Դավթի ուշադրությունը, գուսան կանայք, որոնք հանդես են գալիս տարբեր առիթներով, ինչպես գրում է Վ. Եղիազարյանը՝ «որպես Դավթին

Նախամայր Ծովինար

Սասնա կամ «Ջոջանց» տան հիմնադիր Եղբայրների հրաշալի ծնունդը նախ և առաջ կապվում է Ծովինարի⁴ հետ (Ծովյալ կամ Ծովինար խանում, «Ծովի հարս», Ծովանուշ⁵), որով և հերոսավեպում Ծովինարը ձեռք է բերում նախամոր հատկանիշներ:

Ծովինարը հայոց խաչապաշտ թագավորական գերդաստանից է: Թագավորական կամ ընտիր ծագումը, ըստ վիպասացի, իմաստավորվում է խաչապաշտ լինելու հանգամանքով, որոնք հերոսավեպում ինչ-որ տեղ հոմանիշային արժեք են ձեռք բերում: Խաչապաշտ ծագումն ու դաստիարակությունն էլ⁶ աղջկան առաջնորդում են հերոսական հատկանիշներ ձեռք բերելու:

Խաչապաշտ գերդաստանին պատկանող աղջիկը նաև լուսատեսիլ ու անկողնատեղի գեղեցկության տեր էր, որը ճանաչվում էր տեսնողների՝ անգամ, կռապաշտ խալիֆի հարկահավաքների կողմից. «*Խաչապաշտ թագավորու աղջրկ տիսանք, / Վուր գիշեր, ցերեկ չուրի՛ս, չխմի՛ս, / Համա անհու ջիպ ու ջամալ թամաշա ենիս*⁷»:

Գլխավոր կոնֆլիկտը, որը նախ ծագում է կռապաշտ Բաղդադի խալիֆի և հայոց խաչապաշտ թագավորի միջև, վիպական իրադարձություններին համընթաց մեղմվում է կամ սրվում, թուլանում կամ լարվում, բայց ի վերջո լուծվում է. կանխվում է սպասվող լուրջ բախումը, երբ կռապաշտ թագավորը բռնությամբ ցանկանում է կնության առնել խաչապաշտ երկրի կամ թագավորի աղջկան, հակառակ դեպքում նա սպառնում է ավերել երկիրն ու կոտորել ժողովրդին: Այս պահանջը լուծվում է աղջկա՝ ամուսնությունն ընդունելու անձնագրողությամբ. «*Վուր չերթա՛մ, / Իմ խոր երկրը քնր քնողըն, ավագ տը մաղըն. / Իս մեկ ջան իմ, երթամ կուրսվիմ, աղեկ ի, / Քննց իմ խոր երկրը ավիրի*⁸»:

Սակայն այստեղ էլ առաջանում է մեկ այլ՝ աղջկան իր հավատքին պահելու խնդիրը (տարբեր պատումներում սա իրացվում է տարբեր կերպ), որը ևս լուծվում է նրա հետ «*խրապոիչ ոք*⁹»՝ քահանա կամ վարդապետ դնելով:

կողմնորոշողներ» (Եղիազարյան 2012, 200) և այլն: Այս կերպարները, թեպետ հերոսավեպում դրվագայնորեն են երևան գալիս, բայց և այնպես առնչվում են հերոսների հետ. այս առումով կարևոր դերակատարում ունեն, սակայն այսքանով սահմանափակվում է նրանց դերը:

⁴ «Ծովյան» բառի մասին տե՛ս Աբեղյան 1966, 415, Պետրոսյան 1997, 14:

⁵ Ծովինար անվան ստուգաբանության մասին տե՛ս Իսահակյան 1939, 29, Դալայան 2008, 29-30, Դալայան 2002, 193-213:

⁶ Պատումներից մեկում աղջիկը նույնիսկ անտեղյակ է աշխարհից և երբ հորը խնդրում է հասակակից աղջիկների հետ դուրս գալ աշխարհը տեսնելու, հոգնում է և ցանկանում ջուր խմել, երբ խմում է մեկ ու կես բուռ ջուր, և աղբյուրը ցամաքում է, աղջիկը լալով վայ է տալիս իրեն, թե ինչ մեղավոր է ինքը: Սա վկայում է, որ նա դաստիարակվել կամ մեծացել էր աշխարհից (մեղքից) կտրված, անտեղյակ կամ միամիտ:

⁷ Սասնա ծռեր 1936, 308:

⁸ Սասնա ծռեր 1936, 309:

⁹ Աբեղյան 1966, 445:

Աղջկա որոշակի գործողությունների ընտրությամբ է պայմանավորվում այն գերբնական կամ հրաշալի արդյունքը, անարատ հղիությունը, ինչպես նաև որդիների հրաշալի ծնունդը, որով հատկանշվում և առանձնանում է նրա կերպարը՝ դառնալով հերոսական:

Գործողությունների այդ շղթան հերոսավեպի Մոկաց խմբի գրեթե բոլոր պատումներում հստակ արտահայտված կրոնական բնույթ¹⁰ ունի՝ հետևյալ մոտիվաշարերով. հոգևորականներ (տերտեր կամ վարդապետ) են աղջկա հետ դնում իբրև ուղղորդողներ, աղջիկը նրանց հետ աղոթում է կամ ուխտի է գնում, նա ամուսնուն խնդրում է քառասուն օր չմոտենալ իրեն, հոգևորականի օրհնած կամ ձիու սմբակի առաջացած փոսից ջուր է խմում, ի վերջո, անարատ կերպով հղիանում և ծնում է երկվորյակ եղբայրներին¹¹: Աղջիկը դիմում է նաև խորագիտության, երբ համոզում է խալիֆին, թե դու շատ զորեղ ես, «*Խոսացիր, քի բերնի հելըմ առա*¹²» և դրանից «հղիացա», որից խալիֆի հպարտությունը շոյվում է, և դարձյալ կանխվում է բախումը¹³:

Աղջիկը թագավորին խնդրում է, որ հավաքի իր բոլոր կանանց՝ «*Երթանք դաշտ, քեֆ-սեյրան անինք: / Թագավորը անցկուն երալ: / Խըլուսուն ելան, թագավորու աղջըկ / Յեռսուն ինը կնկնով ու վարդապիտով գացըն դաշտ*¹⁴»:

Թվում է, թե աղջիկը համակերպվել է իր հետ պատահածին և թագավոր ամուսնուց խնդրում է քեֆ-ուրախություն կազմակերպել, սակայն մի փոքր հետո բացահայտվում է նրա ներքին ողբերգությունը. «*Թագավորու աղջըկ կնկտիրուն եսաց. / – Գացե՛ք, ծի խամա քեֆ երեք: / Են ու վարդապիտ գացըն՝ն, Ծովու պռուկ նստան ու լացըն՝ն*¹⁵»:

Աղջկա ողբերգությունն արտահայտող լացը նախ և առաջ սրտաբուխ աղոթք էր՝ իր դավանանքն անաղարտ պահելու համար: Նա չէր ուզում կենակցել իր համար օտար, կռապաշտ թագավորի հետ, թեպետ կարող էր (ըստ այլ տարբերակների) և համակերպվել, մանավանդ որ կռապաշտ թագավորը ոչ միայն հիացած էր նրա գեղեցկությամբ, այլև կատարում էր աղջկա դիմում-խնդրանքները: Հետևաբար բարոյական գերագույն նպատակը, որը դրված է Ծովինարի կերպարի մեջ, ոչ մի գնով չի խաթարվում՝ աստվածային ողորմությամբ:

Անձնագրի լինել, միևնույն ժամանակ մնալ անարատ, չկենակցել կռապաշտ թագավորի հետ, բայց ի՞նչպես էր դա հնարավոր. հերոսավեպում

¹⁰ Կրոնական թեման հատկապես բնորոշ է Մոկաց խմբի պատումներին, որը բանագետ-գրականագետ Հ. Համբարձումյանը համարում է «*համակարգային յուրահատկության արդյունք*», տե՛ս Համբարձումյան 2018, 155:

¹¹ Այս կայուն մոտիվաշարերի մասին մանրամասն տե՛ս Համբարձումյան 2018, 149-156:

¹² Սասնա ծռեր 1936, 129:

¹³ Ծովինարի արած այս արտահայտության մեջ Հ. Համբարձումյանը կատակային երանգ է տեսնում, Համբարձումյան 2018, 155:

¹⁴ Սասնա ծռեր 1936, 309-310:

¹⁵ Սասնա ծռեր 1936, 310:

առհասարակ վիպասացը «*տալիս է գործողության զարգացումը, որով և որի մեջ պարզվում է Վեպի գաղափարախոսությունը*¹⁶», նա ինքնաբերական կերպով, միևնույն ժամանակ անվերապահորեն հավատում է, որ աղջկա անկեղծ լացն ու աղոթքը, ուխտը և խնդրանքը կամ հոգևորականի օրհնած ջրից խմելը աղջկա անլուծելի խնդրի լուծումն են, և այդպես էլ լինում է. «*Աստուծո՛ւ հրամանով ծով բացվից, մե՛ խամ քնոր իրե՛. / Բո՛ւտ տվից, մե՛ քնոր խմից, / Մեկե՛լ բո՛ւտ կիսապ, իրե՛ տուն*¹⁷»: Կամ՝ երբ տարբերակներից մեկում ասվում է. «*Հագմագա աղբուր ըմ բացվավ. / Թագնվուրու աղջրկ կուց եզար հեղա աղբուր՝ մեջ, / Մեկ լիք խմավ, մեկ՝ կիսապ*» ապա՝ «*Հաղբուր ցամքավ. հանտից դարձան, եկը՛ն*¹⁸»: Հագմագա (ակամա) նշանակում է հանկարծ և դարձյալ ցույց տալիս է, որ անսպասելի, մեկ ուրիշ կամքով է աղբուրը գոյանում, այսինքն՝ հրաշք է տեղի ունենում:

Ծովինարի կերպարի մեջ անարատ հղիացման սյուժեն կապվում է վիպասացի մեջ անթեղված՝ Աստվածածնի բաղձալի կերպարի նմանության հետ¹⁹: Այս առումով ուշագրավ է Տ. Դալայանի համեմատությունը միջնադարյան բանաստեղծ և տիեզերական վարդապետ հռչակված Գ. Նարեկացու տաղի մեջ Աստվածամոր՝ «*Եղեգնյա սափորի*» նմանվող կերպարի, ապա նաև միջնադարյան հայրեններից մեկում հանդիպող ծովաչյա կնոջ հետ²⁰: Թեպետ վիպասացի համար ոգեշնչողը Աստվածամայրն է, բայց միևնույն ժամանակ նա անգերազանցելի սրբություն է, ուստի հերոսավեպում Ծովինարի անարատ հղիությունը սյուժետային այլ լուծում ունի:

Վիպասացը ցույց է տալիս, որ Ծովինարի այս հրաշալի հատկանիշը եզակի չէ, այսինքն՝ պատահական ինչ-որ դիպված չէր աղջկա հետ կատարվածը, այլ Սասնա տան բոլոր գլխավոր կերպարները Ծովինարի օրինակը (նույնիսկ նրա խրատով. հիշենք, որ երկվորյակները մոր խորհրդով են մերժում կռապաշտությունը) աչքի առաջ ունենալով՝ ձեռք են բերում հերոսական շատ այլ հատկանիշներ. այդ օրինակը Աստվածային զորությանն ապավինելն էր՝ հավատքով և երկյուղով (հերոսավեպի տեքստն այդ մասին է պատմում), որը միտված էր ամեն գնով պահպանելու իրենց ժառանգաբար փոխանցված խաչապաշտությունը: Ծովինարի կերպարի հիմնական շեշտադրումները հերոսավեպի տարածքային տարբերակներում գեղարվեստական այս կամ այն լուծումներով են հանդես գալիս:

¹⁶ Աբեղյան 1966, 475:

¹⁷ Սասնա ծռեր 1936, 128:

¹⁸ Սասնա ծռեր 1936, 310:

¹⁹ Ըստ հերոսավեպի վիպասացների կենսագրական տվյալների՝ նրանք բարեպաշտ քրիստոնյաներ են եղել:

²⁰ Դալայան 2008, 28:

Դեղձուն Ծամ և Արմաղան

Դեղձուն Ծամը (կամ Քառասուն Ճյուղ Ծամ)²¹ հերոսավեպի Մոկաց պատումներում հանդիպում է տարբեր անուններով, հաճախ առանց անունի՝ հիշատակվելով Պղնձե քաղաքի թագավորի աղջիկ²² կամ՝ թագավորի աղջիկ, երբեմն էլ՝ Սպիտակ ամրոցի աղջիկ:

Դեղձուն Ծամի ու Սանասարի սիրո և ամուսնության պատմությունը քնարական երանգ ունի, ընդ որում, Ա. Սահակյանը²³, ինչպես նաև Հ. Համբարձումյանը դրա մեջ իրավացիորեն նկատում են առասպելական և դուցազնական հեքիաթին բնորոշ հետքեր, որոնք «...երանգավորվում են պատմական որոշակիությամբ, կապվում պատմական տեղավայրերի հետ²⁴»:

Աղջկա կերպարը հերոսավեպում գծագրվում է Սանասարին ուղարկած իր նամակի մեջ²⁵. «Յես Պղնձե քաղաքի թագավորի աղջիկն իմ. / Իմ սըրդը քանց եսա՝ դարդարկ կուժ սարսուփ ա. / Իմ գլոխ քանց եսա՝ լիք կուժ լիքն ի. / Աստծու շնորքով լցուկ իմ: / Քառասուն տեղե քառասուն մարդ ի եկած իմ վրբեն ուզիու. / Յես խոսք չըմ տվի: / Երազով զքի տըսիր իմ, արի՛, ընձի ա՛ռ²⁶»:

Այս կերպարի մեջ Հ. Օրբելին ցույց է տալիս մայրիշխանության ժամանակների տան տիրուհու մի շարք գծեր²⁷:

Դեղձուն Ծամը ամուսնու՝ Սանասարի մահից հետո բազմաթիվ կամավոր ինքնաբանտարկումների, զոհողությունների է դիմում՝ դրսևորելով իր անհուն նվիրումն ու հավատարմությունը սիրելիին: Նա մխիթարվում է այն ժամանակ միայն, երբ տեսնում է Սանասարի ժառանգական շարունակության լավագույն գծերը թողան՝ Դավթի մեջ:

Երբ Դավիթը նախապատրաստվում էր կռվի, հանդերձավորումից հետո «...Դավիթ սազ ելուու ծեծել²⁸», և սազի ձայնը հասնում է Մամի²⁹ ականջին. «Մամիկն ըսաց. «Իլիմ դիւս, / Ես վա՛նկ ի՛ կ'երթա կռիվ³⁰»: Մամի ուխտը կատարվում է. դուրս է գալիս և պատուհանից տեսնում է իր փափագը՝ «Մեերի տեղն» կռիվ գնացող «նորամանուկ»-ին: Հուզախառն աղաչանք է անում Մեերի ձիուն՝ Մուրատին, որ նորամանուկ Դավթին անպատրաստ չտանի դաշտ՝

²¹ Դեղձուն Ծամի (կամ Քառասուն Ճյուղ Ծամի) կերպարը ևս աչքի է ընկնում իր առասպելական հնության: Մ. Աբեղյանը Պղնձե քաղաքի թագավորի աղջկա կերպարում տեսնում է «սերբանդ հավթի» կերպարափոխության մոտիվը (հմմտ. Աբեղյան 1966, 416):

²² Սասնա ծռեր 1936, 142:

²³ Սահակյան 1975, 102:

²⁴ Համբարձումյան 2018, 159:

²⁵ Սասնա ծռեր 1936, 143:

²⁶ Սասնա ծռեր 1936, 143:

²⁷ Օրբելի 1956, 20:

²⁸ Սասնա ծռեր 1936, 743-744, տարբերակ՝ «Տավիթ ելավ, սազ իլուու զարկել», Սասնա ծռեր 1936, 775:

²⁹ Ըստ մեկ այլ մոկաց տարբերակի (ԺԶ) վիպասաց Ռաշոյի՝ Դավթի «Խորքուր» (տե՛ս Սասնա ծռեր 1936, 775):

³⁰ Սասնա ծռեր 1936, 743:

«Ըսաց. –Մուրա՛ր, քեզնից կը խնդրվեմ, / Դու իմ նորմանուկ խոր խենքելա-
վերդ վեր դնես: / Խոր ջեռքեքնըր շանք տաս³¹»:

Այստեղ ուշագրավ են սգավոր Մամիկի «խալավքները» (զգեստը), այն-
քան «փչացեր» էր, որ երբ վեր է ելնում շորերը պոկվում-թափվում են հնույթ-
յունից: Ինչը մի կողմից վկայում է, Դեղձուն Ծամի՝ երկար ժամանակով
ուխտի մեջ փակված լինելու, մյուս կողմից էլ՝ հերոսի (Դավթի) հետ նախնի-
ների կապի մասին:

Հերոսավեպում նույն քնարական գիծը շարունակվում է Արմաղանի ու
Մհերի սիրո և ամուսնության պատմության մեջ:

Ամրոցում գերության մեջ պահվող արքայադուստր Արմաղանին Մեծ
Մհերն ազատում է՝ սպանելով դեհն և ամուսնանալով նրա հետ: Երբ որոշ
ժամանակ անց Իսմիլ խաթունը Մհերին հրավիրում է Մըսր, կինն ընդդի-
մանում է, սակայն Մհերը չի լսում նրան, ընդունում է օտար թագուհու հրա-
վերդ: Եվ Արմաղանը երդվում է քառասուն տարի հրաժարվել ամուսնական
կյանքից, բայց երբ Մհերը վերադառնում է տուն, Արմաղանի կանացի ինքնա-
սիրությունը տեղի է տալիս հայրենի երկրին ու տոհմին նեցուկ, հզոր ժառանգ
ունենալու՝ սեփական հանրույթի հոգեբանությամբ:

Նա անգամ երդմնազանցության (անեծքային անխուսափելի պատժի
ենթարկվելու) սպառնալիքն արհամարհելով՝ անձնականը ստորադասում է
ազգային – հասարակական շահերին, որով այս կերպարը ձեռք է բերում որո-
շակի մոնումենտալություն, մանավանդ որ ժառանգ ունենալուց հետո ինքն ու
ամուսինն անմիջապես մահանում են և անմահության հետք թողնում
տոհմակիցների հիշողության մեջ:

Խանդութ և Գոհար

Դեղձուն Ծամի ու Սանասարի, Խանդութի ու Դավթի ամուսնությունները
նույն վիպական սյուժեով են կապվում: Նշենք, որ Խանդութի և Դավթի սի-
րային պատմության ընդհանուր վիպական գծեր կան նաև ուրիշ ազգերի
էպոսներում:

Խանդութը թե՛ «խորոտ էր», թե՛ քաջ, «...նա կապվում է Դավթի հետ
անձնուրաց սիրով, և նրա պես դառնում հայրենի հարազատ զավակը, սի-
րելով-յերբ հարկավոր ե սիրել, ատելով-յերբ հարկավոր ե ատել...³²», - գրում
է Ա. Տերտերյանը: Խանդութը չի մնում իր հայրական տանը, նա Դավթի հետ
ճանապարհ է ընկնում դեպի Սասուն:

Հերոսական ուժեղ գծերով օժտված Խանդութը սիրող, հավատարիմ կին
է. «...նա իր սիրո մեջ վերին աստիճանի կանացիական ե,... և տղամարդու

³¹ Սասնա ծռեր 1936, 774:

³² Տերտերյան 1939, XV:

մեջ ինքնալրացում փնտռող³³»։ Կոնֆլիկտը Խանդութի և Դավթի միջև լուծվում է՝ տեղի տալով խորը սիրո զգացմունքին, որը հերոսավեպում արտահայտված է բանաստեղծական երևակայությամբ, երբ Խանդութն «առնում» է խոռված Դավթի սիրտը. «*Խանդութ խաթուն կը գնի, / Դավիթը՝ ձեռներն կը բռնը. / Հնդից կը քեշի, վուր տա՛նը հուր ողեն։ / Դավիթ ըռըկիր ի, չե՛րթա։ / ...Կ՛ըսի. – Դավիթ, վրե՛ չըս ի՛գնի։ / Կ՛ըսի. – Չըմ ի՛գնի. իս տը կանգնիմ, / Իմ ձին խիծնիմ, երթամ իմ տուն...*»³⁴։ Առհասարակ, հակամարտությունը Սասնա հարսների ու իրենց ամուսինների միջև ունի ժամանակավոր բնույթ, չի վերածվում անլուծելի հակասության, լուծվում է փոխհամաձայնությամբ, բարեկամաբար և բարյացակամությամբ. «...Դավիթ վար ձիուն հա՛ կը գնի, հա՛ ականջ կ՛ենի։ / Կ՛ըրիշկի՛ մեկ ձեն կը գնի, հա՛ կը բռնա. / –Դավիթ, Դավիթ, կանգնը՛. / Կանգնը՛, չոր իս իգնի՛մ։ / Դավիթ ձիու վիրիվեն՛ / Սկնա դառնա, կ՛ըրիշկի, / Կը՛ տիսնա՛ Խանդութ խաթուն / Բիբիկ հիտեվն կը վազնը։ – / ...Վուր հըմեն ըլիր ի երուն, / Վուր վորտեղ դնի, վուրաց տեղ լիք երուն կ՛ընը։ – / Վուր Դավիթ կը տիսնի, կը դառնա վերա...»³⁵։

Դավթի մահից կամ սպանությունից հետո Խանդութը կյանքը չէր պատկերացնում առանց ամուսնու՝ «*Հիտիվ Դավթին, իս ախշար չմնար*»³⁶, *Չինք վնր ուր գլխուն տփից վնր քնրուն...*»³⁷։

Հերոսավեպում Գոհարի և Փոքր Միերի ամուսնական միությունը նույնպես սիրով է կատարվում։ Գոհարը բնավորության գծերով նման է թե՛ Դեղձուն Ծամին, թե՛ Արմաղանին ու Խանդութին։ Նա էլ օտար երկրի թագավորական տան ծագում ունի։ Ինքն է ընտրում իր փեսացուին, ծալված մենամարտում է ապագա ամուսնու հետ, համոզվում է իր ընտրության մեջ, որ գործ ունի հերոսի հետ, հետո միայն հնազանդվում է նրան։ Գոհարն էլ երկար փորձություններ հաղթահարելով և հարսնանալով՝ դառնում է Սասնա տան վերջին հերոսական սերնդի՝ Փոքր Միերի կինը, յուրային հերոսուհի, որն ամեն ինչի պատրաստ է հանուն իր ամուսնու։

Միերի և Աստղու Յոլածնի մենամարտի ժամանակ բացահայտվում է Գոհար խաթունի անմնացորդ նվիրումն ու սերն իր ամուսնու նկատմամբ. երբ վերջինիս տեսնում է վտանգի մեջ, Գոհարը ինքնամոռաց ճչում է՝ «*Ա՛ստղո՛ւ Յոլածին, իմ Միերին մը զարգի, Ինչ որ գ՛ուզիս, տամ քըզի... / Իմ կյանք գ՛ուզի՛ս, տամ քըզի*»³⁸։

³³ Տերտերյան 1939, XIV–XV:

³⁴ Սասնա ծռեր 1936, 452:

³⁵ Սասնա ծռեր 1936, 453:

³⁶ Սասնա ծռեր 1936, 227:

³⁷ Սասնա ծռեր 1936, 227:

³⁸ Սասնա ծռեր 1944, 347:

Գոհարի վճիռը որքան հանկարծակի, նույնքան էլ հաստատական էր: Նա կրկին ուժգնորեն խնդրում է. «–Աստղ՛ւ Յոլածին, իմ Միերին մը զանգի, / Ինչ որ գ'ուզիս, տամ քըզի: / – Աստղի'կ Յոլածի'ն, – ըսավ, / – Իմ շահ-բալաբան Միերին խնայե՛ ... Ի՛նչ գուզիս՝ կիդամ³⁹»:

Այս և ուրիշ գեղարվեստական դրվագներում էլ բացահայտվում են հերոսուհու բնավորության վեհ դրսևորումները: Գոհարը շարունակ սպասում է Միերին՝ աչքը պատուհանին (փանջարին), և վերագտնում է իրեն միայն այն ժամանակ, երբ տեսնում է, որ ամուսինը «սաղ-սալամաթ» տուն է վերադարձել. «–Միե՛ր, դու բարո՛վ, հազա՛ր բարին: / Յես չա՛վդընենք՝ իմ յաշք քիսներ քըզի. / Չե՛, որ սաղ-սալամաթ քըզի տեսա, / Ինչ գ'ուզի, թըխ եղնի: / Միեր ու Գոհար իրար տեսան⁴⁰»:

Խանդութ խաթունն իրեն աշտարակից ցած է նետում սպանված սիրեցյալ ամուսնու կսկծից, որովհետև Դավթից հետո այլևս անելիք չունենալուց, Գոհարը մեռնում է դարձյալ սիրուց՝ Միերին չտեսնելու կարոտախտից: Ժողովուրդը իր հերոսներին պատկերել է կատարյալ նվիրումով, գեղեցիկ սիրով⁴¹: Ահա այդպես գեղեցիկ սիրում և նույնքան էլ գեղեցիկ մեռնում է հավերժական նվիրումով, խորը սիրով լի Գոհարը:

Միերը բազում պատերազմներից հետո տուն է վերադառնում և Գոհարին մեռած է գտնում. «...Թղթիկ մը գրեր դրեր էր դռնին. / «Միեր քո սիրուց մեռա, / Ընձի կխորես քո մոր կուշտ⁴²»:

Արտատեր Պառավ

«Սասնա ծռեր» հերոսավեպի յուրային կանանց կերպարների հիմնախմբի մեջ է Արտատեր Պառավի կամ ուղղակի Պառավի կերպարը (որը կորեկի դաշտ ունի)՝ իբրև որբեկայրի սասունցի հարս⁴³, որ նվիրված է հայրենի հողին, Սասնա հերոսական տոհմին և մանավանդ՝ որբ Դավթին:

Անձնանուն չունեցող Պառավի կամ տարեց կնոջ (այն է՝ իմաստուն, փորձառու⁴⁴) այս կերպարը⁴⁵ հանդիպում է թե՛ հայ և թե՛ բազմաթիվ այլ

³⁹ Սասնա ծռեր 1979, 241:

⁴⁰ Սասնա ծռեր 1944, 344:

⁴¹ Ժողովուրդը թերևս ամենակատարյալը համարել է Դավթի և Խանդութի սերը. «Խանդութ ու Դավթը քաղցր են, քանց թե Գոհար ու Միեր», պատմելիս ավելացրել է ալաշկերտցի վիպասաց Մանուկ Թորոյանը (Սասնա ծռեր 1944, 343):

⁴² Սասնա ծռեր 2000, 56:

⁴³ Ըստ մոկացի վիպասաց Խապոյենց Զատիկի վկայության՝ «այս պառավը Միերի՝ Դավթի հոր սիրելիանն էր յեղել» (հմմտ. Սասնա ծռեր 1936, 70):

⁴⁴ Հերոսավեպի տարբերակներում գործածվում են թե՛ մայր (բարբառային տարբերակով՝ մեր, մերա, մարե, մամե) և թե՛ նանի հոմանշային ձևերը:

⁴⁵ «Սասնա ծռեր» հերոսավեպում պառավի կերպարի մասին տե՛ս Օրբելի 1956, 26, Գալստյան 2004, 113-117, Համբարձումյան 2018, 45-52, Եղիազարյան 2012, 206, Ղարիբյան 2012, 170-178:

ժողովուրդների բանահյուսական ավանդույթներում⁴⁶ մի կողմից, հանդես է գալիս իբրև խորհրդատու գործառնություն, իսկ մյուս կողմից էլ դրսևորվում է նրա երկվական՝ բացասական, վրիժառու գործառնությունը (դա մանրակրկիտ քննել է Հ. Համբարձումյանը)⁴⁷:

Հ. Օրբելին այս կերպարի հիմքում բացորոշ տեսնում էր բազմաթիվ ժողովուրդների մոտ ընդունելի մայր-կնոջ գործառնությունը⁴⁸: Իսկ Մ. Գալստյանը բանահյուսական կայուն կերպարների շարքին դասվող Պառավի կերպարի բացահայտման գործում ուսումնասիրել է «Սասնա ծռեր» հերոսավեպի տարբերակներում հանդես եկող կորեկամշակ-շաղգամամշակ Պառավին ոչ պատահականորեն. քանի որ այս դիտանկյունից դրա քննությունը ներառում է «Սասնա ծռերում» Պառավի կերպարի հիմնական գործառնությունը՝ միջնորդությունը, նվիրագործության իրականացումը:

Նա նաև մայրական խրատներ, ցուցումներ է տալիս Դավթին, թե ինչպես պետք է գործել, բացահայտում է գաղտնիքներ՝ մատնանշելով Մհերի ժառանգության իրավունքը և այս ամենն անում է Մհերի՝ «Քիւ խոր խաթըր՝ խամար»⁴⁹», մի խոսքով, «...հըմեն ճանքախ շանք»⁵⁰ է տալիս, ապա խրատում, թե ինչպես խուսափել հորեղբոր կնոջ՝ Սաղեի հետապնդումներից, կամ ում ընտրել իբրև կին՝ «-Դավիթ, էսաց, քի գորայի կտորը կնիկ՝ Խանդուխ խաթուն ի. / -Մարե՛, վորտե՛ղն ի Խանդուխ խաթուն, իս չըմ գի՛տի: / -Կո՛, Խոյա քնդաք, Իրանա խուղը մե՛ջ: / Էնա քննց զքի կտորի՛ճ ի, քննց քի խորոտ ի»⁵¹:

Բացի վերը բերվածից, Պառավը հաճախ անիծում է Դավթին. դա ևս չի վրիպել հետազոտողների ուշադրությունից: Քանի որ Դավթի ճյուղում պառավի հիմնական գործառնություններից են համարվում օրենքն հսկելն ու օրինականությունը պահպանելը կամ հերոսին օրինապահության մեջ վարժեցնելը. այս հանգամանքը ևս նկատվում է որպես հոգատարության դրսևորում:

⁴⁶ Բանագիտական գրականության մեջ մանրակրկիտ ուսումնասիրվել են Պառավի կերպարի առասպելական և դիցաբանական պատկերացումներն ու ընկալումները: Իբրև բանահյուսական հարուստ շերտեր ունեցող կերպար՝ այն քննել են նաև ռուս բանագետներ Վ. Պրոպը, Ն. Նովիկովը (Проп В 1976, 64, Новиков 1975, 224): Հայ բանագիտության մեջ բանագիտական և առասպելաբանական քննություններ կատարել են Հ. Օրբելին (Օրբելի 1956, 123-124), որոշ չափով՝ Մ. Աբեղյանը (Աբեղյան 1985, 61), Հ. Համբարձումյանը (Համբարձումյան 2018, 122-123, 166-170), նաև Ղարիբյանը (Ղարիբյան 2012, 217-222):

⁴⁷ Համբարձումյան 2018, 122-123, 166-170:

⁴⁸ «...Հունական Դեմետրեի, այսինքն՝ մայր-հողի գծերը, հնադարյան գերմանացիների Էրդայի՝ Վոթանի սիրածի բնավորության գծերը նշմարվում են սասունցի պառավի մոտ, և գուցե պատահական չէ, որ հատկապես նրա մոտ է ընդգծված հոգատարությունը վարուցանքի նկատմամբ, հմմտ. Սասունցի Դավիթ 1961, LV:

⁴⁹ Սասնա ծռեր 1936, 439:

⁵⁰ Սասնա ծռեր 1936, 439:

⁵¹ Սասնա ծռեր 1936, 446:

Օտար կամ այլազգի կանայք. Սառյե և Չմշկիկ Սուլթան

Կին հերոսների հաջորդ հիմնախումբը *օտար կամ այլազգի* այն կանայք են, որոնք սկզբում բացասաբար, իսկ հետո նաև թշնամաբար են տրամադրվում Սասնա հերոսների՝ Դավթի կամ (որոշ պատումներում) Մհերի նկատմամբ: Դրանք են Սառյեն և Չմշկիկ Սուլթանը:

Դավթի կամ Մհերի ու Ձենով Հովհանի կնոջ՝ Սառյեի միջև ծագած հակասությունը հիշեցնում է Սուրբ Գրքում Հովսեփ Գեղեցիկի և Մետափրեսի կնոջ պատմությունը⁵²: Հորեղբոր կինը՝ Սառյեն, սոսկ իր մարմնական կրքերից դրդված, փորձում է զանազան խարդավանքներով գայթակղել Դավթին, թեպետ հերոսը խուսափում է հորեղբոր կնոջ խարդավանքներից, սակայն վտարվում է տնից՝ Սառյեի զրպարտանքի պատճառով:

Դավթի և Չմշկիկ Սուլթանի միջև ծագած հակասությունը սկսվում է այն ժամանակ, երբ Դավթը հետ է տալիս Չմշկիկի նշանը և ամուսնանում Խանդութի հետ: Չմշկիկը, վիրավորված Դավթի անհավատարմությունից, քենով է լցվում և սպանում է հերոսին. որոշ պատումներում էլ մոր ոխը փոխանցվում է աղջկան, և աղջիկն է սպանում հորը:

Դավթի աղջիկը

Հերոսավեպի յուրային և օտար հերոսուհիների մեջ առանձնանում է Դավթի աղջկա կերպարը: Նա վիպական գործողությունների ընթացքում հանդիպում է միայն մեկ անգամ, այն է՝ եղեգնուտների մեջ պահ մտած վրիժառու աղջիկը դավադրաբար թունավոր նետով սպանում է գետում լողացող Դավթին, և ինքն էլ մահանում է Դավթի ուժգին գոռոցից: «Չինի աչքերով» այդ աղջիկը Չմշկիկ Սուլթանի դուստրն էր: Նետահար Դավթը զգում է, որ իրեն սպանողը իր իսկ զարմից է՝ «*էդ իմ սերմն էր, որ ինձի սպանեց*» ...*իմ ցեղ իմ անձից է...*⁵³:

Վրեժով լցված աղջիկը սպանում է հորը՝ կործանվելով և ինքը. ահից մեռնում է:

Այսպիսով, Դավթի ականա գործած մեղքի (ամուսնության խոստման կամ երդման մոռացության) պատճառով տեղի է ունենում վիպական ողբերգություն, որով էլ ցույց է տրվում հերոսի մարդկային բնությունը:

Իսմիլ խաթուն

Իսմիլ խաթունը, լինելով Սասնա հակոտնյա թշնամի Մըսրա ավագ ու կրտսեր Մելիքների կին և մայր՝ իրադարձությունների բերումով, ըստ որոշ տարբերակների, դառնում է Սասնա տան ժառանգներից մեկի՝ Մեծ Մհերի սիրուհին:

⁵² Աբեղյան 1966, 419:

⁵³ Սասունցի Դավիթ 1961, 292: Նույն արտահայտությունը տե՛ս նաև Սասնա ծոեր 1951, 520:

Իսմիլ խաթունը Սասնա Մհերին կանչում է Մըսր և հանուն հզոր ժառանգի կենակցում նրա հետ, ծնում է կրտսեր Մըսրա Մելիքին, որը դառնում է իր խորթ եղբոր՝ Դավթի գլխավոր թշնամին, եղբայր, որի սնուցիչն ու խնամակալն էր դառել Իսմիլ խաթունը: Հենց այդ հանգամանքով էլ դրսևորվում է Իսմիլ խաթունի սրտացավությունը Դավթի հանդեպ:

Հերոսավեպում Իսմիլ խաթունը բնութագրվում է իր՝ հենց այս երկվական դերով՝ իբրև լայնախոհ հայրենասեր կին, գորովագութ մայր և անչար թագուհի: Այս կերպարի հարուստ նստվածքներում նշմարվում են հետևյալ հատկանիշները՝ գորովագութ մոր փայփայանքներ, զավակների սնուցում և խնամք, հաշտության և համերաշխության ազնիվ ձգտումներ խորթ եղբայրների հարաբերություններում, անձնագոհության պատրաստակամություն՝ զավակների կյանքի փրկության համար, հերոսի հետ ամուսնության ձգտում՝ հանուն որդեծնության, օջախի շարունակականության և այլն⁵⁴:

Նա գորովագութ մոր խնամքով սնուցում, խնամում, մեծացնում և պատանեկան տարիքի է հասցնում Դավթին և վտանգների պահին թխսամոր նման իր թևերն է տարածում ու իր հովանավորության տակ առնում Սասնա այդ ծուռ ու համառ մանկանը. պահում, մեծացնում, փայփայում է որբ Դավթին հարազատ որդու նման:

Չնայած այս կերպարի որոշ միակողմանի՝ իբրև միայն հաշվենկատ կնոջ (Ս. Գայսարյան⁵⁵ և Ս. Ավետիսյան⁵⁶) գնահատականներին, Իսմիլ խաթունը մեր հերոսավեպի բարդ համաձուլվածք ունեցող կնոջ կերպարն է՝ օժտված ինքնատիպ դրական հատկանիշներով: Այդ դրական հատկանիշը ակնհայտորեն երևում է հերոսուհու նկատմամբ ժողովրդի անաչառ վերաբերմունքից. վերջինիս «ողորմիին» արժանանում է նաև Իսմիլ խաթունը. «Դառնանք զողորմին տի տանք Իսմիլ խաթունին, Քառսուն ողորմի»⁵⁷:

Եզրակացություններ

Հերոսավեպում կանանց կերպարների զգալի մասը իրենց գործառույթներով և բնույթով դրական կամ յուրային են ի դեմս նախամայր, խաչապաշտ գերդաստանի դուստր Ծովինարի, Սասնա հերոսների կանանց՝ Դեղձուն Ծամի ու Արմաղանի, Խանդուքի ու Գոհարի:

Ծովինարը հերոսավեպում հանդես է գալիս որպես նախամայր և նախօրինակ հերոսական գործերի. նա չի կենակցում օտար կամ կռապաշտ թա-

⁵⁴ Հ. Օրբելին այս երևույթը կապում է հեռավոր մայրիշխանության ժամանակներից պահպանված հետքի հետ, երբ մայր-կինը, իր տոհմի տնօրենը լինելով, ինքն էր վճռում, թե ով է արժանի իրեն պտղավորելու (Օրբելի 1956, 47):

⁵⁵ Гайсарьян 1939, 3.

⁵⁶ Ավետիսյան 2014, 78: Թե՛ Ս. Գայսարյանը և թե՛ Ս. Ավետիսյանը այս կերպարի վերաբերյալ ունեն բացասական եզրահանգումներ:

⁵⁷ Սասունցի Դավիթ 1961, 56:

գավորի հետ և անվերապահորեն ապավինելով աստվածային զորությանը՝ աղոթքով և ուխտով (Հելի վանք և այլուր) անցնում է մի շարք փորձությունների միջով և, դարձյալ աստվածային կամքով, անարատ կերպով հղիանում է, ծնում է երկվորյակ եղբայրներին:

Սասնա հերոսների ամուսնության ու սիրո պատմությունը, որն սկսվում է Դեղձուն Ծամով, հերոսավեպում քնարական երանգավորում ունի. այս կանանց սիրո, նվիրումի պատմությունը լի է գեղարվեստական խտացումներով, որով և հարստանում է հերոսավեպի սյուժեն:

Արտատեր Պառավը հերոսավեպում հիմնականում հանդես է գալիս դրական կերպարով, բայց և հանդիպում են տարբերակներ, որտեղ դրսևորված է այս կերպարի բացասական բնույթը:

Իսկ մյուս մասը բացասական կամ օտար կանանց կերպարներն են՝ Ձենով Հովանի կին Սառյեն, Չմշկիկ Սուլթանը և Դավթի դուստրը: Սրանք բացասական կամ օտար են մնում հերոսավեպի սյուժեում, քանզի նրանց դրսևորած վարքագիծը չի շտկվում, այլ ավելի է խորանում (ցանկասիրությունը կամ ռիսկալիությունը, որը վերածվում է անդարձ խռովության և մարդասպանության):

Իսմիլ Խաթունը հերոսավեպում հանդես է գալիս, որպես օտար (հետագայում նաև հակառակորդ) երկրի թագուհի՝ յուրօրինակ բարոյական ըմբռնումներով օժտված կին, որով և պայմանավորված է այս թագուհու կերպարը հերոսավեպում:

Գրականություն

Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, Երևան, ՍՍՀ ԳԱ հրատ., 572 էջ:

Աբեղյան Մ. 1985, Երկեր, հ. Ը, Երևան, ՍՍՀ ԳԱ հրատ., 679 էջ:

Ավետիսյան Ս. 2014, Վտանգված ինքնության ահագնազր «Սասնա ծռեր» էպոսում կամ էպոսի դասերը, Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, «Գիտություն», էջ 178-186:

Գալստյան Մ. 2004, Կորեկամշակ-շաղգամամշակ պառավի կերպարը «Սասնա ծռերում», Հայկական «Սասնա ծռեր» էպոսը ու համաշխարհային էպիկական ժառանգությունը (գիտաժողովի նյութեր), Երևան, էջ 113-117:

Դալայան Ս. 2002, Հայոց վիպական Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, N 2, Երևան, էջ 193-213:

Դալայան Ս. 2008, «Վիպասանք» էպոսի առաջին «ճյուղը» և ամպրոպային դյուցազնատոհմի ծագումը, «Շնորհի ի վերուստ». Առասպել, ծես և պատմություն, հոդվածների ժողովածու՝ նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին, Երևան, «Գիտություն», էջ 19-50:

Եղիազարյան Վ. 2012, Կինը էպոսում, Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը (գիտաժողովի նյութեր), Երևան, «Գիտություն», էջ 194-206:

Եղիազարյան Վ. 2014, Գուսանը «Սասնա ծռերում», Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, «Գիտություն», էջ 151-158:

- Իսահակյան Ա. 1939, Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին, Երևան, Խորհրդային գրականություն, N 8-9, էջ 29:
- Հակոբյան Ն. 1983, Կերպարների կերտման սկզբունքը «Սասնա ծռեր»-ում, Երևան, ԵՊՀ հրատ., 79 էջ:
- Համբարձումյան Հ. 2013, Սասունցի Դավթի երկրորդ հարվածն ու Մելիքի քույրը, «Էջմիածին», թիվ Գ, էջ 26-34:
- Համբարձումյան Հ. 2018, Պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Երևան, ԵՊՀ հրատ., 319 էջ:
- Հարությունյան Ս. 2010, Բանագիտական ակնարկներ, Երևան, 2000, «Գիտություն», 262 էջ:
- Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգային» տպարան, 527 էջ:
- Ղարիբյան Ա. 2012, Պառավի կերպարի զարգացումը «Սասնա ծռեր» էպոսի չորրորդ ճյուղում, Հայկական «Սասնա ծռեր» էպոսը ու համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, «Գիտություն», էջ 217-223:
- Պետրոսյան Ա. 1997, Հայկական էպոսի հնագույն ակունքները, Երևան, «Վան Արյան», 96 էջ:
- Ջանփոկադյան Մ. 2015, «Սասունցի Դավթի» ռուսական կյանքը, ռուսերեն թարգմանությունը՝ Հ. Համբարձումյանի, Երևան, Հեղինակային հրատ., 174 էջ:
- Սահակյան Ա. 1975, «Սասնա ծռեր» պատումների քննական համեմատություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 189 էջ:
- Սասնա ծռեր 1936, հ. Ա (խմբ.՝ Մ. Աբեղյանի, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի), Երևան, «Պետհրատ», 1128 էջ:
- Սասնա ծռեր 1944, հ. Բ, մաս առաջին (խմբ.՝ Մ. Աբեղյանի, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի), Երևան, «Պետհրատ», 1128 էջ:
- Սասնա ծռեր 1951, հ. Բ, մաս երկրորդ (խմբ.՝ ակադեմիկոս Մ. Աբեղյանի, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի), Երևան, «Պետհրատ», 1005 էջ:
- Սասնա ծռեր 1892, «Սասունցի Դավթի». Ժողովրդական վեպի երկու նոր վարիանտներ (Աբարանի և Մոկաց բարբառներով), գրի առավ Գարեգին սարկավազը, Թիֆլիս, «Շարամաձե» տպարան, 208 էջ:
- Սասնա ծռեր 1979, հ. Գ, գրառ. ու հրատ.՝ Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 583 էջ:
- Սասնա ծռեր 2000, 7 նորահայտ պատումներ (գրառումը, բնագր. պատր.՝ Ռ. Գրիգորյանի, աշխատակցույթ.՝ Ե. Մելիք-Մուրադյանի), Երևան, «Գիտություն», 280 էջ:
- Սասունցի Դավթի 1961, Հայկական ժողովրդական էպոս (համահավաք բնագիր) Երևան, «Հայպետհրատ», 334 էջ:
- Տերտերյան Ա. 1939, «Սասունցի Դավթի» հազարամյակը, «Սասունցի Դավթի» էպոսի 1000-ամյակին նվիրված հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., էջ III-XL:
- Օրբելի Հ. 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 137 էջ:
- Гайсарьян С. 1939, Женские образы, «Литературная газета», 20 сентября, с. 3.
- Новиков Н.В. 1975, Образы восточнославянской волшебной сказки, Ленинград, «Наука», 253 с.
- Розанов И. 1939, Давид из Сасуна, «Литературная учеба», N 11, с. 38-49.
- Пропп В.Я. 1976, Фольклор и действительность, Москва, «Наука», 328 с.

ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՈՒՆԻ» ՀԵՐՈՍԱՎԵՊԻ ՄՈԿԱՑ ՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ

Աննա Պողոսյան

Ամփոփում

«Սասնա ծռեր» հերոսավեպում կանանց կերպարները բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ *հարազատ* և *օտար*: Ընդ որում, ամենահարազատը նախամայր Ծովինարի կերպարն է: Այս կերպարներն ունեն վաղնջական-առասպելական հիմքեր, նրանցից շատերի զուգահեռները կամ նախատիպերը առկա են տարբեր ժողովուրդների վեպերում: Նրանք խտացնում կամ տիպականացնում են տղամարդ հերոսների արարքները, կանխում կամ է՛լ ավելի են սրում կոնֆլիկտային բախումները և վճռական դեր ստանձնում վիպական անցուդարձի զարգացման ընթացքում:

Հերոսավեպում կանանց կերպարները կերտված են ժողովրդական բանաստեղծական մտածողության իդեալական պատկերացումներով և, անշուշտ, հերոսական շեշտադրումով:

Բանալի բառեր՝ կին, կերպար, հարազատ և օտար, հերոսավեպ, սյուժե, վաղնջական-առասպելական, հակասություն:

ЖЕНСКИЕ ОБРАЗЫ В ПОВЕСТВОВАНИЯХ МОКСА ГЕРОИЧЕСКОГО ЭПОСА «САСНА ЦРЕР»

Анна Погосян

Резюме

Анализ женских образов героического эпоса «Сасна црер» показывает, что в эпосе действуют десять женских образов, которые, с точки зрения отношений с героями эпоса, делятся на две основные группы: *родные* и *чужие*. Причем, самый родной – это образ праматери Цовинар. Эти образы имеют древние мифические основы, образные параллели или следы многих из них есть в эпосах разных народов. Эти образы сгущают или типизируют поступки героев-мужчин, предотвращают либо еще более обостряют конфликтные столкновения и играют решающую роль в развитии событий эпоса.

Женские образы в эпосе являются воплощением идеальных представлений народного поэтического мышления.

Ключевые слова – женщина, образ, родной и чужой, героический эпос, сюжет, древний-эпический, противоречие.

**CHARACTERS OF WOMEN IN NARRATIVES OF MOKK' OF THE HEROIC EPIC
"DAREDEVILS OF SASUN"**

Anna Poghosyan

Abstract

The analysis of female characters of the heroic epic "Sasna Tsrer" revealed that there are ten female images in the epic, which are divided into two main groups from the perspective of relation to the heroes of the epic: relatives and aliens. Moreover, the dearest is the character of the foremother Tsovinar. These images have ancient mythical roots, figurative parallels or traces of many of them are observed in the epics of various peoples. These images thicken or typify the actions of male heroes, prevent or exacerbate conflict clashes, and receive a decisive role in the development of the events of the epic.

Female images in the epic are created by powerful epic-artistic poetry, ideal representations of folk poetic thinking and, undoubtedly, with heroic accents.

Key words – woman, character, relative and alien, heroic epic, storyline, primordial-epic, contradiction, native.

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՍԸՆԹԱՅԸ

Հոփսիմե Պիկիցյան

Պատմական գիտությունների թեկնածու

ԵՊՀ մշակութաբանության ամբիոն

ՀՀ, Երևան, Արուսյան 52

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ riposh@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 14.10.2022, գրախոսվել է 06.07.2023, ընդունվել է տպագրության 07.08.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.2-167

Ներածություն

Խորհրդային Միության մշակութային քաղաքականության համատեքստում կարևորվում էր բոլոր հանրապետություններում երաժշտական ինքնագործ համույթների ստեղծումը՝ որպես աշխատավորների ինքնակազմակերպման և մշակութային ժամանցի խրախուսելի տարբերակ ու ազգային վերելքի ցուցիչ: Եվ Կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ ու յուրաքանչյուր հանրապետության մշակույթի նախարարության պատասխանատվությամբ՝ ազգային երգ ու պարի ինքնագործ համույթներ էին ձևավորվում բոլոր մարզերի խոշոր բնակավայրերում գործող մշակույթի տներում¹: Սակայն միութենական հանրապետությունների նորաստեղծ ինքնագործ համույթները միատարր չէին և տարբերվում էին իրենց տեսակով, կազմով, ժանրային, ռճային ուղղվածությամբ, նպատակով ու երգացանկով:

Հոդվածում դիտարկվում է երաժշտության, պարի, ծիսական արարողության միջոցով հայ ավանդական կենսակերպի բաղադրիչները քաղաքային միջավայրում տարածելու և վերակերպավորելու գործընթացը՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի նախաձեռնած ազգագրական փառատո-

¹ Հիմնվելով Հայաստանի կոմունիստական կուսակցության (ՀԿԿ) XXI համագումարի որոշումների վրա՝ ՀՍՄԴ կուլտուրայի մինիստր Ա. Շահինյանը կարգադրում է. «Հատուկ ուշադրություն դարձնել կուլտուրայի տներին կից գործող ժողովրդական թատրոնների, կուլտուրայի համալսարանների աշխատանքների վրա, ամեն կերպ զարգացնել աշխատավորների ստեղծագործական գործունեությունը, կազմակերպել սիմֆոնիկ, էստրադային, փողային նվագախմբեր, երգեցիկ խմբեր, գեղարվեստական ինքնագործունեության կոլեկտիվներ, հատուկ ուշադրություն դարձնել կերպարվեստի և կիրառական արվեստի ինքնագործ վարպետների աշխատանքներին: Կանոնավոր կերպով կազմակերպել գեղարվեստական և թատերական ինքնագործունեության կոլեկտիվների ելույթները շրջանի բնակչության համար, ինչպես նաև այն կոլտնտեսականների շրջանում, որոնք գտնվում են հեռավոր բրիգադներում, անասնապահական ֆերմաներում, արոտավայրերում և այլն», ՀՀԱԱ, ֆ. 80, ց. 3, գ. 20, թ. 109-112: Այդ տարիներին Մշակույթի տների գործունեության մասին մանրամասն տե՛ս Մուրադյան 2019, 194-203:

ներից մինչև Կասկադում պարբերաբար կազմակերպվող հայկական պարի ուսուցման երեկոներ ու «Գուֆան» փառատոն: Այս համատեքստում քննարկվում են քաղաքային ընտանեկան ու հանրային տոնաձիսական կյանքում տեղ գտած փոխակերպումներին, ավանդական գեղջկական երաժշտության ժանրային ու կատարման արդի մեկնաբանումներին ու ինքնության ընկալումներին առնչվող հարցերը:

Ավանդական կենսակերպից դեպի ինքնագործ համույթներ

Խորհրդային Հայաստանում ստեղծված առաջին ինքնագործ խմբերը ևս միատարր չէին: Գյուղական բնակավայրերում ձևավորված երաժշտախմբերը հիմնականում ժողովրդական երգ ու պարի կամ ավանդական նվագարանների (ժողգործիքների) համույթներ էին, որոնց երգացանկում տեղ էին գտնում հանրությանը ծանոթ ու սիրված ազգային պարերը, ժողովրդական, աշուղական երգերն ու նվագները և համեմատաբար սակավ՝ այդ ժանրում ստեղծագործող կոմպոզիտորների գործերը: Մասնակի դեպքերում ստեղծվում էին նաև երիտասարդական էստրադային նվագախմբեր: Քաղաքային միջավայրում առավել տարածված էին ավանդական նվագարանների անսամբլներն ու պարային համույթները: Նվագարանային անսամբլների երգացանկում, ժողովրդական ու աշուղական երգերին զուգահեռ, հնչում էին նաև այդ ոճերին բնորոշ կոմպոզիտորական ստեղծագործություններ: Իսկ պարային խմբերում նկատելի հակվածություն կար դեպի ավանդականի տարրերով ներհյուսված պարերի բեմականացումներն ու պարուսույցների ստեղծած հեղինակային կոմպոզիցիաները: Զուգահեռաբար ձևավորվում էին նաև էստրադային նվագախմբեր: Մեր ուսումնասիրության թիրախը, այսպես կոչված, ազգագրական² համույթներն են, որոնց առաքելությունն ավանդական երգն ու պարը հնարավորինս անաղարտ պահպանելն ու հանրայնացնելն էր³:

² «Երբ բանահյուսական երգը, պարը, մտնում է պետական երգի, պարի, ժողգործիքների անսամբլների երգացանկ, այն անվանվում է ժողովրդական, իսկ երբ այդ նույն նմուշը երգում է ժողովրդական երգասացը կամ ինքնագործ խումբը՝ ազգագրական: Եվ այսպես, առաջանում են ազգագրական երգի ու պարի խմբեր՝ ի տարբերություն ժողովրդական երգի ու պարի պետական անսամբլների: Երբ հայ երգի նկատմամբ կիրառվում են եվրոպական ներդաշնակման բազմաձայնման օրենքներ, այն դառնում է ժողովրդական, իսկ երբ մնում է միաձայն կատարման և մոնոդիկ մտածողության ձևի մեջ, դառնում է ազգագրական», Սահակյան 1988, 41:

³ Ժողովրդական երգի ու պարի բեմականացումներ ու ավանդականի տարրերով ագուցված բեմադրությունների հեղինակային կոմպոզիցիաներ մատուցող տարաբնույթ երաժշտախմբերի գործունեությանը կանդիդատանք մեկ այլ ուսումնասիրությամբ: Նկատենք, որ *ինքնագործ* եզրը կիրառվում է լայն ու նեղ առումներով: Եթե առաջին տարբերակում մշակույթի տներում գործող բոլոր խմբերին որակում են իբրև ինքնագործ՝ հաշվի առնելով անդամների մասնագիտական կրթության պակասը, ապա նեղ առումով՝ հաճախ հենց ժողովրդական երգի կամ պարի հեղինակային մշակումներն ու բեմականացումներ ներկայացնող այդ համույթներն են կոչվում ինքնագործ, իսկ ֆոլկլորային ուղղվածություն ունեցող մյուս խմբերը՝ ազգագրական:

Ուշագրավ է, որ գյուղական բնակավայրերում՝ առավելապես Արևմտյան Հայաստանից վերաբնակվածների կենցաղում դեռևս կենսունակ էին ավանդական տոների ու ծեսերի երաժշտախոսքային ու պարային բաղադրիչները, որոնք բարբառի ու ընտանեկան ավանդույթների հետ միասին փոխանցվում էին զավակներին: Պատմական Հայրենիքում սերված մշակութային ժառանգությունը նոր միջավայրում պահպանելն ու փոխանցելը Հայաստանի տարբեր մարզերում հաստատված վանեցիների, սասունցիների, մշեցիների, բասենցիների, ալաշկերտցիների, մուսալեոցիների և մյուս վերաբնակվածների համար ինքնաբերական ու բնօրրանի հետ հոգևոր կապը պահպանելու եղանակներից էին: Պատահական չէր, որ մշակույթի տներում գործող առաջին ինքնագործ համույթները ձևավորվեցին այդ համայնքների բնակիչներից: Իսկ խորհրդային մշակութային քաղաքականության համատեքստում կազմակերպվող հանրապետական ու միութենական օլիմպիադաների ու ազգագրական փառատոների մասնագիտական հանձնաժողովներն առավելությունը տալիս էին հենց այդ ժառանգության բուն կրողներին (առաջնային ֆոլկլոր):

Պոլիտեխնիկական ինստիտուտի ազգագրական փառատոները

Հայ ավանդական երգերն ու մեղեդիները տարածելու և վերարժևորելու գործընթացում առանձնահատուկ նշանակություն ունեցան 1960-ական թվականներին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի կազմակերպած ամենամյա ազգագրական փառատոները: «Ուսանողական գարուն» միջոցառումների շրջանակում մեկշաբաթյա համերգների ընթացքում կարելի էր ծանոթանալ Հայաստանի մարզերից ու արտերկրի հայաբնակ վայրերից ժամանած տարբեր տարիքի ու սեռի անհատների, երաժշտական ու պարային համույթների բազմաժանր կատարումներին, վայելել բանահյուսական նշխարներն ու որոշակի գիտելիք ձեռք բերել ազգային ավանդույթների, տոների ու ծեսերի վերաբերյալ: Փառատոնի մշտական մասնակիցներն էին նաև Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների (եզդի, ասորի, հույն, ռուս) համույթները, որոնց երաժշտական, բանահյուսական ու պարային կատարումները հարստացնում էին համերգների երգացանկը և սիրով ու հետաքրքրությամբ էին ընդունվում մասնագետների ու հանդիսատեսի կողմից: Փառատոների շնորհիվ Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունները ևս սկսեցին վերարժևորել սեփական մշակութային ժառանգությունը և, միմյանց հետ մրցելով, ձգտում էին տարեցների միջոցով վերհիշել ազգային երաժշտական-պարային ավանդույթները կամ ստեղծել դրանց բեմականացված տարբերակները: Նրանց երիտասարդ ակտիվիստներն ու ղեկավարները սերտորեն հաղորդակցվում ու խորհրդակցում էին Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ֆոլկլորագետների և ՀՀ ԳԱԱ հնա-

գիտության ու ազգագրության ինստիտուտի ազգագրագետների, պարագետների ու բանագետների հետ:

Ինքնաբուխ ձևավորված սովորույթի համաձայն, յուրաքանչյուր համերգի ավարտին, տարբեր տարածաշրջաններից ժամանած մասնակիցներն ու հանդիսատեսները զուռնայի կանչով հավաքվում էին ինստիտուտի մերձակա հրապարակում, և մինչև ուշ գիշեր թնդում էր նրանց երգն ու զսպանակած շարքերով գալարվող պարը՝ վերածվելով հանպատրաստից տոնի: Նկատենք, որ քաղաքաբնակներից շատերն առաջին անգամ էին մասնակցում ավանդական շուրջպարերին կամ ռազմապարերին և զգալով դրանց ոգեղեն ազդեցությունը՝ փորձում էին սովորել դրանք ու ամրագրել իրենց կյանքում:

Պոլիտեխնիկական ինստիտուտի ազգագրական երգի ու պարի մայիսյան ամենամյա փառատոնը եզրափակվում էր Սարդարապատի հուշահամալիրում՝ ի պատիվ հերոսամարտի հաղթանակի: Հայաստանի տարբեր մարզերից ու արտերկրի հայաբնակ վայրերից ժամանած բազմաթիվ երաժշտախմբերի երգացանկում, ի շարս ավանդական տոնաձիսական և առօրյա կենցաղը բնութագրող տոհմիկ երգի, պարի ու նվագի, առանձնահատուկ տեղ էր հատկացվում նաև հայրենասիրական երգին ու ռազմական պարին, որոնց միջոցով ոգեկոչվում էին հայրենյաց հերոսները: Հուշահամալիրի հարթակում միավորվում էին խմբերն ու այցելուները, և համերգը վերաճում էր համաժողովրդական տոնակատարության:

Փառատոնի կարևորագույն ձեռքբերումը, անշուշտ, ժառանգության կենսունակության խթանումն էր, քանզի այդ ճանապարհով ավանդական երգն ու պարը փոխանցվում էին տարբեր բնակավայրեր ու երկրներ՝ մի ազգագրական խմբի երգացանկից մյուսը, ապա նաև մուտք գործում սովորական քաղաքացիների կենցաղում: Ազգագրական երգի ու պարի փառատոների տպավորությամբ՝ գրեթե բոլոր մեծ ու փոքր բնակավայրերում, անգամ քաղաքների առանձին շրջաններում ու կոլեկտիվներում նորանոր սիրողական համույթներ էին ձևավորվում:

Փառատոնի ձեռքբերումներից կարելի է համարել նաև մասնագիտական մրցութային հանձնաժողովի⁴ անդամների բարձր գնահատանքից սերված

⁴ Տարբեր տարիներին հանձնաժողովի կազմում ընդգրկվում էին Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, ՀՀ ԳԱԱ արվեստի, հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Հայաստանի պատմության և ազգագրության թանգարանների մասնագետները (երաժշտագետներ՝ Մարգարիտ Բրուտյան, Ալինա Փահլևանյան, Կարինե Խուդաբաշյան, Զավեն Թագակչյան, Լիլիթ Երնջակյան, Մարգարիտ Սարգսյան, հայ տոհմիկ երգի գիտակ ու ջատագով Հայրիկ Մուրադյան, պարագետներ Ժենյա Խաչատրյան, Էմմա Պետրոսյան, Ռուդիկ Հարոյան, տարազագետներ Նազիկ Ավագյան, Սվետլանա Պողոսյան, ազգագրագետներ Այա Օդաբաշյան, Արմիկ Ստեփանյան, Հռիփսիմե Պիկիչյան, բանագետ Արուսյակ Սահակյան և այլք), իսկ կազմակերպիչները՝ Պոլիտեխնիկական ինստիտուտի արհմիության և ուսանողական խորհուրդներն էին՝ Արկադի Դուրինյանի ղեկավարությամբ:

Մասնագետներին հոգեբանական հավաստիությամբ տպավորել էր նաև Ա. Թոփչյանի՝ Էվայի դերակատարումը: Դերասանուհին կարողացել է ժլատ ու պասիվ արտահայտչամիջոցներով պատկերացում տալ եվրոպական կեցվածքով, երիտասարդ, նուրբ ու հանգիստ շարժ ու ձևով տիկնոջ մասին: Դերակատարման մասին կարդում ենք. «<...> իմաստավորված, թախծոտ ժպիտ, կյանքը հասկացող երիտասարդ կնոջ վիշտ, ներքին անաղմուկ պոռթկումներ ու արտաքին չափավոր խաղաղություն», - Գ. Արշակյանի՝ այս դերակատարումը, նաև Ա. Ութմազյանի խաղը նկարագրող խոսքերը նորաստեղծ թատրոնի ոճի, տեսակի մասին են: Դրանք ասես վկայում են բեմում ներկայացվող իրադարձությունները և մարդկային փոխհարաբերությունները կյանքին ավելի մոտ ներկայացնելու և ժամանակակից մարդու ընկալումների, պահանջների հետ հաշվի նստելու մասին:

Այս բեմադրություններից հետո Հ. Ղափլանյանը, ամփոփելով ստուդիայի երկամյա գործունեությունը, փաստել է, որ դերասանները, հանդիսատեսի առաջ ներկայանալուն զուգահեռ, մշտապես եղել են ուսումնառության մեջ. «Երկու տարվա ընթացքում բավական աշխատել ենք երիտասարդ արտիստներին մարզելու ուղղությամբ՝ դիկցիա, պլաստիկա, սուսերամարտ, դասախոսություններ, գործնական պարապմունքներ...»¹⁹:

Այսպիսով, այս ներկայացումներով ստուդիան արդեն իսկ հաստատեց թատրոն դառնալու իր իրավունքը: Շենքի հատկացումից հետո ստուդիականների չորս աշխատանքը նորաստեղծ թատրոնի խաղացանկում էր:

Երևանի դրամատիկական թատրոնի առաջին ներկայացումը

Թատրոնի սեփական շենքի հատկացումը մաքառումներով լի ճանապարհի արդյունք է եղել: Հ. Ղափլանյանը տարբեր հարցազրույցներում պատմում է այդ մասին: 1969 թ. մարտի ութն այն օրն էր, որ Դրամատիկական թատրոնը սեփական հարկի տակ (Ավ. Իսահակյան, 28 հասցեում) իր հանդիսատեսին էր սպասում Թումանյանի «Անուշ»-ով՝ Հ. Ղափլանյանի բեմականացմամբ ու բեմադրությամբ:

Թատրոնի գեղարվեստական ղեկավարի բնորոշմամբ՝ կան գրական ստեղծագործություններ, որոնք «ուղղակի պահանջում, հարկադրում են բեմ հանել իրենց»²⁰: Այդ ստեղծագործություններից էր հենց այս քնարական պոեմը, որն Անուշի ու Սարոյի սիրո և ողբերգականության մասին է. սիրո գաղափարի շեշտադրումով, պայմանական, պլաստիկական վճիռներով:

¹⁸ Գարուն 1969, 84:

¹⁹ Հայրապետյան 1969, 4:

²⁰ Ղափլանյան 1982, 143:

Բեմականացման մեջ խմբերգերն առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերել: Հ. Ղափլանյանը դրանց տվել է ասես անտիկ խմբերգի խնդիր, կերպարներին առնչվող դեպքերին՝ ճակատագրական վճիռների կրող. «Բեմադրող Հ. Ղափլանյանը շատ և ինքնատիպ միջոցներ է գտել պոեմը բեմից հնչեցնելու համար: Ե՛վ հին հունական թատրոնի խորը (երգչախումբը) հիշեցնող խմբերի օգտագործումը, և՛ գործող անձանց նախապես մտերիմ հարաբերությունների, ապա բախման բարձրակետի արտահայտման միջոցները՝ դիթամային կտրուկ, հակիրճ, պլաստիկ լուծումներով, արված են համարձակ երևակայությամբ», - գրել է Լևոն Հախվերդյանը²¹:

Բեմադրության նախերգային տեսարանը այսպես է նկարագրում թատերագետ Ս. Ռիզակը. «Բեմի կիսախավարում նշմարվում են փերիների ֆիգուրները՝ ժայռեր հիշեցնող կտրտված բարձրության վրա: Անուշն ընկած է մեռած Սարոյի կրծքին: Ամեն ինչ քարացել է: Հանդիսավոր-տխուր երաժշտությունը հնչում է որպես ռեքվիեմ: Փերիները սկսում են շարժվել, և նրանց շարժումներում սգո անպատմելի ցավ է զգացվում»²²: Բեմավիճակի մեկնաբանությունը շարունակելով՝ Ս. Ռիզակը գրում է, որ ռեժիսորը երիտասարդ տղաներ է ներմուծել, և նրանք էլ փերիների հետ մեկտեղ համաչափ շարժումներով, ձայնակցություններով նպաստել են գործողությունների զարգացմանը:

Ներկայացման դերակատարումների և նոր թատրոնի բեմում պոեմի բեմական մեկնաբանման կերպի մասին կարծիք է հայտնել Բ. Հարությունյանը. «Դերասանները թարմաշունչ ու անկեղծ հնչերանգով էին արտասանում թումանյանական տեքստը, որով և առավել ողբերգական էր ընկալվում այդ շքեղ ու գունազարդ հանդիսանքի մթնոլորտում սիրահարների զոհվելը»²³:

Անուշի դերակատարումով Վ. Գևորգյանը կարողացել է հանդես գալ համոզիչ խաղով ներկայանալ և արժանանալ մասնագետների բարձր գնահատականին: Երիտասարդ դերասանուհու խաղի մասին հիացումով է գրել թատերագետ Լուիզա Սամվելյանը: Նա Անուշը համարել է դերասանուհու հաջողությունը և արժևորել նրա՝ հոգեբանական բարդ տեսարաններում ճշմարիտ, բնական, հավաստի ու հուզական հագեցվածությամբ ներկայանալու հմտությունը²⁴:

Բեմադրության նկարագրություններն ընթերցելիս մենք տեսնում ենք, որ Հ. Ղափլանյանը աշխատել է նաև կինեմատոգրաֆիկ վճիռներով: Օրինակ, գլխավոր պատկերներում նա լուսաշրջանի միջոցով ստեղծել է «խոշոր պլաններ», որոնք տևականորեն բևեռել են հանդիսատեսի ուշադրությունը կերպարների հոգեվիճակների վրա: Հատկանշական է կոխի տեսարանը, որի

²¹ Հախվերդյան 1976, 263:

²² Ռիզակ 1969, 218:

²³ Հարությունյան 1985, 361:

²⁴ Հմմտ. Самвелян 1969, 28:

ժամանակ Անուշը հետևել է եղբորն ու սիրելիին, բայց այն պահին, երբ Սարոյի (Գուժ Մանուկյան) ու Անուշի հայացքները հանդիպել են, Ս. Ռիզակի բնորոշմամբ, բեմում կանգ է առել շարժումը և համատարած խավարում երկու լուսաշրջանի մեջ առնված են եղել սիրահարների դեմքերը²⁵։ Տևական անշարժության բեմավիճակին հաջորդել է արդեն բուռն գործողությունների շղթան։ Մեկ այլ տեսարան հանդիսատեսը ասես դիտել է օբյեկտիվի ներսից։ Այդ բեմավիճակը Սարոյի, Մոսիի (Լ. Թովսիկյան), Անուշի մենախոսության կազմակերպումն է, որը բեմադրիչը թափվող ձյան ֆոնին բեմի աջ և ահյակ կողմերում կանգնեցրել է երիտասարդ սիրահարին ու Մոսիին, իսկ Անուշին բեմառաջ բերել։ Առանձնահատուկ տպավորիչ է եղել, որ երեքն էլ միևնույն ժամանակ հանդես են եկել մենախոսություններով, իսկ այդ պահին իր դերն է կատարել լուսային ձևավորումը՝ հերթով բևեռվելով նրանց դեմքերին²⁶։

Բեմադրությունը ոչ միայն տարբեր մասնագետների դրվատանքին է արժանացել, այլև մտահոգություն է առաջացրել՝ մի դեպքում պոեմի ամբողջականության խաթարման, մեկ այլ դեպքում՝ արտահայտչական վճիռների և գեղարվեստական խոսքի անհամապատասխանության առումով։

Անդրադառնալով ներկայացման մասին դիտողություններին՝ Հ. Ղափլանյանը հավաստել է, որ պոեմի բուն տեքստը թողել է անփոփոխ և որոշ արտահայտություններ, նախադասություններ է հավելել՝ այդպիսով պոեմը դրամատուրգիական տեսքի բերելով ու խաղարկային դարձնելով²⁷։

Թատրոն-ստուդիայի գործունեությունը Անուշի մասին թատերախոսականում (1969 թ.) ամփոփել է Ռուբեն Սանոյանը. «Այսօր արդեն թատրոնն ունի կամ գրեթե ունի ամեն ինչ՝ աշխատասեր, համերաշխ կոլեկտիվ, որոնող և գտնող ղեկավար, և նույնիսկ... շենք։ Այսօր թատրոնի առջև կանգնած է մի հիմնական խնդիր՝ հաստատել իր ստեղծագործական դեմքը»²⁸։ Իրավացի է Ռ. Սանոյանը, քանզի թատրոն ստեղծելու, համախոհների ջերմեռանդ թիմ ձևավորելու, շենք ունենալու համար շատ ջանքեր են ապարդյուն անցել։ Դրամատիկական թատրոնի անձնակազմին հաջողվեց հաղթահարել այդ դժվարությունները։

Եզրակացություններ

Ստուդիական շրջանից թատրոն անցման ճանապարհին Հ. Ղափլանյանը երիտասարդ ուսանողների հետ բեմադրեց հինգ ներկայացում՝ այսպիսով ձևավորելով նորաստեղծ թատրոնի նախնական խաղացանկը։ Եթե ստուդիան ներկայանում էր արտասահմանյան պիեսների բեմադրություններով,

²⁵ Հմմտ. Ռիզակ 1969, 227։

²⁶ Հմմտ. Ռիզակ 1969, 227։

²⁷ Հմմտ. Ղափլանյան 1969, 34։

²⁸ Սանոյան 1969, 3։

ապա թատրոնի բացման համար ընտրվեց և բեմադրվեց «Անուշ» ազգային պոեմը: Այսպիսով, նորաբաց թատրոնը իր անցած փորձարարական ու խիզախումներով լեցուն երկամյա գործունեության քննությունը հանձնեց:

Նորաբաց թատրոնի առջև դրված խնդիրներից էր ոչ միայն դերասաններ, այլև երիտասարդ ռեժիսորներ պատրաստելը: Նրա համար խաղացանկային սկզբունք էր ընտրվել հիմնականում բեմադրել հայ թատրոնում դեռևս բեմ չբարձրացած պիեսներ և հայ դրամատուրգների հետ համագործակցել՝ ժամանակակից մարդուն հետաքրքրող հարցերին անդրադարձող պիեսների ստեղծման և բեմադրության նկատառումով: Ժամանակը ցույց տվեց, որ թատրոնը կարողացավ հաղթահարել հանդիպող դժվարություններն ու ունեցավ իր դրամատուրգները՝ Ժորա Հարությունյան, Գևորգ Արշակյան, Գրիգոր Չալիկյան, Պերճ Զեյթունցյան և այլ գրողներ, դրամատուրգներ: Դեռևս ստուդիական շրջանից Հ. Ղափլանյանը ռեժիսորներ պատրաստելու նպատակով որպես ասիստենտ-ռեժիսոր ներգրավեց Ռուբեն Մարությանին, Դավիթ Մկրտչյանին, Նորայր Սարգսյանին և լրջորեն փորձեց թատրոնի բեմադրիչների սերունդ կրթել:

Այսպիսով, կարճ ժամանակահատվածում ստուդիա-թատրոնն ունեցավ հաջողված և ուշադրության արժանի ներկայացումներ: Երևանի դրամատիկական թատրոնի շնորհալի ու խոստումնալից երիտասարդներ Ա. Ութմազյանը, Վ. Գևորգյանը, Լ. Թովսիկյանը, Գ. Մանուկյանը, Է. Շահիրյանը և շատ այլ դերասաններ դարձան ղափլանյանական ավանդների կրողները և երիտասարդական թատրոնը կարողացան դարձնել մայրաքաղաքի ինքնուրույն կեցվածքով, խաղացանկով ու ոճով երկրորդ դրամատիկականը:

Գրականություն

Բալայան Վ. 1967, Վախը կրկնվում է..., Ավանգարդ, Երևան, N 149, էջ 4:

Բալայան Վ. 1968, Աննա Ֆրանկի օրագիրը, Սովետական Հայաստան, N 19, Երևան, էջ 3:

Բոյաջին Գ. 1968, Երիտասարդական սկիզբ, Սովետական արվեստ, N 1, Երևան, էջ 5:

Գարուն 1969, Զրույց՝ նոր թատրոնի մասին, N 12, Երևան, էջ 69, 84:

Թովչյան Ա. 1969, Հրավիրում է երիտասարդական թատրոնը, Ավանգարդ, N 19, Երևան, էջ 3:

Կրոյան Լ. 1967, Կյանքը սպանել չի լինի, Ավանգարդ, N 154, Երևան, էջ 2:

Հախվերդյան Լ. 1976, Ժամանակի հետ. Հոդվածներ, Երևան, «Հայաստան», 356 էջ:

Հայրապետյան Ղ. 1969, «Անուշ», Ժամանակակից պիեսներ և գուցե... «Համլետ», Սովետական Հայաստան, N 22, Երևան, էջ 4:

Հարությունյան Բ. 1985, Հայ սովետական թատրոն 1917-1977, Երևան, Սովետական գրող, 376 էջ:

Հարությունյան Բ. 2008, Խորհրդահայ թատրոնի տարեգրություն, գք. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 504 էջ:

Ղափլանյան Հ. 1969, Նաև դրամատիկական, Սովետական արվեստ, N 9, Երևան, էջ 34:

- Ղափլանյան Հ. 1982, Ռեժիսոր, ներկայացում, հանդիսատես, Երևան, «Հայկական թատերական ընկերություն», 172 էջ:
- Ռիզան Ս. 1969, Հրաչյա Ղափլանյան, Երևան, «Հայկական թատերական ընկերություն», 235 էջ:
- Սանոյան Ռ. 1969, «Անուշը»-ը երիտասարդական թատրոնում, Գրական թերթ, N 17, Երևան, էջ 3:
- Самвелян Л. 1969, Виолетта Геворкян-Ануш, Театр, Москва, N 10, с. 28.

ԵՐԵՎԱՆԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ռուզաննա Առաքելյան

Ամփոփում

Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի հիմնադրումը դարձավ հայ թատրոնի նորագույն պատմության նշանակալի իրադարձություններից մեկը: Հրաչյա Ղափլանյանը, որը Հայկական թատերական ընկերության նախագահն էր, 1967 թ. ստեղծեց Ընկերությանը կից թատրոն-ստուդիա, որն առաջին իսկ ներկայացումներով հռչակվեց որպես կայացած թատրոն՝ անկախ թատերական կյանք վարելու իրավունք ստանալով: Երբ Երևանի դրամատիկական թատրոնին շենք հատկացվեց, ստուդիականների աշխատանքներն ընդգրկվեցին թատրոնի խաղացանկում:

Դրամատիկական թատրոնի ստեղծումը համընկավ 1960-70-ական թթ. «ձնհալի» ժամանակաշրջանի հետ, երբ արվեստը ազատագրվում էր գաղափարական հարկադրանքներից և նոր միտումների հարում:

Նորաստեղծ թատրոնի առաջին հինգ ներկայացումներն աչքի ընկան նոր մտածողությամբ, ոճով, յուրօրինակ բեմական լուծումներով՝ թատրոնը դիտարկելով որպես հասարակական-մշակութային կյանքի հայելի:

Իսկ թատրոն-հանդիսատես կապը հիմնվում էր հոգեբանական նուրբ փոխշփումների վրա:

Բանալի բառեր՝ Երևանի դրամատիկական թատրոն, ներկայացում, Հրաչյա Ղափլանյան, հայ նորագույն թատրոն, դերասան, ռեժիսոր, թատրոն-ստուդիա:

СОЗДАНИЕ ЕРЕВАНСКОГО ДРАМАТИЧЕСКОГО ТЕАТРА

Рузанна Аракелян

Резюме

Создание Ереванского драматического театра имени Грачья Каплянiana стало одним из знаменательных событий в новейшей истории армянского театра.

Грачья Каплянianом, являвшимся председателем Армянского театрального общества, в 1967 г. был основан театр-студия, который своими первыми же по-

становками заявил о себе как о состоявшемся театре, получив право на самостоятельную театральную жизнь. После того, как Ереванскому драматическому театру было предоставлено здание, работы студийцев вошли в его репертуар. Создание Драматического театра в 1960-70-х гг. совпало с периодом «оттепели» в искусстве, когда искусство освобождалось от идеологического диктата, уступившего дорогу новым веяниям.

Первые же пять постановок отличались новизной мышления, стиля, оригинальностью режиссерских решений, новым подходом к театру как зеркалу социально-культурной жизни. Тандем театр-зритель базировался на тонком психологическом контакте с зрительской аудиторией.

Ключевые слова – Ереванский драматический театр, спектакль, Грачья Каплянян, новейший армянский театр, актер, режиссер, театр-студия.

THE ESTABLISHMENT OF YEREVAN DRAMA THEATRE

Ruzanna Arakelyan

Abstract

The establishment of Hrachya Ghaplanyan municipal Drama Theatre was a significant event in modern Armenian theatre history. The article considers the creative issues of newly founded theatre. The five stage productions are being examined. The rhythm, style, direction, expressiveness and language had obviously been changed.

The theatre presented an outspoken, friendly, open-hearted communication with the audience, held emotional, sincere conversation.

Key words – Yerevan Drama Theatre, performance, Hrachya Ghaplanyan, modern Armenian theatre, an actor, director, studio theatre.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՑԻՑ ՔԱՐԵՐԸ»

Հայկ Ավետիսյան

Պատմական գիտությունների դոկտոր
Երևանի պետական համալսարան
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ h.avetisyan@ysu.am

Արտակ Գնունի

Պատմական գիտությունների թեկնածու
Երևանի պետական համալսարան
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ uruatry@rambler.ru

Լևոն Մկրտչյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ levoncultur@gmail.com

Արսեն Բոբոխյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ arsen.bobokhyan@sci.am

Հոդվածը ներկայացվել է 03.05.2021, գրախոսվել է 31.03.2023, ընդունվել է տպագրության 07.08.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.2-198

Ներածություն

Քարը և քարե կոթողները իրենց որոշակի հետքն են թողել հայկական կոլեկտիվ հիշողության մեջ¹: Ավանդագրույցներում, հեքիաթներում և էպոսում հիշատակվող մի շարք կոթողներ նույնական են մենհիրների և դրանց համալիրների հետ²: Կան բնական կամ մարդաստեղծ ցից քարերի այնպիսի հիշատակություններ, որոնցում դրանք ընկալվում են որպես քարացած (Գետաշեն) կամ գետնի տակ անցած (Սամշվիլդե)³ հսկաներ կամ սրբերի գերեզմաններ (Մեծ Աբուլ)⁴: Մենհիրների շարքերը (Չորաց քարեր, Նեմրուփ,

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A207 և 21AG-6A080 ծածկագրով գիտական թեմաների շրջանակներում:

² Гулакян 1983, 82, 156, 304-305.

³ Джейранов 1898, 64.

⁴ Ростомов 1898, 25-26.

Քանաքեռ) նույնացվում են քարացած զորքի⁵ կամ անասունների հոտի (Փոքր Մասիս, Վասպուրական) հետ⁶: Քննելով քարացած Շամիրամ թագուհու մասին հայկական առասպելը՝ արդեն Ղ. Ալիշանն այն համարել է մենհիրի հնագույն հիշատակություն⁷:

Ցից քարերի գիտական փաստագրումը սկիզբ է առել XIX դ. կեսերին (Վայոց Ձոր⁸, Սյունիք⁹, Գեղարքունիք¹⁰), շարունակվել է 1920-ական թթ.¹¹ և ներկայիս տերմինաբանությամբ սկսել քննարկվել սկսած 1970-ական թվականներից¹²:

Սահմանման չափանիշները

Ցից քարերի սահմանման համար կարևորում ենք դրանց դիտարկումն ըստ մի քանի հատկանիշների՝ մշակում, ճարտարապետական հորինվածք, քանդակ, տարածականության սկզբունք և հնագիտական համատեքստ:

Ըստ մշակման. Ըստ քարամշակման տեխնիկայի՝ ցից քարերը կարող են դասվել երեք խմբի. ա. նախնական մշակում, որին հասնում էին քարաբեկորից առանձին հատվածների հեռացման ճանապարհով (օր.՝ Լուսակն 2, Ձորագլուխ 1, Շամիրամ 13), բ. կոպտատաշ մշակում (այն հավաստված է ցից քարերի մեծ մասում), որը ենթադրում է քարի մակերեսի հետագա հարթեցում ավելի նուրբ գործիքով, գ. սրբատաշ մշակում, որի օրինակները հայտնի են Հարժիսում և Գոմքում: Ցից քարերի մեջ կարելի է առանձնացնել ևս մի խումբ, որում զուգորդվում են մշակման առաջին և երկրորդ տարբերակները (օր.՝ Շամիրամ 1, Գառնառիճ 1, Հարժիս 8, 25 և այլն):

Ըստ ճարտարապետության. Դիտարկելով ցից քարերը որպես փոքրածավալ ճարտարապետական օբյեկտներ՝ հարկ է նշել մի շարք առանձնահատկություններ, որոնք վերաբերում են ինչպես դրանց ընդհանուր կառուցվածքին, այնպես էլ իրանի և գլխամասի կերտվածքին: Ցից քարերի առավել մեծ խումբն աչքի է ընկնում ուղիղ համամասնություններով: Առանձին դեպքերում ցից քարերը կարող են լինել թեք (Ագարակ, Ներքին Սասնաշեն) կամ ճկված (օր.՝ Ամբարի Գյուլ, Հարժիս 14, Ռինդ 1): Հարկ է նշել, որ այս հատկանիշը հաճախ հանդիպում է վիշապոձների պարագայում¹³:

⁵ Լալայեան 1898, 174-175, Սրուանձտեանց 1874, 47-48, Гарстаузен 1857, 215-217:

⁶ Ծոցիկեան 1917, 413-414:

⁷ Ալիշան 1910, 45:

⁸ Байерн 1871, 308-309, Լալայեան 1904, 246:

⁹ Лисициан 1938, 709-721.

¹⁰ Ивановский 1911, 20, Լալայեան 1908, 63:

¹¹ Քալանթար 1926, 210-211, 221-222, Թորամանյան 1942, 8:

¹² Հատկապես Շենգավիթ, Մոխրաբլուր և Շամիրամ հուշարձանների օրինակով (Аресян 1978, 503-504, հմմտ. Սարգսյան 2004, 295, Areshian 2005, 83-84):

¹³ Բոբոխյան և այլք 2015, 299: Վիշապաքարերի կոր կամ ճկված համամասնությունների մասին, տե՛ս Թումանյան 2015, 101:

Ցից քարերի ճարտարապետական հարդարանքի հաջորդ բաղադրատարրը իրանի կառուցվածքն է: Նախնական մշակման պարագայում իրանը հիմնականում տձև է, այն ժամանակ, երբ ավելի նուրբ մշակված հուշարձանները սովորաբար ունեն զուգահեռանիստի (որպես տարբերակ՝ սալի) տեսք: Հաջորդ խումբը բրգաձև կամ սեղանաձև (օր.՝ Շամիրամ 8, Նավուր 2, Ներքին Սասնաշեն) իրանով քարերն են: Առավել փոքր խումբ են

գլանաձև կամ կլորացող իրանով քարերը (Բազմադրյուր, Մեծաձոր, Խնուս, Շամիրամ 2): Իրանի կլորավուն մշակումը հատուկ է որոշ վիշապ-քարակոթողներին¹⁴:

Ցից քարերի ճարտարապետական հորինվածքի առավել ցայտուն մանրամասներից է հուշարձանի վերնամասի կառուցվածքը: Ցից քարերի իրանի կերտվածքի բազմազանության պարագայում գլխամասի մշակումը հաճախ կարող է տարբերակիչ հատկանիշ լինել: Ընդհանուր առմամբ գլխամասը կարող է լինել ուղիղ (օր.՝ Խնուս, Ղուկասավան 2, Շամիրամ 7, 9-11, Ուջան 1, Բալակ 4), թեք (օր.՝ Ղուկասավան 1, Ձորագլուխ 1 Շամիրամ 3, 6, 8, 12, 14), սալատավոր (օր.՝ Ղուկասավան 3, Ագարակ, Ապարան, Շամիրամ 4 Գառնի 3/2, Հարժիս 13), կտցաձև (Հարժիս 17, 20, 24), կորացող (Եղեգնավան, Բազմադրյուր, Դաշտադեն 2, Ձորագլուխ, Բնունիս 1)¹⁵, հնգանկյուն (Բանդիվան) (նկ. 18), եռանկյուն (Շամիրամ 2, Հարժիս 10)¹⁶:

Հիմնականում ցից քարերը գետնամուխ են, որոշ դեպքերում ստորին հատվածը՝ նեղացող կամ եռանկյուն (Ագարակ, Պեմզաշեն, Իշխանասար, Հարժիս 13, 23, 24, Այլախ 1/9-12): Հազվադեպ են դրոցով կամ լայնացող ստորին հատվածով հուշարձանները, որոնք հավաստված են Հադիճավանք 3, Հարժիս 5, 6 և Գոմք հուշարձաններում:

Ըստ քանդակի. Առավել հաճախ են հանդիպում միջանցիկ անցքերը: Հիմնականում դրանք արվում են ցից քարի վերնամասում: Բացառություն են Հարժիս 15, ինչպես նաև Կռապաշտի տան 1 մենհիրները, որտեղ անցքը տեղադրված է իրանի կենտրոնական հատվածում: Անցքերը հիմնականում հորիզոնական են, հազվադեպ՝ ունկաձև (Ղուկասավան 2):

Քանդակային հաջորդ տարրը փոսիկներն ու խուլ անցքերն են, որոնք մենհիրների վրա առավել հազվադեպ են հանդիպում: Դրանք առկա են Շամիրամ 1, Հարժիս 10¹⁷, Մեծաձոր, Ղուկասավան 2 մենհիրների դիմային հատվածում, թասաձև փորվածք կա Շամիրամ 10 մենհիրի իրանի կենտրոնում: Հատկանշական է, որ Սոյլանի խաչքարացված մենհիրի վրա փոսիկը գա-

¹⁴ Բորոխյան և այլք 2015, 299:

¹⁵ Ուղիղ կամ կլորացող վերնամասը հատուկ է նաև ուրարտական puluse տիպի կոթողներին (Ավետիսյան 2016, 112-113):

¹⁶ Հնգանկյուն գլուխ ունեն նաև մարդակերպ ցից քարերը (Կոռնիձոր, Ալ լիճ): Թերևս այս հատկանիշը կարելի է համարել ցից քարի մարդակերպացման նշան:

¹⁷ Ավետիսյան և այլք 2019, 595:

գաթնային հատվածում է, որը հավանաբար նախատեսված էր որոշակի հեղումների համար, իսկ Ծիծեռնավանքի և Հարժիս 23 մենհիրների վրա փոսիկը հատակին է, հավանաբար հուշարձանի ամրացման համար:

Ցից քարերի քանդակները ըստ տեխնիկայի կարելի բաժանել երեք խմբի՝ փորագիր քանդակ (Ղուրթ թափայում՝ բեկյալ գծերով, ներգծված ուղղանկյուններով), հարթաքանդակ համակենտրոն շրջաններ (Հարժիս 5, 23, 24), բարձրաքանդակ (Լեռնարոտ, Խնածախ 1, Հարժիս 27¹⁸):

Որոշ դեպքերում ցից քարը ստանում է մարդակերպ (Ալ լիճ, Կոռնիձոր, Խոզնավար¹⁹) կամ ֆալիկ (Կռապաշտի տներ 1, Գեղաշեն) ուրվագծեր:

Ըստ տարածականության սկզբունքի և հնագիտական համալսության. Ցից քարերը կարող են տեղադրված լինել մեկուսի, շարքերով, շրջանաձև (կրոմեխ), զուգահեռ շարքերով (պուրակ) և ցանցաձև²⁰, ինչպես նաև խմբերով (մենհիրների անտառ): Չտեղաշարժված վիճակում մեկուսի տեղադրված ցից քարեր հավաստված են սրբավայրերում (Մոխրաբլուր, Շենգավիթ, Կապուտան, Արդար Դավիթ)²¹:

Ցից քարերի տեղադրման հաջորդ եղանակը մենհիրների «անտառն» է՝ դամբարանների վրա տեղադրված մենհիրներով (Շամիրամ, Հարժիս):

Ցից քարերի շարքեր հավաստված են ինչպես դամբարանադաշտերում (Այգեշատ, Նորակերտ, Զորաց Քարեր, Կռապաշտի տներ²²), այնպես էլ դրանցից դուրս (Խնածախ 3²³) և կիկլոպյան ամրոցների համատեքստում²⁴: Որոշ դեպքերում շարքերով տեղադրումը ենթարկվում է հստակ տրամաբանության: Այսպես, Կռապաշտի տներ համալիրում ամենաբարձր ֆալանան մենհիրը (այժմ զգեստնված) տեղադրված է շարքի կենտրոնում²⁵:

Ընդհանուր քառակուսուն մոտեցող ցից քարերի ցանցային դասավորվածություն ևս հայտնի է (Լեգք)²⁶:

Մենհիրների պուրակներ²⁷ (զուգահեռ շարքեր) Հայաստանում փաստագրված են Աշոցքում, Հարթաշենում (դամբարանադաշտի միջավայրում)²⁸, Նովոսելցովոյում²⁹:

¹⁸ Ավետիսյան և այլք 2015, 200:

¹⁹ Ավետիսյան և այլք 2015, 66, Մկրտչյան 2015, 135:

²⁰ Bayens 1905, 8-10, Ferguson 1877, 51, Aubery 1862, 320.

²¹ Սարգսյան 2004, 295, Areshian 2005, 83-84: Հետազոտությունը՝ Լ. Մկրտչյանի:

²² Գնունի և այլք 2017, 31, Փիլիպոսյան, Ավագյան 2016, 15, Ավետիսյան և այլք 2015, 216:

²³ Ավետիսյան և այլք 2015, 216:

²⁴ Հմայակյան և այլք 2010, 29:

²⁵ Հմմտ. Beneteau-Douillard 2002, 570:

²⁶ Հմայակյան և այլք 2010, 30:

²⁷ Այսօրինակ տեղադրված մենհիրները Զ. Օբերին իրավացիորեն անվանում է արարողակարգի ճանապարհներ (Aubery 1862, 320): Այս վարկածը հաստատվում է Արոն 2-ի օրինակով, որտեղ ցից քարերի շարքը ուղղորդվում էր դեպի N 5 դամբարան (Արեշյան, Թումանյան 1991, 24-25):

²⁸ Հմայակյան և այլք 2010, 28-33:

²⁹ Հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի:

Ցից քարերի օրինակներ



Նկ. 1. Մենհիրների պուրակ Հարթաշենում



Նկ. 2. Շամիրամ 1 մենհիրը



Նկ. 3. Գոմբ 1 հուշայունը



Նկ. 4. Հարժիս 5 հուշայունը



Նկ. 5. Խնածախ 1 կոթողը



Նկ. 6. Ղուրթ թափա 1 վիշապիդը

Ցից քարերի տեղադրման հաջորդ ձևը ներկայակ եղանակն է (կրոմլեխ)³⁰: Կրոմլեխները հաճախ օղակում են դամբարանները (Խնածախ 5, Ձորաց քարեր, Գոլովինո), սակայն հավաստված են նաև ծխական հարթակների վրա (Ալյախ):

Առանձին տիպ պետք է համարել նաև կրոմլեխի և շարքի համադրությունը (Կուռի Խարաբա)³¹:

Տիպաբանության խնդիրը

Ցից քարերը, նմանությամբ հանդերձ, կազմում են մի քանի խումբ և տարբերվում են կերտվածքով, ստեղծման ժամանակաշրջանով և հնագիտական համատեքստով:

Մենհիրներ. Մենհիր անվամբ հաճախ ներկայացվում են բոլոր ցից քարերը՝ որպես հիմնական հատկանիշ սահմանելով քարի չափերը (մինչև 3-4 մ) և երկարուկ ձևը³²: Ի հավելումն այս հատկանիշների՝ հաճախ նշվում է կոպտատաշ կամ գրեթե անմշակ լինելու հանգամանքը³³: Այսպիսով, նախնական մշակում ունենալը կամ կոպտատաշ լինելը մենհիրների հիմնական տարբերանշանն է: Գրեթե բոլոր մենհիրները ուղիղ են, իսկ իրանը տձև կամ զուգահեռանիստի տեսք ունի: Քանդակը սահմանափակվում է միջանցիկ անցքերով կամ փոսիկներով: Մենհիրների թվագրումը լուրջ հարցերի տեղիք է տալիս, սակայն Շամիրամի³⁴ և Արուճի դամբարանների³⁵ պեղումները թույլ են տալիս ենթադրել, որ նշված հուշարձանները առավել տարածվում են մ.թ.ա. II հազ. կեսից հետո:

Հուշայրուներ. Ցից քարերի հաջորդ մեծ խումբը հուշայրուներն են³⁶: Ընդհանուր առմամբ, կոթողների այս խումբը տարբերվում է լավ մշակմամբ և գրեթե սրբատաշությամբ: Այսօրինակ սրբատաշ զուգահեռանիստի տեսք ունեցող կոթողներ հավաստված են Գոլովինոյում³⁷, Գոմքում և Հարժիսում: Եթե Հարժիս 5 կոթողը տեղաշարժված է, իսկ նրա հնագիտական համատեքստը վերականգնել հնարավոր չէ, ապա Գոմք 1 կոթողը տեղադրված է ավերված դամբանաբլուրի գագաթին: Հատկանշական է, որ թալանված խցում առկա են վաղ երկաթի դարին բնորոշ խեցեղենի բեկորներ: Հարժիսյան հուշայրունը նմանվելով Գոմքի օրինակին՝ ունի համակենտրոն

³⁰ Ներկայումս կրոմլեխ բառով հաճախ բնորոշվում է դամբարանը օղակող ցանկացած քարաշար (տե՛ս Բայբուրթյան, Լիսիցյան 1928, 20):

³¹ Ивановский 1911, 20.

³² Բարխուդարյան 1935 33, Мартынов, Шер 1989, 9:

³³ Լիսիցյան, Բայբուրթյան 1928, 20:

³⁴ Նյութերը պահվում են ՊԱԹ-ում (Կ/հ 2766-2771):

³⁵ Արեշյան, Թումանյան 1991, 26:

³⁶ Հուշարձանների այս տիպը թեպետ սովորաբար նույնացվում է մենհիրների հետ, սակայն որոշ հետազոտողներ դիտարկում են այն որպես առանձին տիպ (D' Anna, Pinet 2002, 580):

³⁷ Թումյան 1937, նկ. 30:

շրջանի քանդակ³⁸ (հմմտ. նաև Գոլովինոյի դամբարաններից մեկում բացված քարաբեկորները³⁹): Այս քանդակը կարող է որոշակիորեն ճշտել նշված կոթողների գոյության ժամանակաշրջանը: Զարդանախշը հաճախ է հանդիպում մ.թ.ա. VII-V դդ. խեցեղենի և մետաղի վրա⁴⁰, զուգահեռներ ունի ուրարտական և իրանական արվեստում: Գոմքի և Հարժիսի նշված կոթողները մի շարք հատկանիշներով (սրբատաշ մշակում, դրոց) նմանվում են նաև Վանի թագավորության ժամանակաշրջանի կոթողներին⁴¹: Ավելի ուշ՝ Սասանյան շրջանում, գլանաձև սյուները տեղադրված էին Բիշապուրի զոհասեղանների վրա⁴²: Այս բոլոր տվյալների հանրագումարը թույլ է տալիս ենթադրել, որ քննարկվող կոթողները բնորոշ են մ.թ.ա. I հազ. սկզբին:

Կոթողներ. Ցից քարերի համատեքստում հանդես են գալիս քանդակազարդ հուշարձաններ (Լեռնարոտ, Խնածախ 1, Տեղ, Արենիի քրիստոնեացված հուշարձանները)⁴³: Բացի քանդակազարդ մակերեսից, այս տիպի հուշարձանների հատկանշական գծերից կարելի է համարել համեմատաբար լայն համամասնությունները, իսկ երբեմն՝ քառակուսուն մոտեցող լայնակի հատվածը: Այս տիպի կոթողների հետագա զարգացում կարող են համարվել ավելի ուշ շրջանի քանդակազարդ կոթողները (Երվանդաշատ⁴⁴, Հոդմիկ⁴⁵):

Այլ տիպեր. Նշված հուշարձանների թվում առանձնահատուկ տեղ ունեն Մոխրաբլուրի և Շենգավիթի ցից քարերը⁴⁶: Վերջիններս, ի տարբերություն դիտարկվող հուշարձանների, տեղադրված են բնակատեղիների սրբատեղիներում: Դրանց ճարտարապետական առանձնահատկություններն այդքան էլ հստակ չեն, ինչպես այլ մենհիրների պարագայում: Բացի այդ, Շենգավիթի կոթողում առկա են պարզունակ ֆալիկ տարրեր (վերնամասի ձևավորում)⁴⁷:

Անցումային ձևեր. Կան նաև ցից քարերի տեսակներ, որոնք միավորում են առանձին տիպեր. դրանց թվում կառանձնացնեինք հետևյալները.

Մենհիր-հուշայուն. Մի շարք կոթողներ ունեն ինչպես մենհիրներին, այնպես էլ հուշայուններին բնորոշ գծեր: Օրինակ՝ համեմատաբար լավ

³⁸ Avetisyan et al. 2017, 5, fig. 5 (15).

³⁹ Թումյան 1937, նկ. 30:

⁴⁰ Հմմտ. բրոնզե ականջօղեր Շվանիձորից (Xnkikyan 2002, pl XXXII/4-5), խեցեղեն Շիկահողից (Xnkikyan 2002, pl. LXXXIII/13, LXXXVI/28):

⁴¹ Հմայակյան 1990, 69-70:

⁴² Ghirshman 1954, tab. 41.

⁴³ Այս տիպի հուշարձանները երբեմն զատվում են մեգալիթների ընդհանուր համատեքստից՝ դասվելով այսպես կոչված պարամեգալիթների թվին (Լոբե 2010, 51):

⁴⁴ Тер-Мартirosов 2015, 37.

⁴⁵ Акопян 2005, 133. այսօրինակ կոթողները (հմմտ. նաև հռոմեական սահմանային կոթողները), Զ. Լե Ռուզիկի կարծիքով, անցումային փուլ են մենհիրի և սահմանաքարի միջև (Le Rouzic 1921, 13, 21):

⁴⁶ Հ. Ավետիսյանի բանավոր հաղորդման համաձայն՝ Ս. Սարգսյանի ուղեգծային արշավների ընթացքում նմանատիպ հուշարձաններ հավաստված են նաև Արարատյան դաշտի այլ վաղ երկրագործական բնակավայրերում:

⁴⁷ Սարգսյան 2004, 295, Areshian 2005, 83-84:

հղկվածությունը և (կամ) հատույթում հստակ քառանկյունությունը: Այսպես, Արտավան 2 մենհիրի կողային հատվածները և դիմային հատվածը լավ մշակված են, անկյունները՝ ընդգծված: Քառակող, ընդգծված անկյուններով թեք վերնամասով մենհիրներ հավաստված են մի շարք վայրերում (Դադի վանքի, Արովյանի Կապույտ խաչ, Հարժիսի Բարևախաչ մատուռի հարավային պատի մեջ ագուցված խաչքարացված մենհիրները)⁴⁸: Նմանատիպ կոթողների փոքրածավալ օրինակներ հայտնի են մի շարք բնակավայրերից և դամբարանադաշտերից (օր.՝ Շահումյան):

Մենհիր-մարդակերպ քանդակ. Արձանների այս տիպը երբեմն համարվում է կոթողի մարդակերպացման փուլերից մեկը, որը կարող է արտահայտվել կոթողին մարդու ռեալորված ուրվագծեր տալով՝ մարդկային ուրվագծեր հիշեցնող բնական քարերի օգտագործմամբ⁴⁹: Այդօրինակ կոթող հայտնաբերվել է Փոքր Ալ լիճը եզերող քարացրոններում (Ալ լիճ 8)⁵⁰: Թեպետ կոթողը խիստ ռեալորված է, սակայն որոշ հատկանիշներ (ինգանկյուն վերին հատված⁵¹) թույլ են տալիս ենթադրելու դրա մարդակերպ լինելը⁵²: Այս տիպի կոթողների հետագա դրսևորումների թվին կարելի է դասել անտիկ շրջանի սխեմատիկ մարդակերպ կոթողները Հողմիկից և Ծիծեռնակաբերդից⁵³:

Հուշայուն-մարդակերպ քանդակ. Առաջին կոթողը (Հարժիս 27) ունի գլանաձև և վեր նեղացող իրան: Մարդկային դեմքը պատկերված է իրանի վերնամասում, գլանաձև ելուստի վրա: Երեսը պատկերելու համար գլանաձև հիմքի առկայությունը հազվադեպ չէ հայաստանյան հուշարձաններում (Այգեշատ, Էրեբունի, Կարմիր Բլուր)⁵⁴: Աչքերը և բերանը փորագիր են, ճակատը և քիթը պատկերված են հարթաքանդակի եղանակով⁵⁵: Այն նմանվում է Այգեշատի դամբարանադաշտում փաստագրված կոթողին⁵⁶: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ քննարկվող քանդակը նշանավորում է մենհիրների մարդակերպացումը:

Մենհիր (կոթող)-ֆալիկ քանդակ. Այս տիպի կերտվածքների թվին կարելի է դասել Հադիճավանք 3⁵⁷, Գեղաշենի⁵⁸ և Կռապաշտի տներ 1 կուռքերը,

⁴⁸ Ավետիսյան և այլք 2015, 65, Avetisyan et al. 2017, fig. 5 (17):

⁴⁹ Beneteau-Dovillard 2002, 570.

⁵⁰ Ավետիսյան և այլք 2015, 66:

⁵¹ Հնգանկյուն վերնամաս առկա է նաև որոշ մենհիրների պարագայում, օրինակ՝ Բանդիվանում (հետազոտությունը՝ Ա. Բոբոխյանի):

⁵² Միևնույն ժամանակ որոշակի գեներտիկ կապ է դիտարկվում մենհիրների և մարդակերպ արձանների միջև (Beneteau-Dovillard 2002, 570):

⁵³ Հակոբյան 2010, 23:

⁵⁴ Есаян 1980, 54-55, таб. 42/1, 43/3, 46/2.

⁵⁵ Ավետիսյան և այլք 2015, 51, նկ. 10:

⁵⁶ Հետազոտությունները՝ Հ. Ավետիսյանի, Ա. Բոբոխյանի, Ա. Գնունու, Լ. Մկրտչյանի:

⁵⁷ Խաչատրյան 2009, 19-21:

⁵⁸ Հետազոտությունները՝ Վ. Գայսերյանի:

որոնք աչքի են ընկնում ընդգծված ֆալիկ գլխամասով, ինչպես նաև կոպտատաշ կերտվածքով:

Վիշապոիդ. Մենաքարերի մի խումբ կրում է պատկերագիր ցից քարի՝ վիշապաքարի (ձկնակերպ կամ ցլակերպ քառակող կլոր քանդակ) և մենհիրի տարրեր: Վիշապոիդը դասական վիշապաքարից տարբերվում է հաճախ փոքր չափով (հմմտ. Ղուոթ Թափա 1), ձևով (Դարիկ 1), պատկերի բացակայությամբ (Եղնաջուր 1)⁵⁹:

Բնական ցից քարեր. Որոշ բնական օբյեկտներ, օրինակ՝ պաշտվող ժայռերը, ևս կարելի է դասել ցից քարերի թվին (հատկապես տարածված են Սյունիքում և Արցախում, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում)⁶⁰: Նմանատիպ քարաբեկորների վրա առկա են բնական և մարդածին մանրամասներ, որոնք մերձեցնում են դրանց մշակված քարաբեկորների հետ (օր.՝ միջանցիկ անցքեր, հմմտ. Թասիկ, Քյաթուկ, Բադրխան)⁶¹: Անմշակ ցից քարերի հաջորդ խումբը ներկայացված է դամբարաններում (դամբանի գագաթին կամ խցում) տեղադրված ժայռաբեկորներով (Աղվանի)⁶²:

Եզրակացություններ

Թեպետ կանգուն քարե կոթողները Հայաստանում հնուց հատուկ ուշադրության առարկա են եղել (դիցաբանություն, հեքիաթ, էպոս), նշված հուշարձանների մասին առկա տվյալների ընդհանրացումը և տիպաբանումը դեռևս խնդրահարույց են: Այս աշխատանքը փորձ է նախ ներկայացնելու հայկական ցից քարերի սահմանման չափանիշները, որի շնորհիվ արվում է դրանց տիպաբանության առաջարկ: Ըստ այդմ՝ Հայաստանի ցից քարերը կարելի է դասել մի քանի խմբի և ենթախմբի՝ մենհիրներ, հուշասյուներ, կոթողներ, բնական ցից քարեր, այլ տիպեր, անցումային ձևեր: Այս միավորները տարբերվում են միմյանցից ինչպես կերտվածքով, այնպես էլ հնագիտական համատեքստով ու ստեղծման ժամանակաշրջանով: Ցից քարերի և դրանց մասին պատկերացումների սկզբնավորումը կարելի է վերագրել վաղ երկրագործական հասարակություններին, թեև դրանց հստակ փաստագրումն առայժմ տեսանելի է բրոնզի և հատկապես երկաթի դարերի սահմաններում: Հնագույն այդ կոթողներից շատերը, փոխակերպվելով ձևով և բովանդակությամբ, հասել են մինչև մեր ժամանակները, իսկ դրանց մի մասը նույնիսկ չի կորցրել իր նախնական գործառույթային նշանակությունը:

⁵⁹ Հմմտ. Բորիսյան և այլք 2015, 298:

⁶⁰ Ширакуни 1904, 182-217, Մկրտչյան 2015, 132-133, Լալայեան 1897, 188-191, Միրախորեան 1885, 34, 46, 119, Լալայեան 1914, 26, 28-30:

⁶¹ Մկրտչյան 2015, 132, Լալայեան 1897, 190-191:

⁶² Մկրտչյան 2015, 132:

Գրականություն

- Ալիշան Ղ. 1910, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 546 էջ:
- Ավետիսյան Հ. 2016, Արամուսից հայտնաբերված puluse կոթողը, Հայագիտության հարցեր, N 2, 109-115:
- Ավետիսյան Հ., Բորոխյան Ա., Գնունի Ա., Սարգսյան Գ. 2015, Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Երևան, ԵՊՀ հրատ., 230 էջ:
- Ավետիսյան Հ., Գնունի Ա., Մկրտչյան Լ., Բորոխյան Ա. 2019, Վիշապ-քարակոթողների թասաձև փորվածքները և դրանց ընդհանուր զուգահեռները, Բորոխյան Ա., Զիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 591-623:
- Արեշյան Գ., Թումանյան Գ. 1991, Արուճի դամբանատեղի N 5 դամբարանը, Տիրացյան Գ. (խմբ.), ՀՀ-ում 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, էջ 24-26:
- Բարխուդարյան Ս. 1935, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Երևան, Պետհրատ, 94 էջ:
- Բորոխյան Ա., Զիլբերտ Ա., Հնիլա Պ. 2015, Վիշապաքարերի հնագիտություն, Պետրոսյան Ա., Բորոխյան Ա. (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 299-396:
- Գնունի Ա., Թադևոսյան Ա., Մկրտչյան Լ. 2017, Շրեշ բլուր, Փիլիպոսյան Ա. (խմբ.), Մեծամորյան ընթերցումներ I, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանություն» ՊՈԱԿ հրատ., էջ 25-38:
- Թորամանյան Թ. 1942, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, «ԱրմՖԱՆ», 402 էջ:
- Թումանյան Գ. 2015, Վիշապաքարերի պաշտամունքային-կիրառական գործառույթները, Պետրոսյան, Ա. Բորոխյան (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 99-120:
- Թումանյան Հ. (կազմ.) 1937, Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձանները, հ. I, Դիլիջանի շրջան, Երևան, Պետհամալսարանի տպարան, 38 էջ:
- Լալայեան Ե. 1897, Վարանդայ, Ազգագրական հանդէս, հ. II, էջ 3-244:
- Լալայեան Ե. 1898, Զանգեզուր, Ազգագրական հանդէս, հ. IV/2, էջ 7-116:
- Լալայեան Ե. 1904, Շարուր-Դարալագեազի գաւառ, Ազգագրական հանդէս, հ. XII, էջ 235-293:
- Լալայեան Ե. 1908, Պեղումներ Նոր Բայազետի գաւառում, Ազգագրական հանդէս, հ. XIX/1, էջ 59-84:
- Լալայեան Ե. 1914, Վասպուրական, Հաւատք, Ազգագրական Հանդէս, հ. XXV, էջ 21-60:
- Լիսիցյան Ա., Բայբուրդյան Ե. 1928, Հնությունների ցուցակագրությունն ու նկարագրությունը, Թիֆլիս-Երևան, Կենտրոնական գավառագիտական բյուրո, 72 էջ:
- Խաչատրյան Ն. 2009, Քարե կոթողներ Հաղիճավանքից, Քալանթարյան Ա., Բադալյան Ռ. (խմբ.), Հայաստանի հնագույն մշակույթ, հ. 3, Երևան, «Մուղնի», էջ 118-121:
- Ծոցիկեան Ս. 1917, Կովկաս-Արարատ, հ. 1, Ֆոէզեօ, առանց հրատ. նշման, 468 էջ:
- Հակոբյան Հ. 2010, Ծիծեռնակաբերդի 1998, 2007 թթ. պեղումների հիմնական արդյունքները, Հուշարձան տարեգիրք, հ. 2, Երևան, «Հուշարձան», էջ 21-44:
- Հմայակյան Ս. 1990, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 158 էջ:

- Հմայակյան Ա., Հակոբյան Հ., Մելքոնյան Մ. 2010, Աշոցքի, Հարթաշենի և Նավուրի մենհիրները, Ներսիսյան Ա. (խմբ.), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ. գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 25-33:
- Մկրտչյան Լ. 2015, Սյունիքի սրբազան լանդշաֆտի հուշարձանները պետական պահոցներում, Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորիսյան Ա., Սարգսյան Գ., Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 131-144:
- Միրախորեան Մ. 1884, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, Մաս Ա, Կ.Պոլիս, Տպագրութիւն Մ. Կ. Սարգեան, 203 էջ:
- Սարգսյան Ա. 2004, Հայաստանը քաղաքակրթության օրրան, Երևան, ԵՊՀ հրատ., 496 էջ:
- Սրուանձտեանց Գ. 1874, Գրոց-բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Միերի Դուռ, Կ. Պոլիս Տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան, 192 էջ:
- Քալանթար Ա. 1926, Քարե դարը Հայաստանում, Նորք, N 5-6, էջ 208-232:
- Акопян А. 2005, Охмикский храмовый комплекс, Абрамян Л. и др. (ред.), Археология, этнология и фольклористика Кавказа, Св. Эчмиадзин, Азарашен, с. 130-136.
- Арешян Г. 1978, Исследования в Шамираме, Археологические открытия 1977 г., Москва, «Наука», с. 503-504.
- Байерн, Ф. 1871, О древних сооружениях на Кавказе, Сборник сведений о Кавказе, т. I, Тифлис, Типография главного управления Наместника Кавказского, с. 306-325.
- Гулакян С. 1983, Указатель мотивов армянских волшебных сказок, Ереван, изд. Ереванского университета, 402 с.
- Гакстхаузен А. 1857, Закавказский край, Санкт-Петербург, Типография Главного штаба ЕИВ по учебным заведениям, 500 с.
- Джейранов Ф. 1898, Село Чайкенд Елизаветпольского уезда той же губернии, Сборник материалов по описанию местностей и племен Кавказа, т. 25, с. 59-100.
- Եսаяն Ս. 1980, Скульптура древней Армении, Ереван, АН Арм ССР, 76 с.
- Ивановский А. 1911, По Закавказью. Материалы по археологии Кавказа, Москва, Типография А.И. Мамонтова, вып. VIII, 238 с.
- Лисициан С. 1938, Кошун-дашское мегалитическое поселение в Сисиане (Зангезур), Сборник памяти акад. Н.Я. Марра, Москва-Ленинград, с. 709-721.
- Мартынов А., Шер Я. 1989, Методы археологического исследования, Москва, «Наука», 234 с.
- Ростомов И. 1898, Ахалкалакский уезд в археологическом отношении, Сборник материалов по описанию местностей и племен Кавказа, т. 25, с. 1-133.
- Тер-Мартirosов Ф. 2015, Ервандашат, Минасян Э. (ред.), Роцца рождения, Ереван, изд. ЕГУ, с. 33-54.
- Цонев Л. 2010, Мегалитите в България, София, «Фараго», 224 с.
- Ширакуни Н. 1904, Зангезурский уезд Елизаветпольской губернии, Сборник материалов по описанию местностей и племен Кавказа, т. 34, с. 182-217.
- Areshian G. 2005, Early Bronze Settlements in the Aarat Plain and its Vicinity, Archäologische Mitteilungen aus Iran und Turan, Berlin, Bd. 37, p. 71-89.
- Avetisyan H., Gnuni A., Bobokhyan A., Danielyan H. 2017, Menhirs of Harzhis, Avetisyan P., Grekyan Ye. (ed.), Biridging Times and Spaces. Papers in Ancient Near Eastern, Mediterranean and Armenian Studies, Oxford, Archaeopress Archaeology, p. 1-10.
- Auberry J. 1862, Wiltshire. The Topographical Collection, London, Longman & Co., 618 p.
- Bayens 1905, The Megalithic Remains of Anglesey, London, Society, 180 p.

- Beneteau-Douillard G. 2002, Anthropomorphic Standing Stones Alignment in South Vandee, Origin and Development of the Megalithic Monuments of Western Europe, International Conference, Bougon, Muse'e des Tumulus du Bougon, vol. 2, p. 560-576.
- D' Anna A., Pinet F. 2002, Standing Stones from the Alps and Mediterranean, Origin and Development of the Megalithic Monuments of Western Europe, International Conference, Bougon Muse'e des Tumulus du Bougon, vol. 2, p. 577-603.
- Ferguson J. 1872, Rude Stone Monuments, London, "John Murrey", 590 p.
- Girshman R. 1954, Iran, London, Pelican Book, 368 p.
- Le Rouzic Z. 1921, The Megalithic Monuments of Carnak and Locmariaquer, London, "H.J. Hall and Company", 39 p.
- Xnkikyan O. 2002, Syunik during Bronze and Iron Ages, Barrington, Mayreni Publishing, 258 p.

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՑԻՑ ՔԱՐԵՐԸ»

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Արսեն Բորիսյան

Ամփոփում

Հին Հայաստանի կանգուն քարերը և դրանց տեսակները մասնագիտական գրականության մեջ ընկալվում են որպես թաղումային հուշարձաններ (ի հիշատակ որևէ նշանավոր մարդու կամ իրադարձության), սահմանաքարեր կամ ճանապարհային ուղեցույցներ, զոհասեղաններ, դատաստանի կամ մաքրագործման վայրեր: Հայկական «ցից քարերի» բնորոշման չափանիշները տրվում են ըստ մշակման, ճարտարապետության, քանդակի, տարածականության սկզբունքի և հնագիտական համատեքստի, ըստ այդմ էլ առաջարկվում է դրանց տիպաբանությունը՝ մենհիրներ, հուշայուններ, կոթողներ, այլ տիպեր, անցումային ձևեր: «Ցից քարերի» և դրանց մասին պատկերացումների սկզբնավորումը կարելի է վերագրել վաղ երկրագործական հասարակություններին, թեև հստակ փաստագրումն առայժմ տեսանելի է բրոնզի և երկաթի դարերի սահմաններում: Այդ կոթողները մինչև օրս էական դեր են խաղում տեղական համայնքների պատկերացումներում:

Բանալի բառեր՝ Հայկական լեռնաշխարհ, բրոնզի և երկաթի դարեր, «ցից քարեր», մենհիր, հուշայուն, կոթող, անցումային ձև:

«СТОЯЧИЕ КАМНИ» ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Гайк Аветисян, Артак Гнуни, Левон Мкртчян, Арсен Бобохян

Резюме

«Стоячие камни» рассматриваются в профессиональной литературе как надгробные памятники (установленные в память об известных лицах или событиях), пограничные камни или указатели дорог, алтари, места суда или очищения. Критерии определения и типологии армянских «стоячих камней» связаны с их формальными и контекстуальными особенностями. Возникновение представления о «стоячих камнях» можно отнести к раннеземледельческим обществам, хотя предположительно они существовали между бронзовым и железным веками. Эти памятники до сих пор играют важную роль в мировоззрении местных общин.

Ключевые слова – Армянское нагорье, бронзовый и железный века, «стоячий камень», менгир, обелиск, памятник, переходная форма.

UPRIGHT "STANDING STONES" OF ANCIENT ARMENIA

Hayk Avetisyan, Artak Gnuni, Levon Mkrtchyan, Arsen Bobokhyan

Abstract

This study is dedicated to the problem of definition of "standing stones" and their types in ancient Armenia. These stones are considered in the professional literature as burial monuments (erected in memory of famous persons or events), boundary stones or road guides, altars, places of judgment or purification. The article focuses on criteria for the definition and typology of Armenian "standing stones", according to their formal and contextual features. The emergence of the perception of "standing stones" can be attributed to the early agricultural societies, although their clear existence is visible between the Bronze and Iron Ages. These monuments still play an important role in the world outlook of local communities.

Key words – Armenian Highland, Bronze and Iron Ages, "standing stone", menhir, obelisk, monument, transitional form.

THE MALTESE *RAZZETT*: AN ANTHROPOLOGICAL ANALYSIS OF THE ETHNIC FARMHOUSE WITHIN A MEDITERRANEAN CONTEXT

George A. Said-Zammit

Doctor of Philosophy
Professor of Archaeology
New Vision University

11, Nodar Bakhua Street, 0159 Tbilisi, Georgia

Visiting Professor

Yerevan State University, Archaeology and Ethnography Institute
Yerevan 0025, Republic of Armenia, Charents str. 15.

Email: g.saidzammit@ysu.am

The article has been delivered on 03.07.2022, reviewed on 04.05.2023, accepted for publication on 07.08.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.2-211

Introduction

The Maltese *razzett* (farmhouse) is perhaps one the most important examples of ethnic architecture that dominates Malta's rural landscape. The historical and archaeological evidence demonstrates that, for many centuries since the late Middle Ages this vernacular structure served as an abode for humans and animals sharing common parts of its domestic network, such as the central courtyard. Apart from being a peasant family dwelling and a shelter for its animals, the *razzett* likewise served as a storage place for crops and farming gear. The study and appreciation of the Maltese farmhouse is a relatively recent phenomenon which traces its origins to the last quarter of the twentieth century when urban development in Malta started threatening the future of the country's vernacular architecture. It was also during the same period when native structures like the *razzett* began to be considered as an integral part of Malta's national identity and a key pillar of its unique heritage. However, at that time architectural experts had the tendency to appreciate the Maltese farmhouse mostly from an architectural perspective, often neglecting its human dimension. The principal objective of this paper is to analyse this prominent indigenous structure from an anthropological perspective, focusing on the relationship between the dwellers and its domestic network. Besides, this study explores the underpinning social, economic and cultural implications of this indigenous dwelling, the degree of privacy the household members could enjoy when strangers or visitors were in attendance, and the security it offered against potential intruders or pilferers. The *razzett* certainly cannot be studied in isolation, therefore contextualizing this structure within its wider environment would give us a stronger picture of its anthropological identity. Within this framework, the present paper examines the correlation between the farm-

house (and its dwellers) and the rest of the village community: the neighbouring *rziezet* (plural of *razzett*), the village church, the streets and the village square (*pjazza* or *misraħ*). In other words, the connection between the family's microcosmic domestic environment and the macrocosmic world outside the house is crucial.

The *razzett* within the context of Maltese ethnic architecture

The Maltese Islands, situated in the central part of the Mediterranean Sea, between the island of Sicily and North Africa, have served as a haven for different human communities since Prehistoric times. The first settlers who occupied these islands in late Neolithic times apparently arrived from Sicily, followed by other Prehistoric and Bronze Age people who hailed from other parts of the Mediterranean region¹. By the late eighth century BC the archipelago was occupied by the Phoenicians and then by the Carthaginians, while by the final decades of the third century BC it became a possession of the Roman Empire². In the Middle Ages, Malta and Gozo became the playground of various European dominations, including the Arabs, the Normans, and the Aragonese³. Between 1530 and 1798 they became the island-*Convento* of the Knights Hospitallers of the Order of St. John of Jerusalem, Rhodes, and Malta. For the first time in its history Malta was ruled by a chivalric organization with sovereign powers⁴. After only two years of French occupation, in 1800 the Maltese Islands became a British colony, a status maintained until 1964 when they acquired political Independence and became a sovereign State with a democratically elected government. In 1974 Malta became a Republic, having its own Head of State (or President of the Republic). In 2004 it joined the European Union as a full Member.

The islands' ideal geographical position, their favourable climate and sheltered harbours are three principal reasons which have rendered the archipelago as a sheltered area, an ideal maritime hub, a formidable military base and, above all, a place of habitation for sedentary human communities to develop and foster⁵. Therefore, it's no wonder that the Maltese Islands still enjoy a unique cultural heritage which is manifested in a plethora of monuments and relics encompassing all historical periods, from Prehistory to our own times. *Palazzi*, grand houses, churches and cathedrals, fortifications, towers and other military systems, as well as various examples of ethnic structures characterize not only Malta's various towns and villages, but also its rural landscape. Collectively, these monuments and

¹ Trump 2004, 10-55.

² Bonanno 2005, 8-9.

³ Dalli 2006, 13-30.

⁴ Blouet 1993, 60-88, Freller 2010, 17-33.

⁵ Brullo *et al.* 2020, 7-13.

the material culture bequeathed by our ancestors constitute the embodiment of a nation with its distinct culture and identity, a people with an amalgamation of Semitic, European and Anglo-Saxon traits but, above all, Mediterranean⁶.

The ethnic *razzett* forms an essential part of Malta's vernacular legacy. It occurs in most rural areas in Malta and Gozo. Other examples of ethnic structures include the *girna*, the hybrid hovel, the cave-dwelling, the windmill (*mithna tarrih*) and the wayside churches⁷. From an architectural viewpoint, the *razzett* varies in form and dimensions, many of which consist of small humble abodes whilst others follow a more complex plan. Yet, despite such differences, the Maltese farmhouse has a set of basic characteristics which occur in most existing examples. These are:

- a) a central courtyard (*bitha*)
- b) an uncovered staircase (*tarag*) often located in the courtyard
- c) an introverted dwelling
- d) an austere façade
- e) a flat roof (*bejt*)
- f) a dwelling that permitted human and animal cohabitation
- g) a water cistern (*bir*; plural *bjar*)
- h) a cart-room (*remissa* or *sqifa*)
- i) an *għorfa* (plural *għorof*) (private room/s) in the case of two-storey structures, and
- j) high perimeter walls.

In a way, the above characteristics cast light on the rapport that the *razzett* had with its immediate natural environment. They also demonstrate the owner's awareness and knowledge of Malta's typical Mediterranean climate marked by hot and dry summers and cold and rainy winters. Hence, although they do not follow any formal architectural style, so much that our historical and notarial records hardly ever indicate who designed, planned or erected them, the emphasis that the dwellers put to live in dwellings that were concretely fit for all seasons, cannot be overlooked. These houses were built in perfect harmony with the surrounding landscape and in conformity with local climatic conditions. The peasants built their *rzezet* in a way to maximize the utilization of the available physical and natural resources, such as light, ventilation, rainwater, the sun, the wind, and the land potential⁸.

⁶ Buhagiar 1991, 13-27.

⁷ Fsadni 1992, Said-Zammit 2016, 69-132; 2022, 230-234.

⁸ Jaccarini 2002, 20-33.

The *razzett* as a Mediterranean vernacular abode

The study of the Maltese *razzett* must be contextualized within three important and interdependent aspects:

a) *the temporal*: the Arab occupation of the Maltese Islands in the late ninth century AD had a dramatic and long-time impact on the native culture. Even when Malta and Gozo were occupied by different later European dominations, such as the Normans and the Aragonese, Semitic culture in Malta persisted and continued to influence its inhabitants in several aspects, such as language, religion, agriculture, local toponymy and architecture⁹. Some of these Semitic traits still survive and form a fundamental part of Malta's national culture and identity. For instance, Maltese language is claimed to be the only Semitic language in the world written in the Latin alphabet. In architectural terms, in its general plan and characteristics the native farmhouse bears similarities with other counterparts in North Africa, Sicily, South Italy, Andalusian Spain, Greece and the Hellenic islands, the Near East and other parts of the Mediterranean region¹⁰. One of the main features that characterizes vernacular dwellings in the Mediterranean region is the central courtyard (fig. 1).

Վերլուծության արդյունքները նախ քարտեզագրվեցին և առաջին հերթին համեմատվեցին Ակնաշեն հուշարձանի համար առկա¹⁹ նեյտրոնային ակտիվացման մեթոդով ստացված անալիզների հետ (նկ. 12): Համեմատության միջոցով պարզ դարձավ, որ երկու վերլուծական աշխատանքների դեպքում ի հայտ է գալիս նման պատկեր: Ակնառու է, որ Ակնաշենի վանակատի ինդուստրիան հիմնված է եղել երկու հիմնական աղբյուրների՝ Արտենիի և Գութանասարի վրա, որոնց հետ է կապված Ակնաշենի հումքի բացարձակ մեծամասնությունը: Ստացված օբսիդիանի երկու ուտիլիզացման մոդելներում միակ տարբերությունն այն է, որ մեր արդյունքների դեպքում Արտենիին և Գութանասարին միասին բաժին է ընկնում հումքի մոտ 90%-ը, իսկ համաձայն նախորդ ուսումնասիրությունների արդյունքների՝ 80%-ը: Բացի այդ, ըստ մեր տվյալների, Ակնաշենում անհամեմատ գերակշռում է հենց Արտենիի հումքը: Ինչպես նշեցինք, Ակնաշենում հայտնաբերել ենք նմուշներ Գեղասարից (2%), ինչպես նաև 3 չնույնականացված նմուշներ (ամբողջական ցանկը տե՛ս նկ. 12-ում): Ուշագրավ է նաև այն փաստը, որ երկու դեպքում էլ այսպիսի աղբյուրի հումքի առկայությունը վկայում է տեղի բնակչության կողմից օգտագործված այլընտրանքային աղբյուրների մասին: Դա վերահաստատում է նախկին ուսումնասիրությունների արդյունքները:



Նկ. 12. Ակնաշենի ուտիլիզացման մոդելների համեմատությունը

Այնուհետև դիտարկեցինք Ակնաշենի վանակատի ուտիլիզացման մոդելը տվյալ տարածաշրջանի մյուս համաժամանակյա հուշարձանների

¹⁹ Badalyan et al 2010.

Media Type	Armenia (Total)	Yerevan Region	Other Regions
TV (Արտոնք)	85.59%	10.15%	4.26%
Radio (Գրառանար)	67.80%	18.95%	13.85%
Print (Փաթիլ թուղթ)	50.52%	19.25%	30.23%

Legend:

- Armenia (Total): Red
- Yerevan Region: Blue
- Other Regions: Green

Այսպիսով, խոսելով տիպաբանության, պատրաստման հնարների, ձևաբանության մասին, կարելի է ասել հետևյալը՝

²⁰ Badalyan et al 2004, Badalyan et al 2010, Martirosyan-Olshansky 2015.

Ակնաշենի քարի ինդուստրիան, համեմատելով տարածաշրջանի՝ վերը նշված միևնույն մշակույթին պատկանող հուշարձանների հետ, կարելի է անել որոշ նախնական եզրակացություններ: Բեկոտման հնարների մանրամասները բավական դժվար է հստակ ներկայացնել: Սակայն մի բան կարող ենք վստահաբար ասել, որ կանոնավոր շեղքերի բեկոտման համար օգտագործվել է սեղմելու հնարը: Սակայն իրատեսական չէ տոկոսային հարաբերության մասին խոսելը, թե որ մասն է կատարվել լծակի կամ հենակի օգնությամբ: Իսկ ցլեպների բավական մեծ չափաբաժնի առկայությունը փաստում է այն մասին, որ միջուկների նախապատրաստման համար օգտագործվել են ուղղակի կամ անուղղակի հարվածային (percussion, indirect percussion) հնարները: Տիպաբանական տեսանկյունից Ակնաշեն նեոլիթյան բնակատեղիից փաստագրված օբսիդիանից առարկաները գրեթե նույնությամբ կրկնում են հարևան հուշարձանների քարի տեխնիկական և տիպաբանական առանձնահատկությունները, տարբերությունը միայն այս կամ այն տիպին պատկանող գործիքների առկայությունն է (կամ ոչ) կամ դրանց տոկոսային հարաբերությունն է մի հորիզոնից մյուսին անցնելիս:

Բնակատեղիի վանակատի աղբյուրների օգտագործման սկզբունքների առնչությամբ պետք է նախ նշել, որ առաջին անգամ Ակնաշենի քարե ինդուստրիայի ուսումնասիրության համար հեղինակները կիրառել են շարժական ռենտգենային ֆլուորեսցենցիայի մեթոդը: Կարելի է ասել, որ ստացած տվյալները վերահաստատում են նախկին հետազոտությունների արդյունքները: Առնվազն երկու խոշոր չափաբաժնով ներկայացված աղբյուրների հումքի առկայությունը հստակ բնութագրում է Ակնաշեն նեոլիթյան բնակատեղիի բազմաղբյուր ուտիլիզացման մոդելը: Մյուս համաժամանակյա հուշարձանների ինդուստրիան նույնպես ներկայացված է մեկից ավելի աղբյուրների հումքով, իսկ հիմնական աղբյուրներ են եղել տեղի՝ մոտ 50 կմ հեռավորության վրա գտնվող օբսիդիանի խոշորագույն մի շարք կուտակումներ: Ելնելով վիճակագրական վերլուծության արդյունքներից՝ սրանց ընտրությունը, հավանաբար, մեծ մասամբ կախված է եղել բնակատեղիի աշխարհագրական դիրքից և կրում է զուտ տեղային բնույթ: Առանձին դեպքերում հայտնի են նմուշներ բավական մեծ հեռավորության վրա տեղադրված՝ հիմնականում Թուրքիայի տարածքում գտնվող աղբյուրներից: Սա նույնպես խոսում է դրանց հետ այս կամ այն կերպ եղած առնչության մասին, դա են փաստում նաև մեր աշխատանքում առկա չնույնականացված նմուշները:

Գրականություն

Ջուհարյան Ա. Կ. 2017, Հայաստանի օբսիդիանի աղբյուրների անալիտիկ բազայի ձևավորումը շարժական ռենտգենային ֆլուորեսցենցիայի եղանակով, ԵՊՀ Գիտական տեղեկագիր, N 51(3), Երևան, էջ 159-165:

- Arazova R.B. 1974, Vkladyishi serpov iz poseleniya Shomu-tepe, «Dokladyi» AN AzSSR, N 5, p. 1-27.
- Badalyan R., Lombard P., Chataigner C., Avetisyan P. 2004, The Neolithic and Chalcolithic Phases in the Ararat Plain (Armenia): The View from Aratashen, *Ancient Near Eastern Studies* 12, p. 437-465.
- Badalyan R. 2010, Obsidian in the Southern Caucasus: The Use of Raw Materials in the Neolithic to Early Iron Ages, Von Majkop bis Trialeti. Gewinnung und Verbreitung von Metallen und Obsidian in Kaukasien im 4. – 2. Jt. v. Chr. Bonn. Rudolf Habelt GmbH, S. 1-14.
- Badalyan R., Harutyunyan A., Chataigner C., Le Mort F., Chabot J., Brochier J.E., Balasescu A., Radu V., Hovsepyan R. 2010, The Settlement of Aknashen-Khatunarkh, A Neolithic site in the Ararat plain (Armenia): Excavation results 2004-2009, Tuba-Ar 13.
- Badalyan R., Harutyunyan A. 2014, Aknashen – the Late Neolithic Settlement of the Ararat Valley: Main Results and Prospects for the Research. *Stone Age of Armenia* Kanazawa University, p. 161-170.
- Chabot J., Pelegriin J. 2012, Two Examples of Pressure Blade Production with a Lever: Recent Research from the Southern Caucasus (Armenia) and Northern Mesopotamia (Syria, Iraq). In: Desrosiers, P.M. (ed.), *The Emergence of Pressure Knapping: From Origin to Modern Experimentation* (New York: Springer), p. 181-198.
- Frahm E. 2013, Is Obsidian Sourcing about Geochemistry Archaeology? A Reply to Speakman and Shackley, *Journal of Archaeological Science* 40, p. 1444-1448.
- Frahm E., Shmidth B.A., Gasparyan B., Yeritsyan B., Karapetian S., Meliksteyan Kh. Adler D.S. 2014, Ten Seconds in the Field: Rapid Armenian Obsidian Sourcing with Portable XRF to inform Excavations and Surveys, *Journal of Archaeological Science* 41, p. 333-348.
- Goodale N., Bailey D.G., Jones G.T., Prescott C., Scholz E., Stagliano N., Lewis C. 2012, pXRF: A Study of Inter-Instrument Performance, *Journal of Archaeological Science* 39, p. 875-883.
- Hansen S., Mirtskhulava G., Bastert-Lamprichs K., Benecke N., Gatsov I., Nedelcheva P., 2006, Aruchlo 2005-2006. Bericht über die Ausgrabungen in einem neolithischen Siedlungshügel. *Archäologische Mitteilungen aus Iran und Turan* 38, S. 1-34.
- Hansen S., Mirtskhulava G., Bastert-Lamprichs K., Görsdorf J., Neumann D., Ullrich M., Gatsov I., and Nedelcheva P. 2007, Aruchlo 2007. Bericht über die Ausgrabungen im neolithischen Siedlungshügel. *Archäologische Mitteilungen aus Iran und Turan* 39, S. 1-30.
- Inizan M.-L., M. Reduron-Ballinger, Tixier J. 1999, *Technology and Terminology of Knapped Stone*, *Préhistoire de la Pierre Taillée*, tome 5.
- Lyonnet B., Guliyev F. 2010, Recent Discoveries on the Neolithic and Chalcolithic of Western Azerbaijan. *TÜBA-AR* 13, p. 220-227.
- Martirosyan-Olshansky K. 2015, Provenance Study of Obsidian Artifacts from the Neolithic Settlement of Masis Blur (Armenia) using Portable X-Ray Fluorescence Spectrometry, 80th Annual SAA Meeting at San Francisco, CA.
- Nishiaki Y., Guliyev F., Seiji Kadowaki, Valeh Alakbarov, Takehiro Miki, Shahin Salimbayov, Chie Akashi, and Saiji Arai 2013, Investigating Cultural and Socioeconomic Change at the Beginning of the Pottery Neolithic in the Southern Caucasus: The 2013 Excava-

- tions at Hacı Elamxanlı Tepe, Azerbaijan, Bulletin of the American Schools of Oriental Research 374, p. 1-28.
- Shackley M.S. 2011, X-ray Fluorescence Spectrometry (XRF) in Geoarchaeology, Springer Science + Business Media, LLC.
- Shackley M.S. 2012, Portable X-ray Fluorescence Spectrometry (pXRF): The Good, the Bad, and the Ugly, Archaeology Southwest Magazine, vol. 26, N 2.
- Speakman R.J., Shackley M.S. 2013, Silo science and portable XRF in archaeology: a response to Frahm, Journal of Archaeological Science 40, p. 1435-1443.
- Tixier J. 1974, Glossary for the Description of Stone Tools, Newsletter of Lithic Technology: Special Publication Number 1, December.

ԱՎՆԱՇԵՆԻ 2015 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ՓԱՍՏԱԳՐՎԱԾ ՔԱՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ալեքսան Զուհարյան, Կարեն Ազատյան

Ամփոփում

Սույն աշխատանքը ներկայացնում է Ակնաշեն ունեցության (մ.թ.ա. VI հազ. I կես) բնակատեղիի 2015 թ. պեղումներից փաստագրված քարի ինդուստրիայի հնագիտական և երկրաքիմիական վերլուծության արդյունքները: Հնավայրը պեղվում է սկսած 2004 թ. հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի կողմից՝ Ռ. Բադալյանի ղեկավարությամբ: Ընդհանուր առմամբ, հուշարձանի պեղումներից փաստագրվել է շուրջ 50000 վանակատե առարկա. մեր ուսումնասիրության նյութ են դարձել 2015 թ. 9, 10, 11, 12 (մոտ 100մ² տարածք) քառակուսիների վերին՝ I-III հորիզոններից փաստագրված ողջ քարե գտածոները (2035 հատ): Վերոնշյալ նյութը նախ ենթարկվել է տիպաբանական և տեխնիկաձևաբանական վերլուծության: Այնուհետև նեոլիթյան ոչ խաթարված իրավիճակներից առանձնացվել են 118 հատ վանակատե իրեր, որոնց քիմիական առանձնահատկությունները որոշելու և գտածոներն իրենց ծագման աղբյուրին վերագրելու համար օգտագործվել է շարժական ռենտգենային ֆլուորեսցենցիայի (pXRF) մեթոդը:

Բանալի բառեր՝ Ակնաշեն, նեոլիթ, քարի ինդուստրիա, օբսիդիան, երկրաքիմիական անալիզ, տիպաբանական անալիզ, pXRF մեթոդ:

РЕЗУЛЬТАТЫ ИССЛЕДОВАНИЙ КАМЕННОЙ ИНДУСТРИИ НА ОСНОВЕ МАТЕРИАЛОВ ИЗ РАСКОПОК АКНАШЕНА 2015 ГОДА

Алексан Джугарян, Карен Азатян

Резюме

В работе представлены результаты геохимических и типологических исследований каменной индустрии позднего неолита (I пол. VI тыс. до н.э.) на основе

материалов раскопок 2015 года, проводившихся в Акнашене. Раскопки памятника были начаты в 2004 году армяно-французской экспедицией под руководством Р. Бадаляна. В общей сложности во время раскопок было выявлено около 50000 обсидиановых предметов. Материалом данного исследования стали 2035 предметов из обсидиана, выявленных в 2015 году из первых трех горизонтов раскопок – 9, 10, 11, 12 (около 100 м²). В первую очередь был проведен их типологический и технико-морфологический анализ. Далее из неразрушенных слоев были выбраны 118 обсидиановых предметов, которые были проанализированы методом портативной рентгенофлуоресценции с целью определения их геохимического состава для уточнения их региональной принадлежности.

Ключевые слова – Акнашен, неолит, каменная индустрия, обсидиан, геохимический анализ, типологический анализ, метод pXRF.

RESULTS OF STONE INDUSTRY ANALYSIS FROM AKNASHEN BASED ON MATERIALS FROM 2015 EXCAVATIONS

Alexan Juharyan, Karen Azatyan

Abstract

In this study the results of geochemical and typological analysis of late Neolithic settlement Aknashen (1st half of the 4th millennium BC) are presented. The excavations in Aknashen have started in 2004 by Armenian-French expedition under the direction of R. Badalyan. Totally 50000 obsidian objects were found during the excavation. The subject of this study are the whole lithics (2035 objects) excavated in 2015 from 1st, 2nd and 3rd horizons of 9 to 12 trenches. The material was first subjected to typological and technical-morphological analysis. Then from the undisturbed Neolithic context 118 obsidian objects were selected which were subjected for Portable X-Ray fluorescence analysis to determine their geochemical features and to attribute them to their sources.

Key words – Aknashen, Neolithic, stone industry, obsidian, geochemical analysis, typological analysis, pXRF methodology.

«ՁՈՒԿ-ՄԱՐԴ» ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Անի Սարատիկյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ

ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ anisaratikyaniae@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 09.10.2022, գրախոսվել է 13.10.2022, ընդունվել է տպագրության 07.08.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.2-268

Ներածություն

Կոթողային հուշարձանների ուսումնասիրությունը, մեկնաբանությունն ու վերաիմաստավորումը վերջին տարիների հնագիտական հետազոտությունների ամենաքննարկվող հարցերից են: Այս իմաստով ուշագրավ մշակութային երևույթներից են վիշապ-քարակոթողները, դրանց հետ կապվող լեռնային-ջրային պաշարներով հարուստ լանդշաֆտները: Վերջիններս բրոնզեդարյան երևույթ են: Նոր տվյալները, սակայն, հուշում են, որ բրոնզի դարից հետո ևս այդ կոթողային հուշարձանների մասին վերհուշը նորովի է դրսևորվել:

Տավուշի մարզի Կոթի գյուղի տարածքից 2021 թ. հայտնաբերվեցին երկու քարե արձան-կոտքեր: Դրանցից մեկը մարդակերպ է, սակայն կրում է ձկնային, մասամբ նաև ցլային հատկանիշներ: Երկրորդ արձանը ձկնակերպ է, զուրկ մարդակերպ հատկանիշներից: Այս կոթողների հնագիտական համատեքստը պարզելու համար 2022 թ. կատարեցինք ստուգողական պեղումներ¹:

Ուսումնասիրության պատմությունը

Կոթիում կատարված ուսումնասիրությունները փաստում են տարածքի վաղ բնակեցման մասին²: Ուշագրավ են հատկապես տարբեր տարիների ընթացքում պատահականորեն գտնված մարդակերպ և ձկնակերպ տարբեր չափերի քարե արձանները: Դրանցից երեքը հրատարակվել են և մեծ կարևորություն ունեն համանման արձանների ուսումնասիրության և թվագրության հարցում: Մինչև օրս գյուղի տարբեր հատվածներից գտնվել է 9 քարե արձան³:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ՝ 21AG-6A080 ծածկագրով թեմայի շրջանակում: Հոդվածը գրելու ընթացքում քննարկումների և օգտակար դիտողությունների համար խորին շնորհակալություն ենք հայտնում Ա. Բորոյանին, Ս. Հոբոսյանին և Հ. Գալստյանին:

² Քալանթարյան, Հոբոսյան 2009, 247-269, Есаян 1976, 252:

³ Բանավոր տեղեկություն կա ևս մի արձանի մասին, որը չի պահպանվել: Գյուղացիներից մեկն այն տեսել էր «Քոռ աղբյուր» կոչվող տարածքում, 2009 թ. Ա. Քալանթարյանը և Ս. Հոբոս-

Կոթիի արձաններից առաջինը Սարդարապատի թանգարանում է: Արձանը մանրամասնորեն նկարագրել է հնագետ Ս. Եսայանը (աղ. 1, նկ. 2). համեմատելով Մեծամորում գտնված համանման արձանի հետ՝ Եսայանը գրում է. «Երևում է, որ այդ նույն տիպին է պատկանում Կոթիից մեծ քարե կուռքի ֆիգուրը, որը կանգնած է եղել երբեմնի դամբարանի վրա»⁴: Ուշագրավ է հատկապես արձանի ճակատի հատվածում փորագրված սվաստիկան, որը մեկնաբանվում է որպես արևի աստվածության խորհրդանիշ⁵: Ինչպես նշում է Եսայանը, արձանի թիկունքում երևում են կապված վարսերը⁶:

Լոռի Բերդի դամբարանադաշտից հայտնաբերված մի քարե կուռք քննելիս Կոթիից գտնված երկրորդ արձանին է անդրադառնում հնագետ Ս. Դեմջյանը (աղ. 1, նկ. 1): Համեմատելով այդ երկու կուռքերը՝ նա նշում է, որ այն, ինչպես նաև նույն տարածքից գտնվածները, հավանական է, որ դրված լինեին ցեղի առաջնորդների դամբարանների վրա՝ խորհրդանշելով պտղաբերության ու կյանքի հարատևության գաղափարը⁷: Նմանատիպ մի արձանիկ էլ գտնվել է հողային աշխատանքների ժամանակ Շահնանց գերեզմանոցում⁸: Այն գլանաձև է, ընդգծված են աչքերը և քիթը, դեմքը պատկերված է հարթաքանդակի տեխնիկայով (աղ. 2, նկ. 1):

Այս կուռքերից չորրորդը առաջին անգամ է ներկայացվում գիտական շրջանակներում: Արձանն ունի հստակ արտահայտված աչքեր, եռանկյունաձև քիթ, բերանը քանդակված է բացված վիճակում, ճակատի հատվածը եզրագծված է: Կուռքը կոտրված է գլխի ներքևի հատվածից (աղ. 3, նկ. 1)⁹:

Այսպիսի մարդակերպ արձաններ գտնվել են Հայաստանի մի քանի հնավայրերից՝ օրինակ, Ջուջևանից, Կարմիր բլուրից, Դվինից, Աղջաղալայից, Հարժիսից և այլն¹⁰:

Նորահայտ կոթողները

Հիշյալ արձանների շարքը համալրվեց 2021 թ. սեպտեմբերին, երբ հողային աշխատանքներ կատարելու ժամանակ 1.20 սմ խորության մեջ հայտնաբերվեց մի քարե կուռք: Ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ այն մեծ չափի մարդակերպ արձան է, որի կողքին կար ևս մեկը՝ ձկնակերպը

յանը այդ արձանիկը փնտրելիս նշված տեղամասում հայտնաբերել են Ք.ա. VII-VI դդ. մի դամբարան, տե՛ս Քալանթարյան, Հորոյան 2009, 248:

⁴ Есаян 1976, 229.

⁵ Голан 1994, 122, рис. 236.

⁶ Есаян 1976, 229.

⁷ Devedjyan 2009, 149.

⁸ Արձանն այժմ Հայաստանի պատմության թանգարանում է, Քալանթարյան, Հորոյան 2009, 247:

⁹ Արձանը գտնվել է հողային աշխատանքների ժամանակ Շոր աղբյուր հանդամասի տարածքից, որտեղ է նաև Շոր աղբյուր կիկլոպյան ամրոցը, տե՛ս Есаян 1976, 251:

¹⁰ Բարսեղյան 1962, 258, Мартиросян 1958, 123-127, 139:

(աղ. 4, աղ. 5)¹¹: Այս քարե արձանները ուշագրավ են իրենց մոնումենտալությամբ:

Առաջին՝ մարդակերպ արձանն ունի 2մ 5 սմ բարձրություն: Դատելով քարի մշակված հատվածի բարձրությունից (1.85 սմ)՝ այն կանգնեցված է եղել ուղղահայաց դիրքով: Արձանն ունի լավ մշակված դեմք, փորագրման տեխնիկայով ընդգծված են աչքերը, քիթը և բերանը: Բերանից մոտ 20 սմ ներքև երևում է մորուքի նմանվող մի պատկեր՝ շատ նման վիշապ-քարակոթողների պատկերագրության մեջ տարածված ցլապատկերներին: Արձանի վերհոնքային-ճակատային ձգված հատվածը կարծես թե դուրս է գալիս համամասնությունից, որը ևս թույլ է տալիս ձկնակերպ վիշապաքարերին բնորոշ ձևաբանական ազդեցություն տեսնել: Մեջտեղի հատվածում՝ երկու կողմերում քանդակված են ուսերը, որոնք խորհրդանշային բնույթ ունեն: Բերանից ներքև մորուքի նմանվող հատվածը, ինչպես նշեցինք, մի կողմից վիշապ քարերից հայտնի ցլապատկեր է հիշեցնում, մյուս կողմից վերարտադրում է էա աստծո պատկերագրության մեջ հայտնի մորուքը¹²: Արձանի ձևաբանական հատկանիշները միացնելով՝ կարող ենք ենթադրել, որ այն ներկայացնում է խառնէակ, որում համադրվել են ցլապատկերը, ձկնաձև իրանը, մարդակերպ դիմագծերը՝ ներկայացնելով՝ «ձուկ-մարդ» աստվածությամբ¹³:

Մյուս արձանը, որ գտնվեց անմիջապես այդ մարդակերպ կոթողի կողքին, դրված էր զուգահեռ՝ գլուխը դեպի հյուսիս-արևելք: Այն ունի ձկնաձև իրան, լավ մշակված են աչքերը և ճակատը, իրանի վրա՝ գլխից դեպի պոչն ունի հորիզոնական փորվածք-գիծ: Պոչի մի մասն անմշակ է, հավանաբար այն նույնպես կանգնեցված է եղել: Արձանի երկարությունը 1.88 սմ է: Այս տեղամասից գտնվեց նաև մի քարե մակույկաձև աղորիք (տե՛ս աղ. 2, նկ. 2):

Շարունակելով աշխատանքը՝ 2022 թ. 2 մ խորության մեջ հայտնաբերվեց երրորդ կոթողը՝ կրկին ձկնակերպ. այն ունի 1.10 սմ երկարություն և 42 սմ բարձրություն (տե՛ս աղ. 6, նկ. 3): Այս կոթողն ունի կոպիտ մշակման հետքեր, արտահայտված է ձկնային ֆորման, ունի մշակված պոչ:

Կոթողի շուրջ անկանոն լցված էին տարբեր չափերի քարեր՝ ստեղծելով խաթարված հարթակի տպավորություն: Քարերի այդ շերտի տակ գտնվեցին մարդու և կենդանու ատամներ (մեծ չափի՝ 6.5 սմ), փոքր՝ հավանաբար այծյամի եղջյուրներ (երեք հատ), կենդանու ծնոտ, մակույկաձև աղորիք (աղ. 2, նկ. 2) և ածխի մնացորդներ: Հայտնաբերվեցին նաև տար-

¹¹ Շնորհակալություն ենք հայտնում Կոթի գյուղի բնակիչ Սասուն Սիրադեղյանին՝ արձանը հայտնաբերելուց հետո ՀՀ ԳԱԱ ՀԱԻ համապատասխան մասնագետներին տեղեկացնելու, ինչպես նաև արձանների հետագա պահպանության համար կատարած աշխատանքի համար:

¹² Batmaz, Uhri 2008, 75.

¹³ Reallexikon der assyriologie und vorderasiatischen archäologie 1993, 243, 252, Reallexikon der assyriologie und vorderasiatischen archäologie 1971, 70-71.

բեր ժամանակաշրջանների մեծաքանակ խեցեղեն բեկորներ, որոնք խառը լցված էին ամբողջ խցի տարածքում:

Կոթիի տարածքում հետախուզական աշխատանքների շնորհիվ գտնվեց գլանաձև, լավ մշակված ևս երկու կոթողի բեկոր (տե՛ս աղ. 6, նկ. 1, 2):

Կոթողները ջրի հնագույն պաշտամունքի համատեքստում

Կոթիի կոթողները անհրաժեշտ է դիտարկել Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների՝ ջրի մասին հնագույն պատկերացումների համատեքստում:

Հայկական լեռնաշխարհում և Կովկասում ջուրը խորհրդանշող դրսևորումներ առկա են խեցեղենի, մետաղե առարկաների (հատկապես բրոնզե գոտիների) վրա: Ջրի պաշտամունքին են առնչվում հայտնի վիշապ-քարակոթողները: Այդ պաշտամունքը կապվում էր պտղաբերության, հողագործության և անասնապահության հետ, ուղեկցվում էր հատուկ ծեսերով¹⁴:

Ջրի և ձկնակերպ աստվածությունների պաշտամունքի կարևոր շրջան էր նաև Միջագետքը¹⁵: Միջագետքում հայտնի էր մարդաձևյան կերպարով իմաստության, արիեստների և մոգության էա աստվածությունը, որին վերաբերող արձաններ են գտնվել Աշուրում, և որոնք զուգահեռներ ունեն ուրարտական Կարմիր բլուրում¹⁶:

Վիշապաձևյան և մարդաձևյան մասին պատկերացումներ կան նաև հայոց մեջ: «Եթե աղբյուրներում սատանաներ էին բնակվում, ապա գետերի մեջ՝ վիշապ-ձկներ: Օրինակ, Արածանու մասին պատմվում է. որսորդները հալածում էին մի արջի, որը փախչելով ընկնում է գետը. մի քանի րոպե մնում և հանկարծ դուրս է գալիս պլոկած մազերով. գետը ծածկվում է արյունով, ապա դրան հետևում է փորը ճեղքած մի վիշապ-ձուկ՝ փռված ջրի երեսին»¹⁷: Հեքիաթներում նույնպես մշտապես առկա է մարդ-ձուկ զուգահեռը, որտեղ ձուկը այլակերպվում է, անցնում մարդու հետ փորձության միջով, այնուհետև կրկին վերափոխվում ձկան, այդպիսով կարծես նորից վերարտադրում դիցաբանական սյուժեն. «Ես է՛ն ձուկն եմ, որ հորդ ձեռքիցը իրեք անգամ խլեցիր, ազատեցիր, ես է՛նտեղ փորձեցի քու հոգիդ: Ես ինչպէս որ ձուկ էի, էլի է՛նպես ձուկ կը դառնամ, կերթամ իմ ծովիս մեջը»¹⁸: Մեկ այլ

¹⁴ Տե՛ս Урушадзе 1973, 59, 61: Ձկնակերպ վիշապաքարերի համար տե՛ս Բոբոխյան և այլք 2019, Բոբոխյան 2020:

¹⁵ Мифы народов мира 1991, т. 1, 524, 545, Batmaz, Uhri 2008, 66.

¹⁶ Esrak 2010, 10, Мифы народов мира 1992, т. 2, 24, 40, 234, Тараян 2010, 177. Այդ արձանախմբի մասին նշում է նաև Բ. Պիոտրովսկին, Пиотровский 1959, 230: Այդ արձանները հանդիպում են նաև հիվանդների սենյակներում, Пиотровский 1952, 24: Այսօրինակ ձկնակերպ հմայիլները պահպանվում են նաև միջնադարում, տե՛ս, օրինակ, Шавкунов 1973, 265: Այլ զուգահեռների համար հմմտ. Мифы народов мира 1991, т. 1, 24, 186, Խաչմանյան 2019, 281-282:

¹⁷ Բենսե 1972, 48:

¹⁸ Մխիթարեանց 1901, 49:

ժողովրդական գրույցում կրկին առկա է ծուկ-մարդ փոխակերպության մասին մի դրվագ, որտեղ ծուկը փոխակերպվում է մարդու, փրկում է նրա կյանքը, այնուհետև վերափոխվում ձկան¹⁹: Այս առասպելների կիսամարդ-կիսաձուկ հերոսները արքեպիսկոպոսի վաղագույն ակունքներ ունեցող դրսևորումներ են, որոնց մասին վերհուշը պահպանվել է նաև միջնադարում. դրա վկայությունն է Հաղպատի նշանավոր Ավետարանի խորանում պատկերված Շերանիկը. նրա հագին տեսնում ենք երկար պարեգոտ և երկփեղկ գլխարկ, որով երիտասարդ անեցին կարծես ձկան կերպարանքով լինի²⁰:

Եզրակացություններ

Կոթողների կոթողների վերաբերյալ հարկ է եզրակացնել հետևյալը.

1. Կոթողները մշակված են բոլոր կողմերից, պատկերներն արված են փորագրման և հարթաքանդակի տեխնիկայով: Հին քանդակագործը ակնհայտորեն նպատակ չի ունեցել ծավալներ և իրական կերպար շեշտադրելու, այլ ստեղծել է ժամանակի հավատալիքային աշխարհի խորհրդանշական կերպարներ:

2. Կոթողները վերաբերում են երկաթի դարին: Ձկնակերպությամբ դրանք մասամբ շարունակում են վիշապաքարերի բրոնզեդարյան երևույթը, իսկ խառնէակության հատկանիշով կրում են հեռավոր միջագետքյան ազդեցություն, որոշակի զուգահեռներ կան նաև ուրարտական արվեստում²¹:

3. Կոթողներն իրենց մարդաձկնային հատկանիշներով կապվում են ջրի հնագույն պաշտամունքին և իրենց իմաստային զուգահեռներն են գտնում ինչպես միջնադարյան, այնպես էլ ուշ հայկական բանահյուսական տեքստերում²²:

Գրականություն

Ատրպետ 1884, Ոսկեթեփուկ (ժողովրդական գրույց), Աղբիւր, Միամսեայ պատկերազարդ հրատարակութիւն երեխաների և դաստիարակների համար, երկրորդ տարի, N 12, Թիֆլիս, Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան, էջ 437-449:

Բարսեղյան Լ. 1962, Ուշ բրոնզե էպոխայի մի քանի նորահայտ պաշտամունքային հուշարձաններ, Պատմա-բանասիրական հանդես, N 3 (18), ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 258-260:

¹⁹ Ատրպետ 1884, 448:

²⁰ Մաթևոսյան 1984, 165, նկ. 3:

²¹ Հմմտ. Կուռա աստվածության հետ կապվող կոթողները (Գրեկյան 2019, 437):

²² Կոթողներից երկուը թիկունքին կրում են զուգահեռ ուղղահայաց գծեր (աղ. 1, նկ. 1, 2), որոնք աստվածության վարսեր են խորհրդանշում (Есаян 1976, 229, Devedjyan 2009, 149), որը կապվում է անձրևի պաշտամունքի հետ (հմմտ. Голан 1994, 14), մի առնչություն, որն առկա է նաև հայ միջնադարյան վիպական ավանդության մեջ (հմմտ. Դեմետր և Գիսանե եղբայրների մասին պատմությունը, որոնց կուռքերը կանգնեցվել են աղբյուրառատ Իննակնյա վայրում՝ Հարությունյան 2001, 21, Petrosyan, Tiratsyan 2011, 158):

- Բորոխյան Ա., Զիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.) 2019, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 651 էջ:
- Բորոխյան Ա. 2020, Ատրպետի «գիտական արկածները» և վիշապ քարակոթողների հայտնագործումը, Երևան, Հայաստանի պատմության թանգարանի հրատ., 152 էջ:
- Գրեկյան Ե. 2019, Ուրարտական կոթողը հինարևելյան համատեքստում (նախնական դիտարկում), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին (խմբ. Ա. Բորոխյան, Ա. Զիլիբերտ, Պ. Հնիլա), Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 437-447:
- Երանյան Ն.Ա. 2015, Նոր գտածոներ Արցախի երկաթեդարյան մշակույթի վերաբերյալ, ՎԷՄ համահայկական հանդես, N 3 (51), էջ 128-140:
- Խաչմանյան Ս.Հ. 2019, Կաթողիկոսական թագ-խույրի խորհրդաբանությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, էջ 275-292:
- Հարությունյան Ս. 2017, Հայ առասպելաբանություն, Երևան, «Անտարես», 501 էջ:
- Հարությունյան Ս. 2001, Մշո Սուրբ Կարապետ եկեղեցու պաշտամունքային նախահիմքերը և սբ. Կարապետի կերպարն ըստ ժողովրդական ավանդության, Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը (խմբ. Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան), Երևան, «Հայաստան», էջ 21-28:
- Մաթևոսյան Կ. 1984, Անիի քաղաքացիների դիմանկարները «Հողբատի ավետարանի» խորաններում, Բանբեր Երևանի համալսարանի, ԵՊՀ հրատ., N 3 (54), էջ 162-168:
- Մովսիսյան Ս. (Բենսե) 1972, Հարք (Մշո Բուկանըխ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 183 էջ:
- Մխիթարեանց Ա. 1901, Մարդակերպ ծուկը, Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ա, տպարան Գ. Սանոյեանի, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, էջ 35-49:
- Վարդումյան Գ. 2011, Ջրի պաշտամունքը հայոց մեջ, Ծովի մշակույթը մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում, «ԱՅԱՍ» ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, արևելագիտության ինստիտուտ, էջ 121-127:
- Քալանթարյան Ա.Ա., Հոբոսյան Ս.Գ. 2009, Կոթի (2008 թ. դաշտային հետազոտական աշխատանքների արդյունքները), Տավուշ. Նյութական և հոգևոր ժառանգություն (խմբ. Ա. Քալանթարյան, Հ. Սարգսյան), Երևան, «Գիտություն», էջ 247-269:
- Голан А. 1994, Миф и символ, 2-е изд., Иерусалим «Тарбут», Москва «Русслит», «Известия», 375 с.
- Есаян С.А. 1976, Древняя культура племен Северо-восточной Армении (III-I тыс. до н.э.) (отв. ред. Пиотровский Б.Б.), Ереван, изд. АН Армянской ССР, 269 с.
- Мартиросян А.А. 1958, Идолы из раскопок Кармир-Блур, Պատմաբանասիրական հանդես, N 2, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, с. 115-139.
- Мифы народов мира (энциклопедия в двух томах) 1991, т. 1, главный редактор С.А. Токарев, Москва, «Советская энциклопедия», 672 с.
- Мифы народов мира (энциклопедия в двух томах) 1992, т. 2, главный редактор С.А. Токарев, Москва, «Советская энциклопедия», 720 с.
- Пиотровский Б.Б. 1959, Ванское царство (Урарту), ред. И.А. Орбели, Москва, изд. Восточной литературы, 284 с.

- Пиотровский Б.Б. 1952, Кармир-Блур II, Результаты работ археологической экспедиции Института истории АН Арм. ССР и Государственного Эрмитажа 1947-1950 гг., Ереван, изд. АН Арм. ССР, 114 с.
- Тараян З. 2010, Статуэтки человека-рыбы из Кармир блура, Հուշարձան (Խմբ. Հ. Սիմոնյան), տարեգիրք 2, Երևան, «Հուշարձան», с. 177-186.
- Урушадзе Н.Е. 1973, К семантике прикладного искусства Древнего Кавказа и Закавказья, Советская археология, N 1, Москва, с. 54-70.
- Шавкунов Э.В. 1973, О назначении подвесных бронзовых рыбок и оленьего рога с Шайгинского городища, Советская археология, N 1, Москва, с. 264-270.
- Batmaz A., Uhri A. 2008, Urartu Kültüründe Balik Betimlemesi ve Ayanis Kalesi'nden Tunç Bir Balik Figürini Üzerine Düşünceler, Representation of fish in urartian culture and thoughts on a bronze fish figurine from Ayanis fortress, Aramazd, N 1, 65-81.
- Devedjian S. 2009, Stone Stelae in the Bural Ground of Lori Berd, Aramazd, vol. 4, issue 2, Yerevan, p. 146-153.
- Espak P. 2010, The God Enki in Sumerian Royal Ideology and Mythology, Tartu University Press, 284 p.
- Petrosyan A., Tiratsyan N. 2011, First Armenian Capital Armavir as a Cult Center, Aramazd, vol. 6, issue 2, Yerevan, p. 157-169.
- Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie 1971 (Herausgeber E. Weidner und W. Soden), Band 3, Berlin-New York, Walter de Gruyter, 722 S.
- Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie 1993 (Herausgeber D.O. Edzard), Band 8, Berlin-New York, Walter de Gruyter, 589 S.

«ՁՈՒԿ-ՄԱՐԴ» ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Անի Սարատիկյան

Ամփոփում

Վերջին տարիների հնագիտական հետազոտությունների ամենաքննարկված հարցերից են կոթողային հուշարձանները: Տավուշի մարզի Կոթի գյուղից գտնված մի խումբ արձաններ են հետազոտվել, որոնք տարբերվում են չափերով և ձևով, սակայն չի պահպանվել նրանց նախնական միջավայրը: Հավանական է, որ դրանք տեղադրված են եղել ինչ-որ կառույցի կամ դամբարանի վրա և թվագրվում են մ.թ.ա. XI-VII դդ.:

Այս կոթողներից մի քանիսի ձևաբանական հատկանիշները թույլ են տալիս ենթադրել, որ դրանք առնչվում են ջրի պաշտամունքի հետ: Դրանցից մեկը ներկայացնում է մի խառնէակի՝ մեկտեղված մարդու, ձկան և ցլի հատկանիշներով: Գիտական շրջանակներում վաղուց արդեն ապացուցված է, որ համանման պատկերագրության ակունքներն սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի հարուստ մշակույթային միջավայրից:

Բանալի բառեր՝ մարդակերպ կոթող, ձուկ, Կոթի, երկաթի դար, խառնէակ, ջուր, պաշտամունք:

БОЖЕСТВО «РЫБА-ЧЕЛОВЕК» В ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Ани Саратикян

Резюме

В последние годы изучение и интерпретация древних каменных памятников стало одним из самых обсуждаемых вопросов археологии. Особый интерес являют собой каменные идолы, найденные в селе Коти Тавушской области. Возможно, эти статуи были помещены в какое-то сооружение, вероятно, в центр гробницы, и относятся к железному веку (XI-VII вв. до н.э.). Форма ряда статуй позволяет предположить, что они связаны с культом воды. Одна из них представляет значимый интерес, поскольку олицетворяет быка, рыбу и человека. Корни этого персонажа восходят к древним культурам Армянского нагорья и Месопотамии.

Ключевые слова – антропоморфный памятник, рыба, Коти, железный век, гибрид, вода, культ.

THE "FISH-MAN" DEITY IN ANCIENT ARMENIA

Ani Saratikyan

Abstract

Study of ancient stone monuments have become one of the most important issues in recent archaeological research. This article is dedicated to investigation of stone idols, which were found in the area of the Koti village, Tavush region, Armenia. The group of stone stelae which have been found accidentally, differs in size and form. It is possible that those statues were placed in certain structures, probably in the center of a tomb. The statues probably are dated back to the Iron Age (XI-VII centuries BC).

Some of these sculptures can be perceived as representatives of water cult. One of them was sculpted by very simple and primitive means. It is a mixture of bull, fish, and man. The roots of this iconography go back to ancient cultures of the Armenian Highland and Mesopotamia.

Key words – anthropomorphic monument, fish, Koti, Iron Age, Mischwesen, water, cult.



Աղ. 1, նկ. 1. Մարդակերպ կուռք, Կոթիի համայնքային թանգարան, **նկ. 2.** Մարդակերպ կուռք, Սարդարապատի հայոց ազգագրության թանգարան (գրչանկարները՝ Անի Սահակյանի)



Աղ. 2, նկ. 1. Մարդակերպ կուռք, Հայաստանի պատմության թանգարան (ՀՊԹ), **նկ. 2.** Մակույկաձև աղորիք, Կոթի (գրչանկարները՝ Անի Սահակյանի)




Աղ. 3. Մարդակերպ կուռք, Կոթիի համայնքային թանգարան (գրչանկարը՝ Անի Սահակյանի)



Աղ. 4. Մարդակերպ կուռք, Կոթի (գրչանկարը՝ Անի Սահակյանի)



Աղ. 5. Ձկնակերպ կուռք, Կոթի (գրչանկարը՝ Անի Սահակյանի)



Աղ. 6, նկ. 1. Կոթողի բեկոր, **նկ. 2.** Կոթողի բեկոր, **նկ. 3.** Ձկնակերպ կուռք, Կոթի (գրչանկարները՝ Անի Սահակյանի)

ԿՈՇԻ XVI-XVIII ԴԴ. ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐԾԱԹԵ ԴՐԱՄՆԵՐԻ ԳԱՆՁԸ

Վեռա Բոյան

ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտ

ՀՀ, Երևան, Արմավյան 52

Էլ. հասցե՝ veraboyan777@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 15.09.2021, գրախոսվել է 16.09.2021, ընդունվել է տպագրության 7.08.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.2-279

Ներածություն

Դրամը՝ որպես երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային գործընթացներն արտացոլող հուշարձան, կարևոր աղբյուր է՝ լուսաբանելու պատմական իրադարձությունները, առանձին խրթին հարցերը: Այդ առումով բացառիկ կարևորություն են ներկայացնում գանձերը, որոնց քննությունն ընդարձակում է երկրի դրամաշրջանառության, նրա՝ այլ երկրների հետ առևտրատնտեսական և ռազմաքաղաքական հարաբերությունների մեկնաբանման սահմանները:

Նման արժեքավոր գտածո է Կոշից (Արագածոտնի մարզ) հայտնաբերված XVI-XVIII դդ. ռուսական արծաթե կոպեկներից բաղկացած գանձը, որը հետաքրքիր է թե՛ իր մեծաքանակ կազմով, թե՛ դրամական տիպերի բազմազանության առումով: Գանձը վերաբերում է մի ժամանակաշրջանի, երբ Արևելք-Արևմուտք առևտրական հարաբերություններն աննախադեպ չափերի են հասնում, իսկ միջազգային շուկայում մեծանում է հայ առևտրական կապիտալի դերը:

Աշխատանքի նպատակն է քննել Կոշի դրամական գանձը հայ վաճառականության՝ Ռուսաստանի և արևմտաեվրոպական երկրների հետ առևտրատնտեսական և մշակութային կապերի համատեքստում¹:

Գանձերի ուսումնասիրությունն ընթանում է դրամների կնիքների համեմատության, հատաձույլի համար հումք հանդիսացած մետաղի ներմուծման աղբյուրների հետազոտմանը համընթաց, որը կարևոր է ոչ միայն դրանց թողարկման ժամանակաշրջանի մանրամասները քննելու, այլև շրջանառության ժամանակային և տարածքային սահմանները ճշտելու տեսանկյունից:

Հայաստանի պատմության թանգարանում պահվող ռուսական դրամների գանձը՝ բաղկացած 3077 արծաթե դրամներից, գտնվել է Կոշ գյուղից

¹ Նույն ժամանակաշրջանով թվագրվող գանձեր են գտնվել նաև Կովկասյան տարածաշրջանից (Ուստյա 1940, 66, Ուստյա 1954, 64), ինչպես նաև մի շարք գանձեր ու առանձին դրամներ են բերվել Էջմիածնի թանգարանից և Լազարյան ճեմարանից, որոնց ծագումը, ցավոք, անհայտ է, սակայն չի բացառվում դրանց՝ Հայաստանից գտնվելու փաստը, որոնք ներկայումս պահվում են ՀՊԹ-ում:

1934 թվականին (ՀՊԹ 12776-15852): Կոշը (Կվաշ, Կուաշ²) հիշատակվում է բազմաթիվ մատենագիր աղբյուրներում³, հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Այն կազմել է պատմական Արագածոտն գավառի մաս, որը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի գավառներից էր⁴: Ներկայում այն Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանի մեջ է, որը, ըստ Պետինգերյան քարտեզի, Հայաստանով անցնող հինգ ճանապարհային մայրուղիներից մեկի՝ Արտաշատ-Սեբաստոպոլիս ուղղության վրա է գտնվել⁵: Կոշը հիշատակվում է նաև անեցի հարուստ վաճառական Տիգրան Հոնենցի կառուցած Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (1215 թ.) արևելյան որմի արձանագրության մեջ⁶, որտեղ թվարկվում են Հոնենցի նվիրատվությունները, այդ թվում՝ այգիներ Երևանում, Օշականում, Կոշում⁷:

Արագածոտնի մարզն իր աշխարհագրական բարենպաստ դիրքի շնորհիվ գտնվել է առևտրական ճանապարհների խաչմերուկում: Բնական անառիկություն և շրջակա տարածքի նկատմամբ լավ տեսանելիություն ունեցող Կոշի բերդում արված հնագիտական պեղումները⁸ փաստում են, որ այն անմասն չէր ռազմական և առևտրական ճանապարհներից: Այդ է ապացուցում նաև Զաքարիա Քանաքեռցու տեղեկությունը մոտակա Կարբի գյուղում բնակվող պարոն Այվազի առևտրական ակտիվ գործունեության մասին (XVII դ.)⁹: Կոշի և շրջակա բնակավայրերի առնչությունը առևտրական գործընթացին հաստատում են գտնված դրամական գանձերը և առանձին դրամները¹⁰:

Հայ-ռուսական փոխառնչությունները XVI-XVIII դարերում

Հայաստանը XVI-XVIII դարերում հայտնվում է ռազմաքաղաքական ծանր իրավիճակում՝ դառնալով քաղաքական պայքարի թատերաբեմ երկու մուսուլմանական կայսրությունների՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև: Նրանց մշտական պատերազմները բուֆերային երկիր հանդիսացող Հայաստանում, այնտեղ ծավալվող ավերիչ ռազմական գործողությունները մեծ վնաս էին հասցնում երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին: Հայաստանի բաժանումը հարևան տերությունների միջև, դաժան սոցիալ-տնտեսական պայմանները և դրանով պայմանավորված

² Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1991, 209:

³ Խորենացի Բ, 2033, Բուզանդ Ա, 285, Եղիշե Ա, 611:

⁴ Մանուչարյան 2017, 35:

⁵ Մանանդյան 1936, 120, 133:

⁶ Դիվան հայ վիմագրության 1966, 62 (տախտակ XXI):

⁷ Манандян 1954, 279-281.

⁸ Միրիջանյան 2020, 58-59:

⁹ Քանաքեռցի 1969, 220-223:

¹⁰ Կոշից գտնվել են նաև պարթևական (ՀՊԹ 16895) և բյուզանդական (ՀՊԹ 1398-1399, 1407-1441, 1479-1495, 1502) դրամներ:

գաղթն ու օտար երկրներում հաստատվելը¹¹ իրենց արտահայտությունը ստացան հայերի կողմից գոյատևման և ինքնությունը պահպանելու նոր ուղիներ որոնելու մեջ, որոնցից է արևելյան առևտրի հմտությունները յուրացնելը և աստիճանաբար իրենց տեղը համաշխարհային առևտրում զբաղեցնելը: Հայերը լայն առևտրական գործունեություն են ծավալում արևելյան Եվրոպայի երկրներում, մասնավորապես Ռուսաստանում:

Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի երկարատև պատերազմների հետևանքով նրանց տարածքով անցնող առևտրական ճանապարհները մշտապես վտանգված էին, որոնք լուրջ խոչընդոտներ էին ստեղծում հայ վաճառականների գործունեության համար¹²: 1639 թվականին կնքվեց հաշտության պայմանագիր Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև, որով XVII դարի երկրորդ կեսին Հյուսիսային Իրանի, Հայաստանի, Փոքր Ասիայի և Միջագետքի առևտրական ուղիներով անցնող քարավանների համար ստեղծվեցին առևտրական գործունեության առավել ապահով պայմաններ: Այն նպաստավոր էր հատկապես հայ վաճառականների համար¹³, որոնք հանդես էին գալիս որպես կապող օղակ Արևմուտքի և Արևելքի միջև՝ խթանելով արևելաեվրոպական երկրների հետ առևտրատնտեսական կապերի ամրապնդումը և, մասնավորապես, հայ-ռուսական հարաբերությունների զարգացումը: Դրան մեծապես նպաստեց Ալեքսեյ Միխայլովիչի (1645-1676 թթ.) կողմից հայ առևտրական դասին արտոնությունների տրամադրումը՝ 1667 թվականին կնքված պայմանագրով, որը վերահաստատվեց 1673 թվականին: Այս քաղաքականությունը շարունակեց նաև Պետրոս I-ը, որն արտոնություններ տրամադրեց Պարսկաստանից Ռուսաստան տեղափոխված հայ վաճառականներին: Բազմաթիվ փաստաթղթեր (արտոնագրեր, դիմում-նամակներ և այլն) վկայում են Մոսկվայում և Ռուսաստանի այլ վայրերում հայ վաճառականների տեղաշարժի և առևտրական գործունեություն ծավալելու մասին¹⁴:

XVI-XVII դարերը բնորոշվում են ռուսական առանձին իշխանությունների միավորմամբ մեկ միասնական կենտրոնի՝ Մոսկվայի իշխանության շուրջ: XVI դարի ընթացքում Մոսկվան բարգավաճում և դարավերջին դառնում է Արևելյան Եվրոպայի զարգացած տնտեսական կենտրոններից մեկը: Մոսկվայի մասին գրավոր ամենավաղ տեղեկությունը թվագրվում է 1147-ով, սակայն ուսումնասիրողները հնագիտական նյութի հիման վրա հանգել են եզրակացության, որ X-XI դարերում այդտեղ գոյություն է ունեցել առևտրա-

¹¹ Ժամկոչյան 1975, 603-618:

¹² Ագուլեցի 1938, 71-72, Խաչիկյան 1988, 17-19, Բայբուրդյան 1996, 12, Պապիկյան 2018, 129-141:

¹³ Փափազյան 1986, 156:

¹⁴ Армяно-русские отношения в XVII веке, сборник документов 1953, 110, 244.

արհեստագործական բնակավայր, որը տնտեսական սերտ կապի մեջ է եղել եվրոպական երկրների, Միջին Ասիայի, Հայաստանի հետ¹⁵:

Դրամաթողարկումը Ռուսիայում XVI-XVIII դարերում

XVI դարի առաջին կեսին Ելենա Գլինսկայայի (Իվան IV Ահեղի մայրը) դրամական բարեփոխումը¹⁶ կարևոր իրադարձություն է՝ սկիզբ դնելով նոր ժամանակաշրջանի, երբ ի հայտ է գալիս համառուսական ընդհանուր դրամական համակարգը¹⁷:

Հին Ռուսիայի դրամների էվոլյուցիան. Գլինսկայայի բարեփոխումներից մինչև Պետրոս I-ի կառավարման կեսերը տեղի է ունենում դրամական միավորների կշիռների պարբերական իջեցում, ինչպես նաև դրամի չափսերի նվազում՝ եզրերը կտրելու միջոցով, սակայն արծաթե դրամները շարունակում էին մնալ շրջանառության մեջ, քանի որ արծաթը ցանկացած տեսքով ուներ արժեք և համարվում էր վճարամիջոց:

Այս համատեքստում ուշագրավ է ուսումնասիրել Կոշի դրամական գանձը, որը բացառապես արծաթե դրամներից է կազմված: Պոտինը, խոսելով այդ ժամանակաշրջանի դրամահատման տեխնիկայի մասին, գրում է. «XIV-XVII դարերում ռուսական և համաժամանակյա այլ երկրների դրամները հատվում էին գրեթե նույն տեխնիկայով: Հիմնական տարբերությունը դրամի հատածույլի (մետաղի թիթեղը, որի վրա դրվում էր կնիքը) պատրաստման եղանակի էր: Ռուսիայում մետաղալարը կտրտում էին որոշակի չափ ունեցող մասերի, հարվածի միջոցով տափակեցնելու հետևանքով դրանք դառնում էին ոչ մեծ ձվաձև թիթեղներ, որով էլ պայմանավորված էր դրանց տարբերությունը եվրոպական դրամներից»¹⁸:

Դրամագիտության մեջ ընդունված է 2-3-ից ավելի սերնդային ժամանակաշրջան ընդգրկող դրամական գանձերը համարել երկարատև կուտակման, որին պատկանում է նաև Կոշի գանձը: Այդպիսի գանձերի ուսումնասիրությունը կարևոր է այն առումով, որ կարելի է բացահայտել ավելի վաղ թողարկումների շրջանառության ժամանակային սահմանները: Սակայն այն հանգամանքը, որ վաղ թողարկումների շրջանառությունը կարող էր շարունակվել նաև հաջորդ մի քանի տիրակալների օրոք, «երկարատև կուտակման գանձ» բնորոշումը դարձնում է պայմանական: Նման գանձերի առաջացումն իրավացիորեն կապվում է առևտրականների, արհեստավորների կամ

¹⁵ Խաչիկյան 1999, 150-240:

¹⁶ Տարբեր աղբյուրներում բարեփոխման իրականացման թվականը տարբեր է՝ 1535 թվականի մարտ, 1536 թվականի մարտ-ապրիլ, 1538 թվականի ապրիլ-օգոստոս: Այնուամենայնիվ, բոլոր աղբյուրները փաստում են, որ բարեփոխում անցկացնելու սկզբնական շրջանում կեղծարարներին կախաղան էին բարձրացնում:

¹⁷ Мец 1974, 7-126.

¹⁸ Потин 1993, 165.

զինվորների հետ¹⁹։ Կոշի գանձի դեպքում մեզ առավել հավանական է թվում կապը առևտրի հետ, երբ Հայաստանն ընդգրկված էր Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի դրամական տնտեսության մեջ, իսկ ռուսական, արևմտաեվրոպական դրամները հասնում էին բացառապես առևտրի ճանապարհով։

Քննվող ժամանակահատվածում ռուսական դրամաթողարկումը կենտրոնացված էր չորս հիմնական դրամահատարաններում՝ Մոսկվա, Նովգորոդ, Պսկով և Տվեր։ Սակայն Տվերի դրամահատարանի գործունեությունը դադարում է դրամական բարեփոխման իրականացման գրեթե սկզբից²⁰։ Նովգորոդով և Պսկովով էր Արևմուտքից արծաթը բերվում Ռուսաստան։ Նովգորոդում դրամահատությունը սկսվել էր 1420 թվականից։ Մինչև 1456 թվականը այն իրականացվում էր ինքնուրույն, իսկ 1478 թվականից՝ Մոսկվայի իշխանության ենթակայության ներքո։ «Беликого Новгорода» գրությանը փոխարինում է Մոսկվայի Մեծ իշխանի տիտղոսը, և դիմերեսին պատկերվում է «Մոսկվայի ձիավորը»։ Նովգորոդի դրամահատարանի գործունեությունը վերջնականապես դադարեցվել է 1663 թվականին։ Ինչ վերաբերում է Պսկովի դրամահատարանին, ապա այնտեղ ինքնուրույն թողարկումներ են իրականացվել 1425-1510 թվականներին²¹։

XVII դարի առաջին կեսին Մոսկվայի դրամահատարանում կոպեկների թողարկման ընթացքը Ա. Մելնիկովան բաժանում է 5 փուլի.

1. I փուլ – 1613-1617 թթ.
2. II փուլ – 1618-1625 թթ.
3. III փուլ – 1626-1635 թթ.
4. IV փուլ – 1636-1643 թթ.
5. V փուլ – 1644-1645 թթ.²²

Առաջին փուլի վերջում՝ 1617 թվականին, ժամանակավորապես բացվում են Նովգորոդի և Պսկովի դրամահատարանները։ Երրորդ փուլի սկզբում՝ 1626 թվականին, Մոսկվայի դրամահատարանը հանձնվում է պետական գանձարանի ղեկավարմանը։ 1626 թվականին գրեթե միաժամանակ փակվում են Նովգորոդի և Պսկովի դրամահատարանները։ Դրամաթողարկումը սկսում է իրականացվել մեկ կենտրոնում՝ Մոսկվայի դրամահատարանում, որն ուներ պետական վերահսկողություն։ Դրամահատարանի կենտրոնացված ղեկավարումը և հումքի մատակարարումը պետության կողմից նշանակում էր դրամի հատման մասնավոր պատվերների վերացում։ Նախկինում


¹⁹ Потин 1993, 177.

²⁰ Спасский 1970, 113.

²¹ Спасский 1970, 93:

²² Мельникова 1989, 161.

մասնավոր պատվերներ իրականացնողները հիմնականում Նովգորոդի և Պսկովի դրամահատարաններն էին:



Աղ. 1. Դրամների բաժանումը՝ ըստ դրամահատարանների

«Կոպեկ» բառի ծագման վերաբերյալ գոյություն ունի մի քանի կարծիք: Առավել հավանական են երկուսը. բառը ծագել է «копить»՝ կուտակել բառից կամ դրամի վրա պատկերված ձիավորի ձեռքի նիզակից՝ «копье»:

Կոպեկը շատ փոքր չափեր և անհամաչափ ձև ուներ, սակայն Մելնիկովան նշում է, որ XVI-XVII դարերի ռուսական կոպեկները Արևմուտքում գնահատվում էին որպես բարձրորակ արծաթ՝ մատնանշելով 1620 թվականի փաստաթուղթը, որտեղ նշվում է, որ Մոսկվայի իշխանությունից օտարերկրացիները որպես մաքուր արծաթ իրենց հետ տանում էին հին մետաղադրամներ²³: Բարձրորակ արծաթի շնորհիվ կոպեկները հաճախ օգտագործվում էին զարդերի պատրաստման համար²⁴:

Գանձի նախնական ուսումնասիրությամբ ստացված տվյալներ

Կոշի դրամական գանձը բաղկացած է բացառապես «կոպեկ» դրամական միավորից, որի վրա պատկերված է ձիավոր՝ նիզակը ձեռքին: Ձիավորը ներկայացվում է որպես Սուրբ Գևորգ, սակայն գոյություն ունի կարծիք, որ ձիավորի կերպարով պատկերված է Մեծ իշխանը: Ձիավորը թագակիր է, ուստի, մեր կարծիքով, պատկերում է ցարին: Այդպես ենթադրելու հիմք է տալիս այն, որ ավելի վաղ՝ Իվան III-ի (1462-1505 թթ.) և Վասիլի III-ի (1505-1533 թթ.) դրամների վրա պատկերված է ինքը՝ իշխանը: Դրամի դարձերեսին

²³ Мельникова 1989, 155:

²⁴ Малежик 2010, 74, <https://www.nbrb.by/bv/articles/8121.pdf> 25.02.21.

հինգ կամ վեցտողանի գրություն է. օրինակ՝ «цры велик кнзъ Михяло Федоровичъ всея Руси»: Տարբերություններ են նկատվում որոշ տառերի գրության ձևերում²⁵.

«Царь» տիտղոսով կոպեկները թվագրվում են 1547 թվականից հետո, Իվան IV-ի (1533-1584 թթ.)՝ որպես ցար թագադրվելու տարուց: Մինչ այդ ռուսական դրամների վրա նշվում է «князь великий» (մեծ իշխան) տիտղոսը: Կոշի գանձի ուսումնասիրված դրամների վրա, «մեծ իշխանից» բացի, առկա է «ցар» տիտղոսը, այսինքն՝ բոլոր կոպեկները հատված են 1547 թվականից հետո: Տիտղոսները գրվում էին ձայնավորի սղումով. «црь», «кнзъ»: Հաճախ գրության վերևում առկա է համառոտագրության *պարիվ* նշանը, իսկ վերջին տողը երկու կողմից ներառված է կետերի մեջ:

А ➔ Я
В ➔ В
І ➔ И (Н)
Ф ➔ Ф
У ➔ У
А ➔ І

Գանձի կշիռը մոտ 1,3 կգ է, դրամների կշիռը 0,28-0,69 գրամի միջակայքում է, իսկ տրամագծի միջինացված ցուցանիշը՝ 13,5-14 մմ: Դրամների կշռային տարբերությունները վերագրում ենք դրանց թողարկման տարբեր փուլերի, երբ, ռազմաքաղաքական և տնտեսական իրավիճակով պայմանավորված, մետաղադրամի կշիռը փոխվում է:


Ցար	դրամների թիվ	%
Իվան IV Ահեղ (1533-1584 թթ.)	5	0.16
Բորիս Ֆեոդորովիչ Գոդունով (1598-1605 թթ.)	4	0.12
Վասիլի Իվանովիչ Շոյսկի (1606-1610 թթ.)	6	0.19
Վլադիսլավ Սիգիզմունդովիչ (1610-1612 թթ.)	5	0.16
Միխայիլ Ֆեոդորովիչ Ռոմանով (1613-1645 թթ.)	1650	54.6
Ալեքսեյ Միխայլովիչ (1645-1676 թթ.)	281	9.3
Ֆյոդոր III Ալեքսեևիչ (1676-1682 թթ.)	24	0.78
Իվան V Ալեքսեևիչ Պետրոս I Ալեքսեևիչի հետ համատեղ (1682-1696 թթ.)	7	0.23
Պետրոս I Ալեքսեևիչ (1689-1725 թթ.)	8	0.26
Մորդովկա XV-XVIII դդ.	75	2.5
Անորոշ	1012	31.7

Աղ. 2. Գանձի բաժանումը՝ ըստ ցարերի

Գանձի ամենավաղ դրամը Իվան IV Ահեղի (1533-1584 թթ.) կոպեկն է, իսկ ամենաուշը՝ Պետրոս I Ալեքսեևիչի (1689-1725 թթ.) նախառեֆորմյան

²⁵ Гришин 2001, 6-7.

դրամը: Գանձում գերակշռում են Միխայիլ Ֆեոդորովիչի (1613-1645 թթ.) դրամները: Երկրորդը՝ ըստ քանակի, Ալեքսեյ Միխայլովիչի (1645-1676 թթ.) դրամներն են: Մինչև Միխայիլ Ֆեոդորովիչն իշխած ցարերի՝ Իվան IV Ահեղի (1533-1584 թթ.), Բորիս Գոդունովի (1598-1605 թթ.), Վասիլի Շոյսկու (1606-1610 թթ.) և Վլադիսլավ Սիգիզմունդովիչի (1610-1612 թթ.) դրամները գանձում փոքրաթիվ են: Առկա են նաև Ֆյոդոր III Ալեքսեևիչի (1676-1682 թթ.), Իվան V-ի (1682-1696 թթ.) և Պետրոս I-ի (1689-1725 թթ.) առանձին և համատեղ թողարկած դրամներ: Դրամական գանձը, ամենայն հավանականությամբ, թաղվել է XVIII դարի առաջին տասնամյակի ընթացքում, քանի որ գանձում առկա են Պետրոս I-ի միայն մինչև 1704 թ. շրջանի մետաղադրամներ:



Աղ. 3. Դրամների բաժանում

Գանձն առանձնահատուկ է իր մեծաքանակությամբ, որտեղ գերակշռում են Միխայիլ Ֆեոդորովիչի (1645-1676 թթ.) դրամները: Սա կարելի է բացատրել նրանով, որ Միխայիլ Ֆեոդորովիչի թագադրումից անմիջապես հետո՝ 1613 թ. մարտին, երկու ժամանակավոր դրամահատարաններ՝ Մոսկվայի և Յարոսլավի, սկսեցին նրա անվամբ կոպեկների զանգվածային թողարկում: Սակայն 1613 թ. մայիսից Յարոսլավի դրամահատարանը դադարում է գործել, և կնիքները տեղափոխվում են Մոսկվա ու ձևափոխվում²⁶: Մեր կարծիքով՝ առկա է նաև այն հանգամանքը, որ, մյուս գահակալների հետ համեմատած, Միխայիլ Ֆեոդորովիչը և Ալեքսեյ Միխայլովիչն ավելի երկար են գահակալել և համեմատաբար ավելի խաղաղ պայմաններում: Նրանց օրոք տնտեսական կյանքը վերելք է ապրում, որը նպաստում է նաև հայ-ռուսական առևտրական պայմանագրերի կնքմանը:

²⁶ Мельникова 1989, 132-134.

Միխայիլ Ֆեոդորովիչի կոպեկների մեծ մասը թողարկվել է Մոսկվայի դրամահատարանում, իսկ Նովգորոդի և Պսկովի թողարկումները փոքրաթիվ են, քանի որ նրա կառավարման սկզբում վերջիններս գտնվում էին ռազմա-քաղաքական ծանր վիճակում²⁷:

Գանձի 75 դրամներ պատկանում են ռուսական արծաթե դրամների «մորդովկա» կոչվող տիպին (նկ. 1-3): *Մորդովկաների* տիպաբանությանը և կիրառությանը մանրամասն անդրադարձել է Իվան Սպասկին²⁸, ըստ որի՝ դրանք իրենց անվանումն ստացել են մերձվոլգյան տարածքում բնակվող ազգերից մեկի՝ մորդովացիների անունից²⁹, որոնց տարազի մաս են կազմում մետաղադրամները, ծովախեցիները՝ կարված հագուստին: *Մորդովկաները* արծաթե կամ պղնձե դրամներ են՝ տարբեր պատկերներով, դարձերեսին՝ ռուսական տառերով, որոնք իմաստ չեն արտահայտում: Հատված լինելով ցածրորակ արծաթից՝ օգտագործվել են որպես զարդ՝ XVI-XVII դդ. արծաթե կոպեկների հետ: Գոյություն ունի կարծիք, որ *մորդովկաները* հատվել են ծիսական նպատակով, որպեսզի իրական բարձրորակ արծաթե դրամները չծակվեն կամ շրջանառությունից դուրս չգան: Դրանք օրինական դրամական թողարկումների ընդօրինակություններ են և, հավանաբար, նախատեսված չեն եղել շրջանառության համար³⁰: *Մորդովկաների* առկայությունը կոպեկների հետ մեկ անգամ ևս ապացուցում է, որ գանձերի անբաժան մաս են կազմել նաև թանկարժեք մետաղներից զարդերը:



Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Կոշի գանձի դրամների զգալի մասը պատկանում է Մոսկվայի դրամահատարանին՝ դրամահատարանի տարբեր նշաններով: Քաղաքի անունը նշված է առաջին կամ երկու սկզբնատառերով, առաջին երկու սկզբնատառերից կազմված մենագրով, ամբողջովին՝ երկու տողով, կամ աղավաղված.

- Ձիու ոտքերի տակ «М» տառը (նկ. 4)
- Ձիու ոտքերի տակ «МО» տառերը (նկ. 5)
- Ձիու ոտքերի տակ «մենագրի նկարը» (նկ. 6)
- Ձիու ոտքերի տակ «МО/CKBA» (նկ. 7)

²⁷ Мельникова 1989, 158.

²⁸ Спасский 1954, 189-238.

²⁹ Спасский 1970, 138.

³⁰ Нестеров И.В., «Мордовки» – подчерицы русской монетной системы, http://www.idmedina.ru/books/materials/faizhanov/5/hist_nesterov.htm

- Ձիու ոտքերի տակ «МОС/КВА» (նկ. 8)
- Ձիու ոտքերի տակ «МОС/МК» կամ «ОС/МК» ձևերով, ծիավորի պատկերի կողքերին՝ երկու կողմերում «К» և «Л» տառերը, ենթադրում ենք, որ նշանակել են «Князь» և «Царь» (նկ. 9):



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8



Նկ. 9

Գանձում առկա Նովգորոդի (նկ. 10-12) և Պսկովի (նկ. 13-15) դրամների վրա քաղաքների անունները նշված են համապատասխանաբար՝ «ПС» և «НРГІ»: Այդ քաղաքները, չնայած որ տնտեսական և քաղաքական կարևոր կենտրոններ էին³¹, պարբերաբար եղել են ռազմաքաղաքական բարդ իրավիճակներում, որի պատճառով դրամահատարաններն աշխատել են ընդհատումներով, և արտադրանքի ծավալները մեծ չեն եղել:



Նկ. 10



Նկ. 11



Նկ. 12



Նկ. 13



Նկ. 14



Նկ. 15

31 Соловьев 1988, 26-27.

Եզրակացություններ

XVI-XVII դարերի ռուսական դրամների յուրահատկություններից է այն, որ դրանք չունեն հատման տարեթիվ, և երբեմն չի նշվում հատման վայրը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ դրամների մի ամբողջ խումբ թվագրվում է ոչ հստակ: Այս պարագայում դրամի ճիշտ թվագրման և հավաստի տվյալների ստացման աղբյուր կարող է լինել դրամական գանձերի ուսումնասիրությունը:

Տվյալ ժամանակաշրջանի ռուսական դրամները այնքան սակավաթիվ են Հայաստանի տարածքում, որ, անկախ քանակից, դրանց հայտնաբերումը պատմական, դրամագիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում և կարևոր եզրահանգումների հիմք տալիս:

Հայտնի են նաև Հայաստանից հայտնաբերված համաժամանակյա պարսկական և թուրքական դրամներ, սակայն դրանց մասին տվյալները նպատակահարմար չգտանք քննարկել այստեղ, քանի որ դրանք եղել են Հայաստանում շրջանառվող պաշտոնական վճարման միջոց: Հայաստանը, որը բաժանված էր օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև, ընդգրկված էր այդ կայսրությունների դրամական տնտեսության մեջ՝ ի տարբերություն ռուսական և արևմտաեվրոպական դրամների, որոնք կարող էին մուտք գործել բացառապես առևտրականների միջոցով:

Գանձերի թաղումը ապահով վայրում ցույց է տալիս հասարակության վերաբերմունքը բարեփոխման շնորհիվ ստեղծված նոր դրամների հանդեպ: Բնակչության մոտ ձգտում է նկատվում թաքցնել հին, ընդունված մետաղադրամները, որոնք թվում են ավելի վստահելի, քան նորերը. սրան կարող էր նպաստել նաև պետության քաղաքական և սոցիալ-տնտեսական անկայուն իրավիճակը:

Գրականություն

Եղիշե 2003, Վասն Վարդանաց եւ հայոց պատերազմին, Մատենագիրք Հայոց, հ. Ա, Ե դար, Պատմագրություն, Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Անթիլիաս-Լիբանան, էջ 515-1072:

Դիվան հայ վիմագրության 1966, պր. I, Անի քաղաք, կազմ. Հ.Ա. Օրբելի, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 138 էջ:

Մովսես Խորենացի 2003, Պատմութիւն հայոց մեծաց, Մատենագիրք Հայոց, հ. Բ, Ե դար, Պատմագրություն, Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Անթիլիաս-Լիբանան, էջ 1737-2196:

Փավստոս Բուզանդ 2003, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. Ա, Ե դար, Պատմագրություն, Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Անթիլիաս-Լիբանան, էջ 273-428:

Ագուլեցի Զ. 1938, Օրագրութիւն, Երևան, «Արմֆան», 198 էջ:

Բայբուրդյան Վ.Ա. 1996, Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում, Թեհրան, «Դա Վինչի», 247 էջ:

- Ժամկոչյան Հ.Գ., Աբրահամյան Ա.Գ., Մելիք-Բախշյան Ա.Տ., Պողոսյան Ա.Պ. 1975, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 783 էջ:
- Խաչիկյան Լ. 1999, Հայերը հին Մոսկուայում և Մոսկուա տանող ճանապարհների վրայ, Երևան, «Գանձասար աստվածաբանական կենտրոն», էջ 150-240:
- Խաչիկյան Շ.Լ. 1988, Նոր Զուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 223 էջ:
- Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ. 1991, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:
- Մանանդյան Հ. 1936, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պետինգերյան քարտեզի, Երևան, «Հրատ. Մելքոնյան ֆոնդի», 278 էջ:
- Մանուչարյան Ա. 2017, Արագածոտնի նախարարական տները IV-VII դարերում, Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, N 3 (24), էջ 35-46:
- Միրիջանյան Դ. 2020, Վաղմիջնադարյան ամրոցաշինությունը Արագածոտն գավառում, «Էջմիածին» Գ, էջ 49-67, 4 աղյուսակ:
- Պապիկյան Բ.Վ. 2018, Նոր Զուղայի վաճառականները՝ որպես Իրանի և Արևմտյան Եվրոպայի միջև առևտրի միջնորդներ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, էջ 129-141:
- Փափազյան Վ. 1986, Առևտրային ճանապարհների պաշտպանությունը Սեֆյան պետությունում XVII դարում, Երևան, ԵՊՀ հրատ., N 4, էջ 156-162:
- Армяно-русские отношения в XVII веке, сборник документов, 1953 г., т. I, Ереван, изд. АН Армянской ССР, 287 с.
- Гришин И.В., Клешинов В.Н. 2001, Каталог русских средневековых монет царя Михаила Федоровича 1613-1645 г., Москва, «Едиториал УРСС», 96 с.
- Закарий Канакерци 1969, Хроника, Перевод с армянского, предисловие и комментарий М.О. Дарбинян-Меликян, Москва, «Наука», 319 с.
- Манандян Я.А. 1954, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, V в. до н. эры – XV в.н. эры, Ереван, изд. Ереванского университета, 346 с.
- Мельникова А.С. 1989, Русские монеты от Ивана Грозного до Петра Первого, История русской денежной системы с 1533 по 1682 год, Москва, «Финансы и статистика», 318 с.
- Мец Н.Д. 1974, Монеты великого княжества Московского (1425-1462), Москва, изд. Государственного исторического музея, 163 с.
- Пахомов Е.А. 1940, Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, вып. III, Баку, «АзФАН», 92 с.
- Пахомов Е.А. 1954, Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, вып. VI, Баку, изд. АН Азербайджанской ССР, 114 с.
- Потин В.М. 1993, Монеты, клады, коллекции, СПб., «Искусство-СПб.», 368 с.
- Соловьев С.М. 1988, История России с древнейших времен, т. 3-4, Москва, «Мысль», с. 765.
- Спасский И.Г. 1954, Денежное обращение на территории Поволжья в первой половине XVI в. и так называемые мордовки, Советская археология, N XXI, с. 189-238.
- Спасский И.Г. 1970, Русская монетная система, Историко-нумизматический очерк, СПб., «Аврора», 256 с.

Малежик В. 2010, Русская монета в кладах первой половины XVII в. на территории Гродненской области, Международная конференция, 8 с. <https://www.nbrb.by/bv/articles/8121.pdf> (25.02.2021).

Нестеров И.В., «Мордовки» – падчерицы русской монетной системы, http://www.idmedia.ru/books/materials/faizhanov/5/hist_nesterov.htm (24.03.2021).

ԿՈՇԻ XVI-XVIII ԴԴ. ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐԾԱԹԵ ԴՐԱՄՆԵՐԻ ԳԱՆՁԸ

Վեռա Բոյան

Ամփոփում

Կոշում հայտնաբերված ռուսական արծաթե դրամների գանձը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, և հետագա ուսումնասիրությունը նոր բացահայտումների հիմք կարող է դառնալ: Նմանօրինակ բազմաքանակ գանձի հայտնաբերումը մեկ անգամ ևս փաստում է տարածաշրջանի ներգրավվածությունը առևտրական ակտիվ գործունեության մեջ: Հայաստանի բարենպաստ դիրքը՝ որպես կապող օղակ Արևելքի և Արևմուտքի միջև, նպաստում էր առևտրական և մշակութային հարաբերությունների զարգացմանը:

Գանձը բաղկացած է 3002 կոպեկ և 75 մորդովկա կոչվող արծաթե դրամներից: Այն առանձնահատուկ է իր մեծաքանակությամբ, որտեղ գերակշռում են Միխայիլ Ֆեոդորովիչի (1645-1676 թթ.) դրամները: Դրամական գանձը թաղվել է, ամենայն հավանականությամբ, XVIII դարի առաջին տասնամյակի ընթացքում, քանի որ առկա են Պետրոս I-ի նախառեֆորմյան շրջանի դրամներ:

Բանալի բառեր՝ Ռուսական իշխանություն, Կոշ, դրամական գանձ, կոպեկ, մորդովկա, դրամահատարան, առևտուր:

КЛАД РУССКИХ СЕРЕБРЯНЫХ МОНЕТ XVI-XVIII ВВ. ИЗ КОША

Вера Боян

Резюме

Огромный интерес являет собой клад русских серебряных монет, найденный в Коше. Обнаружение такого количества монет еще раз доказывает причастность региона к активной торговой деятельности. Благоприятное положение Армении как связующего звена между Востоком и Западом способствовало развитию торговых и культурных связей.

Клад уникален по своему содержанию и состоит из 3002 копеек и 75 серебряных монет под названием *мордовка*. Большая часть монет относится к периоду правления Михаила Федоровича (1645-1676 гг.). Вероятно, клад был захоронен в первом десятилетии XVIII века, поскольку среди монет имеются монеты до-реформационного периода правления Петра I.

Ключевые слова – Русское княжество, Кош, денежный клад, копейка, мордовка, монетный двор, торговля.

RUSSIAN SILVER COINS' HOARD OF XVI-XVIII CENTURIES FROM KOSH

Vera Boyan

Abstract

The hoard of Russian silver coins found in Kosh presents a great interest, further study of which can be the basis of new discoveries. The find of such a large number of russian coins once again proves the involvement of the region in trade activities. Armenia's favorable position between the East and the West, contributed to the development of trade and cultural relations.

The hoard consists of 3002 kopecks and 75 silver coins called Mordovka. It is unique in its quantity. The coins of Mikhail Feodorovich (1645-1676) are a large amount in the hoard. In all probability the hoard had been buried during the first decade of the XVIII century, as there are coins of the pre-reform period of Peter I.

Key words – Russian principality, Kosh, hoard, kopeck, mordovka, mint, trade.

**ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻ ՈՒ
ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ (1919 ԹՎԱԿԱՆ)**

Ինչպես հայտնի է, 1919 թ. սկզբներին հայ ժողովրդի գրական-մշակութային կյանքում մեծ իրադարձություն էր Հովհաննես Թումանյանի ծննդյան 50-ամյակի տոնակատարությունը: Փետրվարից մայիս փառավորապես նշվում է Ամենայն հայոց բանաստեղծի հոբելյանը. անդրկովկասյան մամուլում տպագրվում են բազմաթիվ հոդվածներ, կազմակերպվում՝ ամենատարբեր միջոցառումներ և այլն:

1920 թ. սկզբին Թիֆլիսում հրատարակված «Գրական-գեղարվեստական ալմանախ»-ի 5-րդ համարն ունի հետևյալ ընծայագիրը՝ «Հովհ. Թումանյանին՝ նրա ծննդյան 50-ամյակի առիթով»: Այլ նյութերի թվում այստեղ տպագրվել են նաև մի շարք գրողների կարծիքները հայ գրականության արդի վիճակի ու ապագայի մասին՝ ի պատասխան Ստ. Զորյանի կազմած հարցաշարի, որը կրում է «Հայ գրականության վիճակը (հայ գրողների կարծիքով)» խորագիրը: «Դեռ 1917 թ. վերջերին, երբ մեր գրական աշխարհում համեմատական կենդանություն կար և ռուսական հեղափոխությունը մեր առջև բացել էր պայծառ հեռանկարներ՝ ապագան դարձնելով դյուքական մի երկիր, – այդ ժամանակ մեր մեջ միտք հղացավ մի հարցարանով (անկետով) դիմել մեր գրողներին ու քննադատներին և նրանց կարծիքն իմանալ հայ գրականության ներկայի ու ապագայի մասին, – նախաբանում գրում է հարցաթերթիկի հեղինակը: –Եվ այդ նպատակով կազմեցինք մի հարցարան: Սակայն քաղաքական ձախորդ իրադարձությունները և մեր ժողովրդի գլխին պայթած ահավոր աղետները, որ հիմն ի վեր կործանեցին ամեն տեսակ ծրագիր ու հղացում, անիրագործելի դարձրին և մեր ցանկությունը: Բայց ներկա թվին, երբ փոթորիկն անցավ կարծես, և մեր երկինքը փոքր-ինչ պարզվեց, մեր վաղեմի միտքը նորից այցելեց մեզ: Եվ այս անգամ արդեն այդ պատրաստի հարցարանով դիմեցինք մեր գրողներից նրանց, ովքեր այն ժամանակ գտնվում էին Թիֆլիսում, մնացած հեղինակներին, որ գտնվում էին Թիֆլիսից դուրս, անկարող եղանք դիմել՝ խզված հաղորդակցության պատճառով (ինչպես կտեսնենք ստորև, միակ բացառությունը եղել է Դ. Անանունը, որն այդ ժամանակ բնակվում էր Երևանում – Ա.Զ.)»¹: Այնուհետև ներկայացվում է հարցարանը.

«1) Ի՞նչ է Ձեր կարծիքը գեղեցիկ հայ գրականության ներկայի մասին.

ա) վիպասանություն, բ) դրամա, գ) քնարերգություն:

2) Ինչպե՞ս եք նայում գեղեցիկ հայ գրականության ապագային:

ա) Արդյոք, ներկան երաշխավորո՞ւմ է նրա ապագա առաջադիմությունը:

բ) Որո՞նք են, Ձեր կարծիքով, նրա գրավականները:

¹ Գրական-գեղարվեստական ալմանախ (Թիֆլիս), 1919, N 5, էջ 128:

3) Ի՞նչ կարծիք ունիք ռուսահայ ու թյուրքահայ գեղարվեստական բարբառների մասին:

ա) Ապագան այդ բարբառներից որի՞ն է պատկանում:

բ) Ցանկալի՞ է, արդյոք, նրանց ձուլումը. թե մեկի կամ թե մյուսի չքացումը:

4) Ի՞նչ կարծիք ունիք ժողովրդական բարբառների մասին»²:

Հարցարանին պատասխանել են Շիրվանզադեն (6 ապրիլի 1919 թ.), Հովհ. Թումանյանը (ամսաթիվը նշված չէ), Նար-Դոսը (30 մարտի 1919 թ.), Վ. Փափագյանը (8/26 ապրիլի 1919 թ.), Դ. Դեմիրճյանը (9 օգոստոսի 1919 թ.), Տ. Հովհաննիսյանը (10 ապրիլի 1919 թ.), Դ. Անանունը (18 հոկտեմբերի 1919 թ., Երևան)³, Հ. Սուրխաթյանը (ամսաթիվը նշված չէ)⁴:

Ստորև հրապարակում ենք հարցաշարին Դ. Անանունի տված ընդարձակ, բովանդակալից և ուշագրավ դիտարկումներով լեցուն պատասխանները:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

Դ. ԱՆԱՆՈՒՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ (ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՈՎ)» ՀԱՐՑԱՐԱՐԻՆ

Մեր գեղեցիկ գրականության ներկան որակում չունի այն պատճառով, որ ցայտուն անուններ ու գործեր չկան հրապարակի վրա: Մի երկու վիպական անուններ (Կ. Միքայելյան, Միք. Մանվելյան, Ստ. Զորյան) դեռևս գրչի հզորության չեն տիրացել և նույնիսկ դժվար է ասել, թե հայ միջավայրը կարող կլինի առնություն մատակարարել նրանց դալուկ վրձինին: Նույնը կարելի է կրկնել նաև դրամայի նկատմամբ (Վ. Վալադյան): Քնարերգության բնագավառում Վ. Տերյանի մուսան ահա քանի տարի է, որ խլացրել է մյուս ձայները: Մեր բոլոր մատաղ բանաստեղծները շարունակում են հարկ մատուցանել Վ. Տեր-

² Գրական-գեղարվեստական ամսանախ, 1919, N 5, էջ 128-129:

³ Ստ. Զորյանը գրող, հրատարակիչ, պոլիգրաֆիստ, խմբագիր Միսաք Էփրիկյանին 1919 թ. նոյեմբերի 5-ին Երևանից Թիֆլիս գրած նամակում հայտնում է. «...ուղարկում եմ ...Դ. Անանունի կարծիքը անկետայի առիթով: ...Սովորականից մի քիչ երկար է Դավիթի կարծիքը, բայց հետաքրքրական է» (Զորյան Ստ. 2010, Սրտի մտոք և հարգանք, կազմ. և ծան. Կ.Ս. Զորյան և Հ.Լ. Զորյան, խմբագիր՝ Ա.Գ. Ափինյան, Երևան, էջ 24):

⁴ Գրականագետ Ե. Մնացականյանը գրում է. «1919 թ. ուշագրավ մի ծեռնարկում է իրականացնում Ստ. Զորյանը: Հայ գրականության ներկա վիճակի գնահատման նպատակով գրողն իր կազմած հարցարանով դիմում է ժամանակի հայտնի դեմքերին: Ի թիվս այլ հարցերի՝ Զորյանը փորձում է ճշտել նրանց տեսակետը «ռուսահայ ու թրքահայ գեղարվեստական բարբառների մասին»: Պատասխանները ավելի քան հետաքրքիր են և խոսուն. ժամանակի մտավորականությունը մեծ հույսեր ուներ Հայաստանի ապագայի վերաբերյալ, և նրանց արտահայտած մտքերը լի էին հավատով դեպի հայոց լեզվի միասնական ամբողջականության կայացումը» (Մնացականյան Ե. 2017, Բանավեճերը գրական հայերենի շուրջ և Հովհաննես Թումանյանը (1890-1910-ական թթ.), Երևան, էջ 39):

յանի քնարով հարուցած մոտիվներին, մի հոգեվիճակ, որ մենք որակել ենք «մե-նության մղձավանջը» անունով⁵։ Երիտասարդ բանաստեղծների մեջ երջանիկ բացառություն է կազմում թյուրքահայ Վեսպերը, որը գիտե առնական նվագներ կերտել և դա շնորհիվ նրան, որ երգչի հոգուն տիրում է ցեղի ու հայրենիքի վերածնության կարոտը։

Ասացինք, որ հայ գեղեցիկ գրականության ներկան որակում չունի։ Ավելի ճիշտ կլինի ասել, որ այժմ տիրում է գեղեցիկ գրականության բացակայության շրջանը։ Սակայն մեր գրականության անցյալը և հին վարպետների դեռևս հնչվող ձայնը գրավական է, որ գրական պարապությունը երկար չպիտի շարունակվի։ Գեղեցիկ գրականությունը, ինչպես և հոգևոր մնացած կարգի երկե-րը պարապ և անօդ տարածության մեջ չեն ստեղծվում։ Պատերազմի, մեծ հեղափոխության և մեր ազգային ոգորումների հետևանքով կերտվում է հայ պատմության նոր շրջանը, որի նկատմամբ կարելի է լուսավոր գուշակություն-ներ անել։ Այդ նոր շրջանում իրար պիտի խառնվին երկու տարբեր ապրումներ – անցյալի հիշողությունները՝ լի թախիծով, սոսկումներով և ավստսանքով և ապագայի որոնումները, ուր մտքի վարանումը կցորդված կլինի խիզախության հետ։ Այստեղ հնարավոր է և՛ ռոմանտիզմը կրոնական շղարշով պարուրված և՛ ցայտուն ռեալիզմը։ Մեր ապագա տնտեսական ու քաղաքական միջավայրից շատ բան է կախված։ Կկարողանա՞ն արդյոք եղած հայ գրիչները նոր պայ-մաններում ունկնդիր հանդիսանալ նոր ծայներին, նկատել նոր ներկերը և ըստ այնմ լարել իրանց եռանդը, թե անցյալի անցուդարձերը, հին հասարակակարգի փլուզումը նրանց արդեն դարձրել է մտավոր անկարներ – այս հարցին դժվար է պատասխանել։ Հավանորեն մեր արդի գրողներից շատերը կապավինեն իրանց հիշողություններին։ Բայց և համոզված ենք, որ նրանց փոքրաթիվ մասը նոր կորովի ուժերի հետ սպասավոր կկանգնե նոր պահանջներին և կսպառե գրա-կան բացակայության այս շրջանը։ Մեր ազգի անսպառ և աննկուն աշխարհա-շեն եռանդն է մեզ իրավունք տալիս նման եզրակացության հանգեցնել։

Մեր ազգի քաղաքական ամբողջացումը, նրա հավաքումը միևնույն պե-տական հարկի տակ հրամայական է դարձնում ռուսահայ և թյուրքահայ բար-բառների ծովման խնդիրը։ Ազգը չի կարող տարբեր բարբառներ գործադրել պետական և հասարակական հաստատություններում և այստեղից էլ պիտի սկսվի ծուլողական աշխատանքը։ Գիտակցական, կազմակերպված վերաբեր-մունքը շատ բան կարող է անել այստեղ։ Հիշենք, որ դպրոցին վերապահված է խոշոր դեր։ Եթե հայկական երկու հատվածների հոգևոր ղեկավարները զլանան ձեռնամուխ լինելու բարբառների ծովման աշխատանքին, ապա հարցի լուծումը կմնա տարերքին, այսինքն՝ բնական մրցմանն ու զարգացմանը։ Լեզուն կեն-դանի է նրա գործածողների թվով։ Այս հանգամանքը պետք է որ գերակշռու-

⁵ Տե՛ս 1909 թ. «Նոր օրեր» (Բաքու) թերթում (մարտի 21, N 2, էջ 5-6) Դ. Անանունի «Մենության մղձավանջը (Վահան Տերյան՝ «Մթնշաղի անուրջներ»)» խորագրով գրախոսությունը, նաև՝ 1912 թ. «Մեր ուղին» (Բաքու) ժողովածուում (էջ 98-110) նրա ծավալուն գրախոսությունը Տերյանի «Բանաս-տեղծություններ»-ի առաջին հատորի վերաբերյալ՝ դարձյալ «Մենության մղձավանջը» վերնագրով։


թյուն տա նախկին ռուսահայերի բարբառին: Մյուս կողմից արդեն պարզ է, որ ռուսահայերը պիտի կազմեն հայկական պետականության (իբրև ապարատի) ողնաշարը: Սա էլ մի գրավական է, որ նրանց բարբառը առաջնության վիճակում պիտի լինի: Այսպիսով կան տվյալներ, որ այժմյանից նշմարելի են դարձնում ռուսահայ բարբառի գերիշխանությունը: Պարապ հարց է, թե ցանկալի՞ է բարբառների ձուլումը կամ նրանց մեկի չքացումը: Ուժեղը պիտի հաղթի և մենք հաղթությունը գուշակում ենք հոգուտ ռուսահայերի:

Հենց որ հայ լեզուն տեր ու տիրական ունեցավ, հենց որ հայ պետությունը հոգատար կանգնեց մեր «աննյութ գանձին», – հայ հոգևոր բարեմասնություններին, ապա դրանով վճիռ պիտի արձակվի նաև հայ ժողովրդական բարբառներին: Նրանցից ոչ մեկը հավակնություն չի ունենալ պետական լեզու դառնալու, բայց նրանցից ամեն մեկը կգա բառերով և պատկերավոր դարձվածքներով հարստացնելու մեր գրական լեզուն, նայած թե տվյալ ժողովրդական բարբառը որպիսի տաղանդով օժտված ներկայացուցիչ կտա մեր գրականությանը:

Մենք հավատով ենք նայում մեր գրականության ապագային: Հոգևոր զենքը երբեք հայը բաց չի թողել իր ձեռքից: Եվս առավել նա այդ չի կարող անել ազգերի և վարի խավերի ազատագրության պահուն, երբ խոսքին ու գրչին վերապահված է այնքան վճռողական, այնքան վիթխարի դեր: Եթե հայ մարդիկ հրաժարվեն քաղաքական փնթիությունից և պայծառ հայրենաշեն ծրագիր առաջադրեն մեր գրական ուժերին, ապա դրանով նրանք հրահրած կլինեն ազգի մեջ պահված ուժը, ստեղծելով գրական ճակատ, ուր կխամրի թույլը և հաղթական ճաճանչներ կարձակե հզորը⁶:

⁶ Գրական-գեղարվեստական այլմանախ, 1919, N 5, էջ 141-143: Ի դեպ, 1920 թ. ապրիլի 29-ին Ստ. Զորյանի՝ Մ. Էփրիկյանին Երևանից Թիֆլիս գրած նամակում կարդում ենք. «Սիրելի Միսաք, // Բարի եղիր Դավիթի համար մի օրինակ «Ալմանախ» ուղարկել: ...Դավիթը իր պատասխան գրվածքի համար (անկետայի) հոնորար է ուզում. նրա հաշվով բռնում է 380 ռ. հայկական դրամով» (Զորյան Ստ., նշվ. աշխ., էջ 31):

АНАИТ БЕКАРЯН, Армения в судьбе Джорджа Байрона, Ереван, изд. «Гитутюн» НАН РА, 2023, 198 с.



Աշխատությունը նվիրված է հայ իրականության հետ անգլիացի մեծ բանաստեղծ Ջ. Բայրոնի ունեցած աղերսներին և նրա ստեղծագործության տեղին ու նշանակությանը հայ մշակույթի պատմության մեջ: Մեզանում վաղաժամոր՝ մի թեմա, որ սակայն, Ա. Բեքարյանն ամբողջացրել է շատ ավելի լայն շառավղով՝ ընդհուպ մինչև Բայրոնի ստեղծագործությունների թարգմանություններն առանձին հրատարակություններով և պարբերական մամուլում, Բայրոնի հայկական նամակներն ու հայագիտական ուսումնասիրությունները, դրանց փոխառնչությունները Եվրոպայում հայագիտության զարգացման հետ, բայրոնիզմի դրսևորումները հայ գրականության մեջ և այլն: Թեմատիկ ընդգրկումներով, հետազոտական ծավալ-

ներով և մանրակրկիտ աշխատանքի տպավորիչ արդյունքներով Ա. Բեքարյանի աշխատությունը հանդես է գալիս որպես եզակի մի գործ հայկական բայրոնագիտության մեջ և այն հանրագումարի բերելու իր համոզիչ ապացույցներով:

Ա. Բեքարյանի աշխատության հիմքում ընկած է Բայրոնի, որպես իր դարաշրջանի և ճակատագրի պատվերով այդ դարաշրջանից էլ առաջ ընկած անհատի աշխարհընկալումը, բանաստեղծական եզակիությունը և մարդասիրական ուղղվածությունը, որ պատմական հուշ է դարձել հատակապես Բայրոն-Մխիթարյան միաբանություն առնչությունների կտրվածքով: Եվ այս իմաստով հեղինակը վերհանել է փաստական հարուստ նյութ՝ ուշադրությամբ քննելով Բայրոնի կենսագրական հանգամանքները Վենետիկում՝ 1816-1818 թթ., հայերին ու հայերեն լեզվին վերաբերող նրա նամակները՝ գրված իր բարեկամներին՝ բանաստեղծ Թ. Մուրին և հրատարակիչ Ջ. Մըրրեին, հայր Հ. Ավգերյանի հետ Բայրոնի հրատարակած անգլերեն-հայերեն ու անգլերեն-հայերեն քերականական ձեռնարկների ստեղծման պատմությունը: Այս գործերին Ա. Բեքարյանն ավելացնում է հայ մատենագրությունից Բայրոնի կատարած թարգմանությունները (հատվածներ Մովսես Խորենացու Հայոց պատմությունից, Ներսես Լամբրոնացու Ատենաբանությունից, ս. Պողոսի՝ կորնթացիներին ուղղված թղթից և այլն): Իսկ Մխիթարյան միաբանությունը և նրա գործիչները՝ Բայրոնի հետ ունեցած առնչություններով և սեփական պատմությամբ ու գործունեության վիթ-

խարի մշակութային շառավիղներով շրջանառում են խնդրո առարկա աշխատության գրեթե բոլոր և հատկապես առաջին ու երկրորդ գլուխներում: Հեղինակը աստիճանաբար վերհանում է այդ փոխհարաբերությունների բոլոր շերտերը՝ ցուցադրելով բաղադրիչների և ամբողջի լոգիստիկայի հայտնաբերման ճաշակ և հմտություն: Այդ ընթացքն ընդգրկում է Մխիթարյանների պարբերական մամուլում Բայրոնի գործերի տպագրման պատմությունից մինչև օտար հեղինակների կողմից Բայրոն-Մխիթարյան կապերի գնահատականը, Բայրոնի հայկական նամականու քննությունը, վերջինիս հիման վրա հայագիտության զարգացման ընթացքը Եվրոպայում, իր՝ Բայրոնի հայագիտական գործերի և ի վերջո, նրա անձի ու ստեղծագործության արժեքավորումը հայ գրական-հասարակական մտքի կողմից, որ հասցվում է գրեթե մինչև մեր ժամանակները: Մի հայտնի չափով քննարկվող աշխատությունը վերաբերում է նաև Մխիթարյան միաբանության և Մխիթարյան հայրերի անհատական գործունեությանը, թող որ մասնակիորեն, սակայն և տարողունակ ընդգրկումներով՝ միշտ առանցքում ունենալով Բայրոնի հետ նրանց առնչությունների մշակութային ու գիտական նշանակությունը: Հետազոտության բուն նյութը թելադրում է դրա երկու հիմնական ուղղությունները՝ հայ իրականության մեջ բայրոնագիտության սկզբնավորումն ու զարգացումը Մխիթարյանների կողմից և այնուհետև՝ Բայրոնի ստեղծագործության հոգևոր կապերը հայ գրականության հետ՝ նրա աշխարհընկալման և պատկերումների ընթացքի համեմատ: Սակայն աշխատանքը չի սպառվում նշված ուղղություններով, դրանք իմաստավորվում են նաև հետազոտական ընթացքով, կարելի է ասել՝ միջազգային ընդգրկումներով, այսինքն, բայրոնագիտության և հայագիտության ներթափանցումների մտածված վերարտադրությամբ: Ըստ այդմ, աշխատության երեք գլուխներում հեղինակը առավել խորությամբ, քան որևէ այլ ուսումնասիրող հայագիտության մեջ, իր մտահղացումներն ընդհանուր առմամբ իրականացրել է մի քանի հիմնահարցերում, որոնց մեջ կնշեինք Հայկական նամակների նշանակությունը Բայրոնին հետևող ժամանակաշրջանի հայագիտության զարգացման մեջ և հայ գրական-հասարակական մտքի ասպարեզում Բայրոնի տեղի և նշանակության հետազոտությունը:

Բայրոնի բուն իսկ կենսագրական հանգամանքներն աշխատության մեջ նախապատրաստում են նրա մուտքը Ս. Ղազար կղզի՝ ապահովելով հեղինակի կողմից անգլիացի բանաստեղծի՝ հայերին և հայերենին առնչվելու հանգամանքը և հիմնավորումների համոզչությունը: Արժե նշել նաև այս հարցում Ա. Բեքարյանի բացատրությունը. եթե Բայրոնի հայերեն սովորելու ցանկությունը մխիթարյան հայր, այս ասպարեզում նրա ուսուցիչ Հ. Ավգերյանը բացատրում էր հայ պատմիչների գործերը թարգմանելու նրա ցանկությամբ, իսկ նշանավոր պատմաբան և նույնպես նրա ժամանակակից Ղ. Ինճիճյանը՝ հայ բանաստեղծությանը ծանոթանալու նպատակով, ապա Ա. Բեքարյանը՝ այդ երկու ցանկությունները միասին, սակայն հայերենին տիրապետելու առավել հեռամետ նպատակադրմամբ: Ոչ նվազ կարևորության շարժառիթը կարելի է կարծել՝ բանաստեղծական հանճարի համար դժվարություններ հաղթահարելու

և սեփական ներաշխարհում կասկածի և ինքնավստահության պայքարի դիտարկման անհազ տենչը, ծովային խորություններից մարգարիտներ հանելու իմաստավորված տքնությունը, որտեղ եթե արկածախնդրական հովեր կան, ապա դրանք էլ մարում են հանճարի իմացական պողոթյուններում: Կարծեք, այդուհետև հասկանալի է դառնում իր՝ Բայրոնի պարզաբանումն այս հարցի լուսաբանման մեջ: Իր հայագիտական նամակներից մեկում (4 դեկտեմբերի, 1816)՝ ուղղված իր հրատարակիչ Մըրրեին, նա գրում է. «Իմ համոզմամբ հայոց լեզուն (որը երկուսն է՝ գրաբար և աշխարհաբար) դժվարին է, բայց ոչ անհաղթահարելի (համենայն դեպս, ես հուսով եմ): Կշարունակեմ ուսումնասիրությունս: Հարկավոր է միտքս մարզել ավելի խիստ ուսման բնագավառում, և այս լեզուն, ամենադժվարինը լինելով ինձ համար, նույնպիսի անհրաժեշտություն է, որպիսին՝ պոչը օձի համար» (տես գրախոսվող աշխ., էջ 180):

Իր գրքի առաջին հատվածներում Բայրոնի հայտնի կենսագրական հանգամանքներին և Մխիթարյանների հետ գործակցության փաստերին հեղինակն ավելացնում է սեփական հետազոտության արդյունքները: Այսպես, նա պարզում է, որ «Բազմավէպում» 1846 թ. անստորագիր տպագրվել է «Ուխտագնացություն Չայլդ Հարոլդի» պոեմից մի հատված, որի թարգմանիչը Ղ. Ալիշանն է: Նույնպես անստորագիր, այդ ամսագրում և ավելի ուշ շրջանում, Ղ. Ալիշանն իր այդ երախայրիքին ավելացրել է նշված պոեմի մեկ այլ հատվածի թարգմանությունը: Ա. Բեքարյանը ավելացրել է նաև նյութեր՝ նվիրված Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին, որոնք, անշուշտ, կնպաստեն հայ-եվրոպական և իր հերթին, հայ-անգլիական մշակութային առնչությունների վերհանման գործին:

Բազմաթիվ օրինակներով Ա. Բեքարյանը ցույց է տալիս, որ Բայրոն-Մխիթարյաններ կապերը ավանդույթ և հիմք են դարձել նշված՝ մշակութային փոխհարաբերությունների բնագավառում: Մխիթարյանների գործունեությունն այս իմաստով շարունակվել է մեծ բանաստեղծի մահվանից հետո ևս:

Հայտնի է, որ Մխիթարյանների հետ գործակցության առաջին օրինակը տվել էր Բայրոնը՝ 1817 և 1819 թթ.՝ Հ. Ավգերյանի հետ հրատարակելով «Քերականութին անգղիական և հայերէն» և «Քերականութին հայերէն և անգղականերէն» ուսումնական ձեռնարկները: Այդ գործունեությունն է, ի դեպ, խթանել երկու այլ անգլիացիների՝ Ջ. Բրանդի և Է. Լոմբի աշակերտելը Հ. Ավգերյանին, որոնք ամիսներ շարունակ հայերեն են սովորել նրանից և ինչպես Բայրոնը, նպաստել հայերեն-անգլերեն (Է. Լոմբ) և անգլերեն-հայերեն բառարանների (Ջ. Բրանդ) հրատարակության աշխատանքներին: 1820-ական թթ. Վենետիկում լույս տեսած այդ բառարանները, Ա. Բեքարյանի ճշմարտացի գնահատականով, «չափազանց արժեքավոր և հրատապ են մնում առ այսօր» (էջ 25):

Մխիթարյանների հետ Բայրոնի համատեղ աշխատանքն ի հայտ է եկել նաև «Բառարան անգղիերեն և հայերէն» հրատարակության գործում (1821): Ա. Բեքարյանը վերհանում է նաև Բայրոնի զուտ ինքնուրույն գործերը՝ դարձյալ նշված գործակցության շրջանակներում (հայերեն Աստվածաշնչի այն հատվածների

թարգմանությունները, որոնք չկային անգլերեն տարբերակում, հատվածներ հորենացու «Հայոց պատմությունից» և Լամբրոնացու «Ատենաբանությունից»):

Աշխատության մեջ առանձնակի ուշադրություն է դարձված Բայրոնի և Մխիթարյանների ու հայագիտության հետ այն աղբյուրների վերհանմանը, որոնք շոշափվում են բանաստեղծի նամականիում՝ ուղղված իր բարեկամներին ու իր շրջապատի այլ մարդկանց: Փաստական պատկառելի նյութի հիման վրա հեղինակը հաջողությամբ ներկայացրել է անգլիական դասականի հայեցվածքը Մխիթարյանների անձնվեր գործունեության նկատմամբ և հարգանքի ու հոգածության դրսևորումները՝ ի նպաստ միաբանության լուսավորական ծրագրերի:

Աշխատությունն աչքի է ընկնում հստակ արտահայտված ուղղություններով, որոնց մեջ կարելի է առանձնացնել Մխիթարյանների գործունեության լրջմիտ իմաստավորման, Եվրոպայում հայագիտության զարգացման հետագա ընթացքի վրա Բայրոնի ներգործության (երբեմն, թվում է, ուսումնասիրության շրջանակները գերազանցող մանրամասներով) և վերջապես, հայ-անգլիական մշակութային կապերի հիմնահարցերը՝ այս դեպքում ծանրության կենտրոնում պահելով հայ գրական-հասարակական մտքի վրա Բայրոնի թողած ազդեցությունը: Ընդամին, հեղինակը մանրամասն է անդրադարձել Բայրոնի պոեզիայի թարգմանությունների խնդրին, որոնք ընդգրկում են ինչպես նրա առանձին կամ մասնակի գործերի, այնպես էլ ժողովածուների հրատարակությունները:

Բայրոնի գործերի հայերեն թարգմանությունների ասպարեզում Բեքարյանն ընդգծել է Մխիթարյանների և նրանց պարբերականների, մանավանդ «Բազմավեպի» բացառիկ դերը: Նա արժանին է հատուցում նրա առաջին թարգմանիչներին՝ Ղ. Ալիշանին ու Խ. Գալֆայանին: Այստեղ և շարադրանքի հետագա հատվածներում հեղինակը կատարել է գիտական մտահղացման լայն ասպարեզ ենթադրող աշխատանք՝ «Բայրոնը հայ գրականության մեջ» թեմայով: Միշտ կամ գրեթե միշտ նա Բայրոնի գործերի հայերեն թարգմանության պատմությունն առնչում է հայ իրականության մեջ հասունացած գեղագիտական խնդիրներին և այս կտրվածքով մեկնաբանում և Բայրոնի ստեղծագործության ոգին, և հայ ընթերցողի անհատական ու հասարակական մղումները:

Աշխատության I և II գլուխների միջև թեմայի վերլուծության և այն ժամանակային ամբողջականության մեջ գնահատելու տեսակետից կա աչքի զարնող մի ընդհանրություն, որով հիմնահարցի քննությունը ստանում է միջազգային նշանակություն: Նկատի ունենք օտար հեղինակների վերաբերմունքը Բայրոնի և Մխիթարյանների կապերի նկատմամբ: Այդ կապերի մասին գրող հեղինակների միջազգային աշխարհագրությունը գրքում նկարագրվում է իր պատկառելի սահմաններով՝ անգլիացիներից (Ջոն Ջեֆրսոն, Իրվինգ Ուոլես, Ջեն Մորիս) մինչև ռուս հեղինակներ (Ա. և Յու. Վեսելովսկիներ), ֆրանսիացիներ, ամերիկացիներ, իտալացիներ (Իրվինգ, Ուոլես, Լեսլի Մարշանդ, Ա. Պաուլ դի Դեզիո և այլն): Հարկ է ընդգծել հեղինակի բժախնդրությունը՝ հանգամանորեն նշելու մամուլում և տարբեր հրատարակություններում արտացոլված այս թեմաներն առանձնացնելիս: Նա հատկապես վերհանում է «Բազմավեպի» ցուցաբերած

բացառիկ ուշադիր և զգայուն վերաբերմունքը Բայրոն-Մխիթարյաններ փոխհարաբերությունների բացահայտման տեսակետից: Այստեղ առանձնացված է «Բազմավէպի» 1924 թ. թողարկումը՝ նվիրված բանաստեղծի մահվան 100-ամյակին, որում նյութերը մեծավ մասամբ տպագրված են հայերեն և անգլերեն լեզուներով: Օտարազգի գրողների, մտավորականների և պարզապես Վենետիկ՝ Ս. Ղազար այցելող մարդկանց կարծիքները նշված փոխառնչությունների վերաբերյալ՝ իմացական նոր շերտեր են բացահայտում Բայրոնի՝ հայ իրականության հետ ունեցած շփումների լուսաբանման գործում: Եվ այս տեսակետից խնդրին նայելիս դրանք թարմ բովանդակավորում են ձեռք բերում Մխիթարյանների մյուս՝ «Հանդես ամսօրեայ» ամսագրում: Այստեղ հեղինակն անդրադառնում է Զ. Օ'Բրայենի մի հոդվածին (տպագրված այդ հանդեսի դեսի 1866 թ. համարներում)՝ «Լորդ Բայրոն, Ֆրիդրիխ Շիլլեր և խորհրդավոր հայը» վերնագրով: Անգլիացի հեղինակը Շիլլերի երկի հերոսի նկատմամբ ունեցած ռոմանտիկական-միստիկական հետաքրքրությամբ է բացատրում նրա հայերեն սովորելու և Մխիթարյաններին առնչվելու ամենակին էլ ոչ պատահական հանգամանքը: Նույնպիսի բովանդակության՝ Մխիթարյանների «Հայ ընտանիք» հանդեսի հոբելյանական նյութերում ևս (1874, թիվ 11-12)՝ ամբողջովին նվիրված Բայրոնի մահվան 150-ամյակին, Ա. Բեքարյանը հաջողությամբ ցուցադրում է, որ Բայրոնի ստեղծագործության և կենսագրության հետազոտության շարունակական ընթացքը անհրաժեշտորեն պետք է ենթադրեր նրա և Մխիթարյանների շփումների հոգևոր-բարոյական անբեկանելի կապը, որի փոխադարձ բնույթն իր հերթին նպաստել է Մխիթարյան միաբանության համբավի տարածմանը Եվրոպայում, Ամերիկայում և այլուր՝ լուրջ ազդակ դառնալով հայագիտության զարգացման համար: Վերոհիշյալ և այլ հեղինակների գործերը Ա. Բեքարյանը քննում և արժեքավորում է տարբեր տեսանկյուններից, նորովի և տալով յուաքանցյուրի առանձին գիահատականը:

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է Եվրոպայում հայագիտության ձևավորման և զարգացման պատմությանը՝ հիմքում ունենալով Բայրոնի հայկական նամականին և նրա հայագիտական ուսումնասիրությունները: Այս պատմական ակնարկում շրջանառում և բնութագրվում են Եվրոպացի հեղինակներ Շրյոդերը, Լա Կրոզը, Վիստոն եղբայրները (XVII-XVIII դդ.), Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցը (XIX դ. սկզբներ), Սեն-Մարտենը, «Ասիական ընկերության» հայագիտական հետաքրքրությունները և այլն: Սրան սերտաճած՝ հեղինակը գնահատում է Բայրոնի տեղն ու նշանակությունը այս ասպարեզում: Այստեղ նա վերջինիս հայագիտական գործունեությունը բացատրում է նաև իր՝ Բայրոնի հայտնի ասույթով, որի մեջ մարդկային բովանդակությունը շատ ավելի խորն է, քան հայերին տրված որևէ այլ բնութագիր՝ որևէ այլ օտար հեղինակի կողմից և անգերազանցելի՝ իր պարզությամբ և անկեղծությամբ, որտեղ հայերին նա համարում է այնպիսի տարագրություն ունեցող ազգ, որը «Թերևս դժվար լինի գտնել մի ազգի տարեգրություն, որն ավելի զերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինու-

թյունները խաղաղասիրության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետևանք: Սակայն ինչպիսին էլ լինեն նրանց ճակատագիրը... նրանց երկիրը հավետ պիտի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և թերևս նրանց լեզուն միայն ավելի խորը ուսումնասիրության պահանջ է դնում՝ ավելի գրավիչ դառնալու համար» (էջ 16):

Այստեղ երկու հանգամանք է աչքի զարնում, նախ, շատ ամփոփ, հայոց պատմության փիլիսոփայությունը (որը ցայսօր չի ուսումնասիրվել հարկ եղած խորությամբ) և ապա Բայրոնի հորդորը եվրոպական գիտությանը՝ զբաղվելու հայագիտությամբ, որպես համամարդկային արժեքներ վերհանող գործոնի: Այս հանգամանքով էլ պայմանավորված են, կարծում ենք, այս աշխատության իրողությունները՝ Բայրոնի ժամանակակից եվրոպական հայագիտության նկարագիրը և դրա զարգացման մեջ Բայրոնի անհատականության նշանակությունը:

Շատ ուշագրավ է, որ ռոմանտիզմի ռահվիրան միանգամայն իրատեսական հիմնավորում է տալիս Հայաստանի թշվառությունների պատճառին. «քանզի երկար ժամանակ հզոր թագավորություն լինելով հանդերձ, համարյա երբեք անկախ, չեղավ և պարսից սատրապները, և թուրք փաշաները նմանաբար անապատ դարձրին այն երկիրը, ուր աստված մարդուն ստեղծել էր իր իսկ պատկերով» (էջ 116-117):

Այնուհետև, երկրորդը՝ Ա. Բեքարյանը բավական նրբամտորեն է մեկնաբանում մեր մեջբերած հատվածի վերջին մասը. «Ելնելով քաղաքական նկատառումներից, – գրում է նա, – Մխիթարյանները որոշեցին չիրատարակել ներածությունը: Բանաստեղծի խոսվարարական խառնվածքը չցանկանալով դույզն-ինչ զիջումների դիմել, չընդունեց այդ օբյեկտիվ պատճառները: Բանաստեղծը վիրավորվեց և դադարեց Մխիթարյաններին այցելելուց» (էջ 117):

Հիրավի, սատրապներն ու փաշաները շարունակում էին իրենց գործը՝ զգացնել տալով փոխհարաբերությունների այս անձկալի, բայց և խորհրդանշական պատկերի մեջ: Ավելացնենք, որ հեղինակի հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ նշված պատճառով Բայրոնի առաջաբանը մի տևական ժամանակ անտիպ էր մնում և որ բանաստեղծի մահվանից վեց տարի անց միայն, 1830 թ., Թ. Մուրն այն հրատարակեց «Լորդ Բայրոնի նամակները և օրագրերը. կենսագրական բնույթի տվյալներով հանդերձ» գրքում: Հայերեն թարգմանությամբ Մխիթարյաններն այն տպագրեցին 1852 թ. և հետագայում:

Աշխատության վերջին գլխում հեղինակն իր մտահղացման համեմատ, որ հետամտում է Բայրոնը և հայ իրականությունը հիմնահարցի լուծումը, անցնում է նրա մասին հայ գրական-հասարակական մտքի անդրադարձներին՝ թեման եզրավորելով հայ գրականության մեջ բայրոնիզմի դրսևորումներով: Արժե ընդգծել հայ մտավորականության՝ Բայրոնի ստեղծագործության հետ ունեցած ընդհանրությունների վերհանումը գրքում՝ հայությանը հատուկ ընդարձակ աշխարհագրությամբ (Եվրոպայի և Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներ, ԱՄՆ, Ռուսաստան), անգլիացի հանճարի, նրա ժամանակի ու միջավայրի վերաբերյալ այդ մտավորականության անառարկելի իրազեկությունը: Վիճակագրական

ամուր հենքի վրա հեղինակը ցույց է տալիս Բայրոնի՝ բազմիցս հայերենի թարգմանվելու պատմահասարակական պատճառները, որոնց մեջ առաջնակարգ նշանակություն է տալիս ճշմարտության և արդարության որոնումներին: Այս հոգևոր ընդհանրությունն է, որ հայ գրականության մեջ Բայրոնին վերապահել է բացառիկ տեղ. Ոչ միայն նրա ստեղծագործություններն են թարգմանվել, այլև ինքը՝ բանաստեղծն է քանիցս դարձել այդ գրականության հերոս (Ս. Շահագիզ, Հովհ. Թումանյան, Ռ. Որբերյան, Վ. Թորգոմյան, Ա. Սրապյան, Ե. Փեճիկյան, Ն. Զարյան, Ա. Պարսամյան և ուրիշներ): Հեղինակն այստեղ կատարել է գրականագիտական բարձրորակ աշխատանք՝ վերհանելով հայ հեղինակների յուրովի մոտեցումները Բայրոնի կերպարի անհատականացման հայտաբերումներով: Այս բնագավառում հայ գրականությունը սնուցվել է պարբերական հրատարակությունների մատուցած պատկառելի նյութով, որ և հիմնավորվում է հայ գրականության մեջ Բայրոնի ֆենոմենի տրամաբանությանը նպաստ բերած «Բազմավեպի», «Ծաղիկի», «Մեղվի», «Մշակի», «Հանդես ամսօրեայի», «Հայ ընտանիքի» ավանդը խնդրո առարկա հիմնահարցում:

Քննարկվող գրքում հատկապես պետք է արժեքավորել հանրագումարային նշանակության վերջին հատվածը՝ «Բայրոնիզմի արտացոլումը հայ գրականության մեջ» խորագրով: Բայրոնիզմի՝ ռոմանտիկական գաղափարների ու բանաստեղծական աշխարհի անկրկնելի համադրումը գրականության մեջ՝ իր խոր հետքն է թողել հայ գրականության վրա Ղ. Ալիշանից և Ս. Շահագիզից մինչև Ռ. Որբերյան, Հովհ. Թումանյանից և Ավ. Իսահակյանից մինչև Վ. Կարենց, Պ. Սևակ և մեր ժամանակների այլ գրողներ: Բայրոնիզմին ներհատուկ անհագ ազատասիրությունը, մարդասիրությունը և այլասիրությունը տառապած անհատի և ազգերի նկատմամբ՝ պայմանավորեցին հայ գրողների ու գրականության՝ այլև կերպարվեստում ամբողջական ժանրերի (քաղաքական և քաղաքացիական քնարերգություններ, սուբյեկտիվ քնարերգություն) արդիականացումն ու այլ զարգացումները: Պետք է ավելացնել Բայրոնի թողած անխուսափելի ազդեցությունը հայ ազգային ազատագրական մտայնության, հոգևոր ու մտավոր կապանքներից ձերբազատվելու այն ուղղվածության վրա, որով հայ գրականությունը մերձենում է ազգերի մշակույթին ընդհանրապես և մասնավորապես՝ Բայրոնի ստեղծագործության լայնահուն ուղիներով:

Կարելի էր ավելի երկար խոսել աշխատության արժանիքների և այլ առանձնահատկությունների վերաբերյալ, սակայն եզրափակելուց առաջ չորջանցենք դրա բովանդակային մի իրողությունը. գիրքը հայերենից ռուսերենի է թարգմանել Գայանե Հարությունյանը՝ իրեն հատուկ լեզվագիտական և հայագիտական իմացությամբ ու հմտությամբ: Ավելացնենք նաև նրա աշխատանքի հույժ տպավորիչ գեղարվեստական կողմը՝ Բայրոնին նվիրված չափաժողովածական թարգմանությունները արևմտահայ (սփյուռքահայ) պոեզիայից ռուսերենի (Ռ. Որբերյան, Ե. Փեճիկյան, Վ. Թորգոմյան, Ա. Սրապյան, Մ. Աթմաճյան), որոնք կատարվում են առաջին անգամ:


Ցանկալի կլինեն առավել բազմակողմանի և ընդլայնված տեսնել Հավելվածի փաստական նյութը՝ տարբեր ժամանակներում, նրա հայերեն հրատարակությունների տիտղոսաթերթերը:

Պետք է շնորհավորել հեղինակին, նաև ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտին՝ Բայրոնի ստեղծագործությանը նվիրված տասնամյակների այս անդուլ աշխատանքը հաջողությամբ ամբողջացնելով հայ բայրոնագիտությանը մնայուն արգասիք ընծայելու և գրքի հրատարակության համար: Այս առթիվ կարելի է ասել, որ անգամ այս լուրջ աշխատանքի դեպքում անխուսափելի են մնացել որոշ վիճելի խնդիրներ (կրկնությունների հիմնավորվածությունը), թեմատիկ ձևակերպման հետ կապվող հանգուցալուծումներ (կառուցվածքային տրոհումներ), որպիսիք կարող են միայն սրել ընթերցողի ուշադրությունը սիրով և նվիրումով կատարված այս աշխատանքի անհերքելի արժեքի նկատմամբ:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՎԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մինասյան եղբայրների կյանքն ու գործունեությունը ռազմաճակատային նամակներում և արխիվային փաստաթղթերում (1941-1945 թթ.), Երևան, «Էդիթ Պրինտ», 2022, 128 էջ, 32 էջ լուսանկարներ:



Վերջերս հրատարակվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանի հեղինակած «Մինասյան եղբայրների կյանքն ու գործունեությունը ռազմաճակատային նամակներում և արխիվային փաստաթղթերում (1941-1945 թթ.)» հայերեն մենագրությունը, որը բազմաժանր պատմաբանի՝ Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը վերաբերող 40-րդ մենագրությունն է: Գիրքը նորություն է հայ պատմագրության մեջ իր բովանդակությամբ. շարադրված է հիմնականում Հայրենական մեծ պատերազմին սկզբից մինչև վերջ գործուն մասնակցություն ունեցած Մինասյան եղբայրների՝ Անդրանիկի և Օնիկի, պատերազմում զոհված Պարզևի և Նրանց հորեղբայր Շմավոն Մինասյանի ռազմաճակատային նամակների ու Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի (Մոսկվայի մարզ, քաղաք Պոդոլսկ) նորահայտ ու արժեքավոր փաստաթղթերի հիման վրա, որտեղ հանգամանորեն լուսաբանվել են Մինասյանների ռազմաճակատային կյանքն ու գործունեությունը, բացահայտվել հայրենիքի, ծնողների, բարեկամների ու ընկերների հանդեպ նրանց անսահման սերն ու նվիրվածությունը, ամփոփ անդրադարձել է նաև նրանց հետագա ճակատագրին:

Աշխատության խմբագրական կոլեգիայի կազմի մեջ ընդգրկված են ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայական հանձնաժողովի նախագահ, գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանը և ՀՀ վետերանների միավորման նախագահ, գնդապետ Սիմոն Եսայանը: Գիրքը գրախոսել է ՀՀ վետերանների միավորման նախագահի տեղակալ, գնդապետ Միխայիլ Ստեփանյանը:

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, վերջաբանից, հավելվածներից, հեղինակի մասին տեղեկությունից, նկարազարդ է և ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ:

Ընդարձակ առաջաբանում (11 էջ), բացի օգտագործված աղբյուրներից և գրականության տեսությունից, համառոտակի լուսաբանվել են Մեծ հայրենականին մասնակցած հայ ռազմիկների, զորավարների, հայկական դիվիզիաների, հորհրդային Միության հայ հերոսների կատարած սխրանքները, առանձնահա-

տուկ նշվել է Սյունիքի զավակների ավանդը գերմանաֆաշիստական զավթիչների ջախջախման գործում: Հեղինակը նաև հատուկ ուշադրություն է դարձրել Մինասյան եղբայրների ծննդավայր Կապանի շրջանի Շիկահող գյուղի պատմության լուսաբանմանը: Սյունյաց աշխարհի ամենագեղատեսիլ վայրում գտնվող այդ գյուղը դեռևս XIII դարում հարկատու էր Տաթևի վանքին: Շիկահողը պետական, քաղաքական գործիչ, ազգային բարերար Պողոս Նուբար փաշայի նախնիների ծննդավայրն էր, որտեղից նրանք Դավիթ-Բեկի ապստամբության ավարտից հետո հեռացել են Զմյուռնիա, ապա Եգիպտոս, Սուդան, Ֆրանսիա: Այժմ էլ գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու (XVII դար) բակում պահպանված են Մելիք-Նուբարների ազգականների գերեզմանները: Նուբար փաշան 1866-1879 թթ. և 1881-1888 թթ. եղել է Եգիպտոսի արտաքին գործերի նախարարը, ապա՝ Եգիպտոսի վարչապետ: Նրա որդին՝ Պողոս Նուբարը, 1906 թ. հիմնադրել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Նա, որպես Ազգային պատվիրակության նախագահ, 1919-1920 թթ. մասնակցել է Փարիզի հաշտության կոնֆերանսի աշխատանքներին՝ նպատակ ունենալով հասնել անկախ և միացյալ Հայաստանի ստեղծմանը: Պողոս Նուբարը ծավալել է նաև ազգանպաստ գործունեություն, բացել է դպրոցներ, հիվանդանոցներ, մշակութային կենտրոններ, հրատարակել պարբերականներ և այլն:

Շիկահողի ծնունդ էր նաև 1918 թ. (մայիսի 24-28) Ղարաքիլիսայի ճակատամարտի հերոս, հրետանու հրամանատար, կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը, որը նույնպես Մելիք-Նուբարների տոհմից էր: Այդ նշանավոր տոհմից էր նաև գիտության նշանավոր գործիչ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, որը գործել է Ինդոնեզիայում, Հնդկաստանում, Չինաստանում և Հայաստանում, զբաղվել է բանասիրությամբ, արվեստաբանությամբ ու փիլիսոփայությամբ: Շիկահողում են ծնվել կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Իվանի Մինասյանը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Մանվել Մակիչի Սիմոնյանը, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանը: 1939 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Շիկահողն ուներ 870 բնակիչ: Հայրենական մեծ պատերազմին մասնակցած 260 շիկահողցիներից 97-ը զոհվել է ռազմաճակատում: 1967 թ. հոկտեմբերի 15-ին գյուղի կենտրոնական հրապարակում հանդիսավոր կերպով բացվել է Հայրենական մեծ պատերազմում զոհված շիկահողցիների հիշատակը հավերժացնող հուշարձան, որը կառուցվել էր համագյուղացիների հանգանակությունների շնորհիվ:

Անդրանիկ, Օնիկ, Պարզև Մինասյանները և նրանց հորեղբայր Շմավոն Մինասյանն այն 260 շիկահողցիների թվում էին, որոնք մեկնել էին ռազմաճակատ: Նրանցից երկուսը՝ Պարզև ու Շմավոն Մինասյանները, զոհվեցին ռազմաճակատում:

Առաջին գլխում՝ «Մինասյան եղբայրների մարտական ուղին», հեղինակը լուսաբանում է Մինասյանների կենսագրությունը, նրանց նախապատերազմյան գործունեությունը՝ հանգամանորեն անդրադառնալով յուրաքանչյուրի անցած մարտական ուղուն:

Եղբայրներից ավագը ծնվել է 1914 թ. հուլիսի 7-ին Շիկահողում: Գյուղի դպրոցի յոթերորդ դասարանն ավարտելուց հետո մեկնում է Բաքու հորեղբոր՝ Բագրատի մոտ ուսումը շարունակելու նպատակով: Ուսումն առնելուց հետո Անդրանիկը վերադառնում է հայրենի Շիկահող և աշխատում գյուղի միջնակարգ դպրոցում որպես ռուսաց լեզվի, աշխարհագրության և պատմության ուսուցիչ, ապա՝ հարևան Ծավ գյուղի դպրոցի տնօրեն: 1939 թ. դեկտեմբերին նա 200 կապանցիների թվում զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը և ծառայում Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգի 6-րդ հրաձգային դիվիզիայի 84-րդ հրաձգային գնդի 1-ին գումարտակի 1-ին վաշտում՝ որպես քաղղեկի տեղակալ: Երբ 1941 թ. հունիսի 22-ին նացիստական Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց Խորհրդային Միության վրա, առաջին իսկ պահից թշնամու ծանր հարվածն իրենց վրա վերցրին Բելոռուսական զինվորական օկրուգի զորքերը, որոնց թվում՝ նաև Բրեստի ամրոցում տեղակայված 84-րդ հրաձգային գունդը: 1941 թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 20-ը գնդի անձնակազմը հերոսաբար դիմադրեց հակառակորդի մի քանի անգամ գերազանցող ուժերին՝ խոչընդոտելով վերջինների առաջխաղացումը: 6-րդ հրաձգային դիվիզիայի հիմնական ուժերը, նաև 84-րդ հրաձգային գնդի 1-ին գումարտակը գտնվում էին Բրեստի ամրոցից դուրս՝ դաշտային պարապմունքներում: Նրանց չհաջողվեց մարտերով ճեղքել հակառակորդի օղակը և միանալ ամրոցի պաշտպաններին: Ուստի դիվիզիայի հիմնական ուժերը, ինչպես նաև քաղղեկի տեղակալ Անդրանիկ Մինասյանի ստորաբաժանումը ստիպված էին կազմակերպված մարտերով նահանջել արևելք: Բելոռուսական Պինսկ քաղաքի մոտ տեղի ունեցած մարտի ժամանակ Անդրանիկը ծանր վիրավորվեց և գնացքով տեղափոխվեց Օրյոլ՝ հոսպիտալ: Բուժվելուց հետո 6-րդ բանակի 44-րդ առանձին ինժեներական փակոցային գումարտակի շարքերում Ստալինգրադից մարտերով հասավ Օդեսա, այնտեղից էլ Բուխարեստ, Սոֆիա, Բելգրադ, Բուդապեշտ և 1945 թ. մայիսի 9-ին հաղթանակը նշեց Վիեննայում: Պատերազմը Անդրանիկ Մինասյանն ավարտեց կապիտանի կոչումով. նա գումարտակի հրամանատարի քաղգծով տեղակալ էր, պարգևատրվել էր Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով և «Արիության համար» մեդալով:

Մինասյանների միջնեկ եղբայրը՝ Օնիկը, ծնվել է 1917 թ. նոյեմբերի 7-ին: Տարրական կրթությունն ստացել է հայրենի Շիկահողում, ապա ուսումը շարունակել Բաքվում: 1931 թ. վերադարձել է Կապան և աշխատանքի անցել քաղաքի փոստատանը՝ որպես հեռագրիչ: 1936 թ. դարձյալ մեկնել է Բաքու և ուսումը շարունակում թիվ 22 երեկոյան դպրոցում՝ իսկ ցերեկային ժամերին շարունակելով աշխատել որպես հեռագրիչ: 1938 թ. հոկտեմբերին նա Բաքվից զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը և ծառայել Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգում՝ մասնակցելով Արևմտյան Բելոռուսիան սպիտակ լեռներից ազատագրելու գործողությանը: 1939 թ. նոյեմբերի 30-ից մինչև 1940 թ. մարտի 13-ը քաղղեկի տեղակալ Օ. Մինասյանն ակտիվորեն մասնակցել է Խորհրդա-ֆիննական պատերազմին. Լենինգրադյան զինվորական օկրուգի 168-րդ հրաձգա-

յին դիվիզիայի շարքերում, ձմեռային ծանր պայմաններում, հաղթահարել է Մաններհայմի պաշտպանական անառիկ գիծը: Պատերազմից հետո սովորել է դիվիզիայի կուսակցական դպրոցում:

Մեծ հայրենականը նա դիմավորում է Լենինգրադի մատույցներում և 208-րդ առանձին զենիթային դիվիզիոնի կազմում մասնակցում քաղաքի հերոսական պաշտպանության առաջին մարտերին: Այնուհետև իր զորամասի հետ տեղափոխվում է Կարելյան ռազմաճակատ և Անդրբլեռային երկրամասի բնակչի-մայական բարդ պայմաններում մարտնչում գերմանաֆաշիստական զավթիչների ու նրանց դրածո սպիտակ ֆինների դեմ:

Քաջարի հայորդին Կարելյան ռազմաճակատում ցուցաբերած սխրանքների համար պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով, ստանում մայրի զինվորական կոչում, նշանակվում դիվիզիոնի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ: Կարելյան ճակատում մարտերն ավարտվեցին 1944 թ. աշնանը, երբ Գերմանիայի դաշնակից Ֆինլանդիան դուրս եկավ պատերազմից:

Երկրորդ՝ «Պատերազմի հաղթական տարում» գլուխը լուսաբանվում է Կարելիայում պատերազմական գործողության ավարտից հետո մայր Օնիկ Մինասյանի՝ 1945 թ. հունվար-փետրվարին արձակուրդ ստանալուց հետո Բաքու, Կապան, Շիկահող և Երևան վերադառնալու պատմությունը: Արձակուրդից հետո մայրը զինվորական ծառայությունը շարունակում է Մոսկվայի զինվորական օկրուգում՝ որպես 208-րդ առանձին զենիթային հրետանային դիվիզիոնի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ: 1945 թ. հունիսի 24-ին մասնակցում է Կարմիր հրապարակում կայացած Հաղթանակի զորահանդեսին:

Երրորդ՝ «Մինասյանների հարազատների ու ընկերների ճակատագիրը» գլուխը պատմում է Մինասյան կրտսեր եղբոր՝ Պարգևի մասին: Նա Շիկահողի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, որպես կոմերիտական կամավոր, դիմել էր ռազմաճակատ մեկնելու խնդրանքով: Կապանի զինկոմիսարիատում, հարգելով նրա դիմումը, ծառայության են ուղարկել Հյուսիսկովկասյան ռազմաճակատ: Պարգևը 18-րդ բանակի 85-րդ գվարդիայի հրաձգային գնդի շարքերում 1943 թ. մայիս-սեպտեմբերին ակտիվորեն մասնակցում է Կովկասի ճակատամարտին, սեպտեմբերին աչքի ընկնում Նովոռոսիյսկ-Թամանյան գործողության ժամանակ: Մարտերից մեկում ծանր վիրավորվում է ոտքից: Վիրավոր զինվորներին տեղափոխող նավը ջրասույզ է լինում՝ ոմբակոծվելով հակառակորդի ինքնաթիռների կողմից. մի քանի հարյուր վիրավորների թվում զոհվում է նաև Պարգևը:

Այլ կերպ է դասավորվում Մինասյանների հորեղբոր՝ Շմավոն Աղաջանի Մինասյանի ճակատագիրը: Գյուղի դպրոցն ավարտելուց հետո նա 1926-1928 թթ. ծառայում է Հայկական հրաձգային դիվիզիայի հրետանային գնդի շարքերում: Բանակից զորացրվելուց հետո մեկնում է Բաքու եղբոր՝ Բագրատի մոտ և աշխատում նավթային բնագավառում: Զուգահեռ սովորել է բանֆակում, էներգետիկ տեխնիկումում, ապա Կարմիր պրոֆեսուրայում: Այնուհետև պա-

տասխանատու կուսակցական աշխատանքի է անցել Ստեփանակերտում և Բաքվում:

Երբ սկսվեց Մեծ հայրենականը, նա կամավոր մեկնեց ռազմաճակատ, ավարտեց հակաօդային պաշտպանության բարձրագույն դպրոցը և Անդրկովկասյան ռազմաճակատի 249-րդ բանակային զենիթահրետանային գնդի շարքում մասնակցեց Կովկասի ճակատամարտին: 1943 թ. աշնանից կապիտան Շ. Մինասյանը, որպես 2004-րդ զենիթահրետանային գնդի հրամանատարի տեղակալ, մասնակցել է Ղրիմի, ապա Լեհաստանի մարտերին, պարգևատրվել Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, ստացել մայորի զինվորական կոչում: 1945 թ. ապրիլի 16-ից մայիսի 8-ը մայորը մասնակցել է Բեռլինի հարձակողական գործողությանը՝ ընդհուպ հասնելով Դերզդեն: Այնուհետև 1-ին ուկրաինական ռազմաճակատի 3-րդ գվարդիական բանակի կազմում մայոր Մինասյանը մասնակցել է Պրագայի գործողությանը և իր զորամասի հետ մայիսի 9-ին մտել Չեխոսլովակիայի մայրաքաղաք՝ այնտեղ դիմավորելով Հաղթանակի օրը: Սակայն հայրենիք վերադառնալու ճանապարհին խիզախ զինվորականը զոհ գնաց թշնամու դավադիր գնդակին:

Վերջաբանում ամփոփ անդրադարձ է կատարվում Անդրանիկ և Օնիկ Մինասյանների գործունեության հետպատերազմյան տարիներին: Նրանցից ավագը մինչև 1956 թ. ամռանը ծառայել է Հայկական 89-րդ Թամանյան եռակի շքանշանակիր դիվիզիայի շարքերում, արժանացել մայորի զինվորական կոչմանը: Օնիկ Մինասյանը Մոսկվայից հետո ծառայությունը շարունակել է Լենինգրադում, իսկ 1952-1958 թթ. ԳԴՀ-ում տեղակայված զորախմբի կազմում արժանացել է փոխգնդապետի զինվորական կոչմանը:

Հավելվածում տեղ են գտել Մինասյան եղբայրների՝ ռազմաճակատից գրած մի շարք նամակներ և հեղինակի կողմից Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնի արխիվից հայտնաբերված փաստաթղթեր, որոնք հիմնականում պարզևատրման թերթիկներ են և մարտական բնութագրեր: Նամակներում ցայտուն արտահայտվում է որդիների անսահման սերը ծնողների և Հայրենիքի հանդեպ:

Վերջում հավելենք, աշխատանքը առավել կշահեր, եթե գիրքն ունենար հայերեն և անգլերեն ամփոփումներ, եթե այնտեղ զետեղվեին նաև ծնողների ու հարազատների՝ ռազմաճակատ ուղարկած որոշ նամակներ:

Գիրքը գեղեցիկ ու խոսուն ձևավորմամբ հրատարակել է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը: Նկարագարող է, այնտեղ զետեղված են հերոսների և նրանց հարազատների լուսանկարները:

Ընթերցողի սեղանին է դրված այս ուշագրավ ուսումնասիրությունը նոր խոսք է Հայրենական մեծ պատերազմին նվիրված հայ պատմագրության մեջ:

ՎՈԼՈՂՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու

ՊԱՐՈՒՅՐ ՍԻՐԵԿԱՆԻ ՀԱԿՈՔՅԱՆ, Տառապանքներով լեցուն կյանքիս մասին: Հուշեր, I մաս, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2022, 248 էջ:



ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակած՝ «Տառապանքներով լեցուն կյանքիս մասին» հուշագրությունը սոցիալ-տնտեսական բացառիկ տեղեկություններ է պարունակում XX դ. առաջին տասնամյակների հայ իրականության վերաբերյալ: Պարոյր Սիրեկանի Հակոբյանը արմատներով Արևմտյան Հայաստանից էր (Մուշ, Բուլանդ): Նրա գերդաստանը 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով գաղթել է Արևելյան Հայաստան և դեգերելով տեղից տեղ՝ վերջնական հանգրվան գտել Շիրակի դաշտավայրի բնակավայրերից մեկում: Հուշերում վառ, պատկերավոր գույներով ներկայացված է մանկության և պատանեկության տարիների շրջանը: Իր հայրենի գյուղի՝ Ադիամանի մասին (Գառնա-

հովիտ, Ալեքսանդրապոլի գավառ) հեղինակը հետևյալն է նշում. «Գյուղում լուսամուտ ունեցող տուն չկար, բացի մեր և տերտերանց Անտոնի: Բնակվում էին հացատներում կամ գոմերի օղաներում: Որքան հիշում եմ, գյուղացիները տարեկան մեկ կամ երկու անգամ մեկնում էին քաղաք (Ալեքսանդրապոլ), իրենց գյուղմթերքները վաճառելու և տան համար որոշ (հագուստեղեն, գործիքներ) գնումներ կատարելու: Կոշիկ ասած բանը գոյություն չուներ: Մասսայաբար հագնում էին անասունների մորթուց պատրաստված տրեխներ» (էջ 32): Հուշագրողը կարևոր տեղեկություններ է հաղորդում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայկական գյուղերի անցուդարձի, տնտեսական ցավալի ու դառն կացության, առողջապահական ծանր խնդիրների մասին: Հեղինակը վկայում է, որ պատերազմի դաշտից եկած լուրերը, սև թղթերը, արևմտահայերի ողբերգական իրավիճակը ճնշող ազդեցություն էին գործում հայ ազգաբնակչության վրա: Կարևոր դիտարկումներ ու տվյալներ կան մասնավորապես «Պատերազմի ընթացքը 1918-1920 թթ.: Ժողովրդի ծանր վիճակը» և «1919 թ. գարուն» բաժիններում: Դա հատկապես վերաբերում է հայկական զինված ուժերում ստեղծված կացությանը, թուրքերի դեմ մղվող պայքարին և անելանելի թվացող սոցիալ-քաղաքական իրավիճակին:

Պ. Հակոբյանը 1919-1920 թթ. ականատեսն ու մասնակիցն է դառնում հայոց երկրում ծավալված մի շարք բախտորոշ իրադարձությունների: 1919 թ. մայիսին նա հայկական ուժերի կազմում (անգլիական ուժերի հետ) մասնակցում է թուրքերի կողմից բռնակցված Կարսի բերդի և Կարսի մարզի ազատագրմանը: 1919 թ. նոյեմբերին երիտասարդ Հակոբյանը, «գերազանց քննություններ հանձ-

ներով», «ավագ ունտեր օֆիցերի» (ավագ սերժանտ) կոչումով շարունակում է ծառայությունը հայոց զինված ուժերում, Կաղզվան-Սարիղամիշ հատվածում:

Հուշագրության հեղինակը գրում է, որ Կարս քաղաքի բնակչության կեսից ավելին թուրքեր էին, այդ պատճառով էլ հայ զինվորները միշտ զգոն էին. «...նույնիսկ գիշերները քնելիս՝ հագուստներս չէինք հանում, հնարավոր անակնկալներին պատրաստ լինելու համար: Մեծ մասամբ պարեկության էինք գնում: Թուրքական սահմանը քաղաքից 5 կմ հեռավորության վրա էր... Այդ օրերին թուրքական սահմանից հաճախակի լսվում էին հրաձգային զարկեր: Տեղական թուրքերը բավական անհանգիստ էին, երբեմն գաղտագողի հափշտակում էին մեր զինվորներին, խոշտանգում ու դիակները նետում փողոց: Մեկի փոխարեն թեև տասից էինք վրեժ լուծում, բայց դրանով վիճակը չէր կայունանում» (էջ 126):

Ուշադրության են արժանի հատկապես հայկական զինուժի ռազմական երթերի, անգամ նահանջների և այլ գործողությունների վերաբերյալ հեղինակի տեղեկությունները:

Կարևոր աղբյուրագիտական արժեք ունի 1920 թ. աշնանը Կարսի մատույցներում տեղի ունեցած կռիվների և քաղաքը հանձնելուն նախորդած ու հաջորդած իրադարձությունների նկարագրությունը, որն արտացոլում է այդ օրերին մեր երկրի անկազմակերպ, գրեթե քաոսային պատկերը: Թշնամին, օգտվելով այդ խառնակ ու քաոսային վիճակից, գրավել է Կարսն ու առաջ շարժվել: Ահա մեկ հատված հայ զինվորականի հուշերից. «Թուրքական բանակը քաղաքից 7-8 կմ-ի վրա էր: Քաղաքի ժողովուրդը եռակի անգամ ավելացել էր, փողոցներով շարժվել չէր լինում, գաղթածները թափված էին ամենուր: Զորքերը լցված էին պատերի տակ: Եղանակները խիստ վատացել էին, ձյունախառն անձրևները թափվում էին օր ու գիշեր, գնացքները չէին աշխատում: Կայարանում կանգնած 6-7 էշերներից, որոնք լցված էին գաղթականներով, օրական մեկ կամ երկուսը շարժվելու հնարավորություն չունեին՝ վառելիքի պակասության պատճառով: Հարկադրված քանդում էին կայարանամերձ տները, փայտը տեղափոխում շոգեքարշ ու դրանով, ինչ որ չափով, վիճակից դուրս գալիս: Բայց թե դրանով անհնար էր գաղթականությանը փոխադրել Ալեքսանդրապոլ» (էջ 169-170): Զորքն անկազմակերպ, խուճապային նահանջի մեջ էր, ազգաբնակչությունը՝ լքված, հուսահատական տրամադրությունների ու դեգերումների թոհուրթոհի մեջ:

Մինչև օրս վերոնշյալ իրավիճակն ու իրադարձությունները լուսաբանող շատ գրքեր ու վավերագրեր են հրապարակվել, սակայն այդ ամենի մեջ թերևս սպառիչ անկողմնակալությամբ աչքի է ընկնում հայկական բանակի ենթասպա Պարույր Հակոբյանի հուշերի սույն գիրքը: Առանց թաքցնելու կամ կոծկելու՝ պարզ ու բնականոն հաշվետվությամբ ու հետևողականությամբ նա ներկայացնում է այն միջավայրն ու հանգամանքները, այն իրականությունը, որոնց ակա-նատեսն ու մասնակիցն է եղել, առանց գունագարդելու կամ ստվերելու դրանք:

Հուշագրության էջերում կարևոր, բացառիկ տեղեկություններ են հաղորդվում 1920-1930-ական թթ. Խորհրդային Հայաստանի գյուղերում տիրող իրավիճակի, կոլնտնտեսային շարժման, բռնաճնշումների և հալածանքների վերա-

բերյալ: Հեղինակը չի թաքցնում և չի չափազանցնում ոչինչ, այլ պարզ ճշմարտությամբ ներկայացնում է այն իրականությունը, որում հայտնվել էին իր նման հազարավոր գյուղացիներ ու զինվորներ: Նորից համոզվում ենք, որ ստալինյան բռնաճնշումների տարիներին ասպարեզ էին եկել «մութ ու խավար» բնավորությամբ մարդիկ, որոնք իրենց անձնական նախանձախնդրություններով, մանր հաշիվներով և չարամիտ վարքագծով է՛լ ավելի թեժացնում, դժոխային էին դարձնում հասարակական կյանքն ու մթնոլորտը: Շատ օրինակներ են բերվում, թե ինչպես էին ստորաքարշ մարդիկ իրենց անձնական հարցերը լուծելու նպատակով վարկաբեկիչ ու զրպարտիչ քայլերի դիմում՝ ազնիվ, արդարամիտ ու բանիմաց պաշտոնյաներին աշխատանքից ազատելու, բանտ ու աքսորի արժանացնելու մղումով: Հեղինակը ցասումով է խոսում նրանց մասին. «Այս անողորմ վերաբերմունքից, թալան - զինաթափումից հետո նոր միայն զգացի, թե ինչ է տեղի ունենում մեր երկրում, մեր հանրապետությունում ու մեր շրջանում, գյուղերում և ավաններում» (էջ 234):


Պարույր Հակոբյանի սույն հուշագրությունը պատմագրական աշխատությանը համարժեք գործ է, որտեղ ամփոփված են մեր հարյուրամյա անցյալի դասերն ու պատգամները: Գիրքն ընթերցվում է անսպառ ու անհագ հետաքրքրությամբ, աչքի է ընկնում երկխոսության հրավիրող դրամատիզմով և հուզականությամբ:

Այն շատ կարևոր աղբյուրագիտական նյութ է Հայաստանի՝ XX դարի պատմությամբ զբաղվող պատմաբանների, ազգագրագետների, ինչո՞ւ չէ, նաև քաղաքագետների համար, ինչպես նաև կարող է օգտակար լինել ընթերցող լայն հասարակայնությանը:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, 4, խմբ.՝ Ս.Գ. Հոբոյան, Հ.Տ. Մարության, Թ.Լ. Հայրապետյան, Տ.Ս. Դալայան, Երևան, ՀԱԻ հրատ., 2021, 271 էջ:



ՀԱԻԱ պարբերականի 4-րդ հատորն ընդգրկում է 21 հետազոտողի գիտական հոդվածներ: Այն բաղկացած է չորս հիմնական բաժիններից. ա) միջգիտակարգային հետազոտություններ, բ) դաշտային հետազոտություններ, գ) տեքստաբանական հետազոտություններ, դ) բանագիտության և ազգագրության պատմություն:

Առաջին՝ Միջգիտակարգային հետազոտություններ բաժնի հոդվածները գրված են տարբեր գիտակարգերի՝ հնագիտության, մշակութային մարդաբանության, ազգագրության, բանագիտության, աղբյուրագիտության համադրմամբ:

Մշակութային մարդաբան Լևոն Աբրահամյանը «Թամանյանի ժողտունը. առասպելաբանություն, գաղափարախոսություն, ճարտարապետություն» հոդվածում (էջ 8-19) յուրօրինակ ուսումնասիրություն է կատարում Ալեքսանդր Թամանյանի նախագծած ժողտան (այժմ՝ Օպերայի շենք), ճարտարապետի պատկերացումների և դրանց պատմամշակութային արմատների միատիկ աղբյուրների մասին: Հեղինակը նշում է, որ Օպերայի և բալետի թատրոնը Ա. Թամանյանի ամենաառեղծվածային շինությունն է, որովհետև ճարտարապետը համոզված էր, որ այդ վայրում մոտ երկու հազար տարի առաջ գործել է երգի՝ Վահեվահյան հեթանոսական տաճարը՝ նվիրված Վահագն աստծուն, ինչպես նաև սիրո դիցուհուն՝ Աստղիկին: Այսինքն՝ երգի տաճարն առնչվում էր սիրո և ռազմի գործառույթներին: Լ. Աբրահամյանն իր աշխատանքը դիտարկում է ճարտարապետության պատմաբան, մշակութաբան Պապենիի «Մշակույթ մեկ» և «Մշակույթ երկու» մոդելների շրջանակում և բացահայտում Ա. Թամանյանի ստեղծած «Մշակույթ երկուսը»: «Մշակույթ մեկը» հեղափոխական սկզբունքով ժխտում է անցյալը, իսկ մյուսը հատուկ հայացք է դեպի անցյալ: Հեղինակը հստակ սահմանազատում է թամանյանական «Մշակույթ երկուսը» ստալինյանից: Ըստ նրա՝ ստալինյան «Մշակույթ երկուսը» հայացք էր դեպի կայսերական տիպի անցյալ, իսկ թամանյանականը կլասիցիզմի և միջնադարյան հայկական ճարտարապետության համադրությամբ արված կառույց է: Հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ Թամանյանը չէր պայքարում քրիստոնեության դեմ, բայց իր կառուցած թատրոնի՝ նախասկիզբներ գնացող տաճարը պետք է առնչություն ունենար պայքարի ու հաղթանակի հետ: Նշանակում է՝ Վահեվահյան որակումն ունի առասպելաբա-

նական-արխետիպային համատեքստ, և եթե Թամանյանը դրա մասին չուներ հստակ պատկերացում, ապա ուներ որոշակի բնագրային զգացողություն:

Հնագետ Արսեն Բորոխյանը «Կաթար-վիշապաքար. Երվանդ Լալայանից հարյուր տարի անց» հոդվածում (էջ 20-35) քննության է ենթարկում կաթար-վիշապաքար փոխառնչության հարցը՝ եզրակացնելով, որ այդ կոթողները, ըստ ամենայնի, նույն բովանդակային ու գործառնական նշանակությունն են ունեցել: Կաթարը, ըստ ժողովրդական հավատալիքի, սուրբ, նվիրական քար է համարվել: Այս եզրույթը առավել կիրառական է Ախալքալաքի շրջանի հայության մեջ: Անվանումների ընտրությունն էլ պայմանավորված է կաթարի մասին եղած ավանդազրույցով, որում չի արձանագրվում *վիշապաքար* անունը: Այսինքն՝ ջավախեցիները կարող են վիշապաքարը նաև «կաթար» անվանել: Հեղինակը քննում է կաթարի մասին ավանդազրույցը՝ ներկայացնելով չորս հեղինակների՝ Ե. Լալայանի, Ի. Ռոստոմիշվիլիի, Ե. Թաղաշվիլիի և Վ. Բդոյանի տարբերակները և դրանց հավելում հինգերորդը՝ իր գրառածը: Խոսելով ավանդազրույցի մասին, թե այն որտեղ և երբ է առաջացել կամ ինչ կապ ունի Վիշապաքար հնագիտական կոթողի հետ՝ հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ դա կարող է ունենալ հին տեղական արմատներ, իսկ այն հանգամանքը, որ Ջավախքի Կաթարին վերագրում են պտղաբերության, ուղեցույցի կամ սահմանաքարի գործառույթներ, ցույց է տալիս դրա և վիշապաքարերի համար ենթադրվող գործառույթների համընկնելը:

Բանագետ Տորք Դալայանը «Նվագարանների առաջացումն ու գործառնությունը ըստ Վարդան Այգեկցու և Հովհաննես Պլուզի հաղորդած ավանդազրույցի» հոդվածում խոսում է հարվածային և լարային նվագարանների առասպելաբանական ծագման, դրանց ունեցած գործառնական նշանակության և էության մասին (էջ 48-59): Հեղինակը, քննելով Այգեկցու և Պլուզի հաղորդած ավանդազրույցները, նշում է, որ դրանք, առնչվելով տարբեր կրոնների պատկանող գաղափարախոսական ուղղությունների հետ, արտացոլում են գտել ոչ պաշտոնական կրոնական գրվածքներում, ուստի կարելի է ենթադրել, որ այս ավանդազրույցը բանահյուսական և հոգևոր տեքստերի միաձուլվածք է: Նվագարաններն ունեցել են մեղսահարույց էություն, որի մասին եղած քրիստոնեական պատկերացումը տարածված էր միջնադարյան Հայաստանում: Գուսանական արվեստի հանդեպ եղած բացասական վերաբերմունքը հասկանալի է, որովհետև, ըստ եկեղեցու, հենց գուսաններն էին հեթանոսական վիպասքեր երգողները: Ավանդազրույցը ցույց է տալիս, թե ինչպես են Կայենի սերունդների անիծված լինելը և երգարանների ստեղծումը կապվում հենց նրա զարմի հետ: Ըստ ավանդազրույցի՝ Կայենի ցեղի կանայք պճնվելով և նվագարաններով գայթակղում են Սեթի ցեղի տղամարդկանց, այդ պատճառով էլ Աստծո սիրելի որդիները օտարանում են Աստծուց: Հայ բոշաները համարվում են Կայենի զարմեր, որովհետև նրանց ևս, ինչպես գնչուներին, բնորոշ է պճնասիրությունը և սերը նվագածության հանդեպ: Տորք Դալայանը նշում է, որ և՛ Վարդան Այգեկցու, և՛ Հովհաննես Երզնկացի Պլուզի ավանդած տարբերակները միջնա-

դարյան բանահյուսության գեղեցիկ նմուշներից են, և որ Կայենյանների ու Սեթյանների մասին դիցաբանական վերոնշյալ պատկերացումները հարատևել են մինչև իսկ XX դ.՝ մասնավորաբար դրսևորվելով բոշաների վարած նեղ՝ մարդկանց գայթակղելու, «քաղաքականությամբ»:

Ազգագրագետ Լիլիթ Սիմոնյանը «Արևելյան Հայաստանի սրբավայրերը 17-րդ դ. վերջին. ըստ Երեմիա Քյոմյուրճյանի քարտեզի և Թովմա Վանանդեցու «Բան չափեալ 'ի սրբազան տեղիս աշխարհիս հայոց» հետազոտության մեջ (էջ 36-47) մանրամասնորեն ցույց է տալիս Երեմիայի քարտեզի և Թովմայի պոեմի ստեղծման ժամանակից մինչև մեր օրեր տեղի ունեցած փոփոխությունների ընթացքը: Այդ փոփոխությունները վերաբերում են ոչ միայն սրբավայրերի մոռացմանը կամ վերածնմանը՝ որպես պատմական հուշարձանների, այլև ուխտագնացության դրդապատճառների և դրանց հետ կապված ավանդազրույցների, նաև ժողովրդական պաշտամունքի ձևերին: Հեղինակը ցույց է տալիս, թե սրբավայրերի որ մասն է պահպանել կենսունակությունը, և որոնք են հիմնովին մոռացվել: Նշում է, որ ըստ ազգագրական գիտարշավների տվյալների՝ որոշ դեպքերում ուխտագնացության ավանդույթը պահպանվել է մինչև մեր օրերը, ինչպես Սաղմոսավանք, Տեղերի վանք, Վարդաբլուրի Սրբ Սարգիս ևն, մյուս դեպքում էլ դժվարությամբ են նույնականացվում սրբավայրերը, իսկ ուխտագնացությունը կա՛մ մարել է, կա՛մ դարձել պատահական այցելության վայր, դրանք Արշակունյաց և Գառնիի վանքերն են, Բաշգութարան-Ստեփանոսի ուխտը:

Երկրորդ բաժինն ընդգրկում է ազգագրական կամ բանահավաքչական դաշտային հետազոտությունների հիման վրա գրված հոդվածները:

Ազգագրագետ Հակոբ Չոլաքյանը «Անտիոքի հայաբնակ շրջաններու տոհմիկ նուագարանները» վերտառությամբ հոդվածում (էջ 62-74) ներկայացնում է Սիրիայի Անտիոքի շրջանի հայաբնակ գյուղերում տարածված փողային և հարվածային երաժշտական գործիքները: Նա նշում է, որ այդ շրջանի հայերը սերտ հարաբերություններ ունեին արաբախոս և թյուրքախոս գյուղերի բնակիչների հետ, և հարսանիքների ժամանակ փոխադարձաբար հյուրընկալվում էին միմյանց: Բնականաբար, հյուրերն իրենց ուրախությանը մասնակից դարձնելու համար մեծ տեղ էին հատկացնում պարեղանակներին՝ խնջույքները սկսելով թմբուկի հարվածներով: Հ. Չոլաքյանը յուրաքանչյուր գործիքի մասին խոսելիս տալիս է նաև դրա թյուրքական կամ արաբական անվանումները:

Ազգագրագետ Հարություն Մարությանի «Արհեստագործական որոշ ավանդույթների վերափոխումը Տավուշում (ըստ Իջևան և Դիլիջան քաղաքների նյութերի» աշխատանքում (էջ 75-84) անդրադարձ է կատարում վերոնշյալ քաղաքների արհեստագործական հարուստ ավանդույթներին, որոնք, որոշակի փուլեր անցնելով, հասել են մինչև մեր օրեր: Հեղինակը քննարկման նյութ է դարձրել գորգագործության և փայտագործության կենսավարումը այս շրջանում: Ըստ նրա՝ Տավուշում գործել են տարբեր տեսակի գորգեր, սակայն խորհրդային տարիներին ամենաշատ գործվող, լայն տարածում ունեցող կամ այլ կերպ ասած՝

«բրենդային» գորգը համարվում է «դեղինաքյունջը», որի հեղինակը Նունուֆար Էդիլյանն է. այս գորգի ստեղծումը թվագրվում է 1905 թվականով:

Ազգագրագետ Արգամ Երանոսյանը «Հայոց տոհմաճառերի ազգագրական ուսումնասիրություն. հիշողություն և սերունդների տեսողական խոսույթ» հոդվածը (էջ 85-92) նվիրել է հայոց տոհմաճառերի տիպաբանական ուսումնասիրությանը: Նա հայոց տոհմաճառային մշակույթը ձևավորող չորս ժամանակաշրջան է առանձնացրել՝ XIX դ. առաջին կես, XIX դ. վերջից XX դ. սկիզբ, խորհրդային շրջան և հետխորհրդային շրջան: Երանոսյանը նշում է, որ տոհմաճառը՝ որպես կարևոր տեղեկատվություն հաղորդող տեսողական նյութ, առկա է ընտանիքների, տոհմերի մասին պատմող գրեթե բոլոր գրքերում:

«Կաթը և կաթնամթերքը հայ ժողովրդական բժշկության մեջ» հոդվածում (էջ 93-103) ազգագրագետ Հասմիկ Հարությունյանը խոսում է հայ ժողովրդական բժշկության դարավոր ավանդույթների մասին: Ըստ դաշտային ազգագրական նյութերի՝ ժողովրդական բժշկության կենսունակությունը պայմանավորված է արհեստավարժ բժշկության հանդեպ բնակչության որոշակի մասի թերահավատությամբ: Հաշվի առնելով, որ կաթն ու կաթնամթերքը հայ ժողովրդական բուժամիջոցների մեջ ուրույն տեղ են ունեցել՝ հեղինակը մանրամասնորեն քննում է դրանց նշանակությունը, օգտագործման յուրահատկությունները, նաև այժմյան կենցաղավարումը:

Էթնոբուսաբան Անժելա Ամիրխանյանը կատարած դաշտային ազգագրական նյութերը ամփոփել է «Վայրի բույսերի թթուները Լոռիում և Տավուշում» աշխատանքում (էջ 104-113): 2009-2015 թթ. ուսումնասիրությունների շնորհիվ նա գրանցել է 20-ից ավելի վայրի բուսատեսակների անվանումներին և դրանց գործառույթներին վերաբերող բանահավաքչական նյութեր: Շատ թթուներ առատորեն կիրառվում են գարնան և ամռան սկզբին, իսկ որոշները՝ ձմռանը: Հեղինակը նշում է թթուների գործածության առանձնահատկությունները, թթու դնելու ավանդական եղանակները, թթուների պահածոյացման նոր եղանակները:

Ազգագրագետ Գարեգին Գրիգորյանը «Փոխօգնության տարրերը Տավուշի սահմանամերձ գյուղերում» հոդվածում (էջ 114-122) անդրադարձ է կատարում հարևանների, ազգակիցների, համայնքների միջև ավանդականորեն ձևավորված փոխօգնությանը: Նշում է, որ փոխօգնության ցուցանիշը, ըստ էթնոսոցիոլոգիական հետազոտությունների, հատկապես Տավուշի մարզում բավական բարձր է՝ 68%:

Ազգագրագետ Թորգոմ Աղանյանի աշխատանքը «Մշակութային ավանդույթների պահպանման և մշակութային էկոլոգիայի խնդիրները ետադետյան Գյումրիում» (էջ 123-130) նվիրված է Գյումրու մշակութային ադապտացիայի, մշակութային էկոլոգիայի խնդիրների վերլուծությանը: Մասնավորապես խոսում է Սպիտակի երկրաշարժի հետևանքով մարդկանց կրած բարոյահոգեբանական և սոցիալական զրկանքների և դրանց թողած ազդեցության մասին:

Մշակութային մարդաբան Գոհար Ստեփանյանի «Բացառապես կրծքով կերակրման վեցամսյակը՝ որպես մոր և մանկան կյանքի անցումային փուլ»

հետազոտությունը (էջ 131-141) առանձնանում է նրանով, որ այս իրողության քննության աղբյուրը համացանցն է՝ Դիմագիրը (Facebook): Հեղինակը ներկայացնում է կրճքով կերակրելու (ԿԿ) ավանդական և արդի պրակտիկաները: Ըստ նրա՝ ԿԿ ընթացքի փորձությունների զգալի մասը պայմանավորված է ավանդական մոտեցումների արդիականությամբ, որոնք որոշակի փոխհարաբերության մեջ են մտնում նաև մեր ժամանակների մոտեցումների հետ: Գ. Ստեփանյանը փաստում է, որ եղել է վկայություն, ըստ որի՝ առաջին վեցամսյակում տղայի և աղջկա հագուստների միջև առանձին տարբերակում չի նկատվել, ինչն էլ խոսում է այն մասին, որ նորածնի սեռային տարբերակման համար ևս անցումային է համարվել առաջին վեցամսյակը:

Մշակութային մարդաբան Յուլյա Անտոնյանի «Հայաստանում խաչքավորի պակաս չկա. խաչքավորի ինստիտուտը ժամանակակից Հայաստանում» ազգագրական ակնարկը (էջ 142-153) վերաբերում է խաչքավորի պաշտոնի սոցիալական գործառույթներին և դերակատարման փոխակերպումներին: Խոսելով խորհրդային տարիների մասին՝ հեղինակը նշում է, որ այդ շրջանում խաչքավորն ուներ խորհրդանշական պաշտոն, որը ծիսական խորհրդի մեջ որևէ կարևոր նշանակություն չի ունեցել: Ժամանակակից Հայաստանում խաչքավորի կերպարն ակնհայտորեն ձեռք է բերել նոր իմաստներ և սոցիալական ավելի նշանակալից դերակատարում. գործնական դաշտում խաչքավորը դառնում է եկեղեցու մեկ տարվա պաշտոնական հովանավորը, առանձին դեպքերում այդ պաշտոնը դառնում է բազմամյա: Գաղափարախոսական դաշտում էլ խաչքավորը պետք է միավորի ներկայացուցչական, հովանավորչական և որոշակի հանրային արժեքների մարմնավորման իմաստները:

«Դաշտային հետազոտությունները» եզրափակում է բանագետ Լուսինե Ղուեյանի աշխատանքը (էջ 154-164), որտեղ քննության է առնվել «Սևանի ավազանի բանահյուսական և ազգագրական մշակույթի արդի վիճակը»: Այն ներկայացնում է 2008-2015 թթ. դաշտային դիտարկումների շնորհիվ հավաքված նյութերը:

Երրորդ՝ «Տեքստաբանական հետազոտություններ» բաժնի հոդվածները վերաբերում են միջնադարյան մատենագրական և նոր ժամանակների բանահյուսական տարբեր տեքստերի բանագիտական քննությանը:

«Անեծքը և օրհնանքը Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկում» (էջ 166-176) մշակութաբան Սիրանույշ Առաքելյանը ցույց է տալիս անեծք-օրհնանքի մշակութային ընկալումները, դրանց բնույթը և հավատալիքային հենքը, անեծքների տեքստային կառուցվածքը և մուտվմաններին ուղղված անեծքները:

Հետաքրքիր է բանագետ Արմեն Սարգսյանի «Թաղման ժողովրդական ծիսակարգային տարրերի արտացոլումը հայկական անեկդոտներում» հետազոտությունը (էջ 177-186), որտեղ ներկայացված են թաղման ծիսակարգի հետ կապված հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ: Ա. Սարգսյանը, տարբեր իրավիճակներով պայմանավորված, մահամերձի՝ մահվանից առաջ

արտահայտած ցանկության, հանգուցյալին լողացնելու, գերեզման փորելու, հոգեհացի, հանգուցյալի հիշատակը հավերժացնող տապանաքար դնելու, տապանաքարային գրությունների թեմաներին վերաբերող զավեշտներ է ներկայացնում, որոնք ցույց են տալիս մարդկանց՝ անգամ ցավի մեջ չընկճվելու, տոկունություն և կենսախնդություն պահպանելու հատկանիշները:

Բանագետ-հեքիաթագետ Մարինե Խեմչյանը «Աստծո միջամտության դրվագը հայ ժողովրդական հեքիաթների սյուժեներում» (էջ 187-198) ուսումնասիրության մեջ անդրադարձ է կատարում *Աստված* բառի հիշատակություններին, Աստծո միջամտության տեսակներին, որոնք վերաբերում են հերոսի խնդրանքը լսելուն, հերոսին երազում խորհուրդներ տալուն, ժառանգի մոտիվին և առանց խնդրանքի նվիրատվության և միջնորդավորված նվիրատվության թեմաներին:

Բանագետ-հեքիաթագետ Գոհար Մելիքյանի «Феминный аспект сказок цикла «Умная дочь крестьянина» աշխատանքը (էջ 199-207) ներկայացնում է հայ ժողովրդական հեքիաթներում առկա պատկերացումները հերոսուհիների ողջախոհության, հնարամտության և կանացի հմայքի մասին: Անդրադարձ է կատարվում պատմողի և նյութը հավաքագրողի սեռի խնդրին, Գրիմ եղբայրների՝ «Գյուղացու խելացի դուստրը» հեքիաթին և դրա հայկական տարբերակին, այլաբանությունների մեկնությունների մոտիվներին, ինչպես նաև օջախի սիմվոլիկային:

Ժողովածուի վերջին՝ «Բանագիտության և ազգագրության պատմություն» բաժնում ընդգրկված է համշենագետ-բանագետ Սերգեյ Վարդանյանի՝ «Կրոնափոխ համշենահայերի բարբառի և բանահյուսության ուսումնասիրության պատմությունից» հետազոտությունը (էջ 210-228): Այստեղ հեղինակը, պահպանելով ժամանակագրական հերթականությունը, անդրադարձ է կատարում Թուրքիայում և Կենտրոնական Ասիայում բնակվող կրոնափոխ համշենահայերից գրառված բանահյուսական և բարբառագիտական նյութերին:

Բանագետ Թամար Հայրապետյանը «Հովսեփ Օրբելու բանահավաքական և բանագիտական գործունեությունը» հոդվածում (էջ 229-240) ներկայացնում է մեծանուն գիտնականի անձը, հայ քաղաքական և մշակութային կյանքում նրա ունեցած դերը: Խոսելով Օրբելու կատարած հսկայածավալ աշխատանքի մասին՝ Թ. Հայրապետյանը նրան բնորոշում է որպես հնագետ, վիմագրագետ, աղբյուրագետ, բարբառագետ: Անդրադառնում է նաև Օրբելու ազգագրական-բանահավաքական գործունեությանը:

Ազգագրագետ Վարդիթեր Մադաթյանի «Ազգ» հասկացությունը հանրային մարմինների շարքերում. «Ազգի», ազգակցական կապերի դրսևորումներ Տավուշում (19-20-րդ դդ.)» աշխատանքը (էջ 241-259) ներկայացնում է խորհրդային և հայ ազգաբանությունում արյունաազգակցական հարաբերությունների ուսումնասիրությունները, մասնավորաբար Տավուշում այդ խնդրին առնչվող գրականությունը և աղբյուրները:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ՀԱԻԱ 4-րդ հատորում ընդգրկված հոդվածների հեղինակները յուրովի են մոտեցել իրենց առաջ դրված խնդիրներին, սակայն որոշ հոդվածների պարագայում երբեմն պակասում է հստակությունը: Անշուշտ, կարելի էր քննության նյութը ավելի տարողունակ ներկայացնել, որը հնարավորություն կտար ընթերցողին առավել լավ պատկերացնելու երևույթի էությունը: Այդուամենայնիվ, ժողովածուն հարուստ է նորույթներով և հայոց պատմամշակութային ժառանգության զանազան ոլորտներին վերաբերող հոդվածներով: Հատկանշական են նաև հատորի կուռ կառուցվածքը, տրամաբանորեն տարբերակված ենթաբաժինները՝ ըստ իմաստային ոլորտների և կատարված ուսումնասիրությունների մեթոդաբանության, ինչպես նաև հոդվածների նույնական կառուցվածքը և հղման համակարգի ընդհանուր սկզբունքները:

ԱՆԱՀԻՏ ԽԵՉՈՅԱՆ

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ԿՅԱՆՔԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)



Նշանավոր գիտնական, գիտակրթական ոլորտի հմուտ կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Միքայելի Սուվարյանի ծննդյան 80-ամյա հոբելյանն է:

Յու Սուվարյանը, տարիներ շարունակ լավագույնս համատեղելով գիտական, մանկավարժական և վարչական աշխատանքը, մինչ օրս հեղինակում է նորանոր արժեքավոր հետազոտություններ, խթանում բազմաթիվ ասպիրանտների և հայցորդների գիտական աճը:

Գիտնականը անգնահատելի խորհրդատու է ինչպես ՀՀ պետական մարմինների, այնպես էլ Հայաստանում գործող միջազգային տարբեր կազմակերպությունների համար:

Յու. Սուվարյանը ծնվել է 1943 թ. ԼՂՀ Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում: 1965 թ. նա գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, ապա՝ ասպիրանտուրան: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1983 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1987-1994 թթ. պրոֆեսոր Սուվարյանը՝ որպես Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, ինչպես նաև տնտեսագիտական աստիճաններ շնորհող խորհրդի նախագահի տեղակալ, ապա նաև նախագահ, մեծ սիրով աջակցում էր բուհում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: 2006 թ. դառնալով հարազատ բուհի ռեկտոր՝ Յու. Սուվարյանը ջանադրաբար ձեռնամուխ եղավ կրթահամակարգի բովանդակային և կառուցվածքային արմատական բարեփոխումներին:

2006 թ. Յու. Սուվարյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.՝ իսկական անդամ: 2011 թ. ի վեր նա ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարն է: Մեծ է ականավոր մտավորականի ավանդը նաև «Հայագիտության զարգացման հայեցակարգի» և «2012-2025 թթ. հայագիտության զարգացման ռազմավարության» մշակման, հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հիմնադրամի ստեղծման գործում:

Ակադեմիկոս Յու. Սուվարյանը ավելի քան 300 աշխատության հեղինակ է. դրանցից շուրջ 50-ը մենագրություններ են, դասագրքեր, ուսումնական ձեռ-

նարկներ: Նրա գիտահետազոտական աշխատանքի կարևորագույն արդյունքներից են արտադրության արդյունավետության և ամբողջական աշխատանքի արտադրողականության գնահատման ու կառավարման նոր մեթոդաբանության մշակումը, գիտության կառավարման կարևորագույն հիմնախնդիրների նոր լուծումների, հանրային կառավարման տեսության յուրօրինակ հայեցակարգի հիմնավորումը, ՀՀ վարչատարածքային նոր բաժանման և տեղական ինքնակառավարման երկաստիճան համակարգի մշակումը, հայ կառավարչական մտքի զարգացման ընթացքի ու միտումների բնութագրությունը և այլն:

Յու. Սուվարյանի ղեկավարությամբ ու խմբագրմամբ լույս տեսած «Մենեջմենթ» բուհական առաջին արժեքավոր հայերեն դասագիրքն ունեցել է մի քանի հրատարակություն: Գիտնականը հույժ կարևոր դերակատարում ունի նաև տնտեսագիտական բարձրորակ կադրերի պատրաստման գործում: Նրա ղեկավարությամբ տնտեսագիտության թեկնածուի և դոկտորի գիտական աստիճան են ստացել բազմաթիվ ասպիրանտներ ու հայցորդներ: Ակադեմիկոս Յու. Սուվարյանի վաստակը գնահատվել է «Անանիա Շիրակացի» (2000), ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» (2013), «Հայրենիքին մատուցած ծառայությունների» համար 1-ին աստիճանի (2011) և այլ մեդալներով, ինչպես նաև «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2017) շքանշանով: 2014 թ. արժանացել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչման: Նա «Հանրային կառավարում», «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», «Բանբեր հայագիտության», «Լրաբեր հասարակական գիտությունների» և այլ հայրենական ու միջազգային գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ է, Դոնի Ռոստովի պետական տնտեսագիտական, Ռուս-հայկական, Արցախի պետական ու այլ համալսարանների պատվավոր պրոֆեսոր: 2016 թ. ընտրվել է Ռուսաստանի բնական գիտությունների, իսկ 2017 թ.՝ Բնական գիտությունների եվրոպական ակադեմիաների արտասահմանյան անդամ: Յու. Սուվարյանն էապես նպաստել է նաև Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի, ինչպես նաև ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնների կայացմանը:

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրակազմը ջերմորեն շնորհավորում է հարգարժան ակադեմիկոս Յուրի Սուվարյանին, նրան մաղթում արևշատություն ու եռանդ՝ ի նպաստ հայրենական գիտության զարգացման, որին նա ծառայել է անմնացորդ՝ վառ պահելով գիտական մտքի մշտնջենական ջահը:

«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՀԱՆԴԵՍ

ԿԱՐՃ, ԲԱՅՑ ԱՐԳԱՍԱԲԵՐ ԿՅԱՆՔ (ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ)



Այս տարվա ապրիլի 13-ին վախճանվեց ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Գևորգի Դևրիկյանը: Ապրեց ընդամենը 59 տարի... Կարճ, բայց արգասաբեր կյանք, որն անմնացորդ նվիրում էր, անանձնական ջանքեր:

Ընտանիքը, հայրենիքն ու գիտությունը շաղկապված էին այնքան ամուր, որ գրեթե անկարելի էր առանձնացնել մեկը մյուսից:

Քաղաքացիական կեցվածք ու դիրքորոշում ունեցող անհատականություն էր՝ ձեռքին զենք ու գրիչ:

Բազմաթիվ հոդվածներ բովանդակող իր գիրքը՝ «Չսկսված և չավարտված պատերազմը», որն սկզբնաղբյուրային նյութ է՝ գրված ականատեսի և մասնակցի ձեռքով, հեղինակի բնորոշմամբ՝ «...հավաքական հիշեցում է, խնդրանք և պահանջ ոչ միայն խոնարհվելու մեր ժողովրդի առջև, այլև առաջին հերթին մտածելու նրա ցավերի և հոգսերի մասին»:

Իբրև իր ժողովրդի արժանի զավակ՝ չընկճվեց երբեք և երբեք չընկրկեց դժվարությունների առաջ: Իր ազնվությամբ ու պարզությամբ կարողացավ բացել բազում դռներ: Անսահմանորեն ներելու իր կարողությամբ, դիմացինին օգտակար լինելու ձգտումով և սրտացավ վերաբերմունքով արժանացավ շատերի համակրանքին:

Վարդան Դևրիկյանը ծնվել է 1964 թ. մայիսի 18-ին Վանաձորում: 1981-1986 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: 1986-1988 թթ. եղել է ասպիրանտ նույն ֆակուլտետի հայ գրականության ամբիոնում: 1989 թ. հունվարին աշխատանքի է ընդունվել Մաշտոցի անվան Մատենադարան: 1990-1992 թթ. եղել է «Լուսավորիչ» թերթի գլխավոր խմբագիրը:

Մասնակցել է Արցախյան պատերազմին, 1994 թ. մայիսի 28-ին պարգևատրվել է ՀՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով:

1996 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ղևոնդ Ալիշանը և հայ հին գրականությունը» թեմայով, և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1993-2009 թթ. աշխատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ որպես «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ, ապա՝ գլխավոր խմբագիր և Մայր Աթոռի Ձեռագրատան պատասխանատու:

2009 թ. դեկտեմբերից ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի փոխտնօրենն էր, 2015 թ. մայիսից՝ տնօրենը: 2012-2023 թթ. Հայաստանի գրողների միության և ԳՄ նախագահության անդամ էր:

2013 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հայ միջնադարյան գանձերը և «Գանձարան» ժողովածուն» թեմայով՝ արժանանալով բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի:

Հեղինակ է 5 տասնյակ գրքերի, որոնք լույս են տեսել հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն, 60-ից ավելի գիտական հոդվածների՝ նվիրված հայ գրականության և մշակույթի պատմությանը, լրագրային բազմաթիվ հրապարակումների:

Իր ժողովրդին ու հոգևոր արժեքներին ծառայելու ձգտումը Վ. Դևրիկյանին ողջ կյանքում խորհրդանշական ձևով կապեց Մայր Աթոռի, Մատենադարանի, ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ՝ պայմանավորելով գիտական հետաքրքրությունների շրջանակների լայն և ընդգրկուն լինելը: Վ. Դևրիկյանը շրջանառության մեջ դրեց համալիր ուսումնասիրություններ՝ նվիրված հայ գրքին, տպագրությանը, հայոց գրին, հոգևոր բանաստեղծության ուրույն ժանրին՝ գանձերին, Սրբալույս Մյուռոնին...

Առանձնակի սիրով նվիրվեց հայ դասական գրողների երկերի գիտական հրատարակությունների գործին՝ այն դիտարկելով գրականության ինստիտուտում կատարվող կարևորագույն աշխատանքներից մեկը: Նրա կազմակերպած հանրապետական և միջազգային գիտաժողովներն ինստիտուտի և գիտակրթական տարբեր հաստատությունների միջև համագործակցության նորանոր հնարավորություններ տվեցին:

Վ. Դևրիկյանը մեծ աշխատանք կատարեց գիտական կադրեր պատրաստելու ուղղությամբ՝ նախագահելով ինստիտուտում գործող մասնագիտական խորհուրդը, ղեկավարելով ասպիրանտների և հայցորդների:

Վ. Դևրիկյանն ընդգրկված էր տարբեր ինստիտուտների գիտխորհուրդների կազմում, քննական հանձնաժողովներում: Գիտական պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ էր, բազմաթիվ գրքերի խմբագիր:

Պատկառելի գիտական ժառանգությամբ, մասնագիտական հմտություններով նա անառարկելի հեղինակություն էր դարձել թե՛ Հայաստանում, թե՛ Հայաստանի սահմաններից դուրս:

Երբևէ չի խամրի Վարդան Դևրիկյանի լուսավոր հիշատակը նրա գործընկերների սրտերում, և անմոռաց կմնա մարդկային կերպարը՝ մշտանորոգ կորովով, արտասովոր եռանդով ու նախանձելի խանդավառությամբ:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ՀՀ ԳԱԱ հայագիտական և հասարակական գիտությունների բաժանմունք

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԱԶԳԱԳՐԱԳԵՏ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ (ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ)



64 տարեկան հասակում կյանքից հեռացավ հայ ազգագրության նվիրյալ, երախտավոր գիտնական, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սուրենի Մկրտչյանը:

Սամվել Մկրտչյանը ծնվել է 1959 թ. Երևանում: 1978-1983 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի Ազգագրության բաժնում:

Մասնագիտական գործունեություն

սկսել է Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, որտեղ աշխատել է 1983-1988 թթ., 1983 թ.-ից՝ որպես կրտսեր, 1985 թ.-ից՝ որպես ավագ գիտաշխատող: 1986-1988 թթ. Հասարակական կենցաղ և

հոգևոր մշակույթ բաժնի վարիչ էր:

1988-ից մինչև 2023 թվականն աշխատել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում: 1988-1995 թթ. եղել է կրտսեր գիտաշխատողի պաշտոնակատար, 1995-1997 թթ.՝ կրտսեր գիտաշխատող, 1997-2004 թթ.՝ գիտաշխատող, 1998-2005 թթ.՝ անհատական գիտական թեմայի ղեկավար (թեմա՝ «Հայոց տոնաձիսական համակարգը»): 2004 թ. արդեն ավագ գիտաշխատող էր, 2021 թ. ի վեր՝ առաջատար:

1988-1990 թթ. սովորել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1997 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության արդի տոնաձիսական համակարգը», իսկ 2011 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ «Հայոց տոնական համակարգի էթնոմշակութային առանձնահատկությունները (ավանդույթ և արդիականություն)» թեմաներով:

Մանկավարժական գործունեությունն սկսել է Անանիա Շիրակացու անվան միջազգային հարաբերությունների համալսարանում, որտեղ 1999-2000 թթ. կարգացել է «Աշխարհի ժողովուրդների ազգագրություն» և «Ազգագրության տեսական հիմնախնդիրները» դասընթացները: 2007 թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնի մագիստրատուրայում վարել է «Հայոց տոնաձիսական մշակույթը» թեմայով մասնագիտական դասընթացը:

Սամվել Մկրտչյանը, 2007-ից սկսած, ավելի քան տասնհինգ տարի **գիտամանկավարժական** գործունեություն է ծավալել ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում: Այստեղ նա ոչ միայն դասախոսել է (կարդացվող դասընթացները՝ «Հայոց տոնական համակարգի էթնոմշակութային առանձնահատկությունները», «Հայոց արդի կրոնական վարքագիծ», «Հայ եկեղեցի և սփյուռք», «Հայ ազգագրություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Հետազոտության պլանավորում

և մեթոդներ»), այլ նաև ստանձնել է **գիտության կազմակերպչի** աշխատանք՝ 2015-2021 թթ. ղեկավարելով Աստվածաբանության ֆակուլտետի *Կրոնի պատմության և տեսության*, 2021-2022 թթ.՝ *Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության* ամբիոնները:

Սամվել Մկրտչյանի **գիտահետազոտական աշխատանքները** նվիրված են հայոց տոնածիսական համակարգին, բնակչության կրոնական վարքագծին, սոցիալ-մշակութային այլ հիմնախնդիրների: Հեղինակ է հինգ մենագրության և ավելի քան 80 գիտական հոդվածների, մասնակցել է մի շարք տեղական և միջազգային գիտաժողովների:

Սամվել Մկրտչյանը, լինելով Հնագիտության և ազգագրության ինստիտուտում 1976 թ. ստեղծված էթնոսոցիոլոգիական հետազոտությունների խմբի, իսկ արդեն 1981 թ. նույն ինստիտուտում կազմավորված էթնոսոցիոլոգիայի բաժնի աշխատակից, առաջին անգամ հայոց տոնածիսական մշակույթն ուսումնասիրել է էթնոսոցիոլոգիական դիտանկյունից: Հումանիտար և հասարակագիտական երկու գիտակարգերը՝ ազգագրությունը և սոցիոլոգիան միատեղող այս նոր ուղղությամբ սոցիալ-մշակութային մի շարք խնդիրների, այդ թվում՝ տոնածիսական մշակույթի ուսումնասիրությունը թույլ էր տալիս արձանագրելու ոչ միայն տոնածիսական կյանքի բովանդակային, այլ նաև չափելի (քանակական) փոխությունները՝ ըստ սեռատարիքային, կրթական և մի շարք այլ ցուցիչների: Հայաստանի տարբեր մարզերում (Արարատ, Շիրակ, Լոռի, Գեղարքունիք, Սյունիք, Կոտայք, Տավուշ) կատարած տասնամյակների հետազոտական աշխատանքների արդյունքները Սամվել Մկրտչյանը ներկայացրել է սովարածավալ աշխատություններում՝ Ս. Մկրտչյան, Տոները հայոց արդի կենցաղում (էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն, Աբրահամյան Լ. (խմբ.), Հայ ազգագրություն և բանահյուսություն, պրակ 22, ՀՀ Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 129-237, Հ. Սարգսյան, Մ. Գալստյան, Թ. Զաքարյան, Լ. Վարդանյան, Ս. Մկրտչյան, Ռ. Օհանջանյան, Տավուշ. սոցիալ-մշակութային գործընթացներ (ավանդույթ և արդիականություն), Կոլեկտիվ մենագրություն, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, 360 էջ, 56 էջ նկար, ինչպես նաև առանձին հոդվածների և զեկուցումների միջոցով: Բազմամյա հետազոտությունների արդյունքն ամփոփել է «Հայոց տոնածիսական մշակույթը» (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 400 էջ) սովարածավալ աշխատության մեջ: Նա ազգագրական, բանագիտական, մատենագրական, կրոնագիտական և այլ հարուստ սկզբնաղբյուրների համադիր վերլուծությամբ համակողմանիորեն ներկայացրել է տոները հայոց ավանդական կենցաղում:

Սամվել Մկրտչյանի **գիտամանկավարժական գործունեությունը**, դասախոսական բազմամյա աշխատանքից զատ, շարունակվել է նաև գիտության բնագավառում կադրերի պատրաստմամբ, ի մասնավորի՝ ատենախոսական աշխատանքների ղեկավարմամբ:

Պրոֆ. Ս. Մկրտչյանը նաև Հանգիտության և ազգագրության ինստիտուտի Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնոր-

հող գիտական խորհրդի անդամ էր: Անդամակցել է ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնորհող խորհրդին:

Հեղինակել է «Հայոց տոնական համակարգի էթնոմշակութային առանձնահատկությունները» (մագիստրատուրայի հատուկ մասնագիտական դասընթացի ուսումնական ծրագիր և դասախոսություններ, Երևան, հեղինակային հրատ., 2014, 38 էջ) մեթոդական ձեռնարկը:

Սամվել Մկրտչյանը երկար տարիներ գործունեություն է ծավալել ոչ միայն գիտության, կրթության ոլորտներում, այլև աշխատանքներ է տարել **գիտության հանրայնացման ուղղությամբ**: Քաջ գիտակցելով ազգային-եկեղեցական տոների դերը հայ ժողովրդական մշակույթի և ազգային ինքնության պահպանման գործում՝ դրանք մշտապես լուսաբանել է տարբեր լրատվամիջոցներում (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ), մասնակցել հանրային քննարկումների: Մասնագիտական շարունակական խորհրդատվություն է տրամադրել պետական կառույցներին:

Յուրաքանչյուր գիտնականի համար մեծ ձեռքբերում է այն, որ նրա հեղինակած աշխատանքները դառնում են սեղանի գիրք ոչ միայն գիտական միջավայրում, այլ նաև հասարակության մեջ: Սամվել Մկրտչյանի «Տոներ. հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն)» (Երևան, ԳԱՍՊՐԻՆՏ, 2010, 192 էջ, վերահրատարակված՝ 2020 թ.) աշխատությունը, հիրավի, նմանօրինակ գիրք է: Այն ոչ միայն ուսումնական ձեռնարկ է ուսանողների, այլև կարևոր ուղեցույց՝ հանրակրթության ոլորտի մասնագետների և լրագրողների համար:

Սամվել Մկրտչյանը ղեկավարել է նաև հայոց տոնածիսական կյանքին, կրոնական գործընթացներին և սոցիալ-մշակութային այլ հիմնախնդիրներին վերաբերող մի շարք **դրամաշնորհային ծրագրեր**:

Վանական վարդապետ. XII-XIII դդ. հայ մեծավաստակ վարդապետի և ուսուցչի անվամբ է բնութագրում գործընկերներից մեկը (Անուշավան եպս. Ժամկոչյան, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան) Սամվել Մկրտչյանին: Անժամանակ ընդհատված կյանքի ընթացքում այսպիսի կերպար կերտեց Սամվել Մկրտչյանը. գիտության մեջ՝ գործի նվիրյալ, մանկավարժության մեջ՝ երիտասարդներին քաջալերող և առաջնորդող, մարդկային փոխհարաբերություններում՝ դիմացինին մշտապես սատարող և օգնության ձեռք մեկնող անձնավորություն: Նրա կերպարը միշտ վառ կմնա ազգագրության պատմության մեջ, ինչպես նաև գործընկերների ու համախոհների հիշողություններում:

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՍՄԻԿ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփեյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1258
Ստորագրված է տպագրության 18.08.2023 թ.:
Տպագրական 20.5 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 18.08.2023 г.
20.5 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.
Тел. 581902

Signed for printing 18.08.2023
20.5 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24/4.
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am